




837

L III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Ա. Գ Ի Բ

№ 1 1894

ՅՈՒՆԻԿՐ

1894 № 1

ՎԵՅՏՈՐԴ ՏԱՐԻ

Երես

1 ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ, Ա.ԻԵՏԻՔ	5	«Մուրճ»-ը նոր տարեշրջ. շնմքռամ.
2 Գ.ԱԶԲԼԳ, Ա.ԼԵՔՍՈՆԵՐԻՔ	9	Զորի նահապեա Գոչառ:
3 ԵՐՄՈՆՏՈՎԱՅ-Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ	43	Նեկր «Գե» պօէմալին:
4 ԱԴԱՅԵԱՆՑ, ՎԱԶՈՐՈՍ	44	Իմ կեանքի զլիս. ղեղքերը (վերջ):
5 ՅԱԿՈԲԵԱՆ, ՅԱԿՈԲ	58	Էլլ նորան (բանասանեղծ.):
6 ԲԱԼԱՊԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ	59	Կենդանիների հասարակ. կեանքը:
7 ՊԼԵՇՉԵԻՔ-Ա. ԾՍՏՈՒՐԵԱՆ	75	Երազ (բանասանեղծ.):
8 ԶՈ.ԲԱ.ԲԵԱՆ, ԹԱԳԼՈՍ ԲԺՇԿ.	78	Բյշկականութ. և հոգեբանութիւն:
9 ԲՈ.ՀԱ.ԹՐԵԱՆ, ՍԱՐԳԻՍ	84	Հող. և անձն. իրաւ. հին Հայաստ.
10 ԳԱՐԱԶԵԱՆ, ԳԵՂԻՔ	101	Բանտորների ապահովաց. խնդիրը:
11 ՖԵԼԻՔՍ	111	Նամառալիսմը և Զոլան (վերջ):
12 Մ. Ն.	118	«Մուտամիկ»:
13 Ս. Բ.	120	«Հանրամատչելի» բնախօսութիւն:
14 » »	122	Ալովիսափի հանքապին ջբերը:
15 » »	123	Ալարկւահողը պարարտ. միջոցները:
16 ԼՈՒՄԻՆԻ.	124	Ժամանակակից Տեսութիւն:
17 ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԵԿՈՅ.	127	Կաթողիկոս. անդրանիկ Կոնդակը:
18 ՎԱՆՅԵԱՆ, ԳՐԻԳՈՐ	133	Դալուցական ինդիբներ:
19 Ա.	143	Ղարաբաղի թեմ. դպրոցը:
20	146	Տաճկաստան:
21 ԱԴԱՅԵԱՆՑ, Վ. և ԴԻՏՈՂ	148	Նամակներ Խմբագրին:
22 ԽՄԲ.	152	Զանազան լուրեր:

ՅԱՅՍԱՐԱԲՈՒԹԻՒՆՆԵՐ:



ԹԻՖԼԻՍ

Տպարան, Մ. Գ. Ա-ՕՏԻՒՆԵԱՆՑ:

Տպոգրաֆія М. Д. Ротенвайна, Гог. пр., թ № 41.

1894



ՄԱԿՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

№ 1 1894

ՅՈՒՆԻԱՐ

1894 № 1

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

~~~~~

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ԱՕՏԻՆԵԱՆՑԻ

Տիպոգրիա M. D. Rotinianca, Гол. пр. д. № 41.

1894

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Января, 1894 г.

VI ՏԱՐԻ ՝ՄՈՒՐՃՇ՝ ՏԱՐԻ VI

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

1894

ԹԻԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԱԹԻՒՆԸ Ե



«ՄՈՒՐՃ» ամսագիրը կը հրատարակւի 1894 թւականին նոյն ծրագրով, որպէս և նախկին հինգ տարիներում:

«ՄՈՒՐՃ»-ը կը հրատարակւի ամեն ամիս 8—10 թերթ մեծութեամբ:

«ՄՈՒՐՃ»-ը, որպէս անցեալում, այնպէս և ապագայում կը տայ 1) Յօդւածներ կեանքի հիմնական խնդիրների մասին (առաջնորդողներ), 2) Յօդւածներ մեր հասարակական կեանքի ընթացիկ խնդիրների և երեսյթների մասին (ժամանակակից տեսութիւն), 3) Հետազոտութիւններ տնտեսական և սոցիալական կեանքից, 4) Յօդւածներ քաղաքական անցքերի և ընդհանուր քաղաքական դրութեան մասին (Քաղաքական տեսութիւն), 5) Գրական լույսարձակ քննադատութիւններ, 6) Նոր լոյս տեսած զրքերի քննութիւններ, 7) Ընդհանուր կրթական ցողւածներ դիսութիւններից, 8) Գիտական քրոնիկ, 9) Ճա-

նապարհորդական նկարագրութիւններ, 10) Թղթակցութիւններ գաւառներից, 11) Տեղեկութիւններ Ռուսաստանից, 12) Նամակներ Արևմտեան Եւրոպայից, 13) Վէպեր, վեպիկներ ինքնուրոյն և թարգմանական, 14) Ռուսաւոր բանաստեղծութիւններ, 15) Երաժշառութիւն, 16) Կարևորագոյն լուրեր, 17) Յայտարարութիւններ:

«ՄՈՒՐՃ»-ի ՎԻՊԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ **1894** թւականին կը բաղկանաչթէ ինքնուրոյն և թէ թարգմանական վիսպական դրւածներից:

»ՄՈՒՐՃ»-ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ է **10** ռուբլի: Աւսուցիչները և ուսանողները կարող են վճարել **8** ռուբլի:

ԲԱԺԱՆՈՐԴ գրւելու համար զիմել կամ Խմբագրատունը (Տիֆլիսъ въ редакцію „МУРЧ“) կամ մեր գործակալներին:

# “ՄՈՒՐՃ”-Ը

## Առր տարեշլքանի շէմքում

Նոքա, որոնք փոքր ի շատէ ծանօթ են հայ ամսագրութեան-պատմութեանը—դուշակած կը լինեն այն զգացմունքները, որ կարող էին պաշարել մեզ, երբ պատարաստում էինք ոտք կոխելու «Մուրճ»-ի վեցերորդ տարւաց շէմքը:

Այդ զգացմունքները պէտք է անհանդստացնող լինէին. դա-այն շէմքն է, որի վրացով անցնելու համար Ռուսա-Հայերիս մէջ դեռ ոչ ոք վստահութիւն չի ունեցել: Ռուսա-Հայկական ամսագրու-թեան մէջ անցեալում ամենայացնիներից «Հիւսիսափայլ»-ը ընդ-հաւաեց աւելի քան մի տարով, «Կոռնի Հայոց Աշխարհի» և «Փորձ»՝ դադարեցին հրատարակւել իրանց հնդամեակը չտեսած: «Մուրճ»-ը ուրեմն առաջինն է որ այդ ճակատագրական շրջանը ոտք կոխելու վստահութիւնն ունի: Եւ իրօք վստահութիւն է պահանջւում մի դործ շարունակելու համար, որը նիւթականապէս ապահով չէ, ինչպէս նա չի եղել ոչ մի տարի իւր բաժանորդագրական եկամտով:

Ինչն է մեզ վստահութիւն տալիս նիւթականապէս անապահով մի այդպիսի դժւարին գործ շարունակելու: Մեր պատասխանն է—«Մուրճ»-ի ներքին կեանքը: Այդ կեանքը առանձնացած կեանք չէ, այլ կապւած է մեր հասարակութեան յառաջաւոր տարրերի հետ: Եւր զանազան դերերով մի տեղ իբր զրդող, միւս տեղ իբր մշակող ոչի, երրորդ տեղում իբր զնահատող, չորրորդում՝ իբր խնդիրներ յարուցանող, իբր զիսութիւն տարբականացնող, մի այլ տեղ իբր ուղղութիւն ցուց տւող, իբր ընթերցանութեան առողջ նիւթ մասակարարող և այլն—այս իւր բոլոր դերերով, որոնք բոլորն եւ

միւնոյն հիմնական մոքի զանազան արտայայտութիւններն են, «Մուրճ»-ը կապւած է մեր կեսանքի յառաջդիմութեան գաղափարի հետ:

Այս ամսագրի առաջին տարւայ առաջին համարում մենք որոշել էինք «Մուրճ»-ի նշանակութիւնը այսպէս՝ շարունակել զբական ասպարիզի վրայ այն յառաջդիմական հոսանքը, որ սկսել էր «Հիւսիսափայլ»-ով և շարունակւել «Մշակ»-ի առաջին տասնամետ կում: Այժմ հասարակութեան առաջն է զրւած «Մուրճ»-ի հնգամեաց գործունէութիւնը, և վեցերորդ ապրւայ այս առաջին համարը ներկայանում է իբր ժառանգ այդ հնգամեայ գործունէութեան: Մենք, մեր առաջադրած նպատակին անշեղ ծառաշելու համար, ոչ մի ջանք և զոհաբերութիւն չենք խնայել և ոչ էլ նայել ենք աջու ահեակ, և ինչ որ մեզ խանգարիչ է թւացել որ «Մուրճ»-ը իւր այդ նպատակին անշեղ ծառաց է—մենք աշխատել ենք հեռացնել ճանապարհից, ուշք չգարձնելով այն բանի վրայ որ գորանով մենք կը սուտարացնենք մեր հակառակորդների թիւը:

Եւ սակայն երբէք մենք մենակ չենք մնայել: «Մուրճ»-ի գաղափարը ամսէամիս և տարեցտարի աւելի է ըմբռնւել մեր նոր սերնդի յառաջադիմ տարրերի կողմից, և այն հոսանքը որ անցել է այս ամսագրի միջով, դնալով յորդացել է, միշտ աւելի ու աւելի որոշ կերպարանք ընդունելով: Սա արդէն մի իրողութիւն է, և ամեն ոք կարող է ստուգել, որ ժամանակիս մոքերը զբաղեցնող հասարակական խնդիրների գրական մշակումը այս վերջին հինգ տարիներում տեղի է ունեցել գրեթե բացառապէս «Մուրճ»-ի մէջ: Եւ քանի որ խնդիրների արծարծումը և զուգընթացաբար գրական մշակումը առաջին պայմանն է նոյցա հասունանալուն ու հասարակական գիտակցութեան մէջ մտնելուն, —զորանոյ արդէն պատասխան է տըրում թէ ինչ է եղել «Մուրճ»-ը իբր օրդան հասարակաց մոքի:

Դորանով և միմիայն դորանով ենք բացատրում այն որ, չնայած շատ բազմատեսակ թշնամանքներին, դէսլի «Մուրճ»-ը ձգտել են ժամանակիս առաջդիմական մոքով տոգորւածներից ամենաանկաշառները և առհասարակ նոքա, որոնք իրօք բան ունեն ասելու: Ելնել նիւթապէս անապահով և շրջապատած լինել աշխատառ համակրողներով, որոնք իրանց կեանքի մի մասով «Մուրճ»-ի հետ ողեկան հաղորդակցութեամբ են ապրում, այդպիսի մի թերթ ան-

հաստական սեփակամնութեան իրաւունքից անցնում է արդէն աւելի մեծ ընդհանրութեան իրաւունքի սահմանները: Մենք բարոյապէս կապւած ենք «Մուրճ»-ի համակրող աշխատակիցների և ամսագրիս ընթերցող հասարակութեան հետ. և որքան էլ մենք մեր ուսերի վրայ զգանք անսալահովութեան ծանրութիւնը—մենք պարտաւոր ենք շարունակելու հինգ տարի պատառոր կերպով շարունակած գործը:

Ահա զորա համար է որ մենք պարտք ենք համարում զիմել «Մուրճ»-ի գնահատողներին, յորդորելով նոյս որ նոքա օգնական լինեն մեզ «Մուրճ»-ը տարածելու գործում: Մենք ունենք բազմաթիւ թէ թշնամիներ թէ չկամներ, թէ նախանձողներ, վերջապէս ամեն կարգի մարզիկ, որոնք «Մուրճ»-ի յաջողութեան դէմն են գործում: Գործեցէք և դուք, «Մուրճ»-ի բարեկամներ, եթէ համոզւած էք թէ մեր ներկայիս լուսաւորութեան գործում «Մուրճ»-ը իւր զերը կատարում է, ինչպէս այդ բանում մենք ենք համոզւած:

Այժմ այդ պարտականութիւնը, որ մենք գնում ենք «Մուրճ»-ի բարեկամների վրայ, աւելի ստիպողական է քան վերջին երկու տարիներում: 1892 թւականից մենք ունեցանք հրատարակչական ընկեր նոտարական պայմանով: Պայմանը ստիպողական զօրութիւն ուներ մինչ 1894 թւականի վերջը: Բայց այդ ընկերութիւնը չտեսց մինչ պայմանաժամկի լրանալը, այլ տեսց միայն երկու տարի, ցանկութեամբ մեր նախկին ընկերոջ, որ կրում էր հրատարակչի անունը և մեր համաձայնութեամբ: Այդպիսով ահա «Մուրճ»-ի հրատարակութեան ամբողջ ծանրութիւնը այժմ ընկնում է կրկին մեզ վրայ, ինչպէս այդ կար «Մուրճ»-ի սկզբնական երեք տարիներում (1889, 1890 և 1891 թթ.): Եւ որովհետեւ միակ իսկական ապահովութիւնը ամեն մի թերթի համար նորա բաժանորդադրութիւնն է, այդ պատճառով «Մուրճ»-ի սպահովութեան ինդրով դբաղւողների ուշքը դարձնում ենք այդ իսկական ճանապարհի վրայ:

Աւելի այդ հաւասարիութեամբ՝ մենք հանդիստ սրաով կը շարունակենք մեր գործը:

Կեանքը մեր սերնդներից իւր պահանջներն է անում: Եթէ այդ սպահանջներին նոքա բաւարարութիւն չտան—նոյս հետ ամբողջ աղջը կը լետաղիմէ: Եւ այն ժամանակ ոչինչ չեն օգնիլ այն

անունները, որ մենք կ'ուզենանք տալ այս ու այն կուսակցութիւններին, թէև մէկին կնքելու էլ լինենք ամենաառաջադիմական կուսակցութեան տիտղոսով և երգւելու լինենք կուսակցութեան անցեալ գործիչներից լաւագոյնների անուններով։ «Մուրճ»-ը, որ իւր արմատով շարունակութիւն է յառաջդիմական մամուլի, չի կարող իւր աշքերը փակել իրողութիւնների վրայ և կրկնում է այսօր նոյնը, ինչ տարիներ առաջ,—այն է որ յառաջդիմական հոսանքի ոյժն ու գորութիւնը կախւած է նրանից, թէ որքան լրջութեամբ նոր սերունդը ընդունակ կը լինի վերաբերւել դէպի կեանքի ծանրագոյն խնդիրները։ Դորանից կախւած կը լինի նորա ձեռնհատութիւնը ազգի կեանքի գեկավարութեան համար։ Դորա համար մեզ պէտք է մի սերունդ լուրջ մտածողների, լուրջ աշխատաւսրների, իրանց մասածողութեան ոյժն և ուղղութեան շիտակութիւնը ապացուցած ու մի ընդհանուր յառաջդիմական դազափարի մէջ միանալու ընդունակ մարդկանց մի սերունդ։ Այդ սերունդը եթէ կայ սազմի մէջ—նա դեռ զարգանալու շատ կարօտ է և այդ պատճառով մեր կեանքը միշտ վտանդի մէջ է խաւարամիանների ոստանների մէջ փաթաթւելու։ Մենք այդ խօսքերը ստիպւած ենք ասենու ի գիմաց այն մեծ անտարբերութեան, որով յառաջդիմական դրօշակի անունով դործող մարդկանց լեզեններ՝ իմաստութեան քարը դասածների պէս՝ վերաբերւում են դէպի ամեն մի նոր պահանջ, որ գնուում է նրանց, ամեն մի պահանջ, որ նեարգեր շոշելու, մասնր կրքեր յուզելու յառկութիւնը շունի, բայց որը սակայն ունի յատկութիւն աւելի անկաշառ մոքերը դէպի շարժումն զրդելու և դէպի խնդիրների աւելի խորը ուսումնասիրութիւնը մզելու։ «Մուրճ»-ը պատկանում է դրանց—այդ անկաշառ և բաց մոքերին։ Այդպիսով միայն մեր գրականութիւնը յառաջադիմութիւն կ'անէ. իսկ գրականական յառաջդիմութիւնը միշտ պատւանդան է եղած կեանքի յառաջդիմութեան բոլոր ազգերի մէջ, և մերը բացառութիւն չի կարող կազմել այն բանում, որ ընդհանուր մարդկային օրէնք է։

## ԶՈՐԻ ՆԱՀԱՊԵՏ

### ԳՈՂԱԼ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՂԱԶԲԵԳԻ

ԹԱՐԳՄ. Մ. ՆԱԻՍՍԱՐԴԵԱՆԻ

#### I

Գիշերւայ ժամը իննը կը լինէր, երբ Նանոր գեղին մօտեցան քանի մի զինւած ձիաւորներ և մի երկու հատ բարխիներ:

Ձիաւորները տակաւին նորատի, ընտրովի և մէկը միւսից շնորհալի էին: Նրանք ընթանում էին ուրախ, երգելով և հրացան արձակելով:

Ակնյացնի երեւում էր, որ սրանք վատ դիտաւորութեամբ չէին ճանփա ընկել և ոչ էլ այնքան բազմաթիւ էին, որ այնպէս աներկիւղ և շնի-շիտակ մոնէին մի օտար գեղ, որ ինքն ըստ ինքեան մի ամբողջ դժւար վերցնելու բարձրութիւն էր ներկայացնում: Երբ գեղին մօտիկացան, սրանց գիմաւորեցին այնուեղի պատանիները և այս երկու ձիաւոր գնդերը արշաւեցին միմեանց գէմ գոռում-գոչիւով և հրացաններ արձակելով: Ձիերը վազում էին մարդուս գլուխի շամեցնող արագութեամբ. սրանց տէրերը պտտիցնում էին փայլակնալէս իրանց հրացանները: Երբեմն վար թեքւելով գետնին էին ձեռքերը խփում և երբեմն էլ դարձեալ տիպանման նառած ձիու վրա, նազաբար՝ սիրա յափշտակող ճոճումով շտապում էին միմեանց գէմ:

Ահաւասիկ հասան միմեանց: Ձիերի զլուխները, կարծես, մօտեցել են և ահա, որտեղ որ է, կը զարնւեն իրարու: Սակայն շուտով

կանդ առան, կարծես մեքենաների զօրութեամբ զսպած՝ քարէ արձաններին նմանւեցին և օդում արձագանք տրւեց մի ուրախալից ողջունումն:

— Ճանփաներդ բարի:

— Բարի տայ Ասուած:

Որից յետոյ հարց ու բարով, ողջոյններ, բարի գալուստներ և այլն իրարու խառնելով՝ զիմեցին նրանք մի մէկուսացած տան կողմը, որի պատուհանից երեսում էր չաղարած կրակի լոյսը և լսում «տաշ-փանդուրի»<sup>1)</sup> ձայնը:

Դուան մօտ արձակեցին դարձեալ քանի մի հրացան և դարձան-շաներ, որոնց գոռոցին միախառնւեց այնտեղ խմբւած երեխաների դոչիւնը, և հեծեալները ցած իջան ձիերից:

Վրա թափւեցին երեխաները, բանեցին ձիերը սանձերից և սկսեցին յետ ու առաջ ման ածել. որովհետև քրտնած ձիերից առատ գոլորշի էր բարձրանում ու անհրաժեշտ էր քրտինքը ցամաքեցնել մանածելու միջոցին, որպէս զի չզարկէր նրանց սառը հողմը և ընդարձացնէր:

Հիւրերը խմբւեցին դուան մօտ, մէջտեղը կանգնեցրին մի գեղեցկակազմ, բեղերը նորաբոյս, նորատի պատանի, որ ուսերին եափնջի ունէր գցած և կողքին կանգնեցրին մի այլ պատանի առաւել ճոխ հագնւած և ոսից գլուխ ոսկի արծաթի մէջ կորած:

Բոլորը լրեցին և այնտեղ տիրեց մի այնպիսի լսութիւն, որ ճանճի թռչելու ձայնն անգամ կարելի էր լսել:

Անցաւ փոքր միջոց և ահա հնչեց զանգակաձայն «ջւարուլի»-ի<sup>2)</sup> երգը. սրան ձայնակցեցին միւսները և օդը լցւեց մի վեհ, ուժգին և միմիայն կորիճի երգի ձայնով, որը յափշտակում է մարդուն իր ներդաշնակութեամբ և ուժգնութեամբ, գողացնում է ջլերն ու ուկրները, եռացնում արիւնը և անուն հանելու ծարաւեցնումն Սակայն այս երգը սարերումն են երգում, միմիայն այնտեղի վեհաշուգը բնութիւնն է կարող այսպիսի ներդաշնակ ձայն ծնել:

<sup>1)</sup> Փանդիու.

<sup>2)</sup> Ուզտագնացութեան երգ:

Այս երգը սակայն երգում են պատերազմում, սրբերի և դրոշակների հանդէս բերելու միջոցին և հարսանիքում։ Հիմի հարսանիք էր։ Եափնջաւորը, Գելա Փիշիտառերին, վեսացուն էր և նրա կողքին կանգնած շքեղ հագնւած պատանին—Յնիսէն, հոչակաւոր «Զորի նահապետ» Գոչացի որդին, որը եկել էր իբրև Գելացի խաչեղբայր։

## II

Հիւրերը ներս դնացին բազմութեամբ լցւած տան մէջ, որտեղ գիմաւորեցին հասակաւոր տղամարդկիք, բարեմաղթեցին վեսացուն բարի գալուստ, պատեցրին խաչեղբօր հետ միասին աթեշտանի (օջախ) շուրջը և տան մեծաւորին կից՝ նստեցրին նրանց աթեշտանի գլխիկիր։ Խառնւած ամբոխը տեղաւորւեց նորից, սկսւեց կրկին գւարճութիւնը «Սմուրի»<sup>1)</sup> երգով, որի միջոցին գինով լիքը թասերը պատուում էին հանդիսականների մէջ։

Այսուեղ միայն տղամարդկիք էին, աղջիկները բացակայում էին, սրանց ձայնը լսւում էր տան յետեի անկիւնից, որտեղ մի առանձնասենեակ կար պատրաստւած։ Այսուեղ «ատաշ-փանդուր» էին նւագում, դրաւել էին պատանիներին, որոնք յափշտակւած նայում էին լեզզի պար խաղացող շնորհալի աղջիկներին։

Իոլորն էլ խաղում էին ուրախ, զիւժիչ պաղաներ գործելով զուրս պրծնուր՝ պատանիների ձեռքից, սեորակ բիբերը յառում որ և է «սե տղի» վրա և այս վերջինն էլ վառւած աներեւոյթ ուժից, խրախուսւած նետում էր երեմն հանդարտ և մեղամասահ ջրի պէս և երբեմն էլ լեռնական և ժայռերից սրբնթաց վայր հոսող գետակի նման աղջկայ ետեից։

Ահա փախչում է, խրտնած կղտարի նման, Մոխեցու սեաչեայ աղջիկը, որի գէմքի վրա երկիւղը գրոշմէ ել է. որովհետեւ կտրիճը թեատրած արծւապէս վազում է իր զոհի ետեից։ Քնքոյշ արարածը կամաց-կամաց թուլանում է, կտրիճը հասնում է, և ահա մի բոպէ ևս կը դրկէ վախեցած տառակի պէս դողացող աղջկան. բայց յուսախար է մնում։ Աղջիկը յանկարծ յետադարձ պատեհլով թըռչում է միւս կողմը և ոտերը խաղացնում։

1) Վինի խմելու երգ։

Սիրտը կոտրւած երիտասարդը նայում է և տեսնում իր զո՞հի հրապուրիչ ժապտուն շրթունքը և ցոլուն աչքերը, որոնք նրան դուրս են կանչում, հրաւիրում և կարծես ասելիս լինեն. «բռնիր ինձ և քեզ կը վայելեցնեմ ես կեանքի քաղցրութիւնը»:

Օնիսէն ու Գելան, որ այսօր ծանրաբարոյութիւն պէտք էր ցոյց տային, նստած էին անշարժ. թէև հոգով սրտով զւարճացող ջահիների մօտն էին և աչքի տակով նայում երբեմն այն կողմը, որտեղից խաղ ու պարի աղմուկն էր լսում: Գելան այրում է ցանկութեամբ տեսնել իր ցանկալի Զիձխային. իսկ Օնիսէն—որ իր ուրարի աչքերը յառէր որ և է մէկի վրա անխափիր, ով կուզէ թող լինի նա, միայն թէ անձնաւորութիւնն էլ հրացայտ աչքերի, հրապուրիչ պրոշների, նորաբողբոջ ալվարդ թշերի և արիւն փրփրող սրտի տէր լինէր:

Հազիւ քանի մի րոպէ էր անցել, երբ հանդիսականները կէսի միջւեցան և սրանց թւում մի պառաւ երեաց: Բոլորն էլ ոտի ելան և ողջունեցին պառաւին, որը մօտեցաւ ուղղակի խաչեղբօրը և գրկելով նրան ասեց.

—Ահա, իմ՝ ամենս, քեզ եմ յանձնում աղջիկս... դու պէտք է ինամես, աիրութիւն անես. Նրա վշտացնողին դուն պէտք է վշտացնես:

—Սուտ չեմ ասի, Խազուա, որ ձեռքիցս եկածը չեմ խնայի, — պատասխանեց ջահել պատանին, վստահօրէն աւելցնելով.—Պրավշտացնողը ինձ հետ գործ կունենաց և Ասուած է վկայ, որ ոչ ոքին խորհուրդ չեմ տայ հետս մասխարութիւն անելու:

—Գելան անփորձ է, —աւելցրեց պառաւը, այն ինչ աշխարքը բազմագունի... Ի՞նչ չէ կարող մարդու լիզուն գործել. Խրասիր երբեմն այս պատանուն, օտարի խօսքին չհետևի թող, աշխարհիս արեսին թշնամիք անսպակաս են, և եթէ սրանց խօսքին լսելու լինի, այն առև աղջկաս» կը հալի, կը մաշի...

—Ինչի, ինչի ես այդ ասում, Խազուա,—ընդհատեց Օնիսէն. Գելան, միշտ է, ջահել է, բայց գինեսէր և վատ մարդ չէ... Ընկերներին աջ աչքի պէս սիրելի է, ամենքն էլ պատրաստ են գըլիները յետ զնել զրա համար. որովհետեւ Գելան ևս բարեսիրու է իր հարեւանների համար... Գելան տղամարդ է և, Ասուած է վկայ, ընսանիքումն էլ իր գլուխը չի խացտառակին:

— Բերնիդ շաքար, իմ ամենս, բերնիդ շաքար, — պատասխանեց պառաւը աւելցնելով. — չժաղես ինձ, Օնիսէ... պառւեցայ, նահապետի տարիքն եմ հասել և այդ միակ «սև աղջիկն» ունեմ աշխարհիս երեսին... դա է արես էլ, լուսինս էլ, միայն դա է հոգի ներս փչում ինձ:

— Դէհ, բաւական է, Խազուա, հիւրին շատ մի՛ նեղացնի, — գոչեց մի ինչ որ ծերունի մարդ և աւելցրեց. — տար նորահարսի մօտ և յանձնիր զրան:

— Աւզիդ ես ասում, ուզիդ, ցաւդ տանեմ... Արի՛, Օնիսէ: Առաջնորդեց պառաւը Օնիսէին. իսկ Դելան նախանձոտ աչքերը հետևեցրեց նրան. որովհետեւ ինքը պէտք է այնտեղ մնար անշարժ և Զիձիայի տեսութեանը արժանանալու համար տակաւին քանի մի ժամ սպասելու էր դատապարտած:

### III

Սութը առանձնասենեակում, որ լուսաւորւած էր հազիւ առկայցող մարխով, կասրների<sup>1)</sup> և քիւաների արանքում նասոած էր նորահարս Զիձիան իր քանի մի սրտակից բարեկամուհիների հետ, որոնք ճիգն էին թափում զբաղեցնել նրան:

Զիձիան տամնուվեց տարեկան էր, հետևապէս այն հասակի մէջ, վարդի կոկոնի պէս լիովին բացւած, այն միջոցներում, երբ երակներում յուզւած արիւնն է փրփրում, եռում և խոխոջով սահում, երբ սիրու ձգուում է դէպի զեռ ևս անձանօթ բազդաւորութիւն և թռթռուն խաղս է անում ծաղիկների ու բնութեան հետ, կեանքը եղեմի պէս բացւում և երանութեան նեկաարով լցւում: Նա էր բարձրահասակ, գեղեցիկ, նորաբողբոջ վարդի թերթերի նման նուրբ պողշներով, որոնք կարծես թէ պատրաստել էին համբոցըներ բաշխելու: Նրա մետաքսանման դէմքի վրա ծփում էր ալ-վարդ մատղաշութեան կենսալից նշանը, որը երբէք ծեփ-կարմրութեանը չէր նմանւում. ցոլուն երկնակապոյտ աչքերը փայլում էին զիւթիւ կերպով և սիրա խոցող նետեր արձակում:

<sup>1)</sup> Ծառի բունից չինած աման, որը լուեցիք կոդ են անւանում:

Նման, Թարգմ-

սև ու երկար թերթերունքը պահանկների պէս պատել էին աչքերի շուրջը և բարակ ու թաւշանման ունքերը ձիք կամարներ կապել վրան, երկու ծամ արած սև ու խիտ հիւսերը պատել էին պատկած և նրա ձիւնափայլ վիզը, - մի խօսքով Զիձիան նկարուն պատկեր էր և սրա տեսնողը չէր կարող չբացականէլ. «Երանի ծնողներից»:

Նատերն էին տարվում Զիձիային, շատ շատերը, փորձեցին մինչև անգամ նրան փախցնել. սակայն, ինչպէս երեսում էր, նա վիճակւած էր Գելային և նրան էլ մնաց:

Երբ արդէն Գելան իրան սեփականեց Զիձիային, երբ աղջիկն էլ խոստացաւ, նրան այլ ևս մարդ չէր համարձակի բան ասել. որովհետեւ այս կերպ հանգամանքներում Գելան հանաքներ չէր սիրում և կը խոսրեցնէր այն մարդու օրը, որը կրյանդանէր նրա առաջը կորելու:

Թէև Զիձիան կամովին էր մարդու գնում, հաւանում էր իր Գելային և շատ զիշերներ էր անցուցել անքուն նրա հետ շուտով միանալու վրայ մտածելով, յաճախ էր մոտացի կերպով աչքի առաջ պատկերացրել նրա առիւծանման կարիճի դէմքը. սակայն այսօր, երբ ինքը հրաժեշտ պէտք է տար իր տանն ու բարեկամներին, սովորովին, երբ արդէն պարտաւոր էր աղջկութիւնից դէպի տիկնութիւն առաջին քայլն անելու, սիրու մի կերպ յուզեց և անցեալը ցուելով մտաբերեց: Այս անցեալի հետ լաւ ծանօթ էր, և նրան բոլորովին իւրացրել. նրա քէփին ոչ ոք չէր դիպել երբէք, բոլորին սիրելի էր, ամենքն էլ փայփայում էին նրան և, նվ գիտէ, ապագան կը տամբ սրան միւնոյնը:

Աղջիկը բնազրումով մի անորոշ յուզմունք էր զգում իր մէջ, բայց անկարանում էր հաշիւ տալ ինքն իրեն: Այս կացութիւնը կորզել էր նրա դէմքից ալ-վարդը, գոյնը մեղմաբար նետել տւել և այս գունատութիւնը մեղմացրել էր առաւել նրա հրեշտակային պատկերը:

Բարեկամուհիները մսիթարում էին, հանաքներ անում, երբ այս խօսքերը լսեցին.

— «Խաչ-եղբայրը գալիս է, խաչ-եղբայրը», և բոլորն էլ ոտիկանգնեցին: Զիձիան զգաց, կարծես, մի բան խայթեց նրա սիրու,

անցաւ նրա ամբողջ մարմնով մի անդուրեկան զգացմունք և ոտի ելնելով քողը քաշեց երեսին շտապով:

Ներս եկան սենեակը Խազուան, ով որ մի ծերունի, Օնիսէն և ջահել աղջիկներ, որոնք շրջապատեցին Զիձիային: Սկսեցին հրաժեշտի երգը, որի մէջ երգւած զգայուն խօսքերով հրաժեշտ էին տալիս ջահիլ աղջկան իր ընկերուհիներին և անցեալին, և լալով ու համբուրելով իրանք էլ նրան ողջերթ մաղթում:

Երգը դադարեց վերջապէս, ծերունին մեզրամումեր վառեց, խաչակնքեց երեսը մեղմօրէն, մօտեցաւ աղջկանը, առաւ նրա ձեռքը, ցիշեց ձորի սրբերի ու հրեշտակների անունները և դարձաւ Օնիսէին.

—Օնիսէ. ահա, քեզ են յանձնում անբիծ և անմեղ աղջիկը... այս օրւանից ի վեր քեզ ենք սրա համար եղբայր շնորհել: —Այս խօսքերից յետոց յանձնեց Օնիսէին աղջկայ տաքացած և դոզդոջուն ձեռքը:

Հենց որ Օնիսէն շօշափեց այն ձեռքը, մի տեսակ շփոթւեց, մտացրիւ եղաւ ու ինքն էլ սառտաց, թէեւ չէր կարողանում ազ հմագամանքի պատճառը պարզել ինքն իրեն:

—Աբա, դուն գիտես ու տղամարդութիւնդ, թէ ինչպէս այսուհետև կը ինսամես սրտն և տիրութիւն կանես... Զեր գեղում քեզնից աւել տէր չունի, դու պէտք է եղբայրութիւն անես սրան:

—Աբա սուտ ոնց ասեմ, Ասուած է վկայ, որ դրա համար գլուխս յետ կը դնեմ:

Ծերունին մօտեցաւ, քաշեց երեսից քողը մեղմաբար հէնց այն այրկեանին երբ Օնիսէն արտասանում էր.

—Դա քոյր և ես եղբայր...

Սակայն խօսքը կտրւեց, դողաց ամբողջ մարմնով ու դինովցածի պէս երերաց, միայն ինքն իրեն պահպանեց:

—Ի՞նչ պատահեց քեզ, օգնութեան հասաւ ծերունին:

—Ոչինչ, ոչինչ. շոքեցի ու գլուխս շշմեց, —հազիւ արտասանեց Օնիսէն:

Ո՞վ գիտէ, շատ խմեցիր... ջուր բերէք, —դիմեց ծերունին ներկայ գտնուողներին:

—Հարկաւոր չէ, ցաւդ առնեմ, —պատասխանեց Օնիսէն, որ

տակաւին աղջկայ ձեռքը չէր թողել. թէև զգում էր, որ այն ձեռքը այրում, տոշորում էր իրեն, ալեկոծում արիւնը և ուշաթափեցնում:

Օնիսէն շփեց ձեռքով ճակատը, լաւ սրբեց քրտինքը, նայեց ուղղակի աղջկայ երեսին և բարձրաձայն ու որոշ արտասահնեց.

—Թող վկայ լինի վերևն Առուած և ներքեւ. երկիրը, որ Զիձիային քրոջս պէս եմ սիրելու, եղբայրութիւն կանեմ, զլուխս յետ կը գնեմ, սրա համար եղբօրից առաւել կը լինեմ: Այս խօսքերի վրայ աղջկայ ձեռքը մի անգամ ևս ցնցւեց, նորից սառսրաց մեղմ կերպով, նայեց մի անգամ՝ նրա երեսին և գլուխը կախեց իսկոյն: Հանդարտ բայց ուժգին հառան ընդհատեց Օնիսէի խօսքը և սիրու սկսեց բարախել անհանգստաբար:

## IV

Օնիսէն զգաց, որ ալեկոծ ծովի նման արիւնը ձնշռւմ է իրեն, որը մերթ նետուում էր արագահոս դէպի սիրու և ուժգին տրոփեցնում, ինչպէս ծովի ալիքները անխարիսխ նաւին. և մերթ ընկնում գլուխն և մառախուղի պէս պատում, մթնեցնում աչքերն ու միոքը:

Զահել տղան զայրանում էր իր վրայ, զայրանում էր, որ չէր կարողանում զսպել իր մէջ յուղւած զգացմունքը, ճգնում էր աղջկան հանգստացնող որ և է խօսք ասել, բայց բերանը ցամքած, կարծես կոկորդին մի բան դէմ էր առել, չէր կարողանում լեզուն զարձնել: Նա առաւել լաւ համարեց շուտով ազատւել այն որոգայթից, որը այնպէս յանկարծակի տիրապետեց նրա անձի վրայ և սիրոն այնպէս անակնունելի կերպով նետահար եց:

Օնիսէն հրաժեշտ տւեց աղջկան և մտաւ ընդհանուր սենեակը, որտեղ միւս հիւրերը զւարձանում էին. Զահել աղաները վիճաբանում էին միմեանց հետ, այն ինչ ծերերը Վրաստանի ապագայ կացութեան մասին էին խօսում:

Եռոտով փոեցին սփոռոցները, լցրին «փունթուշներով»<sup>1)</sup> և լաւ չաղացբած զոչի մսով:

<sup>1)</sup> Վառարանում թխած մի տեսակ հաց.

Որովհետև այս հանդէսը ձմեռն էր կատարում և այն գիշերն էլ ձիւն էր զալիս, այս պատճառով ամենքն էլ շտապում էին ընթրիքը շուտով վերջացնել և տուն վերադառնալ, որպէս զի սարերից վայր թափած հողի կոյտերը որ և է տեղ ճանփան չը ծածկէին և նորապսակները ստիպւած չը լինէին դուրսը, բաց երկնքի տակ գիշերելու:

Բոլոր սրբերի<sup>2)</sup> գինու թան էլ շրջան կատարեց. տան նահապետը, սուփրի գլխին «մարտօնշկամի»—մէնաթոռի վրա նոտած՝ մեղրամոմեր վառեց, ցիշեց ձորի բոլոր սրբերն ու հրեշտակները և ուղղեց իր աղաշանքն առ. Աստւած հարսնաւորների համար: Վերջը դարձաւ Յնիսէին ու քանի մի խօսքով ցիշեցրեց խաչ-եղբօր պարտաւորութիւնը աղջկաց վերաբերմամբ, բերել տաւ աղջկաց օժիտի մնդուկը, որը յանձնեց մակարներին:

Չանցաւ քանի մի բոսկ և ահա նորից տարան նրան առանձնասենեակը, որտեղ պէտք է յանձնէին նորահարսը:

Յնիսէն չէր կարողացել տակաւին ինքն իրեն հաշիւ տալ ու շշմած, ինչ որ մի անսովոր կացութեան մէջ զոնւելով՝ գլխովին ուշացրիւ կատարում էր ամենը, ինչ որ ասում էին նրան:

Ներս տարան, գրին աղջկաց ձեռքը նրա ափում ու կրկին լուեց «ջւարուլի» երգը: Խաչեղբայրն ու աղջիկը գիմեցին գէպի ընդհանուր սենեակը, որտեղ վեսան էր, այս երգի ուղեկցութեամբ, որը Յնիսէն յուղարկաւորութեան երգի տեղ էր ընդունում: Սրանց երևալուն պէս Գելան ամբողջովին վառւեց, կրակի կտորների պէս փայլում էին աչքերը, զաղած բերկրալից ժպիտը ցնցեց նրա պռոշներն ու ամօթխածութիւնից գլուխը կախեց:

Յնիսէն տարաւ աղջկան և յանձնեց փեսացուին, որը շուտափոյթ հասցրեց իր ձեռքը: Սակայն զարմանալին այն էր, որ աղջիկը, կարծես թէ, քանի մի անգամ ցնցւեց ու դժւարանում էր խաչեղբօր ձեռքը թողնել. բայց Գելան առաւ ձեռքը և այնպէս սղմեց, որ ոսկրները ճռճռացին ու քիչ մնաց աղջիկը ցաւից բղա-

<sup>2)</sup> Վերացիք սովոր են հացկերտութը վերջացնել բոլոր սրբերի անուով բարեմաղթութիւն անելով մի-մի: Բաժակ գինի դարակելով:

ւէր։ Առաջ ընկաւ Յնիսէն և նրան հետեւեցին հարս ու փեսան մինչև փեսայի բարիսիլների մօտ, որտեղ հարսի վրա հոգաւոարութիւնը կրկին խաչեղբայրը պէտք է յանձն առնէր։ Առաջին բարիսիլում նստոտեցին սովորաբար <sup>1)</sup> խաչեղբայրն ու նորահարսը. նորափեսան պէտք էր ձի հեծած հետեւէր նրանց. որովհետեւ մինչև պսակադրութիւնը չէր կարող հարսին մօտենալ։ Երկրորդ բարիսիլի վրա բարձեցին աղջկայ բաժինքը և այս կերող մակարների երգեցողութեամբ, հրացաններ արձակելով ու հարաց-հրոցով դարձան դէպի իրանց գեղը։

## V

Յուրա և մարախլապատ դիշեր էր, ու ոչ այնքան մութը՝ բաւականին եկած ձիւնի պատճառով։ Փչում էր ներքնաքամին լնդմիջաբար շաշելով ու մանր բայց սառցակերպ ձիւնը ծեծում էր զնացւորների երեսը։

Փոքր տղան, ոտից մինչև գլուխը քուրքի, եափնջի և բաշլուզի մէջ փաթաթւած, քշում էր ձիուն շտապեցնելով, որովհետեւ ձիւնը ճանփան բռնել էր և ձին դժւարանում էր առաջանալ, այն ինչ դեռ ևս բաւական երկար ճամփա ունէին նրանք կտրելու։

Մակարները ջիրիթից և քէֆից տաքացած՝ բարիսիլից բաւականաչափ հեռացել էին ու երբեմն միևնաց վրա ձին վրա գցելով, երբեմն մէկը միւսի գդակը յափշտակելով ու դէն գցելով՝ երրորդն էլ ձին չափ գցելով կախւում վրայից ու դդակը բարձրացնելով տաքնում էին ու ժահանակ էլ անցկացնում։

Յնիսէն նստած էր բարիսիլի վրա, բաշլուզը յետ գցել ու գդակը ծոծրակի կողմը յետ քաշած՝ դէմքն ու ճակատը սառցնու քամուն էր դէմ դրել։

Մաքուր ծկն էր թէ ժամանակի անցնելը նրան միջոց տւեց կարծես մտածելու և միայն հիմի կարողացաւ նա իր դրութիւնը քննել։ Միայն այժմ զգաց առաջին անգամ զարթած սէրի քաղց-

<sup>1)</sup> Ազժմ ալս սովորութը փոխւել է. վերջին ժամանակներում, նորափեսա-նորահարսն ու խաչեղբայրը միասին են նստոտում հէնց տանիցն և եթ. որովհետեւ պսակադրութիւնը մեծ մասամբ աղջկայ գեղումն է կատարւում։

րութիւնը և հետը միասին այն տանջող գրութիւնը, որը պարտա-  
ւորեցնում էր սրան իր կողքին նստած տարփալի էակի հետ բոլո-  
րովին այլ կերպ վարւելու:

Նա դարձրել էր զէմքը քամուն ու ձիւնին, որոնք անարգել  
ծեծում էին արագ-արագ. նա սրանցից փոքր ի շատէ թեթեռ-  
թիւն և հանգստութիւն էր սպասում:

Նա կարծում էր, որ ճակատը հովանալուն պէս արիւնն էլ  
կանդորրւէր և ուժգնապէս զարկող սիրտն էլ կը ստանար իր սովո-  
րական զարկը: Սակայն, դժբաղտապէս, յոյսը խաբում՝ էր սրան և  
տեսնում էր տրտմագին, որ Զիձիացի պատկերը անջնջելի կերպով  
գրոշմէլ էր նրա սրտում ու մեղմօրէն, զգոյշ և հրճւանքով տրո-  
փեցնում այնպէս զգուշաւոր հոգատարութեամբ, ինչպէս մայրը  
իր անդրանկին, ինչպէս մետաքսի բոժոժը մեղմ զեփիւալը, որի  
մննդելը նոյն ինքը բնութիւնն էր յանձնել նրան:

Օնիսէն ուխտեց չնայել աղջկայ կողմը, չխօսակցել հետը. որով-  
հետեւ գիտէր թէ ինչ վտանգալի փորձանքի մէջ էր ընկնելու, եթէ  
որոշածին հակառակ վարւէր:

Նա ոչ միայն նրա կողմը նայելուց ու հետը խօսելուց էր վա-  
խենում, այլ և շարժւել ու ուժգին հոգոց հանելն անգամ չէր հա-  
մարձակւում, որպէս զի որ և է անսպասելի հանգամանքով չկարէր  
այն բարակ թելը, որից գլուխ դուրս տանելն էր կախւած:

Զիձիան էլ նստած էր լուս ու մունջ, զլուխը կախւած և բան  
չէր ասում: Ով գիտէ թէ ինչեր էր խոճում նա, թէ ինչպիսի  
զգացմունքներ էին յուզում նրա սիրտը, որ կողմը կամ ինչպիսի  
ուժով ալեկոծւում: կամ թէ ինչպիսի մտածման մէջ էր խորասուզ-  
ւել, ինչ էր պատկերացել աչքի առաջ ու քարացած անշարժ  
մնացել...

Դիտողի համար նրա սիրտը, այն վայրկեանին, մի մութն  
անգունդ էր, որտեղ մարդու ոչինչ չէր որոշի, որտեղից ոչ մի հե-  
տեանք չէր դուրս բերի, և նրա սրտի խորհուրդների հասկանալ  
ցանկացողը, առանց պատասխան ստանալու, յուսակտուր յետ պէտք  
է կասէր:

Զիձիան հագել էր ոսկեթելով ժապաւինած ախալուխ և վրան  
մի շալ գցել, որոնք վատ եղանակի և քամու դէմ չէին կարողա-

նում բաւականին պաշտպանել: Նա հետզհետէ սառչում էր, բացց և այնպէս ձայն չէր հանում, թէև պաղը մտել էր սրա ամբողջ կազմում և չափագանց նեղացնում: Նրա խաչեղբացը բոլորովին չէր էլ երեակայել այսպիսի հանգամանք, այն աստիճան զբաղւած էր իր սեփական դրութեամբ: Նա քիչ բան չունէր մտածելու. որովհետև ազգականները Զիձիացի պապացայ կեանքի մէջ նրա խղճին և հոգատարութեանը յանձնեցին: Այս աղջկայ անւան ու պատի պաշտպանութիւնը, նոյն իսկ ամուսնու. դէմ, նրա սպարտականութիւնն էր դարձել միայն լեռնականների այն սովորոյթի համեմատ, որ «գայլն էլ գիտէ ամանաթ պահելլրա»: Եւ այն միջոցին, երբ նրա մէջ զարթել էր վտանդաւոր փորձիչ զգացմունք, որը մտել էր մինչեւ նրա հոգու խորքերը, ծծում նրա ուղեղն և ոսկրները անդժաքար կռծում, ահա այն միջոցին Յնիսէի վրա դժւար կատարելու պարտականութիւնն էին բարձում:

Քամին, վաս եղանակն ու ցուրտը իրենց ներգործութիւնն ունեցան. աղջիկը չը կարողացաւ դիմնալ ու սկսեց սառսուալով դողդողել: Սրա հենց առաջին շարժումն գործելուն պէս ցնցւեց և ակամայ նայեց աղջկայ կողմը: Նա տեսաւ աղջկան բարակ հագուստի մէջ ու սիրտը կտոր-կտոր եղաւ: Զիձիան, նրա Ասուածը, նրա կուռքն ու սրբութիւնը, այս նեղութեան մէջ էր և նա իսկի չէր էլ մոածել սրան հոգալ-խնամելու:

Երեսը նրա կողմը դարձնելլ, մի անգամ՝ նայելլ, մի թեթև հողումն բաւական էր, որ վառօդի պէս բռնկէր և ամբողջ մարմնով բոցավառւէր:

—Վազ, զլուխս քեզ չարիփոխ լինի, աղջի... Ասուել ես բոլորովին ու ես մոռացել եմ քեզ.—ասաց Յնիսէն այնպէս, որ ձայնի մէջ դողդողոց նշմարւեց:

—Վնաս չունի, ցաւդ առնեմ.—արտասանեց աղջիկը նազ ձայնով և, ով գիտէ ինչ պատճառով, թերթերունքի վրա երկու մարդարիս ցոլացին:

—Նաչար, ինչ ասել է վնաս չունի... Դուն որ հիւանդանաս, ես էլ մը ջուրն ընկնեմ.—այս խօսքերով Յնիսէն բարձրացրեց եափնջու վեշը, ծածկեց Զիձիային, որի թաց շալը վերցրեց ու այնտեղ և եթ բարխիլումը պցեց: Ցետոյ ամուր փաթթեց եափնչու

մէջ և աղջկաց նազ մէջքը թեւապատելով կպցրեց իր կրծքին։ Աղջկան գրկելուն պէս Օնիսէի սիրոը ուժգնապէս տրոփեց, կծկւեց ու դաշրեց բաբախելուց, դողաց կրկին և յանկարծ տրոփելով ճանփա տւեց աղագինթաց և փրփրալից արիւնին, որը տոչորուն ու երանութիւն պատճառող զգացումներով տարածւեց ամբողջ մարմնի մէջ և ցրւեց բոլոր երակներում։ Զիձիան էլ լուռ տապ արած ու անմռունչ, կարծես թէ այն մարդու դրութիւնից ահաբեկ ու գերւած, կամ թէ զգացել էր նրա վիշտը, չէր դիմագրում Օնիսէին։ Սյս մարդը կորցրել էր մտածելու ընդունակութիւնը, մոռացել ինքն իրեն, սեպուհ պարտականութիւնն ու հետզհետէ և առաւել ուժգին թեւապատում, աւելի ու աւելի գրկում աղջկան և ամեն մի շարժումով ու շքը գլխից թռցնում։

Սրան գերել էր միմիայն մի զգացմունք, որը ականջում փրսփրսում էր մեղմօրէն, թէ նա բաղդաւոր է, թէ այս երջանկութեանը ոչինչ չի կարող համեմատւել աշխարհին երեսին, թէ նա այլ ևս գործ չունի մարդկանց և աշխարհի հետ. նա այլ ևս ժամանակ չունէր նրանց մասին մտածելու։ Օնիսէի գլուխը կամաց-կամաց թեքելով մօտենում էր Զիձիայի երեսին, որը սաստիկ այրում էր մարդու կիզիչ վինչոցից։ Նա հետն ու հետը մօտենում էր ու ականջին փսփսում այնպէս անուշաճայն, այն քաղցրութեամբ, որով կարող է մաքուր սիրով վասւած սիրահարը, ինչպէս մի խանդավառ մարդ, որը մոռացել է բոլոր ճարտասանական դարձւածքները։

—Մրսում ես, դարձեալ մրսում ես... իմ անգինս—կարճ-կարճ ու ընդհատօրէն ասում էր Օնիսէն։ Սակայն այս քանի մի խօսքերի արտասանելու միջոցին ձայնը այնպիսի էլեէջներով էր հնչում, այնպիսի մի ներդաշնակութեամբ զարդարւած լսում, որ տեսնողն խակոյն կը նկատէր նրա սրտում բորբոքւող կրակը և այն բուռն սէրը, որ նրա հրամայողն էր դառելը Զիձիան, նապաստակի պէս տապարած, մարդու կրծքին էր կաել և նրա մանուկ սիրտը ահաբեկ ցնծութեամբ արովիելով համապատասխանում էր աղջկաց գրութեանը։

Մինչև այժմ՝ սպահանում էր նրան ինքնազգացումն, մինչև այս վայրիեանները ոյժը կարողանում էր ընկճել զգացմունքին, բայց հիմա, երբ Օնիսէի գլուխը հետն ու հետը թեքում էր, երբ նշա-

դէմքը մերձենու մ էր կամաց-կամաց Զիձիայի երեսին, այս վերջինը զգում էր մարդու կիզիչ շնչառութիւնը և համբերութիւնը հատած՝ ինքն էլ անակնկալ կերպով խորը հառաչեց ու երախտաղգաց աչերը յառեց նրա երեսին:

Միւնոյն զգացմունքից գերւած, վառւած միւնոյն ցանկութեամբ, մի աներեւովթ ոյժ մօտեցնում էր նրանց իրարու: Ռովէ ևս—ու երջանկութեամբ արբեցած-շշմածների շրթունքները շափեցին մէկզմէկի:

## VI

Ո՞վ գիտէ, մինչև երբ կը տեէր սիրահարների միմեանց փաղաքշելը եթէ մի անակնունելի զէպք չընդհատէր այն: Մակարներից մէկը խիստ մրանլով կամեցել էլ արազով տաքանալ ու այս պատճառով ձին կանգնեցրել էր և սպասում էր այն բարխիլի մօտենալուն, որի մէջ լիքը տկնորներ արազ կար:

Երբ բարխիլը մօտեցաւ, տեսաւ, որ Յնիսէն ցրտից պաշտպանւելու նպատակով գլուխը եամինջու տակն էր կոխել: Լեռնեցուն այս տեսող վարմունքը տհաճ երևեց, որովհետև տղամարդը չըպէտք է իր մրսկանութիւնը կին մարդուն ցոյց տար. լեռնեցու կարծիքով ամօթալի էր այս և սոտրացնող, ու լնկերոջ վարմունքը վերաբերում էր նոյն շափով ընկերների անունին, որչափով նոյն իսկ վարւողի անձնաւորութեանը:

Այս պատճառով մակարը մտրակեց Յնիսէին ու թէ և հանգքով բայց զգացնելով ասաց.

—Ի՞նչ ես անում, անպիտան, ով գիտէ մրսել ես:

Յնիսէն վախեց և սառսւաց: Նա վեր նայեց ու տակաւին անցած րոպէական երջանկութեամբ արբեցած՝ չէր կարողանում ինքն իրեն հաշիւ տալ: Մկզբումնա զգում էր միմիացն, որ իր երանութիւնը խանգարեցին, ոչնչացրին իր րոպէական երջանկութիւնը. բայց թէ ի՞նչի, ով սրանում ոչինչ չէր հասկանում:

Այս կացութեան մէջ նա մի վայրկեան մնաց սակայն: Յնիսէն շուտով ուշքի եկաւ և պարզապէս տեսաւ անողորմ ճշմարատութիւնը, որը նրանից խլում էր ոչ միայն րոպէական վայելութիւնը, այլ և առագայում անդորրութեան յոյսն էր յափշտակում, և սառը քըր-

աինք վրա տւեց նրան։ Մի վայրկեան առաջ նա գերւած էր մի-  
միայն մի զգացմունքից. նա սիրում էր առանց հաշիւ տալու ինքն  
իրեն, ենթարկում էր այս ոժին, այն բոպէին մոռացել էր ամեն  
բան, բոլորը, մարդկանց էլ և նոյն խակ մոռածելն էլ և յանձն ել  
սոսկ դողդողացող սրախ տրոփիւնին՝ նա մանաւանդ առաւ ել երանելի,  
որ այս զգացմունքին համակրում էին. — այն ինչ հիմա նա եղաւ  
մի մարդ, որը դառնում է, հաշիւ համար տալիս իր վարմունքի պատ-  
ճառով և ծանր ու թեթև անում իր դրութիւնը։

Օնիսէն պարզապէս տեսաւ իր սիւալմունքը, աշկարա նկատեց  
իր ցանկութեան կատար ածելու անկարելիութիւնը և ապաշաւու-  
թեան կայծը տուրելով անցաւ նրա մոքում. — ուրիշն զուր էր  
տրոփիւմ իմ սիրով ապագայ երջանկութեան յոյսով, ուրեմն զուր  
տեղն էր վառւում և անհանգստաբար բաբախում իմ սիրով սին յոց-  
սերով խաբում ու միւռոյն զգացմունքով ալեկոծւած ջիձիացին էլ  
ի զմուր էր հրապուրում երջանկութիւն վայելելու... Այս հարցերը  
վայրինաբար ծնւում էին նրա մոքում, վայրինաբար փոխարինում  
միմեանց ու հանգում միւռոյն վճռի, միւռոյն պատասխան ստա-  
նում և կարծես թէ մէկը նրա տկանջին ծւալիս լինէր. «ի զուր  
տեղն ես զլուխտ մահու տալիս»։

— Ի՞նչ է պատահել քեզ, այ տղայ, հարբած հօ չես. — լոռու-  
թիւնն ընդհատեց մակարը, որին Օնիսէն նայում էր ապշած։

— Հը, ի՞նչ ասիր. — արտասանեց Օնիսէն, որի մոքիցն ու սըր-  
աից չէր հեռացել տակաւին արմատացած զգացմունքը։

— Հիւանդ հօ չես. ի՞նչ ես անում։

— Զըգիտեմ, Ասուած է վկայ... մի տեսակ վաս եմ զգում  
ինձ։

Մակարը մօտեցաւ բարխիլին, ձիուց վար թեթւեց և ուղղակի  
Օնիսէի երեսին նայեց, որը երեսը միւս կողմը դարձնելով վրդով-  
ւած արտասանեց։

— Ի՞նչ ես նայում այդպէս. ի՞նչ ես ուզում ինձանից։

— Խիի ոչինչ, — զարմացաւ մակարը և աւելցրեց. — ուզում էի  
տեսնել տաքութիւն չունես արդեօք, կամ թէ կարմրած չես հօ։

— Մթնում ի՞նչ պէտք է տեսնես, ի սէր Աստուծոյ. — միւռոյն  
եղանակով պատասխանեց Օնիսէն և փոքր ինչ լոռութիւնից յետոյ

աւելցրեց. — տաքութիւն էլ ունեմ, գլուխս էլ է ցաւում ու պարուում էլ:

Մակարն այնպէս նայեց նրան, կարծես թէ չէր հաւատում, ուզում էր բան ասել, բայց զսպելով իրեն՝ ձիու կուշտը մորակեց: Երեսում էր, որ մի միտք փայլեց նրա զլսում, որովհետև ցուրտն էլ մոռացաւ ու արաղն էլ, որի համար եկել էր այնտեղ:

Անցաւ բաւական ժամանակ այս ընդհանուր լուսութեան մէջ, ամենքն իրենց ուրախ խորհուրդների հետն էին, սեփական մոքերով զբաղւած և անսովոր լուսութեան մէջ ընկղմւած:

Նրանք այս կացութեան մէջ էին, երբ օդը թնդաց ուրախ երգով, որին հետևեց այս ոտանաւորը.

Հնչեցրու այդ լարերը  
Իրը թէ ճիանուրինն է,  
Հարևնիդ կնոջը մի' մերձենար,  
Նա էլ տանու որդի է:

Այս խօսքերը դառնապէս կսկծեցրին Յնիսէի սիրտը, որին երգը հետն ու հետն մօտենում էր. որովհետև առաջ գնացած մակարները մի տեղ կանգնած և բարխիլներին սպասելով՝ սկսել էին գւարճանալ:

Անցաւ քանի մի վայրկեան և ահա ձիաւորներն երեւացին, որոնց բարխիլը մօտեցաւ:

Պատանի մակարները հանաքներ էին անում իրենց մէջ, Յնիսէի հետն էլ հանաք արին, բայց ստիպւեցան դադարել, որովհետև առաջուց եկած մակարը հասկացրեց նրանց, որ Յնիսէն հիւանդ է ու նրանց կատակների գլուխ չունի:

Այս պատճառով մակարները լուցին, բայց և այնպէս բարխիլց չէին հեռանում:

Դադարեց յանկարծ գւարճութիւնը և սրան փոխարինեց արխրամած լուսութիւնը. ներքնաքամին շարունակ փշելով բերում էր հետը մանր ու կարծր ձիւն, ճերմակացնում էր բոլորովին եափնջաւոր ճանափորդներին:

Այս գէս լուս ու մունջ գնում էին մակարները, սիրտը տիսուր ու մթագնած խաչեղբացը և տանում անփորձ աղջկան, որի սիրտն առաջին անգամն էր խսկական սէր զգացել, նրա երանութիւնը

կիսով չափ վայելել, բայց չգիտէր այն, թէ սրա հետեւանքը ինչին կը հանդիպեցնէր:

Անցաւ քանի մի բողէ և խիտ մարախուղի մէջ ցոլաց լոյսը և շէնքերի պատկերը աղօտ կերպով երեւաց: Բողէ ևս—ու բոլորն էլ նկատեցին, որ գեղին մօտեցել էին: Օնիսէն միայն նստած էր սփրթնած, գլուխը կախած և տխուր մոտածմունքներում՝ խորասուզւած՝ ոչինչ չէր նկատում:

Մակարները զգացին, որ այս կերպ լուռ ու մունջ գեղ մանելը վայել չէ հարսնաւորներին, ոչ տեղական սովորոցթին և ոչ էլ իրենց ջահելութեանը, և այս պատճառով ճշաց նրանցից մէկը, հրացանը թնդաց և մի երկրորդը չափ գցեց իր ձին աչքալոյս տալու: Ամեն բան շարժւեց, աղմկւեց ու կեանք ստացաւ. օդը լցւեց երգի ձայնով ու հարայ-հրոցով, եկորների վրա կեանք նշարւեց:

Օնիսէն սթափւեց, բայց բոլորովին հեռացել էր միւսներից, նրա սիրու բոլորովին այլ զգացմունքով էր լցւած: Նա համոզւած էր, որ գեղը մոնելով կորցնում էր իր տարփալուն, որի անփորձութիւնը ու ամօթխածութիւնը չէին թոյլ տայ նրան ժողովրդեան սովորոցթի դէմ գնալ և սրա հետ միասին կորցնելու էր իր անդորրութիւնը...

## VII

Ահա մոտան գեղը, մօտեցան եկեղեցուն, որի առաջ կանգնել էր մի պատկառելի ծերունի, մազերը ձիւնի պէս ձերմակած, և հրճւանքով նայում էր եկորներին: Նրա բարեսրտութիւն արտացայտող գէմքի վրա երեւում էին մի տեսակ կնճիռներ, որոնք առաջին անգամ տեսնողի վրա պատկառանք էին ազդում, և խելացի աչքերը, բացի բարեսրտութիւնից, հրամացողապէս էին արտափայլում:

Ալիզարդ, շնորհալի արտայաշտումով, հրամացական շարժւածք-ներով ու վեհ, հաստատակամութեան դրօշմ կրող գէմքով սպասում էր ձորի նահասկետ Գոչան, գատաւոր, իր ժողովրդի հայր, — նորատիներին: Նա առաջինը պէտք է օրհնէր նորապսակներին և ծնողական գորովով մաղմէր նրանց երջանկութիւն: Օնիսէն նազեց

իր հօրը, որի առաջ խոնարհւում էր ամբողջ ձորը և որի խօսքը կատարւում անդիմադիր, գոյնը նետեց բոլորովին և լեզուն կարկամեց ամբողջովին:

Բարխիլլ (սահնակ) կանգ առաւ, սակացն Օնիսէն այն աստիճան մոտացր ել էր, որ չէր կարողանում վար իջնել, մինչեւ որ հայրը չգոչեց.  
—Վար իջիր, էլ ինչին ես սպասում:

Զահիլ տղան ցատկեց բարխիլից, կանգնեց այնտեղ և եթ ու մեռելի գոյն սուացած՝ քարացածի պէս նայում էր մարդոցը, որոնք նրա աշքում ճամճերի պէս էին խառնւում:

Կին մարդիկ շրջապատեցին նորահարսին, իջեցրին և տարան Գոչարի մօտ, որը գդակը վերցնելով Աստծու անունն ցիշեց ու ասաց.

—Ասուած օրհնէ քեզ.—առաւ ձեռքը ու խսկոյն և եթ աւել ցրեց.—խեղճ, սառել ես բոլորովին, գողում ես ամբողջ մարմնով:

Այս խօսքերն արտասանելով մօտեցրեց միւս ձեռքն էլ և սկսեց այնպէս տրորել աղջկայ ձեռքերը, որ կարծես թէ սրանով ուզում էր տաքացնել: Յետոյ հեռացնելով մի ձեռքը մեկնեց դէպի մօտ կանգնած Գելային և աղջկայ ձեռքը դրեց նրա ափի մէջ.

—Ասուած միացրեց ձեզ, թող մարդ, չբաժնէ, —որոշապէս արտասանեց ծերունին:

Այս խօսքերի վրա աղջիկն, կարծես թէ, աւելի ուժգին սառաւաց և անհանգիստ կերպով սկսեց շնչել, այն ինչ Օնիսէն օրօրւեց, բայց մօտը կանգնած մի մարդ բռնեց նրան: Ժողովուրդն երգեց «Ճւարուլին» ու հարսն և փեսան մտան եկեղեցին, որտեղ նրանց սպասում էր զգեստաւորւած քահանան, իսկ Գոչան գարձաւ որդուն:

—Ի՞նչ է պատահել քեզ,—հարցրեց նա և փորձառու աչքերով սկսեց դիմուն:

—Իսկի էլ ոչինչ, —կարճ կերպով պատասխանեց Օնիսէն և զլուխը կախեց, որովհետեւ չկարողացաւ հօր յառած աչքերին դիմանալ:

—Ել ի՞նչ ոչինչ, քանի որ երեսիդ գոյն չկայ և ինքդ էլ հազիւ ես կարողանում ոտիդ վրա կանդնել:

—Մի տեսակ վատ եմ զգում ինձ:

—Ամու ես զգում քեզ.—շարունակեց հայրը և նորից սկսեց

զիսել.—ուրեմն հարսնիքումն ի՞նչ ունես որ: Տուն դնա ու պառկիր... մի ուրիշը խաչեղբայր կը լինի:

Այս խօսակցութեանը միջամտեցին Գելայի աղքականներն ու սկսեցին Յնիսէին խնդրել, որ այսպիսի հանգամանքում բարձր թողի չանէր ու իր բարեկամ Գելային մենակ չթողնէր, սակայն Յնիսէն ուրախացաւ, որ իրեն սասարիկ տանջող պատկերից կը հեռանար և սեփական գժբարութեանը դոնէ տկանատես չէր լինելու։ Նրջւեց ու օրօրեւելով զիմեց գէպի իրենց տուն, որտեղ մութը ճնջարանում բերանքսիվար վայր ընկաւ։

Այն ինչ Գոչան մոտաւ եկեղեցին և պսակադրութեան հետ միասին նայում էր նաև երեսը քօղարկւած աղջկանը, որը ըսպէ առ բուզէ սառսուում էր և ընդմիջաբար շնչելն ուժգնապէս աւելցնում։

Գոչայի մօտ կանգնած մի քանի մարդիկ դառնում էին գէպի ծերը ու ցաւակցաբար ասում։

—Խեղճ, ինչպէս մրսել է է...

Սակայն Գոչան պատասխանելու փոխանակ տրորում էր ձեռքով ճակատն ու առանց այն էլ կիտած ունքերը աւելի խիստ կիտում։

Պսակադրութիւնը լնթանում էր ըստ սովորոցթին, Յնիսէի փախարէն մի ուրիշ տղայ հանդէս բերին իրը խաչեղբայր. ամեն բան պատրաստ էր։ Քահանան նախ մօտեցաւ փեսացւին ու հարցրեց—իր յօժար կտմքով է արգեօք պսակւում այս աղջկայ վրա և ցանկանում պսակադրութիւնն ընդունել, թէ ոչ։ Փեսացուն ժըպտեց, կարմրեց և գլխի շարժումով իր համաձայնութիւնն արտայացեց։ Յետոյ միւնոյն հարցումով զիմեց աղջկան, որի շնչառութիւնից միայն կարելի էր նկատել, որ կենդանի էր։

Աղջիկը պատասխանելու փոխարէն գլուխը կախեց ու նրա համար ուրիշ կին-մարդիկ—միշտ ուրիշի փոխանակ խօսողներ—աղմուկ բարձրացրին։

—Հայ, հայ, որ ցանկանում է... էլ ինչ հարցնել կուզէ... եթէ չկամենար, էլ ինչի էր գալիս այստեղ... միմեանց բերանից խօսք էին խլում, բայց Զիձիան լուռ էր։

—Ուրեմն յօժար կամքովդ ես պսակւում։—կրկնեց քահանան։

—Իր յօժար կամքովն է պսակւում, իմ ամենս, ասպա թէ ոչ ով է սրան ստիսլում։—լուեց գարձեալ կին-մարդոց կողմից ու բա-

ւարարութիւն ստացած քահանան սկսեց եօթներորդ սուրբ խորհուրդը կատարել:

## VIII

Պսակադրութիւնը անցաւ սովորական ուրախութեամբ. ժողովւած բազմութիւնը, մակարներն ու մանաւանդ կին-մարդիկ չեին հանդատանում և շարունակ փսփսալու նիւթ էին գտնում, ու գւարձանալու պատրաստած՝ ոչ մի առիթ աչքից չեին փախցնում; որ քահ-քահ չը խնդացին, թէև ծիծաղակիթ բան էլ չը պատահէր:

Միմիայն նորահարան էր մնացել ճնշւած քարացածի պէս և Գոչան, որի դէմքն էլ ինչ որ մի հաստատակամութեան, յարգարժան նշոցներով ցոլանում էր: Սրան նայողը կը նկատէր, որ նա յտփշտակ-ւել էր ու զիղ հաւատով և գլխովին անձնատուր եղել իր զգացմունքին ու վերաւաքում իր ջերմագին աղօթքները դէպի վերին Տե-

սուչը:

Գոչան իր ժողովրդի ծնող հայրն էր ու հետեւապէս այնպիսի նշանաւոր դէպքերում, ինչպիսին է պսակադրութիւնը, անկարելի էր, որ իր որդոց համար շազօթէր: Բացի սրանից, նա հաւատում էր, որ ժողովրդից ընտրւած լինելով՝ Աստուծու ձեռքով էլ լնտրւած պէտք է լինի, որովհետեւ, բացի լնդհանուր սովորութիւնից, Չայն բազմայ, ձայն Աստուծոյց աւանդ գարձած հաւատալիքն ևս նրա արիւնն ու մարմին էր գարձել: Գոչան համոզւած էր, որ իր ջերմեռանդ աղօթքը կընդունէր Վերին Տեսուչն և, հաւատով ու յոյսով լցւած, այս մարդու դէմքը, ջերմեռանդաբար աղօթելու միջոցին, մի ինչ որ յաղթանակող, ժողովրդին տիրապետող պատկեր էր ներկայացնում:

Այսպէս էր ծերունի Գոչայի պատկերը, որի վրաց շարունակ հոգատարութիւնը, մտածելը, փորձառութիւնը ու մտաւոր աշխատանքը, առաւել պատկառանքի, խելացիութեան և մարդկայնութեան դրօշմն էին դրել: Այս դէմքը փոփոխուում էր երբեմն, նայելով թէ ինչի մասին էին նրա խոհերն ու մոքերը և նրանց համեմատ էլ երեսի գոյնն էր փոփոխուում:

Երբեմն մի հոգս կիտում էր նրա ունքերն, մթնեցնում ճակատը, բայց այս նմանում էր արևի դէմ ըոպէապէս կանգնող ամ-

պին, որ կարող էր միայն մի բովէ մթնեցնել, — բայց աղօթողի աչ-քերը, դէպի երկինք յառած նորից յազմանակող ու զւարթացնող շողերով հրավառում էին:

Գոչայի դէմքից աշկարա երևում էր, որ նրա բազմափորձ սիրոն զգում էր մի ինչ-որ մօտալուտ զժբաղկութիւն, նրա փորձ-առու աշքերի համար բաւական էր մի անգամ աղդու նայել և նրա վարմունքի մէջ, հիւանդութեան փոխարէն, մի այլ պատճառ գտնէր. բայց ի՞նչ էր այս պատճառը, որ կողմից էր քամին փչում, որ նրան, ինչպէս վայրենի կենդանուն, վտանգի հոտ էր առնել տալիս ու վախենում—ծերունին գլխի չէր լնկնում:

Պասկաղրութիւնը վերջացաւ, հարս ու փեսային տարան տուն, պտտցրին նրանց աթեշտունի (օջախ) շուրջն ու բաժնեցին, որպէս զի հարսը աղջկերանց մօտ փոքր իշատէ ազատութիւն ունենար, իսկ ժողովուրդը Գոչայի ձեռներեցութեամբ լնթրիք՝ էր նստել:

Ի՞նչ ասել կուզէ, փեսային էլ, գլխին ծովաւոր թագը զրած, այնտեղ և եթ նատեցրել էին մէջտեղում, թայ-թուշերը չորս կողմը պատել և զւարճախօսութեամբ զբաղւած ու բաղդաւորութիւնից ցնծող նրան ժամանակ էին անցկացնել տալիս:

Ընդհանուր զւարճութիւնն, կեր ու խումը, երգն ու ամուրեցին» հետևում էին միմեանց ընդմիջաբար. ծերերից մէկը կըվերցնէր ձեռին փանդիռն ու մատնազարկով ծընզգընգացնում տխուր լարերն և հետը միասին կերգէր մի տխուր, բայց սիրո յուզող, որ և է քաջազուն հերոսի արարքների վերաբերմամբ հեղինակած մի ոտանաւոր:

Այն վայրկեաններում զւարճացող, բարձրագոշ ամբոխի աղմուկը դադարում էր և սկսում էր տիրել խորին լուսութիւն և ամենքը սրտատրոփի լսում էին այն ժողովրդական երգը, որի մէջ հայրենիքին անձնւիրութիւնն և ծառայութիւնը, կարճութիւնը և ազնւութիւնը այնպէս առատօրէն դափնիներ էին վաստակում, և որի մէջ մարդուապարտառութիւնը կեանքում այնպէս սպարզօրէն նկարագրում և ուսումնասիրում է...

Սրան փոխարինում էր նորից «ամուրին», յետոյ «գողոման» և այսպէս շարունակում մինչև լուսանալը:

## IX

Այս ընդհանուր զւարձութեան միջոցին, երբ Գելացի տունը հաւաքւած ջահիլները, սառուցի վրայ փռւած անհոգ գառնուկների նման, ուրախ-զւարթ խաղում էին, Յնիսէն ընկած էր բերանքսիվար և ծանր ու տաքցած գլուխը չէր կարողանում բարձից վեր բարձրացներ: Արիւնը լցւեց աչքերը, որոնք երբեմն կայցակի նման էին փայլատակում, դլուխը սասախկ ծանրացել և կարծես թէ քներանքներում մուրճերով էին զարկում: ականջներում լսւում էր շառաչի ձայն և ամբողջ մարմինը կրակի պէս այրւում էր և անհանգիստ լինում: Արագ և ուժգին շնչառութիւնը պարզ կերպով ցոյց էր տալիս, որ մի բան նրան նեղութիւն էր պատճառում և կոների անմիտ շարժումներով կարծես ուզում էր հեռացնել իրենից:

Այս գրութեան մէջ գտնւելով՝ Յնիսէն երբեմն գլխովին կըսառչէր ու պաղ քրախնք վրայ տւած կը շրջէր միւս կողքի վրայ, կը նստէր, ապուշ կերպով աչքերը կը յառէր մի առարկացի վրայ, թեւերը թուլացած գլուխը կը կախէր և բերանը կիսաբաց՝ քանի մի ժամանակ կը մնար այսպէս: Յետոյ նորից անհանգիստ յետ կընկնէր անկողնի վրայ և աչքի առաջ խաղս էին բռնում զանազան պատկերներ, մէկը միւսից զարմանալի, աւնլի աղշեցուղիչ, բայց որոնց մէջ չըկար ընդհանուր միացնող շաղկապ:

Սակայն այս մի բուգէական ինքնամոռացութիւն էր, որովհետեւ ճշաց Յնիսէն յանկարծ և ոտի ելաւ սփրթնած: Կանգնեց, շուտով տրորեց աչքերը, որոնցում փշերի նման ծակող բաներ էր զգումնեւ «չի կարելի, անհնարին է» ասելով նետուեց դէպի դուռը:

—Ուր ես գնում: —այնտեղ և եթ կանգնեցրեց նրան մի ձայն և դուան շէմքի վրա երեաց Գոչան ձեռին վառւած մարլս բռնած:

—Գոչան: —չըսպասածին պատճառով բացագանցնց Յնիսէն յետ ընկրկելով ու մնաց կանգնած:

Ծերունին նացեց որդուն, զիտեց ոտից մինչի գլուխ, ներս գնաց տուն և նստեց:

—Առ, պատի մէջ ամրացրու: —մէկնեց հայրը որդուն մարխը, որ Յնիսէն առնելով տարաւ բուխարու թարաքի վրայ ամրացրեց:

—Ուր էիր գնում: —գարձեալ նոյն հրամացական, թէև անդորր, ձեռով հարցրեց ձորի նահապետը:

—Ոչ մի տեղ. —ուրիշ բան չըկարողացաւ ասել Յնիսէն:

—Այդ պատասխան չէ, —նոթերը կիտեց ծերունին, որը գաղտնասրտութիւն չէր սիրում:

—Մտադիր էի հարսնիք գնալ...

—Ել ինչ հարսնիք գնալու ժամանակն է, այժմ հարբածներից աւել ով կայ այնուել:

—Սարերը ձիւնով ծածկւեցին և վայրենի կինդանիները ներքեւ կը գային. մտածեցի որ հարսնիքում որսորդ կը լինի, համկալս կը շինեմ և միասին որսի կը գնայինք:

Յնիսէն ձեռաց մտածեց այս խօսքերի ասելն, որովհետեւ հայրը աչքերը նրան յառած զիտում էր, այն ինչ Յնիսէն չէր դանկանում իր սիրութ բանալ:

—Այ տղայ, ի՞նչ ես երեխայ-երեխաց խօսում:

—Ես հանաք չեմ անում պատասխանեց Յնիսէն, որի օձիքից բռնել դադար չէին տալիս նրան:

—Այսպիսի նոր զրած ձիւնի վրայ ինչպէս կարելի է որսի գնալ... երեխ ուզում ես, որ լեռնաթափը (զաւալ) քեզ՝ մի տեղ տակովն անի:

Յնիսէն չըկարողացաւ երեւակայել, որ ճշմարիտ վտանգաւոր էր նոր զրած ձիւնի վրա որսի գնալն ու այսպիսի թեթևամտութիւնն, զուր տեղն գլուխ ցաւեցնելը փորձառու մոխեցին հաւնելու չէր:

—Ի՞նչի չէ, —ուզեց որդին իր սխալը ուղղել, —քամի կար, ու սարի գագաթների վրա ել ձիւն չէր մնայ:

Մոխեցին դարձեալ նայեց որդուն և փոքր ինչ լռութիւնից յետոյ ասեց.

—Լաիր, այ տղա, դու մոքումի ուրիշ բան ունես:

—Ի՞նչ պէտք է ունենամ—շտապով պատասխանեց Յնիսէն:

—Չըգիտեմ և չեմ էլ հարցնում.—բայցայստօրէն պատասխանեց և աւելցրեց.—Դու ինձ այն ասա, զիտես ո՞ր լնտանիքի զաւակն ես:

Այս խօսքերի վրա Յնիսէն իրաւունք համարեց զարմանքով նայել ծերունու վրայ.

—Հայ, հայ, որ գիտեմ:

— Ուրիմն չը մոռանաս այդ, պատասխանեց ծերունին ցուցամատը շարժելով և խրառական եղանակով շարունակեց. — աշխատիր, որ թշնամիդ չը ծիծաղէ վրադ...»

Զահիլ աղան զլուխը կախեց, կարծես զգաց իր սխալը և թշերը վարդագոյն ներկւեցան:

— Դէհ, գնահ հիմի, — տեղից կանգնելով շարունակեց ծերունին, — գնահ, ուր որ կուզես, միայն խօսքերս չը մոռանաս... մտաբերիր, որ ընտանիքի զաւակն ես, այն ինչ մարդս տանջւելու համար է աշխարհն եկել:

Այս ասելով ալեւորը վերցրեց մարին ու որդու հետ զուրս եկաւ գաւիթը: Այստեղ կանգ առաւ կրկին, նայեց որդուն, կարծես ուզում էր բան ասել, բայց անխօս շրջւեց և մոռաւ ընդհանուր սենեակը:

Այն ինչ Օնիսէն մնաց կանգնած քանի մի վայրկեան և առանց ինքն իրեն հաշիւ տալու չէր կարողանում տեղից շարժւել:

Սա հասկանում էր, որ հայրը գուշակել էր որդու զիտաւորութիւնը, բայց մինչև որ աստիճան է հասել այդ, գեռ ևս ալեւորը տակաւին չէր պարզել իրեն, թէւ զգում էր, որ այս կացութիւնը իր անունին էլ էր վերաբերում:

Հայրն ասում էր նրան. «Մի մոռանար, թէ որ ընտանիքի զաւակն ես, և այս խօսքերով ուզզակի հասկացնում էր այն պարտաւորութիւնը, որով մի անձնաւորութիւն շաղկապւած է մի ամբողջ ընտանիքի հետ և նրա վարմունքը հուշակ կամ արատ է բերում ամբողջ ընտանիքին: Սակայն, այս էլ չը լինէր, Օնիսէն լաւ էր հասկանում իր պարտաւորութիւնը, բոլիչական ինքնամոռացութիւնն իր համար ծանր համոզմունք էր համարում, երդւեց, որ յուզւած զգացմունքը արմատախիլ կանէր սրախցն և հէնց այս զիտաւորութեամբ բացականչեց.

— Կը գնամ, կը մոնեմ հարսանիք... մարդ եմ, գրակ ունեմ զլիսիս և սիրաս էլ պէտք է որ ինձ հազանդւի:

Այս խօսքերով դիմեց նա դէպի սանդուիքը և քանի մի ցատկումներ գործելով ցած իջաւ և գնաց Գելացի տունը, որաեղ զեռ ևս շարունակում էին սոաշ-փանդուրը նւագել և զւարճանալ, թէն լուսալէմը արդէն հասել էր:

Ամենքը ցնծութեամբ դիմաւորեցին Յնիսէին, որը ներս մըտ-նելուց յետոյ ամենից աւելի էր զւարձանում, բոլորից շատ էր եր-դում և ամենից աւելի կառակներ անում...

## X

Հարսանիքը վերջացաւ. անցան զւարձութեան առաջին օրերը: Նորահարսին տարան ջուր բերելու իր թայ-թուշերն. սովորոյթին համեմատ, այնոտեղ կորատեցին «խարիզգինաները» և ծիսակատա-րութեան համեմատ երգեցին հետևեալ երգը.

Իմ խաչեղբայր, արի,  
Կուժս ուսիս դիր...

Ե. կեանքն սկսեց իր սովորական ընթայքով գնալ:

Զիձիան դուրս կանգնեց հիանալի, հնագանդ աղջիկ էր, որ եր-բէք չէր ալարում ու տուն և աեղին լաւ էր նայում: Երբէք նրանից չէր լսի կորի կամ դժկամակ խօսք, և աւագ հարսները, որ միշտ հալումաշ են անում կրտսերին, Զիձիացին արիւնկից հարազատ քրոջ պէս էին նայում:

Գելան, որ խելակորոյսի նման էր սիրում իր կնոջը, երբէք չէր մուանում, որ ամեն անգամ տուն գալով՝ հետը կամ չուրչխե-լի (սուջուղ) կտոր կամ մի վարդագոյն խնձոր չըբերէր իր սրտի հատորի համար և սիրաբորբոք չըպաշպէիր նրան: Սակայն զոր-մանալին այն էր, որ առհասարակ լուռթիւն պահպանող Զիձիան շարունակ առանձնութիւն էր որոնում: Նրա գունատ, սփրթնած շրթունքի վրայ երբէք ժապիս չէր ծաղկում:

Ամենքը աշխատում էին նրան զւարձացնել, համեմատաբար ձորի միւս հարսներից նրան աւելի ազատութիւն էին տալիս, տա-նում էին ուխտատեղիները սգորութեան այս միակ ժողովա-րանը, որտեղ տարիներով անջատւած ազգականներն ու բարե-կամեները պատահում են իրար ու երկարառե զգացած վիշտ ու ուրախութեան մասնակից անում միմեանց: Սակայն Զիձիան մնում էր դարձեալ տիրալից սրտով, թէև ոչինչ չէր պակասում նրան, ոչ ուտելը, ոչ խմելը, ոչ էլ հաղուսոր: Պակաս չէին նրա համար հա-գուստները, ոչ էլ սիրող սիրտ, բայց և այնպէս մի ինչ որ բան մաշտում էր նրա սիրտը:

Սկզբում շատ աշխատեցին հասկանալ թէ ի՞նչն էր վշտացնում զժբախա աղջկան, բայց շուտով ստիպւեցին ձեռք փերջնել նրանից. որովհետև չկարացան մտնել նրա սրտի խորքը և եկան այն եղբակացութեան, որ նրա բնութիւնը այսպէս է եղել:

Այն ինչ Օնիսէն այն միջոցներում գնացել էր Փշաւների երկիրը, որտեղ քեռիներ ունէր, որտեղ մտադրւել էր որտորդութեամբ և հովտութեամբ զբաղւելով սրտի թախիծը փարատել. բայց երբ որ և է սարի գաղաթին բարձրացած գննում՝ էր իր բազոր, իսկոյն և եթ Զիձիացի պատկերը լուսատու աստղի նման ճառագայթում՝ էր նրա սրտում և անհուն երանութեամբ լեցուն սիրալ նորից տնքայնում:

Երկինքը, ամովերը, աստղերը, լուսինն ու բնութեան շքեղ սպատկերները Օնիսէի համար այն պատճառով էին միայն փառահեղ և սիրու մեղմացնող, որ սրանց հետ միասին նրա աչքին նկարւում էր Զիձիացի պատկերը, որը համեմատում էր բնութեան երևոյթների հետ, որից ինքնամոռացութեամբ հրճւում էր սիրալ:

## XI

Անցաւ տիսուր և մելամազձ ձմեռը, և սրա հեան էլ չքացաւ տրամեցուցիւ կապարագոյն ամովը, որը սգաւորի քօղի նման մըթնեցնում էր սարի գաղաթներն ու ձորերը: Չքացան նրա հետ միատեղ նաև հիւսիսացին ասոնաշունչ քամիները, որոնք մոնչելով և ողբաձայն բուի նման կլանչոցով ձիւնով ծածկում էին զարթնած երկրի հոտաւէտ դալարազարդ գորգը, որի ծաղիկներն ու դալարը չորացնելով, նուրբ գերմակ գարձնելով, ցրւումէին երկրի զանազան կողմերը Փոխւեց բնութիւնը. անդադար մրրկաշունչ սառը քամիները տեղի տւին մեղմածուփ զեփիւախն, տաքացաւ երկիրը և կենդանութիւն տւեց բոյսերին, դալարը վերստացաւ իր ոյժը, գլուխը բարձրացրեց և վերացրեց նաևս երկրի երեսին տարածւած ճերմակ սաւանը և յետոյ, արևի օդնութեամբ ջուր դարձնելով, քշեց զեպի ոլոր-մոլոր ձորերի անդունդները: Ծանրակիր, անախորժ բեռից ազատւած Կովկասի սարերը թոթափեցին իրենց ալեզարդ գագաթները և մահացնող սառուցի փոխարէն կանաչ ծմաւիշով քողարկւեցին: Արթնացան ծաղիկներն, զեփիւորից մեղմաբար օրօր-

ւելով սկսեցին միմեանց հետ սիրահարութիւններ անել. ջեռող արևի ճառագայթները ձգտում էին անդադար նրանց գեղեցկութեամբ արքենալ, բայց դաշտի զեղեցկուհիները ամօթխածաբար շրջում էին իրանց զէմքերը նրանցից: Սակայն նրանք անկարանում էին զերծ մնալ անհանդիսա մեզւից և թոյլ էին տալիս նրան հաւաքել անուշաբոյր գերմակն իր նազ, քնքոյշ, թաւոտ ոռափեներով և անյագաբար դուրս ծծել երանութեան նեքտարը:

Առաւոտեան շաղը թափում էր մարգարտանման կենսալից կամնաչ տերենների վրա և արևից տոչորւած բոյսերին փոքր ի շատէ զովացնում:

Օդը լցւեց թուչունների դայլացլիկներով և ճկճկոցով, որոնց սպասում էր երկնացին երջանկութիւն. անուշաձայն մեղիդիով ընկերը հրաւիրում էր անդադար ընկերոջը այս երսնութիւնը վայելել: Ամեն բան կենդանութիւն էր ստացել, բոլորի սիրու տրոփում էր և յուզւած ձգտում ընկերի հետ տարփալու:

Բնութեան այն ընդհանուր բերկրանքին նայում էր Յնիսէն, որի սրամին գարունքը չէր այցելել տակաւին և այն սիրու մնում էր ձմեռացին մնացլ ամսի նման տարամած:

Ամենի համար դուրալի, բոլորովին բերկրող էին բնութեան այս վեհ տեսարանները, որոնք սակայն Յնիսէի սրաի մէջ թոյն էին լցնում և ցնծութեան փոխարէն դառնապէս տոչորում:

Հառաշում էր Յնիսէն, շունչն արգելում, անկարանում էր հանգիստ գտնել և վիրաւոր առիւծի նման կատաղի մոնչիւնով թափաւում էր սար ու դաշտեր:

Նա վշտագնում և տրտմում էր, ցանկանում էր վերաբառնալ հայրենիք, ուզում էր իր երկրի պարզօրակ աղբեւրի խոխոջը լսել. որովհեակ օտար երկրի ջրի ոչ միայն համը, այլ և կարկաչը այնպէս չէր գրաւում նրան, որպէս վագրի նման կատաղի, քարափներից վայր շառաչող Թերք գետը: Յնիսէն այժմ ըզձում էր տեսնել նոյն իսկ այն վայրերը, որոնց սկզբում աչքով չէր ցանկանում տեսնել. սակայն անկարելի էր հայրենիք վերադառնալ երկնելով: Յնի թէ ոյժը գաւաճանի և հօր խօսքերը՝ «դիտես», որի զաւակն ես... աշխարհը չխնդացնես վրադ» որ և է անակնունելի հանգամանքի պատճառով չմոռանար:

Օնիսէն համոզւած էր, որ Զիձիացից անջատուած լինելով՝ կը կարողանար սրտի կրակը մարել. այս դժուաւորութեամբ ել անուշախօսում էր թուշի աղջիկների հետ, յուսալով որ սրանց գգւանքով կշանար. սակայն երբ մի քաղցր խօսք կասէր նրանցից մէկին, հէնց որ կը մօտենար որ և է սեռակին, այն վացրկեանում զիւթիչ Զիձիան պատկերանում էր աշքին առաջ և շնորհալի, գլուխ շշմեցնող ժախտով սկսում էր նացել նրա վրա: Նայում էր, եռացնում արիւնը, ալեկոծում սիրոն ու ամբողջ մարմնով զողացնում: Նա ժպտում էր և այս ժպտում պատկերանում էին այս խօսքերը. «զուր ես քեզ տանջում, ձեռքիցս չես ազատւի». և այսքանս բաւական էր, որ հրեշտակացին գէմքը սատանացի պատկերի փոխւէր Օնիսէի համար:

Այսպէս էր անցնում Օնիսէն իր կեանքը և յուսակտուր, զուր տանջւելով հալ ու մաշ անում իր կրակոս ջահելութիւնը:

Դժւարատար և գառնալից էր նրա կեանքը, սակայն բոլոր մոտած-մունքները միշտ միւնոյն եղբակացութեան հանգում: և այս եղբակացութիւններ, որոնք թւշերի հետ ընկերացել էին և սպասում էին այստեղ ամառւայ վերջին:

## XX

Մի օր, Արխոտի սարերից մէկի ստորատում, որտեղ թուշերը իրանց հօտերն էին ամառոցի դուրս բերել, հովիւները հաւաքւել մատաղներ էին մորթոտել: Սրանց մէջ գտնւառմ էին և բազմաթիւ մոխեցիներ, որոնք թւշերի հետ ընկերացել էին և սպասում էին այստեղ ամառւայ վերջին:

Մատաղները եփւած էին և խմբւած մարդիկ պատասիրում էին միմեանց աւագութեան տեղ շնորհելով, որպէս զի երեցութեան շարքով նստուէին. բազմութեան կէս մասն արդէն բազմել էր, երբ սարի դագաթի վրա երևաց մի մարդ, սպատենազուրկ հրացանը ուսին զցած՝ չուխէքի փեշերը գոտու յետեռում ամբացած առաջանում էր լուռ ու մունջ. ձեռին բռնել գդակն և նրանով ճակատի քրաինքը սրբում, որ ազբիւրի նման առատօրէն գլորուում էր վար:

Երեւում էր, որ եկուորը հեռաւոր տեղից պէտք է լինէր և անպատճառ կարեռ գործի առիթով զրկւած, որովհետեւ ամեն մի քայ-

լոփուին ճգնում էր արագոտն գնալ և սրանով երկարաձիգ ճանփէն կարձացնել: Սարի սոռրոտում գտնւող մարդիկ աչք կպցըին եկորին և սկսեցին սրա կողմը նայել: Նեաւներում հազիւ է պատահում ճանփորթ, այս պատճառով էլ և ամենքը նորեկից նորանոր համբաւների էին սպասում: բոլորը յոյս ունին իր գեղի կամ՝ ընտանիքի կացութեան վերաբերող մի բան խնանալ, և ահա այս առիթով եկորի իւրաքանչիւր քայլուփոխը սպասողներին յուզման մէջ է զցում և սրտառորդի ցանկացնում նրա շուտով մօտենալլ:

Ճիշտ ացապէս էր և այժմս. բոլորը տեղից ոտի կանգնեցին ասելով. «Ո՞վ կը լինի, իսիստ էլ արագոտն է քայլում» և սկսեցին զիտել նրան:

Արևը եկորի կողմից էր լուսաւորում և, որովհետեւ ճառագլայթները հովիւների աչքերն էին խայթուում, այս պատճառով, նրանք ձեռքերով հովանաւորել էին իրանց աչքերն ու այնպէս նայում: Սրանց մէջ գտնւում էր և Յնիսէն, որի վրա միւսներից աւելի էր անհամբերութիւն նկատում և ամենից էլ առաջ էր անցել անծանօթի հետ ամենից առաջ տեսակցելու նպատակով:

Անծանօթը դեռ ևս հեռու էր և մի ձորակ ունէր անցնելու, որի մէջ շուտով անհետացաւ: Յնիսէն աչքը չէր հեռացնում այն կէտից, որաեղ վերջին անգամ աեսաւ այն մարդուն:

Եկորը անցաւ ձորակը, զլուխը գուրս հանեց զառիվայրի վրա և Յնիսէն մի անգամ՝ ճշալով ուրախութիւնից ուրուրի նման նետեց դէպի եկորը: Ճանաչեց իր հարևան և միասին մէծացած մոխեցուն:

— Խարի եկար, Դաթառ, հեռւից և եթ բացականչեց Յնիսէն ուրախացած:

— Բարի տայ քեզ Աստւած, — սպատասխանեց Դաթան ող-ջոյնով:

Երկուսն էլ մօտեցան միմեանց, կանգ առան և իրարու փար-ւեցին: Յետոյ անջատւելով մնացին մի քանի վայրկեան լուռ ու մունջ. Յնիսէն չէր կարողանում բան հարցնել և Դաթան էլ կար-ծես թէ ջղբու դիտմամբ ոչինչ չէր ասում նրան:

Նորեկը խիստ խորն էր ընկղմած մտածման մէջ, այնպէս որ Յնիսէն նրա լոռութիւնը կատակի աեղ ընդունեց, անպատճառ իրեն

մի քամբաղառւթիւն է պատահել և այն ողառնառով Դաթան յապաղում էր ձայն հանելու:

Օնիսէն նայեց նրան և գունառեց

—Ասու, ի՞նչ է պատահել.—Համարեա պաղառելով և զողզոջելով բացականչեց Օնիսէն և յուսահատ՝ ձեռները դէպի առաջ կարկառած, կարծես վախում էր վայր ընկնել:

—Ի՞նչ է պատահել... գնանք բինէն ու կասեմ, ամենքիդ կը պատմեմ:

Օնիսէն, մի առարկայով միայն զբաղւած՝ անկարանում էր այլ բան պատկերացնել իրան, որ դէպքը Զիձիային է վերաբերում և կարծում էր թէ նորեկը իրեն մեղքանալով դժկամակում էր թօթք տալ:

Այն վայրկեաններում՝ Օնիսէն այնպիսի կացութիւն մէջ էր գտնւում, որի մասին Դաթան բոլորովին անդիտանում էր և հետեւապէս չէր էլ կարող նրան մեղքանալ:

Եորբոք երեւակայութիւնը թիթեռնիկի էր փոխարկւել, նրա համար մի կէտ էր լուսաւորում սրբութեան լամպարն ու նրա շուրջն էր սաւառնում, նրա բոլորքը թեւահարում: Այլ զգացմունք ոչ նրա սրտին և ոչ էլ նրա մոքին չէր մերձենու մի:

—Պատմի՛ր, այ տղայ, այլ ևս մի՛ թագցնիր ինձանից,—հազիւ արտասանեց Օնիսէն և աւելցրեց.—Մորթւելու եղան էլ ի՞նչ սպասել է հարկաւոր:

Նորեկը նայեց Օնիսէին երեսն ի վեր և նկատեց, որ մեռելացին գոյն է գրւել նրա երեսին. հասկացաւ, որ Օնիսէն կարծում էր թէ իր ընտանիքին քամբաղտութիւն է պատահել և այս պատճառով էլ վախեցաւ:

—Այ ողորմելի, ի՞նչ է պատահել քեզ. բոլորն էլ ողջ և առողջ են:

—Մի՛ խաբիր, Աստծու սիրու:

—Զի՞, Սպարս հրեշտակի անունը վկայ. արա ի՞նչի սկզբ է խաբեմ: Խօսակցութիւնը ընդհատեց. Դաթան զիմեց դէպի հովիւներն և Օնիսէն ևս բնազդումով հեաւեց նրան:

—Դաթան, ի՞նչի չես ասում թէ ի՞նչ է պատահել. —Նորից կասկած անցաւ. նրա սրտովը:

— Ողջ և առողջ են, սրանից աւելի բան չըգիտեմ:

— Սպասիր. — կանգնեցրեց Յնիսէն, բայց չըկարողացաւ խօսակցութիւնը շարունակել. կամենում էր Զիձիացի մասին խօսք դցել, սակայն չըվատահացաւ. նրա անունն արտասանել: Դաթան կանգնած սպասում էր խօսակցութեան շարունակւելուն:

— Ի՞նչ ես ուզում. — հարցրեց նա վերջապէս:

Հա... հա... հացրս ողջ է. — հազիւ կարողացաւ լեզուն դարձնել:

Նորեկը նայեց նրան ապշած:

— Այս տղա, խելքիդ վրա ես թէ ոչ:

— Ուրեմն սպասմիր, ասա... ամենը, բոլորի մասին, — սկսեց շտապով Յնիսէն և մի այնպիսի աղերսական կերպով նայեց, որ մարդ կըմեղքանար նրան:

— Գոշան էլ ողջ է, հօրեղբայրդ էլ և Աստծու օգնութեամբ ամբողջ լնտանիքդ ողջ և առողջ է... Այսպէս են, Ասուած է վկայ, որ ծեղ էլ չէ պակսել նրանց:

— Ուրեմն ի՞նչ է պատահել:

— Ի՞նչ պէտք է լինի պատահած, այն որ նուզզար զօրասպետը ցանկութիւն է յայտնել մեզ իրեն սեփական ճորտեր դարձնել:

— Ի՞նչպէս չէ. — հեգնեց Յնիսէն այն ձեռով կարծես թէ չէր հաւատում:

— Եթէ չըհպատակւէք, ասել է նա, զօրքով կը յարձակւեմ և սրի կանցկացնեմ բոլորիդ, ասում է:

— Թող հաց չուափի նա, մինչեւ ձորեցիներիս ամբողջովին չըկոտորի և չըճորտացնի, — հաղարտութեամբ արտասանեց Յնիսէն և ձակասը կնճուտեց:

Այս խօսակցութեան միջոցին մօտեցան և միւս հովիւները:

— Այդ միշտ այդպէս կը լինի. բայց նուզզարի չարահոգութիւնը աշխարհին յայտնի է... Նա մի խօսք որ ասեց, ինքներդ էլ գիտէք, որ առանց արիւնհեղութեան ձեռք չի քաշի...

— Հապա ձորեցիք ի՞նչ են մտադիր անելու, հարցրին այս ու այն կողմից:

— Պատրաստուում են... եթէ զօրելու լինեն, առանց կուի չենք պղձնի: Սարերում ամեն կողմը աղերք զրկեցին, որ ինչ տեղ մեր հովիւներից կան, հաւաքեն, ինձ ևս այս կողմը զրկեցին:

Բոլոր Մթիւներին հաւաքել է, Յսերն էլ նրա կողմն են անցել և մեզ վրայ եկել... այժմ Թրուսօ ձորումն են բանակւած, կարող էք երեակայել:

—Գնանք, գնանք.—դուեցին քանի մի մարդիկ, որոնք զէնքերն առան ձեռներին, կարծես հիմա իսկ և եթ պատերազմի մէջ են խառնւելու:

—Իսկ ի՞նչ են Յսերն.—հարցրեց Յնիսէն, որին այս դէպքը բովէապէս մոռացրեց Զիձիայի վերաբերմամբ:

—Յսերն իբրև թէ հաշտեցնողի զեր են կատարում, բայց իսկապէս գործը խառնում են... Նրանք չեն կարողանում մեզ բան ուակացնել, այժմ էլ նուզարի վրա են յոցները զրել:

—Աբա, տղերք, այլ ևս ուշանալու հարկ չըկայ. —բացականչեց Յնիսէն և աւելցրեց.—ինչ էլ որ է, իր տեղումը կիմանանք:

—Գնանք, գնանք,—պատասխանեցին միւսներն ու նետւեցին դէպի իրանց բարգն ու հրացանները:

### XIII

Ադամայ լոյսն էր. խիս և զզած բամբակի պէս մառախուզը տարածւել էր ամբողջ Թեքի երկարութեամբ, պատել շըջակայ գեղերը այնպէս, իարծես թէ թաղւած լինէին մէջը: Փանի մի տեղ ամենաբարձր սարերի գաղաթները պատռել էին իրենց ծածկող քողն և տեսնողին օդի մէջ կախւած էին երեւում: Նրանց զլիսին տարածւող կապուտակ երկինքը կարմրառակել էր արևը մօսեցող ճառագայթներից: Աստղերն զգալով ցերեկւայ մօտալուար և վախեցած հազիւ էին շողշողում իրանց նազ ճառագայթներով: Կովկասի ալեզարդ ծերունին հպարտօրէն դէպի վար էր նայում Երրորդութեան գաղաթին, որի լանջին՝ հինաւուրց և բաւականին մեծ տաճարը դալարազարդ գաշտի վրայ մնացել էր տակաւին կայուն իբրև անցեալի մոռաբերելու յուշարձան: Սրա ստորոտում համահաւասար կերպով ծաւալած մառախուզը կարծես թէ անջատել էր երկրից մեր անցեալի սուրբ յիշատակարանը:

Այստեղից ամեն բան վեհ էր երեւում, ամեն ինչ մրափում էր—լուել, և հէնց այս լուսթիւնը տխուր մտածմունք ծնեցնում: Նոյն իսկ յարաշունչ հովն էլ էր դադարել ու այլ ևս խաղս չէր

բռնում անուշաբոյր գեղեցկուհիների հետ։ Այս լութիւնը ընդհատ-  
ւում էր երբեմն խրտնած վայրենի ոչխարի ոտով վար գլորած քա-  
րի ազմուկից, և միանում էր քարափներից շառաչահոս հեղեղի  
կարկաչին, որը մրափի մէջ ընկդմւած բնութեանը մայրական նա-  
նիկ էր ասում։

Լուեց յանկարծ երկարատե սուլումն. երեկի չարաճնի մայր-  
հան զգացել էր լուսադէմի մօտալուտը կամքնի մէջ իր ընկերին  
էր երազել։

Յառագունեց Նիրւան սարի գագաթը, արևի ճառագայթները  
ոսկեզօծ պսակ բոլորեցին նրա ծայրի վրա, ձերմակ և անարատ  
ձիւնը սկսեց փայլատակել լուսափիւռ։ Սրան հետեւ կագաւի կաչ-  
կաչը, որ յուզւած ձախով ձախում էր սրտի հատորին, որովհետեւ  
նրան անհասկանալի էր բնութեան խնջոցով միայնակ բերկելը։  
Չարթեցին վայրի ոչխարն ու եղնիկն, բաւական է որքան նրանց  
ձկուն և զիւրաշարժ ոտները թմրեցին ամբողջ գիշերը, նրանց  
մարզումն է հարկաւոր, բազմերանգ փայլփլող ձիւնը խաղալու է  
է հրաւիրում նրանց։ Դուրալի անուշահոտ բուրմունքը ուղիղ էր  
ցնդում, գլուխը շշմեցնում և չափազանց քաղցրութիւնը հար-  
կաւոր էր փոնչալով մեղմել։ Մօտիկ գտնուող արջի անտառումն  
մեղեղի էր դայլայլում սարեակը բնութեան փառահեղութեանը։  
Յանկարծ զողանջեց զանգակը և սրա ձախնը ալեծածան հետզհետէ  
մեղմանալով տարածւում էր մեղմաշունչ հովի թևերի օգնութեամբ  
սարերի վրայով։ Չարկեց երկրորդ անգամ և սրան հետեւ արա-  
գագարկ և ընդհատուող զանգահարութիւնը Երեւում էր, որ Երբոր-  
դութեան տաճարում գտնուող սրահնակներն էլ էին արթնացել։

Փէց առաւօտեան հովը, մառախուղը շարժւեց, շփոթւեց, վրա  
հառան արեւի ճառագայթներն և մասախուղը յուգւած սիրահարի  
նման, որին առաւօտեան արշալոյսը վրա էր հասել, սկսեց մեղմա-  
գնաց սարի լանջերի վրայով փախուստ տալ գողունի։

Երեւաց ձորն ու նրա հետ միասին օձագալար, վայրագնաց  
և փրփրալից Թերքը։ Գեղերն էլ շարժման մէջն էին ընկել. ամեն  
տեղ մարդիկ գնում-գալիս էին, զեղերի առաջ խմբւում և ինչ որ  
մի բանի մասին ազմկում։ Բոլոր զեղերի ժողովրդի մէջ տեղում  
մի-մի գրօշակ էր երեւում և հովից մեղմօրէն ծածանում։

Այն միջոցներում սուրբ Երրորդութեան զանգակատան վրա չէր դադարում զանգահարութիւնը: Ժողովուրդը շարժւեց յանկարծ, լսւեց «գերգետուլա» երգն ու ձայնակցող բազմութիւնը գդակները վերցրեց: Դրօշակակիրները իրանց դրօշակներով առաջ գնացին, որոնց հետևեցին մարդիկ պատկառանքով, որոնք, իրանց պատճի և անունի նշանի, ժողովրդական սրբի հետ, նոյն իւկ կրակի մէջ կը նետուին առանց աչքերն անդամ թարթելու:

Բոլորն էլ դիմեցին Երրորդութիւնն. նրանք շտապում էին դէպի այն տաճարը, որտեղ համայնական ժողով պէտք է կայանար, որտեղ խորհրդարանն էր կազմւած, և որտեղ ժողովրդի կողմից մի անդամ կայացրած վճռին իւրաքանչիւր լեռնեցին ենթարկւում էր և նրան անխօս կատարում:

Նրանց սպասում էին Երրորդութեան տաճարում «երկու շաբաթով ճգնութեան գնացած» ձորի նահապետ Գոշան և սրա աջակիցները, որոնք երկու շաբաթ շարունակաբար աջօթքով և պահեցողութեամբ էին անցւցել, որպէս զի համայնական «դրօշակակիրների» գլխաւորութեանը արժանի դառնացին:

Հանաք բան չէր նրանց համար «դրօշակի գլխաւորութիւնը». սրա առաջ արտասանած խօսքը այլ ևս չէր փոխւի, իւրաքանչիւր մոխնեցի կը նախադասէր մեռնել, զրկւել ծնողից, եզրօրից... նոյն խսկ սրտի սիրականից. սակայն համայնական շախկապող նշանի առաջ տւած խոստմանը անկարող էր այլ ևս դաւաճանելու:

Եւ զուր տեղը չէր խմբւում այսօր ժողովուրդը: Ազատ մարդոցը ճորտութիւն էին տպաւնում, բարեկամ հարեւանները պատերազմ՝ էին յայտնում սրանց, անկշտում նուզզար զօրասկետը առիւծանման էր մռնչում, նրա անսահման զիտաւորութեանը ժողովրդին ընկճելու միայն Մթիուլիթը չէր դոհացնում, նրա տիրական ցանկութիւնը չէր ջողւում ազատակեաց հարեւանի վրա, ուզում էր նրանց նւաճել և անպատճառ կը տիրէր, թէկուզ այս պատճառով իր եղբայրակիցների արիւնո՞վ էլ ներկւելու լինէր:

Մոխնեցիները հասկանում էին բանի խկութիւնն և արժանուն արժանաւորապէս հատուցանելու էլ պատրաստում էին:

(Կը շարունակվի)

## Նւէր „ԴԵՒ“ պօէմալին

ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ — Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ:

Քեզ, ով կովկաս, հզօր արքայ այս երկրի,  
Քեզ եմ նորից անհոգ երգըս նւիրում։  
Նորան օրհնիր դու իբրև քո զաւակի,  
Տուր հովանի քո ձիւնապատ լեռներում։  
Անկասելի բախտը վաղուց իմ հոգին  
Նղթացել է քեզ հետ անվերջ ցնորքով։  
Յուրա հիւսիսում — քեզ խորթ, օտար բնաւին,  
Քոնն եմ, Կովկաս, ես միշտ սրտով ու մոքով։

Դեռ ես մանուկ՝ իմ թոյլ, երկչոտ քայլերով  
Ճգնում էի ելնել հովարտ քո ժայռեր,  
Որ պատած են դորշ, միգագոյն չալմայով,  
Որպէս Ղորան երկրպաղող մերկ զլուխներ։  
Այնտեղ հզօր արծիւներ են գիշերում,  
Այնաեղ ազատ միշտ սուլում է ցուրտ քամին,  
Այնտեղ էի ես կարօտով սըլանում,  
Սրտով նոյցա լնկեր էի օդացին։

Անցան ծանր շատ տարիներ այդ օրից,  
Դու ինձ նորից տեսար ժայռոտ քո գրկում,  
Եւ ողջոյնը աքսորեալիս հիւսիսից  
Քաղցր էր, որպէս երբեմն մանուկ հասակում։  
Նո հալածեց սրտիս վիշտն ու տառապանք,  
Հոգիս լսեց մաերմութեան արձագանք,  
Եւ այժմ ահա, կիսախաւար այս երկրում  
Քո մասին եմ՝ միայն երգում ու խորհում։

# ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԿՈՐ ԴԵՊՔԵՐԸ

ՀԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

### X

Մի զարմանալի դէպք էր իմ Շուշի գնալս։ Էջմիածնի տապարանը բարեկարգեցինք ևս ու իմ Միքայէլը, Վարաբաղի դպրոցական գործի բարեկարգութիւնն ևս մեր օգնութեամբը կատարեց։ Միքայէլը՝ քահանայ լինելով՝ ամբողջ վիճակի լնդհանուր զործական էր, Սեղբակեանի մտերիմը և նրա աջ ձեռքը։ Շուտով Յովհաննէս Տէր-Գրիգորեանցն էլ թեմական տեսուչ եղաւ իմ յորդորանքով, վարժապետներից էլ գաղափարի տէր մարդիկը միացան մեզ հետ և այսպէսով կազմեց մի բաւական զօրեղ խումբ։ Մեզ հարկաւոր էր մեծ ուժ, որովհետեւ Բաբաջանեանի խումբը ամեն ինչ տակնուվրայ էր արել, քաղաքը խուվութեան մէջ գցել և հաւատացրել, որ իրանից յետոյ այլ ևս քար քարի վրայ չպիտի կանգնի, դպրոցը պիտի փակւի։ Հէնց այս մոքով էլ իրանց գործերից ոչ մի հետք չէին թողել, ամեն ինչ տարել էին հետները, նոյն իսկ հասարակ ցուցակները։ Այս վիճակում Շուշւայ դպրոցը նմանում էր թալանւած Ալաշկերտին։ Պէտք էր ուրեմն վերականգնել

1) Տես «Մուլճ» 1893 թ. № 4, 5, 6, 7-8, 9, 10, 11 և 12:

մի քարուքանդ շէնք, և չարութեամբ ու անիրաւութեամբ բժաւորած մի ամենամաքուր պատիւ։ Մեծ էր Հայր Սեղրակեանի գործ դրած ջանքը. ամեն մի առաջարկութիւնս դպրոցի վերաբերութեամբ իսկոյն իրագործում էր կարծես մի դիւթական գաւաղանով։ Ես տեսուչ չէի, այլ տեսչապետ, եթէ խորթ չի թւալ այսպէս ասել, որովհետեւ ինքս էի նշանակում տեսուներ և արձակում, դպրոցների զեկը, թէ օրիորդաց և թէ աղայոց իմ ձեռին էր։ Ուսումն որ սկսեցինք, մի քանի հոգի եկան միայն, բայց ամիս չանցած վրա թափեցան այնքան, որ էլ տեղ չունեինք ընդունելու և հարկադրւած՝ երկու նոր դասարան ևս աւելցրինք։ Գործը կարգի ընկաւ և յառաջ գնաց հսկայական քայլերով, որից ամօթահար եղան դպրոցի թշնամիները և մեղայ եկան, իսկ բարեկամները ճակատները լայն բաց արին։

Եատ էր գծւար Շուշի քաղաքում մի բարոյական նախագիծ իրագործելը։ Այդ քաղաքում չկար ձգտումն դէպի ազնիւն ու վսեմը։ Ինչ որ չէր համրւել, չէր կշռւել, չէր չափւել, չէր գնահատւել դրամի յայտնի քանակութեամբ, դրանց համար գոյութիւն չունէր։ Աշակերտաների մէջ երեսում էր ծնողաց նիւթապաշտական յատկութիւնը, ինչպէս և նրանց Փիզիքական առողջութիւնը։ Ֆիզիքապէս առողջ լինելով, ուժեղ էին և մոքով, թէ տղայք և թէ աղջրկէք։ Բայց շատ գծւար էր դրանցից իդէալիստ շինել։ Ամբողջ քաղաքում աչքի չէր լնկնում ոչ մի ապուշ, ոչ մի խելագար, ոչ մի սովորական կարգերն արհամարհող հարբեցող։ Մի հատ ցնորւած մարդ կար միայն, բայց նա էլ մարդամէջ չէր դուրս գալիս, ճգնում էր տանը և աշակերտներ էլ էր կարդացնում։ Շուշեցիք դրա անունը դրել էին բանաստեղծ։ Այս այսպէս լինելուց յետոյ, ուրեմն պիտ պէտք է լինէր մի շուշեցի, որ բանաստեղծ լինելու հակումն ցոյց տար, չէ որ նրան էլ կը ձգէին «բանաստեղծի» կարգը...

Շուշի քաղաքը վաճառաշահ չլինելով՝ ամենայն տարի խախալում, խարբալում է. սաղերն ու տոռուզները դուրս են գնում, քաղաքում մնում են փուչն ու տականքսի մանրունքը։ Ես գործ ունէի փուչերի հետ, և սրա համար էլ նահատակում էի չարաշար։ Դաւալարութիւնը թէ ներսից և թէ դրսից էր, և այնպէս բարդ էր, որ դրանց բոլորի առաջքն առնելու համար պէտք էր

մի առանձին խորհրդարան։ Այս պատճառով ես այնքան զբաղւած էի, որ ինչպէս կասեն՝ քիթ սրբելու ժամանակ չունեի, և ոչինչ չըգրեցի, բացի մի «Անահիտից», և մի «Թեմական տեսչից», որ «Մեղլի» մեջ ապեց կիսառ պուատ։

Կարաբաղում ես իրիւ ուսուցիչ՝ նման էի ձաղեր պահող թուխըսկան հաւի, որ սովորաբար գործուրում է իր ձագերին, ինչ տեղից ասես մի բան գտնում, ուսուցնում, և միւնոյն ժամանակ դիւրագրգիւ և կատաղի լինելով՝ յարձակում է շների և կատուների վրայ և փախցնում բագէի առեւրից։ Բոլոր կոհներս յառաջ էին գալիս իմ հաւական սիրուց, որ տածում էի դէպի իմ մոււցած ձագերը։ Այ որ վարժապետի կոչում է ունեցել և սիրո, նա կը զզայ, թէ ինչ եմ ուզրւմ ասել, կիմանայ, թէ որպիսի սէր եմ ունեցել ես դէպի իմ գործը, դէպի իմ հոգեզաւակներս։ Մի բանով միայն ես միիթարւած եմ, որ երախտամու աշակերտ ունեցած չեմ։ Չեմ տեսած ոչ մի ուսուցիչ, որ այս կողմանէ ինձ չափ բախտաւոր լինի եղած։ Ես հոգւով չափ շնորհակալ եմ իմ աշակերտներից։

---

Եռշու լսուցում իմ առաջարկութեամբ յաջորդաբար տեսչութիւն արին Զաւատ-բէդ Խշանեանց, բժիշկ Բախիշ-բէդ Աղասարեանց, մամնադիտ մանկավարժ Սեդրակ Մանդինեանց և Համբարձում Առաքելեանց։

Սրանցից առաջին երկու սը ձրի կատարեցին իւանց պաշտօնը, իսկ Մանդինեանցին հրաւիրեցինք վարձով։ Սրան ահա կուզեմ մի քանի տող նւիրել ամենայն անաշաւութեամբ և ազնւութեամբ, չը նայած իմ առելութեանս, որ ներկայումս տածում եմ դէպի աչ անձնաւորութիւնը։

Սկսած 67 թւականի վերջերից ես Մանդինեանցի ամենամաերիմ բարեկամն եմ եղել։ Իմ բարեկամութեան հոգեբանական աղբիւրը հետևեալ դէպիքն էր։ 67 թւականի ամառը Մանդինեանը մի քանի շաբաթ վարեց «Մեղլի» խմբադրութիւնը և ացդ ժամանակ գրեց նա մի քննադատութիւն իմ «Արութիւն և Մանուէլ» վէպի մասին, որ նոր էր գուրս եկել։ Կարելի բան է արգեօք, որ մի նոր

գրող չը սիրէ իր այն կրիտիկոսին, որ նրան մի նոր երևոյթ է համարում, տաղանդաւոր անւանում և այնքան յափշտակում, որ բոլոր վիպագրողներից բարձր է դասում, թէկուզ այդ բոլորը մի ուրիշի կարծիքով՝ չափազանցութիւն լինի և սուտ: Բայց այդ ժամանակ մեր Մանդինեանցը սուտ ասել չէր կարող, առութեան արւեստը գեռ չէր սովորել. նա մեր տաղանդաւոր ու աշխոյժ գերասաններից մէնն էր, իր ուսումը կարծեմ Լազարեան ձեմարանումը աւարտած: Այս յօդւածը ես կարգացի գեռ Պետերբուդումը և ինձ ու ինձ առաջի. «Այս ի՞նչ լաւ տղայ է եղել Մանդինեանցը, ի՞նչ լաւ է հասկացել ջոկել ինսդանի գրողին մեռածից, բնականը՝ կեղծից»: Նոյն տարւայ վերջին ես եկայ Թիֆլիս, հետոն անձամբ ծանօթացայ, ներկայ եղայ իր խաղերին և շատ հաւանեցի: Այսպիսով ահա մենք բարեկամացանք, ես դարձայ նրա միակ տաղանդաւոր վիպասանը, իսկ նա իմ միակ տաղանդաւոր գերասանը և կրիտիկոսը:

Վերջը նա գնաց Պետերբուրգ, որ մի քիչ իրաւաբանութիւն սավորէ և մասնաւոր վաստաբանի իրաւունք ձեռք բերէ: Այզուղ ջնկաւ հայ ուսանողների շրջանը, վարակւեց նրանց ձգտումով, որ էր ծառայել ազգային գաստիարակութեան, ինքն էլ արդէն վարժապետութիւն արած էր ներսիսեան գպրոցում, թէև չէր զգացել, որ այդ պաշտօնի կոչումը չունի. վերջապէս, օգուտ քաղելով Սանասարեանի ձեռնուութիւնից, գնաց Գերմանիա մանկավարժութիւն սովորելու, այն պայմանով սական, որ իր ծառայութիւնն իր բարերարի ասպագայ նպատակներին նւիրէ: Այս բոլորի մասին նա զրում էր թէ ինձ և թէ Գէորգ Զմշկեանին. երեքս էլ սերտ բարեկամ էինք իրար հետ:

Վերջը երբ որ վերադարձաւ Գերմանիայից արդէն մանկավարժ դարձած, գերմանական փիլիսոփայի դիրք ու ոճ հազած, արտաքին ձևերը փոխած, այսուամենայնիւ ինձ հետ սերտ բարեկամ մնաց, և որովհետեւ այդ ժամանակ ես էլ արդէն ուսուցչութեան ասպարիզումն էի, նա հետամուտ էր լինում իմ գործունէութեանը, մասնաւանդ գրաւորին, և առիթը պատահած ժամանակ՝ գովասանք էր գրում իմ մասին, ասելով, եթէ կայ մեզանում մանուկների սիրտն ու լեզուն լաւ հասկացող՝ այդ Ազայեանցն է միայն: Ես էլ մըս-

քում ասում էի. «ա որ այսքանը հասկանում է, սկսք է որ լաւ մանկավարժ լինի»; Սրա համար էլ երբ որ մի բան էի գրում մանկավարժական, տանում էի մօալ կարդում, խորհուրդ հարցնում և միշտ էլ միայն հաւանութիւն էի ստանում:

Այսուղ ի դեպ ասեմ, որ յետոց, երբ Բահաթրեանցը եկաւ և այս երկուսի մէջ գծուութիւն լնկաւ, այդ ժամանակ ինձ համար սպարզւեցին երկուսի էլ թերի կողմերը: Բահաթրեանցը ինձ շատ մօտեցաւ և առաջարկեց որ միացիալ ուժով դասագրքեր կազմենք: Ես համաձայնեցի և սկսեցի նիւթեր պատրաստել, բայց երբ ուզեցանք իմ ու նրա նիւթերը միացնել, այսուղ մենք չը հաշտեցանք իրար հետ և՝ ամբողջ ծրագրի վերաբերմամբ և սկզբնական ուսուցման: Զէ, ասացի, լաւն այն է, որ դու քու էշը քշես, ես իմը, ես չեմ կարող երեխալին ասել. «այս խոզի ո՞ն է, այս՝ հաւի հօն»: Սրա համար խօսք տրւինք իրար նիւթից օգուտ չը քաղել. Նա իր ասպածի վրայ աւելցրեց. «արտասպութիւնը արգելած է». ես էլ իմի վրայ նոյնը աւելցրի: Ոչ ոք չիմացաւ, թէ այդ ինչ էր նշանակում: Մանդինեանցը քննադատեց երկուսն էլ իմը գովեց, իսկ Բահաթրեանցինը պախարակեց, բայց Բահաթրեանցն էլ նորան ողողեց:

Մանդինեանցն իր մանկավարժական գործունէութիւնն սկսեց մի շատ սխալ քայլով: Նա իր բարերարի հետ ունեցած պայմանը մերժեց, ուխտազննց եղաւ և մինչև անգամ նրա ապագայ գործունէութեան վրայ մի սե սուեր ձգեց: Սրա համար Մանասաթեանցն էլ նրան աչքից ձգեց, երեսը տեսնել չուզեց:

Ինձ համար այս խնդիրը մութն էր, և ես հակւած էի աւելի Մանդինեանցին արդարացնել, չենթաղբելով՝ որ իմ սիրած մարդու վրայ կարող է որ և է բիծ լինել: Եւ հէնց սրա համար էլ, երբ գուրս եկաւ ներսիսեան գլորանցից, գնաց Վան և վերադարձաւ յուսախարեած, մնաց առանց պաշտօնի, ընկաւ պարագի տակ, թշւառացաւ: Այդ ժամանակ ևս խնդրեցի հոգաբարձութեանը, որ Մանդինեանցին հրաւիրեն: Խնդիրս չմերժեցին և Մանդինեանցը եկաւ Շուշի և ինձ մօտ մնաց, մինչև ընտանիքի դալը: Շատ էր փոխւել Սեղբակս և ընկճւել: Եթե բարեկամ, սփոփեցի և միսիթարեցի իրան և ամենայն ջանք գործ դրի, որ քաղաքի մէջ անուն և հեղինակութիւն ստանայ, բայց զուր եղաւ իմ ջանքը: Դեռ

նոր եկած, այսուեղ կրկնեց իր դասախոսութիւնը, որ արել էր Թիֆլիսումը իր կատարած ճանապարհորդութեան մասին: Ունկընդիրները հիամթափւեցին և ոմանք էլ ասացին ինձ.

—Պարոն Ազայեանց, թէ որ բերած մարդիկ շնորհքն այս է, ուրեմն դու հենց մեզ զարարազցու տեղ ես զրել, կարծում ես թէ մենք լաւն ու վատը չենք իմանալ...

—Դուք սխալում էք, ասացի: Այս մարդը ժողովրդի կեանքին անծանօթ լինելով՝ տեսածովը զարմացել է: Եթէ իմանար, որ այդ կեանքը ձեզ աւելի է ծանօթ, էլ չէր դասախոսիլ: Բայց սրան ձեզ դասախոսելու համար հօմ չենք բերել: Սա մանկավարժ է և ոչ թէ հասարակ վարժապետ, գիտէք ինչ է մանկավարժութիւնը, այսպէս բան մեր ոչ մի գալրոցում չկայ. մենք դեռ չունենք մանկավարժներ, այս մի հատն է որ կայ:

—Նաև լաւ, սադ կը մնանք, էդ էլ կը տեսնենք, բայց դրանից իսկի մեր խելքը բան չի կտրում.։

Ուզիղն ասած՝ իմ խելքն էլ բան չէր կտրում, իմ նպատակն էր որ մէկ ես էլ տեսնեմ, թէ ինչ բան է արդեօք Մանդինեանցի ձեռքով աւանդւած հերբարտական մանկավարժութիւնը:

Բարձր դասատունը, ուր բաւական խոշոր տղայք կային, յատկացը ինք այդ նոր վարդապետութեանը: Տղայքը պիտի և՛ սովորէին և՛ սովորեցնէին: Նինել էր և մի նոր այբբենարան, իր ասելով՝ Օթառոյի մեժողով, որով պիտի գրել կարդալ սովորեցնէին մանուկներին: Ես իմ այբբենարանը հանեցի, որ աչքովս տեսնեմ Օթառոյի ողբածարդիւնքը: Ներկայ էի լինում թէ իր դասախոսութեանը և թէ աշակերտների և տեսնում էի, որ մարսւած բան չէ ոչ մէկը և ոչ միւսը: Երբ ինքն էր դասախոսում, գիրքն առջևն էր զնումի, մի քառորդ ժամ երեսին նայում լուռ ու մունջ, իսկ այդ ժամանակ աշակերտները յօրանջում էին և սպասում, թէ ինչ պէտք է ասի, և երբ որ թարգմանում էր կարդացածը կամ յետ պատմում իր խօսքերով, աշակերտները գրում էին բառացի, և յետոյ բերան անում մի անմիտ բառաշարութիւն: Իսկ գործնական դասերը երբ որ վերջանում էին, ցոյց էին տալիս աւանդած դասի լաւ ու վատ կողմերը և արձանագրում: Բայց սրանով մանուկների վէրքը չէր սաղանում: Նրանք ապուշ ապուշ նայում էին, չըգիտէին, թէ ինչ

Են ուզում իրանցից, Բնչ են ուզում հասկացրած լինելը  
Ես իմ տպաւորութիւնը չէի թաքցնում Սեղբակից և առան-  
ձին ասում էի իրան, որ ձեռք վերցնէ իր Օթառցից, որ նրանից  
բան չի դուրս գալ, բայց նա փոխանակ համոզւելու, ինքն էր աշխա-  
տում ինձ համոզել, որ ես չշտապեմ, որ տարւաչ վերջին արդիւնքը  
հրաշալի կը լինի: Հասանք տարւայ վերջին և արդիւնքը եղաւ ոչ  
թէ զերօ, ինչպէս ես էի կարծում, այլ մինուս. երեխեքը սովորել  
էին առւա կարգալ և առւա գրել. օրինակ՝ գրում էին որ և է  
տառի պէս մի բան և կարգում որ և է բառ. գրում էին ամ  
և կարգում ճն ճղուկ...

Մանգինեանցն ինքն իր աչքով տեսնելով իր տւած բացասա-  
կան արդիւնքը, որ նոյն իսկ խալֆաները չեն անում, էլի պըն-  
դում էր, թէ այդ է միակ ուղիղ ճանապարհը:

—Ոչ, ասացի, այդ ճանապարհը ոչ դու գիտես և ոչ քո Օթ-  
տօն: Միւս տարին ես կսկսեմ, և դու կը տեսնես, թէ այդ միենոցն  
երեխեքը ինչպէս են թե առած թռչում:

Այս խօսքի վրայ Մանգինեանցը աչքերը ուեց վրաս: —Ի՞նչ է,  
ասաց, քո միտքը, ուզում ես իմ հեղինակութիւնը վայր զցել:

—Դու հեղինակութիւն չունիս, ասացի, որ վայր զցեմ, քո  
հեղինակը Օթտօն է: Մէկ ինձ էլ տես, դուցէ ինձ աւելի ես հա-  
ւանում քան թէ Օթտօցին:

—Ես քեզ հաւանում եմ, բայց ոչ քո հեղինակութիւնը: Դու  
ամեն մեթոդով էլ կարող ես արդիւնք ցոյց տալ, նոյն իսկ Օթտօցի  
մեթոդով էլ, բայց Օթտօն Բնչ մեղաւոր է, որ զաս աւոզներն  
անշնորհք լինեն:

—Եթէ այդպէս է, ուրեմն ամեն մեթոդ միենոցն է, էլ Բնչ հարկ  
կայ Օթտօցի պոչից բռնել: Բայց դու շատ ես սխալում: Տուր ինձ  
միենոյն խամ ուստցիները, և ես նրանցով ցոյց տամ, թէ ինչ  
առաւելութիւն ունի իմ սովորեցնելու եղանակը:

—Ես համաձայն չեմ:

—Դու համաձայն չես, ես էլ չեմ համաձայն: Ես կառաջար-  
կեմ մրցութիւն, եկող տարի նախակրթաբաններից մէկը դու վերց-  
րու, միւսը ես:

—Օ'... այդ խօսմ առաւել վաս...

— Լաւ է թէ վատ, բայց այլ ես ոչ մի զիջողութիւն չեմ անիլ քեզ:

Այս ժամկից սկսած՝ իմ ամեն բանը Մանդինեանցի աչքումը ծուեց: Ես կարծում էի, թէ ինչպէս ես եմ վերաբերում դէպի ինքը, նոյն վերաբերութիւնը կունենաց և ինքը դէպի ինձ. բայց տեսաց, որ սա իր փիլխոփայութիւնը փոխել է, ուզում է, որ ամեն ոք իրան ծառայէ, իսկ ինքը՝ ոչ ոքի: Միւս օրը կարդացի իմ Անահիտը, որ նոր էի գրել, որ տեսնեմ ինչ կարծիք կը յացնէ իմ նախկին կրթոփկոսա, և նա յացնեց իր կարծիքը.

— Նատ ցիմար բան ես գրել, ասաց, խորհուրդ չեմ տալ, որ տպես:

— Դեռ այդպէս յիմար բան չէիր ասած քո օրումը, պատասխանեցի ես. ինչպէս երեւում է, խելքդ կորցրել ես... և սկսեցինք կուել, խօսքով ի հարկէ:

Մանդինեանցն կողմանակի գրդումներով միտք յղացաւ իշխել ինձ վրայ կամ զուրս մղել: Մտքումը գրաւ, որ ուսուցչական խումբն արձակէ և նոր ընտրութիւնն անէ: Այս առաջարկութիւնն արաւ հոգաբարձութեանը: Հոգաբարձութիւնը պատասխանել էր, թէ շատ լաւ, այդ բանը կարող էք անել, միայն մէկ սկայմանով. նախ՝ Աղայեանցին չլպէտք է միւսների հետ ազատ համարէք, և երկրորդ՝ ընտրութիւնը պէտք է անեք միասին: Սրա վրայ Մանդինեանցը առ երես համաձայնում է, բայց սիրու մէ և, տեսնելով՝ որ իմ դիրքն աւելի ամուր է, քան թէ իրանը:

Երբ վարժապետներին ազատութիւն էր տւել արդէն և շատերն էլ կարծում էին, թէ իմ խորհրդով է եղել, յսնկարծ նամակ ստացաւ Արշակ Նահապետեանից, որ նրան Թիֆլիս էր հրաւիրում: Այս բանը չըթաքցրեց ինձանից, բայց բովանդակութիւնը չսասաց: Ես ասացի. Սեղրակ, Արշակը քեզ հրաւիրում է, որ տանէ էջմիածին, ուզում է օգտւել քո տիստոսից, բայց լաւ կանես, որ պայմանագանց չլինես ու չերթաս, մանաւանդ որ վարժապետներին էլ արձակել ես, իմ գործը շատ պիտի գժւարանաց:

— Զէ, ասաց, այդպէս բան չկայ, դու միամիտ եղիր, ես կերթամ ու էլի կը գամ՝ շուտով:

Սեղրակս դնաց ու դնաց: Այս այն ժամանակն էր, երբ մեր

մանկավարժները մի արգոնաւորդական արշաւանք սկսեցին զէպի էջմիածին ոսկեզեղմն ձեռք բերելու համար, և ձեռք բերին՝ որը հինգ և որը չորս հազար մանկժողովական տարեկան եւ ի՞նչ շինեցին այդ առ ասպելական վարձառացութեան փոխարէն—ամենեւին ոչինչ, այլ միայն շահախնդրութեան ձգտումն սփռեցին ամենայն տեղ և ու քար ձգեցին առաքելական կոչումն ունեցող իդէալիստ ուսուցիչների՝ վրայ, մի սև քօղ՝ բոլոր դպրոցների վրայ, որոնց տարեկան ծախքի հաշիւը եօթը հազարից չէր անցնում, որով պիտի պահւէին 15—20 ուսուցիչներ։ Մայր դպրոցի և նրա ոչնչերի մէջ եղած նիւթական հաւասարակշռութեան կործանումն եղաւ։ Մանդինեանը լաւ իմանալով, որ ոչ ինձ պէս չի թափանցել նրա հոգու և մտքի մէջ, ոչ ոք ինձ պէս չի ուսումնասիրել նրան, ինձ համարեց իր միակ վուանգաւոր թշնամին, և այնքան կուրացաւ այդ ախտից, որ մի շրջաբերականով արգելեց իմ գասադրքերի գործածութիւնը ազգային դպրոցների մէջ, արգելեց իմ մննդարար կերակուրը, որ հարկադրւեն իր տըւածը ուտելի Սրանից յետոյ էլ ինչ ասել կուզի, որ նրա անունը իսպառ ջնջեցի իմ բարեկամների ցուցակից և դասեցի ընդ չարս և ուրացողս...

Հայր Սեդրակեանը Կարաբաղից գնաց էջմիածին, որ նորանոր արտօնութիւններ ձեռք բերէ իր գործունէութիւնն աւելի ևս լնդարձակելու համար, բայց նրան այլ ևս յետ ըըդարձրին, այլ եղիսկոպոս ձեռնադրելով՝ ուղարկեցին Թիֆլիս առաջնորդութեան Վերջին երկու տարին ես զուրկ մնալով Սեդրակեանի պէս մի լուրջ, գործունեաց և բարձր պաշտպանից, չափից դուրս շատ նեղութիւններ քաշեցի։ Նրանից յետոյ եկաւ Կարասկետ վարդապետ Այւազեանը։ Այս անձի վրայ աւելացաւ և բուն իսկ առաջնորդ Անդրէս եղիսկոպոսը և երկուքը միասին իրանց շնորհքները միացնելով՝ միմեանց արժանաւորութիւնը լրացրին միմեանց պակասութեամբ, որ կատարւի այն սասծը, թէ «Յաթուն Մովսիսի նստան գպիրքն»։ Դպրանոցի եկամուտալը, որ Սեդրակեանը հասցը էր մինչև տասնըօթը հազարի, իրանից յետոյ այդ քանակութիւնը իջաւ հինգ հազարի, որ ասել է 18 ուսուցի։ միասին պէտք է

ստանալին այնքան, ինչքան ճեմարանումն ստանում էր մի հոգի, թէև շատ աւ:

Եկամուտի աղբիւրները կրկին բաց անելու համար՝ վերջին տարին ես յանձն առաջ տեսչական պաշտօն, որովհետև այլ ևս տեսչապիտութիւն անել չէի կարող՝ զրկւած լինելով բարձր պաշտպանութիւնից, բայց մարդիկ շուտ գլխի ընկան, որ իրանց հացը պիտի կտրւի, աշխատեցին բանն այնպէս բերել, որ ես բարկանամ և հրաժարւիմ: Ես էլ բարկացայ և հրաժարական տըւի, թողելով՝ որ մեռեները թաղեն իրանց մեռեներին:

Հեռանալիս միտս ընկաւ այն, ինչ որ լսել էի Վեհապետեան Գէորգ եպիսկոպոսի մասին: Այս մարդը, որ ահազին ջանք էր գործ դրել և Բաղդասար միտրապոլիտից յետոյ կորած կալւածները կրկին ձեռք բերել, վերջը դառն ապերախտութեան հանդիպելով՝ հեռացել էր և հեռանալիս յետ չէր մտիկ ալւել, ասելով՝ «Ափանս են աշքերս...» Մեր բոլոր քաղաքների մէջ չկայ ոչ մէկը, որ Շուշու շափ ապերախտ լինի, շնորհիւ նրա մրուրի և տականքսի, որ զուրկ լինելով փողից, զուրկ է և սրտից ու խղճից: Շատ անգամ ասում էին ինձ դրսից եկողները. «Դուրսը մենք շատ առատաձեռն ենք և լաւ. վերադառնալիս կառապաններին ամեն մի իջևանում քսան և երեսուն կոպէկ ենք ընծայում», բայց հէնց որ հասնում ենք Ասկեանար, մեր Ղալի ստորոտը, այդտեղ մեր ձեռքը չորանում է, էլ տասը կոպէկից աւելի չենք տալիս: Արեմն հէնց որ իրանց քաղաքը երեսում է, չորանում են, իսկ քաղաք մոնելուն պէս՝ քարանում: Այս եկողները զարմանում էին իմ տոկունութեան վրայ և ասում էին. «Դեռ քեզ չափ ոչ ոք չի դիմացել մեր քաղաքում. Շանշեանցի պէս մարդուն, որ այնքան երախտիք ցոյց տըւալ մեր ուսումնարանին, այնքան արտօնութիւն ձեռք բերեց, մենք նրա ուսուցիչներին ծեծեցինք, իրան էլ գուրս արինք, բայց դու որ այդքան չարչարում և գիմանում ես, երևի նրանից է, որ մեզանից ես, գիտես մեր բնութիւնը, մեր լեզուն, մեզ հետ վարւելու եղանակը: Այ՞ս, գիտէի, բայց դարձեալ հեռացայ՝ առանց յետ մտիկ տալու Ղովտի նման, որ շուշեցոց պէս չըքարանամ...»

## XII

**Վ**արաբաղից վերազարձաց Թիֆլիս այնպէս ջարդւած և յոդնած, որ մտածեցի իսպառ հեռանալ ուսուցչական ասպարիզից և քաշւել զիւզ: Բայց բանն այնպէս եկաւ, որ ես փոխանակ մի մութգիւղ ընկնելու, ընկայ մի բանաստեղծական աշխարհ, մի երկնային դրախտ, ուր ինձ փայտայում էին անմեղ հրեշտակները և գլուխս զարդարում անթառամ ծաղիկներով: Այդ երանելեաց աշխարհը տիկին Սոֆիա Բաբայեանցի մանկական դրախտն էր:

— Դու շատ ես յոդնած, ասաց Աւետիքս, քեզ հարկաւոր է հանգստանալ. և ես կը հանգստացնեմ քեզ: Սովիայիս հարկաւոր ես զու, որ ազգային-ժողովրդական տարր մոցնես նրա սպարտիզի մէջ, ազգային ծաղիկներ բուսցնես: Նրա մօմ զու բոլորովին ապահով կը լինես թէ նիւթապէս և թէ բարոյապէս...

Զարմանալի աստղի տակ եմ ծնւած ես: Ինձապէս մարդը կամաց ակամայ կենթարկւի միստիցիզմի: Ասենք այդ ցաւը ես միշտ էլ ունեցել եմ, թէ ուշ չեմ դարձրել շատ անգամ և ազատ եմ համարել ինձ ամեն տեսակ նախապաշարմունքից: Դու լաւութիւն արա Մարկոսին, Եթէ նա չիմանայ՝ Մարտիրոսը կիմանայ և կը վարձատրէ քեզ: Թող մէկ քաղաքում քեզ հալածեն քո արած բարութեան համար, մի ուրիշ քաղաք քեզ կը հասկանայ և կը նդունի: Այս իսկ էր մեր Փրկչի էլ ասելը իր աշակերտներին թէ չէք հատեցնիլ Խարայէլի քաղաքները—երբ մէկում կը հալածեն, գնացեք միւսը: Այս կողմանէ, ինչքան էլ զանգառուեմ, ինձապէս բախտաւոր մարդ քիչ եմ տեսել, բախտաւոր՝ ոչ թէ նիւթական հարստութիւն ձեռք բերելում, այլ բարոյական ու մտաւոր:

Ընկայ մանկական պարտէզ, ուր երեխսէքը անմեղ հրեշտակների էին նման, ուրախ, զըւարթ, ինչպէս անհոգ թունիկներ, որոնք անընդհատ ուսուստում, թունկուում և երգուում էին իրանց մայրիկի՝ Սովիայի չորս կողմում, և ես չգիտէի, թէ որից եմ աւելի հիացած, կրթողից, թէ կրթւողներից,—այնքան բնական էր, այնքան սիրալիր դրանց բարոյական և մոտաւոր աճումն ու զարդացումը:

Իմ պարապմունքն այլտեղ օրական երկու ժամ էր, պէտք է գրադիտառութիւն սովորեցնէի: Առաջին զասից յետոյ՝ նախաճաշիկս պատրաստ էր լինում, երկրորդից յետոյ՝ ազատ էի, բայց շատ ան-

գամ մնում էի երեխանց մօտ, որ ուսումնասիրեմ նրանց պարագա-  
մունքները: Այսուղ ահա, լսու ամենայնի առողջարար շրջանսւմ,  
կազդուրւեցի ես թէ հոգեպէս և թէ Փիզիքապէս, և ազատ ժա-  
մբրս նըւիրեցի մանկական գրականութեան, մանկական բանաստեղ-  
ծութեան:

Գրում էի մանկական երգեր և տալիս տիկին Սովիացին, որ  
այնպէս էր ուրախանում, ինչպէս մի նոր դիւտ արած: Ինձա-  
նից ծածուկ էր սովորեցնում երեխաներին և պատւիրում էր,  
որ ինձ չասեն մինչև լաւ չըսպատրասուին: Երբ որ լաւ պատրաստ-  
ւած էին լինում, հաւաքւում էին դահլիճում դաշնամուրի մօտ,  
հրաւիրում էին ինձ, բայց չէին կարողանում համբերել մինչև սկը-  
սելը, իրար գլխով էին անցնում, ծափահարում և հասկացնել ու-  
զում, որ մի անակլինկալ ընծայ պիտի անեն ինձ: Սկսում էր մի  
ներկայացումն, դուրս էր գալիս մի հրաշալի պատկեր, և ես չէի  
հաւատում, որ այդ պատկերն իմ նկարածն է, այնքան գեղեցկա-  
ցրած էր լինում տիկինը և կենդանացրած: Այսօրւանից յետոյ ահա  
ես գլխովին նւիրւեցի մանկական գրականութեան, որոնք տպագրու-  
եցին «Աղբիւրում» մի քանի տարի շարունակ: Այդ ժամանակ կազ-  
մեցի ես իմ «Աւսումն մայրենի լեզուի» երկրորդ և երրորդ դասա-  
գրքերը:

Մանկական պարտիզում՝ մնացի ես մի գոլրոցական տարի և  
դուրս բերի մի անջնջելի խորին երախուագիտական զգացմունք առ  
համեստափայլ տիկին Սովիա հաբացեանց:

Ես դեռ մանկական պարտիզումն էի, որ Սեղբակեան սրբազնը  
եկաւ Թիֆլիս իրեւ թեմի առաջնորդ: Հէնց նոյն ամառն էլ նա  
ինձ հրաւիրեց յանձն առնել թեմական տեսչի պաշտօն, թէև նոյն  
ամառւայ ոռմիկը պիտի իմ նախարարդն ստանար, իսկ ես ոչինչ: Այս  
պաշտօնը ես չէի կարող մերժել հեղամոլութեամբ, որովհետեւ առա-  
ջարկողը դիտէր, թէ ում է առաջարկում: Նա ինձ փորձել էր գոր-  
ծի և պաշտօնի մէջ շատ լաւ էր ճանաչում: կարիք չըկար որ մի  
ուրիշին առաջարկէր, կամ ես ինդիրէի: Սրանով նա ուզեց Դարաբա-

զում իմ կրած տանջանքի փոխարէնը վարձատրել և նոյն խոկ արդիւնք տեսնել:

Եթեև թեմական տեսուչ՝ ես մի իշխանաւոր չէի վարժապետների համար, այլ իբրև ուսուցիչ և ընկեր ուսուցչի: Ամեն տեղ՝ ուր որ գնում էի, ուսուցիչ և ուսանող միակերպ ուրախանում էին: Նատ տեղ իրանք վարժապետներն ու վարժուհիներն էին խնդրում, որ մի քանի օր մնամ, փորձնական դասեր տամ թէ աշակերտներին և թէ իրանց, և ես կարդում էի ամենայն ուրախութեամբ: Առանձին ուշադրութիւն էի դարձնում ծաղկոցների վրայ, մանաւանդ վրացախօս տեղերում, և գործս գնում էր շատ յաջող և գեղեցիկ: Բայց յանկարծ մի ախուր վարագոյր քաշւեց այդ բոլորի վրայ և ես քաշւեցի իմ հայրենի գիւղը, որ այնուեղ ողբամ թէ ընդհանուր և թէ մասնաւոր աղէտներիս վրայ:

Մեռաւ Վիգէնս, մի հատիկ արու զաւակս, ծաղիկ հասակում, նրան հետեւեց մայրը, թողնելով երեք մատղաշ զաւակներս որբ և զուրկ մացրական խնամքից: Այս յանկարծական հարւածներն ինձ ձգեցին մի տարօրինակ հոգեմաշութեան մէջ: Ես դառայ մի ոչինչ և ամենայն ինչ աշքումս ոչնչացաւ: Մի ամբողջ տարի ձեռքս գրիչ ըլբոննեց, մի հասարակ նամակ անդամ ըլկարողաց գրել: Թուլանալով հոգեպէս, թուլացայ և Փիլիքապէս: Տեսնելով, որ էլ ոչ մի բանի պէտք չեմ, մասածեցի մի վանք քաշւել և այնուեղ մթնացնել իմ վերջին տիտուր օրերը: Այս մասին մի խնդիր տըւի, բայց խնդիրս մերժեցին՝ ինձ համարելով հակառակ կուսակցութեան մարդ: Գրեցի և Սուքիսս սրբազնին, որ ինձ իր մօտ տանէ, որ ես կուելու, որ և է կուսակցութեան պատկանելու սիրո չունեմ այլ ևս, բայց սա պատասխանելու անդամ արժան չը համարեց: Գրեցի ուրիշներին էլ, բայց բոլորն էլ զուր անցաւ: Աստւած ըլ կամեցաւ:

Նառ անդամ է պատահէլ, որ ես ուզեցել եմ մի անխորհուրդ և անմիտ բան բռնել, մի յիմարութիւն անել, բայց Աստւած ազատել է ինձ այդ փորձանքից: Սիրող սրաի համար սիրազուրկ լինելը մի որոնելի կորուստ է: Յառաջացած վշտահարութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ սիրոյ որոնումն: Այդ ցաւն առողջանալ կարող է միմիայն դարձեալ սիրով: Եւ որքան անձնատուր էի լինում ախրու-

թեան, այնքան սաստկանում էր վիշտս, քննատութիւն էր գալիս վրաս և սրտի թրթուոց։ Պատահում էին և խստերիքական այլ երեսը թներ, և ես երկիւզ էի կրում խելացնոր լինելուց։ Մտածեցի, որ լաւ բան չէ արածս, զաւակներս կարող են մնալ իսպառ անխնամ։ Մէկ լաւ ձի առաջ և սկսեցի պըտուել ամեն կողմ, քէփի և զւարճութեան ետևից ընկայ, և երբ զգացի դրա լաւ հետևանքը, սկսեցի շարունակել այդ կեանքը։ Ես առողջաշայ, վրաս եկաւ կորցրած ֆիզիքական ուժս։ Ինձ պակասում էր միայն մի սիրող սիրտ, նրան էլ Աստւած հասցրեց։ Ես նորոգւեցի հոգւով և մարմնով, և սրա արդիւնքն եղաւ իմ «Արեգնազանը», «Տորդը» և սրանց յաջորդող գրածներս։ Լուսինը դուրս եկաւ կրկին ամսի տակից, շներն սկեցին լուսնահաշ տալ.

«Բայց լուսինը բակ բոլորած՝ շարունակում էր իր ճանապան,  
«Համարելով թէ չի լում, որ իր վրայ հաշողներ կան...»

## ԷԼԻ ՆՈՐԱՆ

### Յ. ՅԱԿՈԲԵԱՆԻ

Այս, դու էիր, որ արմատախիլ  
Արեցիր մատաղ կեանքիս ծաղիկը.  
Դու էիր, որ քո անմիտ վարժունքով  
Երգչիս դարձրիր քո խաղալիքը:

Եւ ուրախ էիր, որ քո դիւժական  
Քմահաճութեամբ մի սիրո մաշեցիր,  
Դու յետ չդարձար նայելու անդամ  
Որչափ անողորմ ինձ հետ վարւեցիր:

Եւ չցաւեցիր, որ անխնայ ձեւքով  
Քարուքանդ արիր սրտիս վտակներ,  
Ուր ցայտում էին անմեղ հոսանքով  
Ազնիւ ձգտումներ, սուրբ նպատակներ:

Ասա գէթ հիմա, երբ սիտ ինձ խղճաս  
Այս կորստաբեր ցաւից փրկելու,  
Լուռ աանջւող երգչիս երբ սիտի յոյս տաս  
Մեր սիրոյ դաշն կրկին կապելու:

Օ... այն ժամանակ, եթէ իմանսս,  
Որպէս սիտ տօնեմ իմ վերածնութիւն,  
Որպէս սիտ գրկեմ, սիրովդ ներշնչած  
Նոր կեանք խոստացող, աշխարհ, բնութիւն....

# ԿԵՆԴԱԼԻՆԵՐԻ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՍՍՄՈՒԵԼ, ԲԱԼԱՂԵԱՆԻ

ՏԵՐՄԻՑՆԵՐԻ ՀԱՍՏՐԱԿՈՒԹԻՒՆԸ.

Նախորդ յօդւածներիս մէջ ես առիթ ունեցայ խօսելու պի-  
ծակների, մեղուների և մրջիւնների հասարակութեանց կազմակեր-  
պութեան մասին։ Այժմ ինձ մնում է մի քանի խօսք ասել Տերմիտ-  
ների մասին, ապա անցնել կաթնասուններին։

Տերմիտները լինուի անւանում են նրանց՝ սպի-  
տակ մրջիւնները նոյնակս պատկանում են հասարակական կեն-  
դանիների թշրին, այսինքն սովորութիւն ունեն ապրել մեծ համայք-  
ներով։ Տերմիտների հասարակութիւնը ապրում է հողի տակ շինած  
ահագին բուներում և բաղկացած է լինում նոյնակս մի քանի դա-  
սակարգերից՝ բանուորներից, զինուորներից, սպահապաններից։ Տեր-  
միտների համայնքի կենտրոնը կազմում է թագուհին՝ ինչպէս  
և մեղուների մէջ, որը զբաղւած է լինում ձու արտադրելով։

Վերին աստիճան բարդ և հետաքրքրական կազմածք ունի տեր-  
միտների բունը։ Բիւլսնէրը հետևեալ կերպ է նկարագրում այդ բունը։  
«Նրանցում (տերմիտների բուներում) մենք գտնում ենք ան-  
թիւ սենեակներ, բճիճներ, մանկական սենեակներ, պահեստներ,  
պահապանների համար սենեակներ, անցքեր, կորիգորներ, սարդափ-  
ներ, կամուրջներ, սոորերկեաց փողոցներ և ջրանցքներ, տունէլ-  
ներ և այլն։ Եւ այդ բոլորը դասաւորած է որոշ և նախակս  
մոածւած ձևով։ Եինութեան կենտրոնում՝ պաշտպանւած արտաքին  
վտանգաւոր պայմաններից՝ գտնում է հոյակապ արքացական սե-

նեակը (որի մէջ ապրում է թագուհին): Արքայական սենեակի շուրջը գտնուում են այն սենեակները, որոնց մէջ զարգանում են համայնքի ձագուհները: Այդ սենեակների ետևում դանուում են ծառաների և զինուորների սենեակները, ապա պահեստները, լցւածքազմաթիւ սննդական նիւթերով, այն է՝ բոյսերի սերմերով, պառաղներով, խէժով (օմոլա):

Ամբողջ շինութիւնը ծածկւած է վերեից ահագին գմբէթով: Որպէս զի անձրւեների ժամանակ ջուրը չլցնի սենեակները, շինւած են լինում առանձին առորերկրեաց կանալներ, որոնցով ջուրը իսկոյն հեռացնուում է բունից:

Երբ մի որ և է պատճառով քանդւում է շինութեան մի մասը, իսկոյն հաւաքւում են բանւորները, բերելով իրանց հետ կրացին ցեխ, որով և նորոգում ու ծածկում են քանդւած տեղը: Այդ աշխատանքներին չեն մասնակցում զինուորները, նրանք այդ ժամանակ անհոգ կերպով անցուղարձ են անում բունի բազմաթիւ անցքերում:

Բայց հենց որ չայտնուում է, թէ թշնամիները յարձակումն են գործել բունի վերաց, բանը իսկոյն փոխուում է. բանւորները հեռանուում են բունի մօտերքից ներքին սենեակները, իսկ նրանց տեղը գուրս են գալիս զինուորները ահագին գլուխներով և վրա թափում թշնամու զօրքի վերաց:

Առհասարակ մեծ նմանութիւն կայ մրջիւնների և տերմիտների հասարակական երեսովթների մէջ, այդ պատճառով աւելորդ կը լինէր երկար կանգ առնել տերմիտների վերաց:

Այժմ եթէ, մտաքերելով այն բոլորը ինչ որ առած է մրջիւնների հասարակութեան մասին, համեմատենք այդ (այսինքն մրջիւնների) հասարակութիւնը մեղուների հասարակութեան հետ, մենք անշուշտ կը գանք այն եղբակացութեան, որ հասարակական երեսովթները մրջիւնների շրջանում անհամեմատ աւելի բարդ և բազմակողմանի են քան թէ մեղուների մէջ:

Էսպինասը, համեմատելով մրջիւններին մեղուների հետ, հետեւ նկատողութիւններն է անում. «...մրջիւնները անհամեմատ աւելի բարձր են կանդնած քան մեղուները: Նրանց (մրջիւնների)

շինութիւնները կառուցանելու ժաման ակ անհատների մէջ նկատ-  
ւում է աւելի մեծ ստեղծագործական ազատութիւն քան մեղու-  
ների մէջ։ Իրաւ, մեղուների երևակայութիւնը կարծես կաշկանդւած  
լինի կանոնաւոր ձևերով (բնակարան շինելու ժամանակ), որոնց  
մէջ նրանք փոփոխութիւն են մոցնում միայն բացառիկ գէպքե-  
րում... Մըջիւնները ընդհակառակը բոլորովին ազատ են երկրաչա-  
փական կանոնաւորութիւնից—նրանք միշտ յարմարւում են շրջա-  
պատող հանգամանքներին, որ և կազմում է նրանց արւեստի ամե-  
նամեծ առաւելութիւնը»։ («Ծովալին. ՋԱՅՆԻ ԺՈՅԵՏԻ. Էջ 327»)։

Մըջիւնների հասարակական երևոյթները այնքան զարգացած  
են, որ շատ բաներում ցիշեցնում են մեզ նոյն իսկ մարդկանց հա-  
սարակական երևոյթները։ Ծանօթանալով մըջնանոցի ներքին կեան-  
քի հետ, մենք տեսանք, որ այդտեղ չկայ մի այնպիսի անհատ, մի  
այնպիսի իշխանաւոր, որին հպատակւէին համայնքի միւս անդամ-  
ները. մըջիւնների հասարակութիւնը կառավարում է՝ եթէ կարելի  
է այսպէս ասել՝ ընդհանուր ոյժերով, ունենալով իբրև ուղեցոյց սո-  
վորութիւնները ու տրապիցիաները։ Այդ հանգամանքի շնորհիւ է,  
որ մի քանի գիտնականներ՝ խօսելով մըջիւնների հասարակական  
կազմակերպութեան մասին՝ անւանում են ացդ հասարակութիւնը  
հասարակացների առաջնորդութիւն։

## V

## ԶԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անցնենք հիմայ ողնաւոր կենդանիների հասարակական երևոյթ-  
ներին։ Յայտնի է, որ ողնաւոր կենդանիները իրանց մարմնի կազմ-  
ւածքով անհամեմատ աւելի բարձր են քան մըջիւնները, մեղուները  
առհասարակ միջատները։ Չարմանալի է, որ նոյնը չի կարելի ասել  
նաև նրանց հասարակական կազմակերպութեան մասին, գոնեա մի  
քանի մասնաւոր գէպքերում։ Վերցնենք իբրև օրինակ ձկներին։  
Եթէ դուք համեմատէք զրանց մարմնի կազմւածքը մեղուների կամ  
մըջիւնների կազմւածքի հետ, իսկոյն կը համրգւէք, որ ձկների  
կազմւածքը աւելի բարձր, աւելի կատարեալ է համեմատած մըջիւն-  
ների հետ։

Խակ եթէ փորձէք համեմատել ձկների և միջառների հասարակական կեանքը, կը գաք բոլորովին տարբեր եզրակացութեան. ձկների հասարակական կեանքը չափազանց ստոր է համեմատած մը ջիւնների կամ մեղուների հասարակական կեանքի հետ:

Մեզ արդէն յայտնի է, որ մը ջիւնները և մեղուները մեծ ուշադրութիւն են գարձնում իրանց ձագուների վերայ. կերակրում են, մաքրում են, ամեն կերպ պաշտպանում են նրանց, մինչև որ նրանք կատարելապէս կը գարդանան: Հիմայ տեսէք թէ ինչպէս են հոգում ձկները իրանց սերունդների համար: Ըստ մեծի մասին ձկների էգերը արտադրելով ահաղին քանակիութեամբ ձւաներ (ձկնիթ), շուտով թողնում են նրանց ու հետամում: Այնպէս որ երբ այդ ձւաներից դուրս են գալիս փոքրիկ ձկնիկներ, նրանք չեն տեսնում իրանց ծնողներին: Փոքրիկ ձկնիկների զարդացումը այդպիտով յանձնեած է լինում բազմաթիւ պատահական հանգամանքներին:

Այդ է պատճառը, որ ձկների մասաղ սերունդների խոշոր մասը կոտորում է, չկարողանալով կուել բազմաթիւ աննսպաս արտաքին պայմանների հետ: Մի բան միայն փրկում է ձկների ցեղին կատարելապէս ոչնչանալուց, այն է նրանց սարսափելի բեղմնաւոր լինելը. ինչպէս յայտնի է, ձկների ամեն մի էզը արտադրում է ձւաներ հարիւր հազարներով: Այնպէս որ՝ թէև զրանք մեծ քանակութեամբ ոչնչանում են՝ կենդանի մնացածները, ինչքան էլ որ քիչ լինեն, էլի կարողանում են շարունակել իրանց ցեղը:

Սակայն ճշմարտութիւնը սպահանջում է ասել, որ ձկների մէջ էլ կան այնպիսի տեսակներ՝ թէև շատ փոքր թւով՝ որոնց մէջ նկատում կան այնպիսի տեսակներ՝ առաջ քան ձկնկիթ արտադրելը՝ առանձին բուներ են շինում, որոնց մէջ էգերը դնում են ձկնկիթը: Կան և այնպիսի ձկներ, որոնք հոգում են ոչ միայն իրանց ձւաների համար, այլ մի քանի ժամանակ շարունակում են խնամել նաև ձւաներից դուրս եկած ձկնիկներին:

Բայց մինչև անգամ այդ տեսակները անհամեմատ աւելի վատ են խնամում իրանց սերունդներին քան մեղուները կամ մը ջիւն-

ները։ Այդ վերջինները ոչ միայն դրանով են բարձր ձկներից այլ և հասարակական կեանքի համարեա ամեն կողմերով։

Մողէսները, օձերը, գորտերը և առհասարակ բոլոր այն կենդանինները, որոնք կոչում են երկրակենցաղներ (ՅԵԽՈՎՈՃԵԿԱՅ) և սողուններ, թէև ձկներից աւելի բարձր են, սակայն հասարական կեանքի երեսյթներով նրանք էլ շատ հեռու չեն գնացել։ Այստեղից պարզ երևում է, որ յաճախ կենդանիների կամդւածքին չի համապատասխանում նոյնշափ զարգացած հասարակական կեանք։ Օրինակ կան կենդանիներ ստոր կազմւածքով և զարգացած հասարակական կազմակերպութեամբ և լնդհակառակը կան շատ կենդանիներ, որոնց հասարակական կեանքը ստոր է, չնայած որ նրանք ունին բաւական բարդ ու զարգացած կազմւածք։

Սակայն շապառում եմ աւելացնել, որ այդ բանը, ինչպէս վերեէլ ասել եմ, նկատում է միայն մասնաւոր դէպքերում, իսկ ընդհանրապէս իբրև օրէնք համարում է այն, որ կենդանական սան դուզքի բարձր աստիճանների վերաց գտնւողները ունենում են նաև աւելի զարգացած հասարակական կեանք։ Օրինակ թռչունները իրանց մարմնի կազմւածքով աւելի շարձր են քան ձկները, դրա համեմատ թռչունների հասարակական կեանքն աւելի զարգացած է քան ձկներինը։ Նոյնը կարելի է ասել և կաթնասունների մասին, որոնք թէ կազմւածքով և թէ հասարակական կեանքի զարգացման աստիճանով աւելի բարձր են քան ձկները, սողունները, թռչունները...

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՒԱՅԹՆԵՐԸ ԹԻՉՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Թռչունների շրջանում մենք չենք գտնում այնպիսի բազմանդամ հասարակութիւններ, որպիսինները սովորական են լինում մեղունների և մրջիւնների շրջանում։ Մենք զիտենք արդէն, որ մեղունների ամեն մի համայնքի մէջ անդամների թիւը հասնում է մի քանի տասնեակ հազարների։ Մրջիւնների համայնքն էլ հազարաւոր անհատներ է պարունակում իւր մէջ։

Թէև թռչունների մէջ էլ պատահում են այնպիսի տեսակներ, որոնք յաճախ ապրում են ահագին երամներով, ինչպէս օրինակ բւեռային (սառուցեալ) երկրներում ապրող թռչունների մի քանի տեսակները, ակայն նախորդ յօդւածից մենք արգէն գիտենք, որ այդ տեսակ երամները իսկական հասարակութիւններ չեն, այլ անորոշ խմբւածքներ (ոչոքքանակ սերմանական ազգական է: Երանւ բաւական է մի ամենաշնչին պատճառ, որպէս զի կարողանայ ցրւել այդ ահագին երամները:

Թռչունների հասարակութիւնները ըստ մեծի մասին ներկայացնում են առանձին ընտանիքներ: Մեծ հասարակութիւնների բացակայութիւնը թռչունների շրջանում պրով. Մենզբիրը բացատրում է նրանով, որ թռչունները՝ շնորհիւ իրանց կազմւածքի առաւելութիւններին՝ շատ զօրեղ են լինում կեանքի կուռում, ուստի և կարիք չի լինում նրանց համար խմբւել և կազմել մեծ հասարակութիւն ընդհանուր ապահովութեան համար:

Թռչունները ունին երկու տեսակ ընտանիքներ. մի տեսակը բաղկացած է լինում միմիայն մի էգից և մի որձից (միակն ութիւն—մոնոգամիա), միւս տեսակ ընտանիքը ընդհակառակը պարունակում է իւր մէջ շատ էգեր և մի հասունացած որձ (բազմակնութիւն—սոլիգամիա):

Ինչպէս յաշանի է, ընտանիքի այդ երկու տեսակն էլ զոյութիւն ունին նաև մարդկանց շրջանում: Ոչ սակաւ յայտնի է և այն, որ մարդկանց մէջ բազմակնութեան վերայ հիմնած ընտանիքը անհամեմատ աւելի ստոր է, քան միակնութեան վերայ հիմնածը, և այժմ բոլոր կուլտուրական հասարակութիւններում իրարև օրէնք ընդունւած է մոնոգամիան՝ միակնութիւնը:

Նոյնը կարելի է ասել և թռչունների, մասին. այստեղ էլ պոլիգամիան աւելի ստոր է, քան մոնոգամիան: Պոլիգամ թռչունների թւին պատկանում են հաւերը, փայտամորեկները (տերեւե) և այլն: Դոցա մօտ ընտանիքի գլուխը (որձը) իր բազմաթիւ կանանց հետ վարւում է ինչպէս մի իսկական փաշա. ամենից շատ նա մտածում է իր գաղանացին կրքերին բաւականութիւն տալու մասին,

իսկ ինչ վերաբերում է ձագուկներին, նա ոչինչ հոգս չի տանում նրանց համար, այնպէս որ նրանց վերաբերեալ հոգսերը ընկնում են միայն էգերի վրայ: Յաճախ բազմակին որձերը ձագեր արտադրելուց յետոյ շուտով անխնամ թողնում են թէ նրանց և թէ էգերին, որպէս զի հեռանալով թրե զան ուրիշ էգերի ետևից...

Այլ է դործը մօնոգամ թռչունների վերաբերմամբ: Դոցա շըրջանում մի էդ ու մի որձ միանալով կազմում են ընտանիք, որը ունենում է գոյութիւն մի, երկու կամ էլ աւելի տարիներ, կան այնպիսի թռչուններ, որոնց մօտ էգը և որձը միանում են ընդ միշտ մինչեւ իրանց մահը կազմելով այդպիսի ընտանիք՝ որձը և էգը ամենից առաջ դարձնում են իրանց բոլոր ուշ ու միտքը բուն շինելու վերայ և այդ աշխատանքների ժամանակ որձը նոյնքան տանջում է ինչքան և էգը: Վերջապէս բաւնը պատրաստ է: Էգը զբաղւում է ձու ածելով, յետոյ սկսում է տաքացնել ձւաները իր մարմնով: Այսուեղ էլ յաճախ ործը օգնում է էգին նրանով, որ երբ վերջինը յոգնում է, նա (ործը) բռնում է նրա տեղը և ինքն է սկսում տաքացնել, մինչև ամուսնու հանգստանալը և կերակրելը:

Զագուկների լոյս աշխարհ տեսնելու րոպէից սկսում են ծնողների համար նորանոր հոգսեր, նրանց հարկաւոր է անդադար կերակրել, մաքրել, պաշտպանել: Դրանով էլ հօր և մօր խնամքը չի վերջանում: Երբ նրանց երեխացքը բաւական աճում են, սկսում է դրանց ուսումը: Ծնողները վերցնելով նրանց երկար ժամանակ սովորեցնում են թռչել:

Այդպիսով մօնոգամ թռչունների զարգացումը երեւում է նախ նրանից, որ նրանք, ունենալով մեծ հոգսեր իրանց ձակուկների մասին, հասցնում են նրանց մինչև կատարեալ զարգացումը:

Բացի դրանից կայ մի հանգամանք էլ, որը սաստիկ բարձրացնում է մօնոգամ թռչուններին պոլիգամներից: Խօսքս այն զգացմունքների մասին է, որոնք տիրում են մօնողամբների շրջանում էգի և որձի մէջ: Ծանօթանալով այդ զգացմունքների հետ՝ մենք սոխաւած ենք խոսառվանւել, որ դոքա ոչնչով չեն զանազանուում: Իսկական սիրոյ զգացմունքից: Նրաւ միթէ կարելի է չգալ այդ եղրակացութեան, եւթ գուք իմանում էք, որ այս կամ այն թռչունների մօտ, երբ մի ամուսինը որ և է պատճառով վախճան-

ւում է, միւսը սկսում է անպատճելի վերապով տիրել, չկերակրւել։ Պատահում է նոյն խակ որ մի ամուսինը՝ չտանելով միւսի կորուստը՝ ինքն էլ վերջապէս մեռնում է։

## V

## Կ Ա Թ Ն Ա Ս Ո Ւ Ն Ն Ե Ր Ը

Այդ կենդանիները կազմում են ահագին դասակարգ՝ բազկացած իմբերից։ Մի տեսակ կաթնասուններ սիրում են շրջել անտառներում, միւսները ապրում են ահագին բարձրութիւն ունեցող լեռների վրայ, երբորդները թափառում են տափաստաններում... Կան և այնպիսի կաթնասուններ, որոնք ապրում են ծովերում և ովկիանոսներում։

Եթէ մենք՝ ինկատի ունենանք այն հանգամանքը, որ կաթնասունների կեանքի պայմանները այդ ասախիճան տարբեր և բազմատեսակ են, մեզ համար գժւար չի լինիլ եզրակացնել, որ հաստրակախն երևոյթներն էլ չեն կարող միատեսակ լինել կաթնասունների բազմատեսակ խմբերում։

Նախ կանգ առնենք այն կաթնասունների վերայ, որոնք ունին ջուխո կճղակներ (պարհոկոպտիա)։ Դոցա թւին՝ ինչպէս յայտնի է՝ պատկանում են կովերը, ռխարը, այծերը, եղջերուները, նոյնպէս և Գուանակօ, Եակ անւանւած կենդանիները, ուղտերը և շատ ուրիշները։

Մի կողմ՝ թողնելով ջուխա կճղակներ ունեցող կենդանիներից նրանց, որոնք ընտանիացրած են, ծանօթանանք վայրենիների հետ։ Այդ կենդանիները սովորութիւն չունին թափառել առանձին առանձին, նրանք կազմում են հօտեր բազկացած հարիւրաւոր անհատներից։ Եթէ մօտենանք այդ հօտին, գուք կը տեսնեք, որ նրանում ամենից շատ կան էղեր։ Հօտի իշխանաւորը լինում է մի ուժեղ որձ, որին հպատակւում են հասարակութեան բոլոր անդամները։ Բացի գրանից հօտում լինում են նաև հորթեր։ Այդ տեսակ հօտը կազմող անհատները արածում են միշտ միասին, յետոյ անցնում են մի տեղից՝ միւսը, շատ անգամ միասին մեծ ճանապահներ են անցնում և ամեն տեղ նրանց վերայ հսկողը կամ նրանց մասին հոգացողը լինում է հօտի գլուխը-որձը։

«Երբ փոքրիկ որձերը (հորթերը) հասնում են որոշ հասակի, այդ ժամանակ սկսում են կոխուները և աւելի թոյլերը ստիպւած են լինում հեռանալ ու կազմել առանձին հօտեր ջահել էգերի հետ... Առաջնորդ·որձը համարեա միշտ արածում է հօտից մի քանի քայլ հեռու և մեծ ուշադրութեամբ պահապան է լինում նրան։ Ամենաշնչին վտանգի ժամանակ նա բարձրածայն մայում է, բոլոր կենդանիները իսկոյն բարձրացնում են գլուխները, նայում են իրանց չորս կողմը և արադ կերպով փախուստ տալիս եւ այդ դէպքում, ինչպէս ասում է և Մեյէնը, էգերն ու հորթերը փախչում են ամենից առաջ, իսկ պառաւ որձը կազմում է արիերդարդը և իր գլխով խթում է իրա առաջ վազողներին»<sup>1)</sup>։

Այդպէս է լինում գործը Գուանակօ և Ա.ի կուն կոչւած կենդանիների հօտերում։ Որովհետեւ հօտի պաշտպան որձը վազում է վտանգի ժամանակ ամենքի ետևից, այդ պատճառով յաճախ նրա կեանքը աւելի է ենթարկւում վտանգի։ Երբ որսկաններին յաջողւում է սպանել Գուանակօ կենդանիների որձին, էգերը դրան ուշադրութիւն չեն դարձնում և շարունակում են փախչել։ Այլապէս են վարւում Վ.ի կունները։ Հենց որ նրանց հօտի պաշտպանող որձը սպանելում է, էգերը ամենեին չեն հեռանում նրանից, այլ սկսում են պտտւել նրա դիակի շուրջը ցաւակցական ձայներ արձակելով։ Եւ այդ անում են նրանք նոյն իսկ այն ժամանակ, երբ որսկանները սպանելով որձին՝ կտրողանում են կոտորել նրա շուրջը հաւաքւած էգերին մէկին միւսի ետևից։ Այլպիսով վիկունների էգերը թոյլ են տալիս իրանց կոտորել, ցանկանալով փախչել ու հեռանալ որձի դիակից։

Սակայն հարկաւոր է աւելացնել, որ կան ևս այնպիսի տեսակներ, որոնց հօտերը կառավարում է որձի փոխարէն մի պառաւ էզ։ Այդպէս է լինում բանը այծեամներից (օրինա), եակերի և միւսների շրջանում։ Այդ դէպքում որձերը շրջում են առանձին առանձին, իսկ հօտերը կազմւած են լինում հորթերից և զարդացած էգերից, որոնք բոլորն էլ հապատակւում են, ինչպէս ասեցի, մի փորձւած պառաւ էզին։ Ինչ վերաբերում է որձերին,

<sup>1)</sup> Բրեմъ, Жизнь животныхъ, հասուր III, էջ 165.

դրանք էլ միանում են հօտին, երբ սկսում է «սիրային պերիոդը»:

Այծեամների մօտ, թէև իբրև առաջնորդ ծառացումէ մի փորձած պառաւ էզ, սակայն հօտը՝ այնքան էլ մեծ յոյս չդնելով նրա վրայ՝ ունենում է բացի դրամնից մի քանի պահապաններ, որոնք հօտի հանդստանալու ժամանակ ուշագրութեամբ նացում են իրանց շորս կողմը: Հեռուից նկատելով մի կասկածելի բան, պահապանները իսկոյն շրւտացնում են, որ և ոտքի է կանգնեցնում ամբողջ հօտը, դրամնից յետոց այծեամները իսկոյն սկսում են փախչել դէպի մօտակայ լեռան գագաթը:

Երբ սկսում է «սիրային պերիոդը», որձերը թողնում են միայնակ կեանքը և միանում էգերի հօտերին: Այդ ժամանակ մի աննկարագրելի յուզմունք և անհանգտութիւն է տիրում որձերին. նրանք զժւածի ոկս վազվզում են հօտի մի կողմից դէպի միւսը յաճախ յարձակելով ջահել որձերի վերայ, որոնց և խռկում են հօտից:

Մանաւանդ սաստիկ է լինում որձի կատաղութիւնը այն ժամանակի, երբ մի ուրիշ զարգացած ուժեղ որձ փորձում է ներս մտնել նրա հօտի մէջ էգերին տիրելու համար: Այս դէպքում բանը առանց ընդհարման չի անցնում: Երկու որձ հակառակորդները նախ մի փոքր հեռանում են իրարից, ապա ժողովելով ինչքան ոյժ ունեն՝ յարձակում են ու խփում իրար եղջիւրներով: Յաճախ կռիւը մէկի մահովն է վերջանում, այդ ժամանակ կենդանի մնացածը սկսում է տիրել հօտին:

Այծեամներն, ինչպէս յայտնի է, լեռնային կենդանիներ են, նրանք սիրում են ահագին բարձրութիւն ունեցող քարափները: Եւրոպացում նրանք գտնւում են Ալպեան լեռների վրայ, նոյնպէս կայ դրանցից Պիրենէյեան և մի քանի ուրիշ սարերի վրայ: Երբ այծեամների հօտը գտնւում է այնպիսի տեղում, ուր նրանց ոչ մի վտանդ չի սպառնում, այդ դէպքում՝ մի քանի նստառւրալիստների ասելով՝ հօտը կազմող այծեամների մէջ յաճախ սկսում է մի տեսակ հետաքրքրական խաղ. գտնւելով այնպիսի բարձրութեան վրայ, ուր լինում են սառցազաշտեր, այդ կենդանիները՝ բարձրանալով մի որ և է ձիւնով ծածկւած ժայռի գագաթը՝ կուչ են ածում իրանց ոտները և սղղալով հասնում մինչեւ ժայռի ստորոտը: Ով

համուռմ է ժայռի ստորոտին, նաև նորից բարձրանում է ժայռի գագաթը և էլի սղղում դէպի ներքեւ Միաժամանակ այդ զւարճութեամբ պարապւում են մի քանի այծեամներ։ Մնացած այծեամները հեռու կանգնած ուրախուրախ դիտում են սղղացող ընկերներին։

Հեռու հիւսիսում, այնտեղ ուր բուականութիւնը ցրտի շնորհիւ համարեա թէ գոյութիւն չունի, ապրում է մի տեսակ հետաքրքրական կենդանի, որին գիտնականները անւանում են հիւսիսցին եղջերու։ Դա այն կենդանին է, որի վրաց դնում են իրանց բոլոր յօյսը հիւսիսացին կիսավայրենի ցեղերը և որը իսկապէս համարւում է նրանց կերակրողը, նրանց պահողը։

Կան վայրենի և ընտանիացրած եղջերաներ։ Վայրենիները ապրում են մի քանի հարիւր կամ նոյն խակ հագար անհատներից բաղկացած հօտերով։ Դոքա նոյնպէս ունեն իրանց առաջնորդները, որոնք ողահապանում են հօտերը նոյն խակ այն ժամանակ, երբ հօտը կազմող անհատները քնած են լինում, խակ երբ յոգնում է առաջնորդը, նա քնում է և նրա փոխարէն վեր է կենում մի ուրիշ եղջերու և կատարում պահապանի դելը։

Որձերը այստեղ, ինչպէս և այծեամների շրջանում, «սիրացին պերիոդի» ժամանակ ենթարկւում են հոգեկան փոփոխութեան։ Նրանք լինում են այդ պերիոդում միշտ յուգւած, միշտ կատաղած։ Այստեղ նոյնպէս յաճախ են լինում ընդհարումներ որձերի մէջ և որովհետեւ հիւսիսացին եղջերուների որձերը ունենում են ահագին ճիւղաւորւած եղջիւրներ, ընդհարումի ժամանակ երկու հակառակորդների եղջիւրներն յաճախ այնպէս են խնճուռմ իրար հետ, որ հակառակորդները չեն կարողանում բաժանել իրարից։ Պատահում է, որ երկու թշնամի որձերը ստիպւած են լինում ամբողջ ժամերով կանգնել իրար հանդէպ, չկարողանալով ազատւել հեռանալ իրարից։

Հիւսիսացին եղջերուները տարէնը երկու անգամ կանոնաւոր կերպով փոխաւում են իրանց տեղը. գարնանը նրանց ահագին հօտերը ուղղուում են դէպի աւելի ևս հիւսիսացին կողմէրը, ուր

մնում են նաև ամառը, իսկ աշնանը նրանք նորից վերադառնում են իրանց առաջւայ տեղը:

Երբ ճանապարհին պատահում են գետերի, հիւսիսային եղջերուները խմբում են միասին հազարաւոր անհատներով ու մոնելով գետը սկսում են լողալ: Ականատեսների պատմելով այդ ժամանակ գետի մակերեւոյթը ծածկում են եղջերուների անհամար զլու իններով: Այս բոպէին անհամբեր սպասում են հիւսիսային երկրների բնակիչները. հէնց որ եղջերուների խումբը մտնում է գետը և սկսում լողալ, որսկանները նաւակներով մօտենում են խմբերին և կոտորում ինչքան որ ցանկանում են:

Եւրոպայում և մեզ մօտ ապրում է մի ուրիշ տեսակ եղջերու, որը իր հիանալի տեսքի շնորհիւ ստացել է ազնիւ եղջերուի անուն: Դոցա հօտերը լնտրում են անտառներում որոշ տեղեր, ուր ամեն տարի որոշ ժամանակ հաւաքւում են բացի էղերից նաև որձերը: Ահա թէ ինչ է պատմում այդ մասին Նիորիին Վինկելը. «...այդ տեղերի մօտերքում հաւաքւում են էղերը փոքրիկ հօտերով բազկացած 6, 8, 10—12 անհատներից, սակայն գուցէ գուրս գալու նպատակով՝ թագնեւում են որձից: Այդ վերջինը անդադար վազվզում է աւագ ու յետ մօտեցնելով զունչը գետնին որպէս զի հօտառութեամբ իմանայ թէ մրտեղ է գոնւում հօտը, կամ թէ մւր է հեռացել նա: Եթէ այդ ժամանակ նա հանդիսում է թոյլ կամ մի տարեկան որձերին, իսկում է նրանց և ինքը գառնում է (էղերի) հօտերի լիակատար տէրը: Այդ բոպէից սկսած նա հետեւուր դիտում է հօտին մեծ խառութեամբ: Ոչ մինը նրա լնտրած լնկերուհիներից չի կարող հեռանալ նրանից նոյն իսկ 30 քայլ... Առաւօտից մինչեւ երեկոյ մոնչում է անտառը որձերի գոռում գոչումներից... Ուրիշ աւելի քիչ բազդաւոր հակառակորդները նախանձով պատասխանում են այդ ձայններին: Նրանք մօտենում են հազար կերպ, վճռելով բոլոր միջոցները փորձել, որպէս զի կարողանան արիութեամբ կամ խորամանկութեամբ նրանց (բազդաւոր որձերի) տեղը բռնել: Հէնց որ էղերի մօտ գոնւող որձ եղջերուն նկատում է մի ուրիշին, նա իսկոյն խանդոտութիւնից այլ-

մելով պատրաստում է հանդիպել նրան: Սկսում է մենամարտութիւն, որը յաճախ վերջանում է մէկի կամ նոյն իսկ երկու հակառակորդների մահով: Եղջիւրները ցածր պահած՝ կատաղաբար յարձակում են նրանք մէկը միւսի վրայ և զարմանալի ճարպկութեամբ աշխատում են հերթով կամ հարւածել հակառակորդին, կամ պաշտպանել նրանից: Հեռու, հեռու անտառում լսում են եղջիւրների հարւածի ձայները... Յայտնի են դէպքեր, երբ մենամարտութեան ժամանակ եղջերուների եղջիւրները այնպէս ամուր կերպով խճճւել են իրար մէջ, որ այդ պատահմունքի հետևանքը եղել է երկուսի մահը... Յաճախ մի քանի ժամայ լնթացքում մենամարտութեան հետևանքը մնում է անորոշ: Յաղթւածը թողնում է կուփ գաշտը միայն այն ժամանակ, երբ բոլորովին ուժասպառ է լինում: Իսկ յաղթողը գանում է իր վարձատրութիւնը անվերջանալի և բազմատեսակ զւարճութիւններում, հատուցւած էգերի կողմից, որոնք հետեւում են կուին... իրանք էգերն էլ յայտնի չեն ամուսնական հաւատարմութեամբ, նրանք էլ որձերի նման սիրում են բազմատեսակութիւն: Նրանք (էգերը) ամեն մի դէպքում աշխատում են զարձարել իրանց այն հարստահարութիւնների փոխարէն, որոնց ենթարկում են շնորհիւ որձերի խանդոս կապրիզների»...<sup>1)</sup>:

Հենց որ վերջանում է «սիրային պերիոդը» որձերը՝ թողնելով հօտերը՝ հեռանում են միայնակ կեանք վարելու, իսկ էգերը սկսում են իրանց բազմաթիւ հոգսերը առաջացած մասաղ սերնդի համար:

Հիմա թողնենք սիրուն եղջերուներին և անցնենք ոչ պակաս գեղեցիկ տիգրատեսք ձիան երին (тигровая лошадь): Եւ իրաւ քիչ կը զտնեն այդպիսի հիանալի՝ արարածներ, որպիսիք են տիգրատեսք ձիան երը: Այդ կենդանիները՝ եթէ կարելի է այսպէս ասել՝ ամենամօտիկ ազգակիցներ են մեր ընտանի ձիու, միայն սաստիկ տաշըերուում են վերջինէք էրանց մարմարի գոյնով:

<sup>1)</sup> Երեմ—նոյն տեղ, հասոր III, էջ 491—492.

զօլեր (ՊՈԼՈԾՅ), որոնք բացի իրանքից ծածկում են նաև գլուխն, երեսն ու ոտները:

Տիգրատեսք ձիաները, որոնց պատկանում են զեքըները, կւագդանները, դառւ ասւած կենդանիներն, ապրում են Աֆրիկայի խորքերում գտնուող տափաստաններում:

«Բոլոր տիգրատեսք ձիաները, ասում է Քրէմը, վերին աստղիճան արագավազ, թեթև, աչքաբաց և վախկոտ կենդանիներ են: Նրանք թռչում են հողմի արագութեամբ թէ տափաստաններում և թէ լեռների վրայց:

Տիգրատեսք ձիաներն ապրում են 80—100 անհատներից բաղկացած հօտերով, որոնց առաջնորդում են փորձւած որձերը: Ձետաքրքիրն այն է, որ գրանց հասարակութիւնների մէջ յաճախ ներկայ են լինում բոլորովին կողմնակի կենդանիներ: Օրինակ ջայլամիներն և մի քանի ուրիշ տեսակ թռչունները միշտ անպահաս են վինում տիգրատեսք ձիաներից: Հասկանալի բան է, որ այս երեսյթը պիտի շարժէր գիտնականների հետաքրքրութիւնը: Երբ սկսեցին ուսումնասիրել այդ խնդիրը, շուտով ամեն բան բացատրւեց:

Բանից դուրս եկաւ, որ երկու իրարից բոլորովին տարբեր կենդանիները այս գէալքում փոխադարձ ծառայութիւններ են անում իրար, թռչուններն օգտում են տիգրատեսք ձիաների կերակրի մնացորդներից, իսկ դրա փոխարէն հետեւեալ մեծ օգուտն են տալիս նրանց.—Թռչունների համար անհամեմատ աւելի հեշտ է նկատել մօտեցող թշնամիններին քան տիգրատեսք կենդանիների համար: Նկատելով թշնամուն վերջիններից աւելի շուտ՝ թռչուններն այնպիսի աղաղակ են բարձրացնում, որ տիգրատեսք ձիաները խոյն հասկանում են թէ բանը ինչումն և շուտափոյթ փախչում են:

---

Հասարակական կեանքի զարգացման տեսակէտից սաստիկ հետաքրքրական է մի տեսակ կենդանի, որը գտնուում է Հիւսիսացին Ամերիկայում և կոչւում է մարդային շուն (լուգօվա սօբակա): Պէտք է ասել, որ այդ կենդանին թէ իր կազմւածքով և թէ բնաւորութիւնով շատ տարբերուում է շնից, միայն մի նմանութիւն կայ—

այն է որ մարդացին շների ձայնը սաստիկ նման է շան հաջո-  
ին, որը և տեղիք է տւել շուն անւանել:

Մի քանի նասուրալիստների պատմելով՝ ճանապարհորդը հիւ-  
սիսացին Ամերիկայում յաճախ հանդիպում է յարթ տեղերում բազ-  
մաժիւ փոքրիկ բլուրներ, որոնք ուրիշ ոչինչ են եթէ ոչ մարգա-  
ցին շներ: Ամեն մի բլուրի տակ ապրում է մարգացին շների մի  
ընտանիք, իսկ բոլոր իրարից մօտիկ գտնող ընտանիքները կաղ-  
մում են մի հասարակութիւն, մի կողոնիա կամ՝ ինչպէս ընդուն-  
ւած է ասել՝ մի գիւղ:

Ահա թէ ինչ է պատմում Մեօլհառւգէնը այդ հետաքրքրական  
կենդանիների կեանքի մասին:

«Համարեա ամեն մի բլուրի վրայ՝ ուղղւած սկիւռի. պէս՝  
նստած է լինում փոքրիկ գեղնաւուն գազանիկ, որի բարձր պա-  
հած պրշը անդադար շարժում է... Եթէ դիտողը մի փոքր էլ մօ-  
տենաց, նա կը լսի պառաւ և փորձւած առաջնորդների ցածր ձայ-  
ները, բայց ահա՝ կարծես կախարդական գաւազանի շարժումով՝  
գետնի վերև կեանքը յանկարծ անհետանում է... Սակայն եթէ այդ  
ժամանակ պառկենք և անշարժ ու համբերութեամբ դիտենք շըր-  
ջակացքը, փոքր ժամանակից յետոյ կը նկատենք թէ ինչպէս պա-  
հապան-գազանիկը (գուրս գալով բնից) կը նստի իր տեղը բլուրի  
վրայ բնի մուտքի առաջ և անընդհատ հաջոցով կը յացտնի իր ըն-  
կերներին, որ վտանգը անցել է: Դրանով նա պատճառ է գառնում  
գազանիկների գուրս գալուն մութը բներից գետնի երեսը, ուր իս-  
կոյն սկսում է զարձասէր գազանների անհոգ գործունէութիւնը:  
Մի որ և է յարգելի ծերունիկ այս համացնքից ուղղում է այցե-  
լութեան համար իր հարեւանի մօտ, որը արգէն սպասում է նրան  
իր բլուրի վրայ. նստած ետեւի թաթիկների վրայ և շարժելով  
պոչը, նա իսկոյն սիրալիր կերպով զիջում է իր տեղը յարգելի հիւ-  
րին: Հարեւանների մէջ բարձրանում է ընդմիջուղ հաջոց, որը ցոյց  
է տալիս, որ նրանց մէջ լինում է մոքերի և զգացմունքների փո-  
խանակութիւն:

Ազդպէս տաք-տաք զրոյց անելով՝ նրանք անհետանում են բունի  
մէջ, որից շուտով էլի զուրս են գալիս, որպէս զի միասին գնան  
հեռու ապրող իրանց ազգականի մօտ, որը հիւրասէր ընդունելու-

թիւնից յետոյ, ինքն էլ միանում է նրանց հետ հեռաւոր զբօսանքի համար: Ճանապարհին նրանք հանդիպում են ուրիշներին, որոնց հետ փոխադարձ բարեւ են ասում, յետոյ ցըւում են և ամեն մէկը ուղղվում է դէպի իւր տունը: Ամբողջ ժամերով կարելի է առանց ձանձրանալու նայել կեանքի այդ անդադար փոփոխող պատկերի վրայ...»:

Երբ մարգային շունը ցանկանում է բուն շինել, նախ փորում է գետինը իր թաթերով, դուրս ածելով հողը, որը յետոյ գործ է ածում հետեւեալ կերպ: Երբ ստորերկրեաց անցքերը պատրաստ են լինում՝ փոքրիկ գազանները դուրս են գալիս բունից և թափում դուրս տւած հողը բունի չորս կողմը, կազմելով ամբողջ պատնէշ գունի շուրջը. և որպէս զի այդ պատնէշը շուտով չքանդվի, գազանները իրանց քթերով պնդացնում են հողը:

«Նայած թէ ինչ եղանակ է, ասում է Համակէն, մարգային շունը ժամանակ առ ժամանակ փոփոխութիւններ է մացնում իր շինութեան մէջ: Երբ սկսում են հոկտեմբերի ցրտերը, նա ծածկում է հինգ մուտքերից երեքը, որպէս զի ցուրով չմոնի բնակարանի մէջ... Բոլորովին տարբեր աշխատանք է անում ամառը, երբ բանի մէջ... Իոլորովին տարբեր աշխատանք է անում ամառը, երբ անձրեւային օրերից յետոյ արեգակը լսւաւորում է և երբ կենդանին պէտք է հոդայ իր բնակարանի ցամաքացնելու համար: Այդ ժամանակ ջրի գոլորշին հեռացնելու համար... մարգային շները փորում են խողովակներ օդը մաքրելու համար...»<sup>1)</sup>:

Մի հետաքրքրական սովորութիւն էլ ունեն մարգային շները նրանք միշտ հաւաքում են բերում չոր խոտ, դրանից բներում շինում են անկողիններ, որոնց վերաց և քնում են...

(Կը շարունակի)

<sup>1)</sup> Երեմ—նոյն տեղ, հատ. II, էջ 457:

<sup>2)</sup> Երեմ—նոյն տեղ, հատ. II էջ 460:

## ԵՐԱԶ

(Մի հաստած չաւարտած պօէմալից)

ՊԼԵՇԶԵԼԻ Ի Յ

ՈԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Վշտից տանջւած, վշտաբեկ, մեն-մենակ  
Ես թեկ ընկայ ըստւերախիտ սօսի տակ:

Աղեղնաձեւ վառ լուսինը վերևում  
Հանդարտ լողում ու փայլում էր եթերում:

Կուռ էր շուրջը... Միայն պայծառ, թափանցիկ  
Երբեմն ժայռի կուրծքն էր շոյում մեղմ ալիք:

Եւ մտախոհ լսում էի ես ծովի  
Լալկան ու խուլ մռմռոցը տաղտկալի:

Սակայն շուսով թմբութիւնը ինձ պատեց,  
Ցոգնած աչքերս քունը եկաւ ու փակեց...

Եւ ես յանկարծ տեսայ չքնազ, լուսածին  
Չաստածուհուն—փայլեց աչքիս առաջին.

Չաստածուհուն, որ սուրբ շընորհ պարզեւ,  
Մարդկանց համար մարգարէ էր ինձ լնորել.

Տեսայ՝ ճակտին պսակ հիւսած մրտենին,  
Հուրդանդուրներ փուտած էին ուսերին.

Աշերի մէջ սէր սրբազնն, սէր հզօր—  
Նա ջերմութիւն, լոյս էր սփռում չորս բոլոր:

Եւ ես զմայլւած, անխօս, անշարժ իմ տեղում,  
Նորա վսեմ խօսքին էի ըսպասում:

Եւ ահա նա խոնարւեցաւ ու ձեռքով  
Թեթև շփեց կուրծքը լեցուն տանջանքով:

Եւ ես տեսայ, նուրբ շրթունքը վերջապէս  
Մեղմ շարժւեցան, և խօսեցաւ նա այսպէս.

«Քեզ ձնշում են վիշտ ու տանջանք, մարդարէ,  
Բայց քո ուղին դեռ շատ ու շատ երկար է...

«Ասեմ, թէ քեզ ի՞նչ վիճակ է ըսպասում  
«Քո ազգի մէջ—ոխ, հալածանք, քարքոծում:

«Կը քարկոծեն, թէ մեղսասէր, սեերես,  
Ակտի մարդկանց դու վեհ խօսքով անարդես.

«Կը քարկոծեն, թէ աւետես դու յանկարծ  
«Արէժինդրութեան ահեղ ժամը այն մարդկանց,

«Որոնք կեանքում նանիր դործին անձներ՝  
«Միշտ խորհում են շար, նենգամիտ խորհուրդներ.

«Որոնց սրտերն, ասես, սառած բընաւին՝  
«Անտարբեր են եղբօր լացին ու ցաւին:

«Բայց նոցանից մի՛ վախենար. քանի ես  
«Քեզ ընկեր եմ—յառաջ գնա քաջի պէս.

«Ես քեզ հետ եմ. թող քեզ անվերջ քարկոծեն,  
«Այդ քարերը գլխիդ վրայով կը թռչեն:

«Թէ դու լինես շղթաներում կապկապած,

«Մի վհատիր, միշտ հաւատամ, յուսով կնց,

«Որ ես իսկոյն քեզ կը հասնեմ օդնութեան

«Եւ իմ ձեռքով կը փշտեմ քո շղթան:

«Եւ դու նորից, իբրև ազատ առաքեալ,

«Կը քարոզես. քո ձախնը զնւր չի թնդալ.

«Մարդկանց սիրով սիրոյ սերմ կը նետես խոր,

«Սերմը շուտով կը տայ պըտուղ փառաւոր.

«Այն, շուտով... Այդ սուրբ օրը շնոր կը գայ,

«Եւ էլ մարդը միշտ չի տանջւիլ, չի սգայ.

«Նոր կեանք կառնէ ողջ աշխարհը... Ահա, տես,

«Ճշմարտութիւնն արդէն պայծառ աստղի պէս,

«Փայլվիում է մութ ամպերի ետեից

«Խեղճ ազգերին, որոնք չունեն կարեկից:

«Յառաջ, յառաջ... Եւ իմ կրծքին դու շուտով

«Համսդիստ կառնես տանջւած հոգով ու սրտով»:

Ասաց... իսկոյն անյայտացաւ. իմ աշքից,

Ես կողացի և զարթեցայ խոր քնից:

Եւ նոր ուժով ես կեանք սիրել ուխտեցի,

Առաջւայ պէս ճշմարտութիւնն երգեցի:

Լքեալ հոգիս փոթորկւեցաւ ու եռաց,

Եւ ես, նորից սիրած քնարս ձեռք առած,

Հսկսեցի անբախտներին աշխարհիս

Կարդալ սիրոյ և փրկութեան աւետիս...

## ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԲԺՇ. Թ. ԶԱՔԱՐԵԱՆԻ

Проф. Сикарский—Объ успѣхахъ медицины въ изученіи явленій психи-  
чесаго міра. Крафтъ-Эбингъ.—Psychiatria, т. I.—Ziegen—Leitfaden der  
Physiologischen Psychologie.

Ա.

Մարդկային գիտութիւններից ոչ մէկը այնքան հին և այնքան  
տուրածւած չէ, որքան բժշկականութիւնը. նա ծնունդ է առել  
համարեա մարդու հետ միասին և նորա հետ քայլ առ քայլ տա-  
րածւել է աշխարհի չորս կողմը. բայց միենոյն ժամանակ ոչ մի  
գիտութիւն այնպէս գանդաղ չէ առաջ զնացել ինչպէս բժշկակա-  
նութիւնը. Հազարաւոր տարիների ընթացքում նա փոփոխակի ան-  
ցել է քուրմերի և կրօնի պաշտօնեաների ձեռքից փողոցային խա-  
բեքաների ձեռքը և բոլոր ժամանակ ծածկւած միտիքականու-  
թեան և տգիտութեան անթափանցելի քօղով, չէ կարողացել դուրս  
գալ այն ճշմարիտ և ուղիղ ճանապարհի վրայ, որով պէտք է ըն-  
թանայ ամեն մի ճիշտ գիտութիւն:

Բժշկականութիւնը իբրև գիտութիւն խսկապէս ծնունդ է  
առել ներկայ տասնեիններորդ դարում. և այս մի քանի տասնեակ  
տարիների ընթացքում, հաստատապէս կարելի է ասել որ, նա շատ  
աւելի յառաջադիմել և զարգացել է քան թէ նախընթաց տաս-  
նեակ հարիւրաւոր տարիների ընթացքում: Նախկին հասուկտոր  
էմպիրիկական միջոցների փոխանակ, որոնց նիւթն էր միմիայն հի-  
ւանդ անհատը, այժմեան բժշկականութիւնը մշակել է արդէն մի

ամբողջ շարք գիտնական սկզբունքներ, որոնց նպատակն է պահպահել ոչ միայն անհատի այլ և ամբողջ հասարակութեան առողջութիւնը։ Նա իւր ծրագրի մէջ է առել նաև այն բազմակողմանի և բարդ պայմանների ուսումնասիրութիւնը, որոնցից կախւած է մարդկացին սերնդի յարատեռութիւնը։ Այդպիսով բժշկականութիւնը առաջւայ նեղ և միակողմանի սահմանից անցել է զուտ հասարակական գիտութիւնների շարքը, որոնց մէջ այսօր նա սասացել է արդէն առաջնակարգ նշանակութիւն։ Սոցիոլոգիան, իրաւագիտութիւնը և նոյն իսկ պատմական գիտութիւնները իրանց վերաբերեալ շատ խնդիրների լուծումը յաճախ սոխուած էն ենթարկել բժշկական գիտութեան վճռին։

Այն ինչ, որ սասացինք բժշկականութեան գանգաղ զարգացման մասին առհասարակ՝ աւելի մեծ չափով վերաբերում է նրա այն ճիւղին, որի նիւթն է մարդու հոգեկան և ջղացին կարողութիւնների ուսումնասիրութիւնը։ Սրա պատճառը այն չէ որ բժիշկները չեն հասկանում այդ ճիւղի բարձր նշանակութիւնը, այլ այն չափազանց բարդ և դժւար լուծանելի երևոյթներն էին, որոնցով արտայացուում է ջղացին և հոգեկան համակարգութիւնների (սիստեմանների) գործունեութիւնը։ Գիտութիւնը երկար ժամանակ անկարող էր թափանցել այդ գործունեութեան գաղտնիքների մէջ։ Նորան յայտնի չէին ոչ ուղեղի նուրբ կազմակերպութիւնը և ոչ էլ նրա մէջ կասարւող երևոյթների հութիւնը։ Հոգեկան և ջղացին կարողութիւնները համարւում էին այնպիսի վերացական երեւոյթներ, որոնցով զբաղ ելը ոչ միայն աւելորդ այլ նաև անընական էր համարւում բժշկի համար։ Եւ մինչդեռ բնական գիտութիւնների զարգացման ազդեցութեան տակ բժիշկները օրինակելի ցանկութեամբ և ժրաշնառութեամբ ուսումնասիրում և պարզում էին մարդկացին կազմաձքի այլ և այլ գործարաններում կատարող երևոյթները, միևնուն ժամանակ նրանք համարեա ոչինչ ուշադրութիւն չէին դարձնում այն գործարանների և այն կարողութիւնների վրայ, որոնք կազմում են օրգանական կեանքի ամենաբարձր արտայացութիւնը և որոնցով մարդ արարածը որոշւում է մնացած անբան արարածներից։

Մինչև վախտունական թւականների սկիզբը հոգեբանութիւնը

մնում էր մի զուտ մետավիզիքական վարդապետութիւն։ Այդ վարդապետութիւնը համարում էր հոգին իբրև լոկ հաւաքածու առանձին գործունէութիւնների (Փունկցիաների) կամ՝ կարողութիւնների, առանց կանգ առնելու այն նիւթական տարրի վրայ, որի մէջ կատարւում են այդ փունկցիաները։ Նա չէր ուսումնասիրում ուղեղը իբրև գործարան, որի մէջ ծնունդ են առնում հոգեկան երևոյթները։ Մետավիզիքան ուսումնասիրում էր միայն ուղեղի Վիզիոլոգիան, առանց ծանօթ լինելու նորա անատոմիայի հետ<sup>1)</sup>։ այզպիսով նա արհեստական կերպով բաժանում էր այն՝ ինչ որ ընտեթիւնը անբաժան է ստեղծել։ Բժիշկ Խւմանսի ասելով—մարդը՝ որ մի ամբողջական էակ է, արհեստական կերպով բաժանվել էր երկու մասի։ մարմինը վերցրել էին բժշկականութեան դոկտորները, իսկ հոգին փիլիսոփայութեան դոկտորները, և սրանք միայն մի կէտում համաձայն էին իրար հետ, այն է որ ոչ մէկը չհամաձայնի ոտք զնել միւսի սահմանի վրայ։

Նորհիւ այդ նեղ և ծուռ հայեացքին հոգեբանութիւնը, իբրև մետավիզիքական վարդապետութիւն, բոլորովին դուրս էր մնացած բնական զիսութիւնների սահմանից։ և բժշկականութիւնը իւր գիտական և գործնական նպատակների համար շատ սահմանափակ կերպով կարողանում էր օգուտ քաղել նրա արդիւնքներից։ Եւ գուցէ գեռ երկար ժամանակ կը շարունակւէր իրերի այդ անբնական դրութիւնը, եթէ օգնութեան չհասնէր բիոլոգիան (կենսաբանութիւնը), որը մի կապող օղակ դարձաւ այդ երկու ճիւղերի մէջ։ Նա իւր զօրաւոր թևերից մէկը սարգելով մէկին, իսկ միւսը

<sup>1)</sup> Անատոմիա (մարդակազմութիւն) անւանում է այն գիտութիւնը, որի նիւթն է նկարագրել մարդկավին կազմւածքի շենքը միայն, առանց ուշադրութիւն դարձնելու այդ չենքի մէջ կատարող գործունէութիւնների վրայ։ Խակ Փիզիոլոգիան (քնախօսութիւն) ընդհակառակը զրազւում է միմիայն ալդ գործունէութիւնների (Պունկցիաների) ուսումնասիրութեամբ։ Վերցնենք, օրինակի համար թոքերը, ստամոքսը, սիրտը և ալին, անատոմիան ուսումնասիրում է ալդ գործարանների միայն ձեզ, կերպարանքը, տեղը, դիրքը և ալզ արտաքին չափութիւնները։ իսկ Փիզիոլոգիան ուսումնասիրում է ալդ գործարանների մէջ կատարող երևութները—չնչառութիւնը, մարսողութիւնը, արեան շրջանադարձութիւնը և ալին։

միւսին՝ կրկին ի մի ձուլեց այն՝ ինչ որ անբաժան է: ատեղծւած:

Այդ միութիւնը կատարւեց 60-ական թւականների սկզբին, շնորհիւ գլխաւորապէս Հերքէրտ Սպենսէրի զօրաւոր հանճարին:

Այն ժամանակ երբոր հանճարաւոր Դարւինը աշխատում էր ձգել ժամանակից բիոլոգիայի հիմքը, Սպենսէրը մշակում էր իւր նշանաւոր «Հոգեբանութեան հիմունքները»: — Ապրելով և գործելով Դարւինի հետ միաժամանակ, բայց նորանից բոլորովին անկախ կերպով, Սպենսէրը նոյնը արաւ հոգեբանութեան համար ինչ-որ Դարւինը բնական գիտութիւնների համար. այդ պատճառով Սպենսէրի վարդապետութիւնը իրաւագելք անւանեւում է հոգեբանութեան գարւինիզմ կամ հոգեբանութեան էւոլյուցիոնիզմ (բնափոխութիւն): Համեմատական հոգեբանութիւնից վերցրած մի շարք փաստերով Սպենսէրը ցոյց տվեց որ հոգեկան և ջղային գործունեութիւնը անխղելի և անպայման կերպով կապւած են ուղեղի և ջղերի կազմակերպութեան հետո նաև գիտնական հիմունքների վրաց գրաւ այն հարցը, որը առաջ միայն վերացական գաւառզութիւններով էր լուծում թէ մետաֆիզիկների և թէ նոյն իսկ նրանց հակառակորդ մատերիալիստների (նիւթականների) շկոլայում:

Սպենսէրի վարդապետութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ նշանաւոր մտածողների և ֆիզիոլոգների մաքի վրայ: Նրա ֆիզիոփայական աշխատութիւնների հրատարակութիւնից անմիջապէս յետոյ ծնունդ առան երկու նշանաւոր ուղղութիւններ ջղերի և ուղեղի ուսւ և մնասիրութեան համար:

Մի կողմից յայտնի ֆիզիոլոգները, որոնց թւումն էին Դոնդէրս, Հէլմհոլց, Վունգտ և ուրիշները, սկսեցին փորձնական կերպով ուսումնասիրել հոգեկան երեսովները և սուեղծեցին հոգեբանութեան այն ճիւղը, որ անւանեւում է հոգեչափութիւն (پսիխոմետրիա): Սրանք ձբաւականանալով այն մեթոդով, որը ուսումնասիրում էր հոգեկան կարողութիւնները միմիացն ինքնազննութեամբ, սկսեցին ամենանուրբ և ամենաճիշտ գործիքների օգնութեամբ վերլուծել այդ կարողութիւնները և որոշել ժամանակը, ոյժը և աւեղղութիւնն ոչ միայն հասարակ շարժողութիւնների, այլ նաև այնպիսի զուտ հոգեկան երեսովների ինչպէս է լմբոնդութիւնը և գաղափարի կազմակերպութիւնը: Այդ փորձերի շնորհիւ

գիտութիւնը այժմ կարողանում է որոշել թէ օրինակի համար ինչ-քան ժամանակւաց մէջ տեսողութիւնը փոխարիւում է ըմբռնողութեան, ըմբռնողութիւնը հասկացողութեան և հասկացողութիւնը մտածողութեան։ Մի շարք հետազոտութիւններ, որոնք մէկմէկու ետևից դուրս եկան Վունդոտի աշխատարանից (լաբորատորիայից), նոր լոյս ձգեցին այնպիսի մութ երեսյթիների վրայ, ինչպէս են օրինակ ուշադրութիւնը կամ երեսակացութիւնը, նրանք գիտնական-օրէն և փորձնական կերպով պարզեցին մտաւոր կարողութիւնների զարգացման էութիւնը, որոշեցին հոգեկան գործողութիւնների արագութիւնը այլ և այլ հիւանդութիւնների ժամանակ և լուծեցին մի շարք խնդիրներ, որոնք, բացի զուտ գիտնական հետաքրքրութիւնից, ունին նաև մեծ զործնական նշանակութիւն թէ կեանքի, թէ դպրոցի և թէ բժշկականութեան համար։

Միւս կողմից գիտնականները, որոնց թւումն էին Բիշա, Իրո-կա, Կլոդ-Ֆէրնար, Կուամաուլ, Վէրնիկ և այլն, ու շադրութիւն գարձրին ուղեղի և ջղերի կազմակերպութեան վրայ և աշխատեցին ճիշ կերպով որոշել տեղը, զիրքը և փոխադարձ կապակցութիւնը այն առանձին մեխանիզմների, որոնք տեղաւորւած են գլխի և մէջ-քի (ողնաշարի) ուղեղների մէջ։ Մարդակազմութիւնը և հիւսւածաբանութիւնը (ՐԱՍՏՈԼՈԳԻԱ) <sup>1)</sup> ձեռք ձեռքի տւած քիմիային, նաև խոշորացոցի և ուրիշ նուրբ գործիքների միջոցով պարզեցին ջղերի նուրբ կազմածքը, որոշեցին նրանց ուղղութիւնը, նրանց սկզբ-նաւորութիւնը և վերջաւորութիւնը, նրանց յարաբերութիւնը գլւ-խի և մէջքի ուղեղների հետ։ Այդ հետազոտութիւնների հետևանքը եղաւ հոգեկան կեդրոնների գիւտը (պսիխոմոտորացին կենտ-րոններ), մի գիւտ՝ որը իրաւացի կերպով համարւումէ զիտութեան դիտաւոր յաղթանակներից մէկը։ Ենորհիւ այդ զիւտին այժմ՝ մենք

<sup>1)</sup> Հիւսւածաբաթանութիւն (ՐԱՍՏՈԼՈԳԻԱ) անւանուած է այն զի-տութիւնը, որը ուսումնասիրումէ մարմնի բաղադրիչ մասերի տարրական կազմակերպութիւնը, ասինքն այն անտեսանելի վանդակները (չհետուա, օւլուս), որոնք միմեանց հետ հիւսելով կազմում են միս, ոսկոր, կաշի, արին և ալին Հասկանալի է, որ այդ տեսակ ուսումնասիրութիւնը կա-արին և ալին Հասկանալի է, որ այդ տեսակ ուսումնասիրութիւնը կա- լող է կատարել միան խոշորացոցի օգնութեամբ, այդ պատճառով էլ հիւսւածաբանութիւնը անւանուած է նաև խոշորացոցակն մարդակազ- մութիւն (մաքրօսկոպիկան անատոմիա)։

գիտենք որ ամեն մի կենսական գործողութիւն ունի իւր սեփական և միշտ անփոփոխ կեղրոնը զլիսի և ուղեղի մէջ։ Այդպէս օրինակ մենք գիտենք թէ ուղեղի որ մասումն են տեղաւորւած շարժողութեան կամ զգացողութեան կեղրոնները, մեզ յայտնի են այն կետերը, որոնցից կախւած են խօսելու կամ շնչելու ընդունակութիւնները. գիտենք այն տեղը, որի մէջ կատարում են մարդկացին մոքի այնպիսի բարդ կարողութիւնները, ինչպէս են մաժեմաթիքական գործողութիւնները։ Այդ կեղրոնների թիւը, որ այժմ հասնում է մի քանի տասնեակների, շնորհիւ նորանոր հետազոտութիւնների օրէցօր աւելի և աւելի շատանում է, և հեռու չէ այն ժամանակը, երբ մեզ արդէն յայտնի կը լինին այնպիսի նուրբ կեդրոններ, ինչպէս են առանձին առանձին գոյնների, համերի, հոտերի և նոյն իսկ առանձին առանձին հնչիւնների կեղրոնները. որանցից մի քանիսը այժմ իսկ արդէն գտնւած և ճշգնդէն որոշւած են՝<sup>1)</sup>։ Եւ ահա, շնորհիւ այդ ամենի, այսօրւաց օրս երբ բժիշկը հանդիպում է մի հիւանդի, որը կորցրել է մարմնի այս կամ այն մասի շարժողութեան կամ զգացողութեան ընդունակութիւնը, որը զբկւել է խօսելու կարողութիւնից, նա արդէն ճշտութեամբ կարող է որոշել այդ խանգարումների տեղը և նոյն իսկ նրանց չափը և էութիւնը։ Մարդ ակամաց մի տեսակ հաղարտութիւն է զգում, երբ տեսնում է զիտութեան այդ յաղթանակը բնութեան այն գաղտնիքների վրայ, որոնք հաղարաւոր տարինների լնթացքում ծածկւած էին մնացել մարդու հետաքրքիր և թափանցող խելքից։ Սակայն դեռ ինչքան հեռի է զիտութիւնը իւր վերջնական յաղթանակներից...

Այդպիսով Սպենսերի վարդապետութիւնը պատճառ դարձաւ հոգեչափական փորձերին և հոգեկան կեղրոնների գիւտին, որոնց հիման վրայ քիչ ժամանակից յետոց Վունդութ բարձրացըրեց Փիզիոլոգիական հոգեբանութեան հակայ շինւածքը, որ արդէն ամբողջապէս մտնում է բժշկական գիտութեան լայնածաւալ շրջանակի մէջ։

(Կը շարունակւի)

<sup>1)</sup> Այդ ասպարէզում գործող գիտնականների թւում չափանի են ուսաներից պրոֆ. Անդրնովը, վրացի Խիսան պրոֆ. Թարխանովը և հազարդի պրոֆ. Ղաղարոս Թումասը, որը առաջինը ճիշդ որոշեց փսխողութեան կեղրոնի տեղը երկանածե ուղեղի մէջ։

# ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՉԱԿԱՆ ԻՐԱԻՐԻՆՔԸ ՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ

(ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ)

## Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Հողային և անձնական իրաւունքների կանոնաւորելու հարցը ամենահին ժամանակներից սկսած ամենայն տեղ և զանազան ժողովուրդների կեանքում ամենաէական կէտերից մէկն է եղել և միշտ մեծամեծ աղմուկներ է զարթեցրել մարդկանց մէջ։ “ուով և արիւնով էին ձեռք բերւում ու հաստատում այդ իրաւունքի վերաբերեալ կարգ ու կանոնները”

Ներկայումն էլ այդ հարցը գեռ լուծւած չէ և հետզհետէ աւելի և աւելի սուր բնաւորութիւն է ստանում, որովհետև հնումը տեղի ունեցող չարիքները այժմն էլ կան՝ միայն կերպարանափոխւած։ Հաւանական է, որ ապագայում ևս այդ հարցը մեծ շփոթութիւնների պատճառ է դառնալու։

Մարդկային հասարակութեան հին կազմակերպութիւնը հաստատած է եղել ի միջի այլոց երկու հիմունքների վրայ. նաև՝ մարդու անձնաւորութիւնը լացն թէ սահմանափակ չափով կարող էր պատկանելութեան (սեփականութեան) առարկայ լինել. և երկրորդ՝ հողի դլաւոր սեփականութեան իրաւունքը կարող էր միայն ազնւականներին պատկանել։ Երբ ծագեց այն նոր գաղափարը, թէ մարդը

սկառկանելութեան առարկայ չպէտք է լինի, և որ հողի իրաւունքը որոշ պայմաններով կարող է ձեռք բերել ամեն մի դասակարգի պատկանող անձնաւորութիւն, անցեալ դարուց սկսած Խուսիայի առաջաւորները, գրականութիւնը և տէրութիւնը ուսումնասիրութեան առարկայ դարձրին՝ թէ թնչպէս մոցնեն այդ գաղափարը իրանց կեանքի մէջ: Այդ բանը իրա ձեռքն առաւ տէրութիւնը և ներկայ դարուս վաթսունական թւերից սկսած մի շարք նոր հիմունքների վրայ հաստատած օրէնքներ հրատարակեց: Նոր օրէնքների հիմունքների համեմատ իրաւատիրութիւնը անթիւ վէճերի առարկայ դարձաւ, զիւանատները լցւեցան գործերով: Խուսիայի ամենալաւ ոյժերը նւիրւեցին այդ գործին: Անթիւ զիտնականներ, վարչական անձեր և ազնիւ մարդիկ ուսումնասիրութիւն ուսումնասիրութեան ետևիցն էին անում թէ հէնց իր տեղումը, այսինքն զիւղերում և դաստակերաններում; և թէ դիւաններում, և քննում այդ առարկային վերաբերեալ զանազան հարցերը:

Այդ ջանքերի պատուղը աջն եղաւ, որ Խուսիայում «կրէպոստնոյ» (Ճորտութիւն) կոչւած իրաւունքը վերջացաւ. հողի իրաւունքը նոր հիմունքների համաձայն կանոնաւ որւեց:

Կան Խուսիայում շատերը, որոնք այդ գործիչների վրայ արաստներ են դնում և նոցա սխանների վրայ են մատնանիշ անում: Ճիշտ է որ գերին միանգամից ազատ չէր կարող դառնալ: Դրանք միանգամից չէին կարող սովորել աջն կարգ ու կանոններին, որոնք լուսաւորեալ մարդուն էին յատուկ: Այդ պատճառով ուսուները մեծ գոհերի և շարչարանքների ենթարկւեցին և պիտի ենթարկւեն մինչև չընտելանան լուսաւորեալ ազգերի կարգ կանոններին, և չովորեն ազատութիւն վայելել: Խայց սնուարակոյս այդ յեղափոխութիւնը, որով կեանքի հին և փտած հիմունքները քանդեցան, հայրերասիրութեան և մեծահոգութեան ծնունդ էր: Այնուամենայիւ Խուսիայում համեմատարար գործը հաստատ և պարզ կերպով կարգադրւեց, որովհետեւ հողային և անձնական իրաւունքների պատմութիւնը, ծագումը և գործադրութիւնը հարիւր տարուց աւելի ուսումնասիրութեան առարկայ էին դարձրել և արդէն հարուստ գրականութիւն կար այդ մասին...

Այդ մեծ յեղափոխութիւնը դիպաւ և Կովկասին. բայց այս-

տեղ գործը ուրիշ տեսակ էր։ Տեղական իրաւունքները չափից դուրս քի։ Էին ուսումնասիրւած, այն էլ տէրութեան ձեռքով և թարգմանների միջոցով, մինչդեռ այստեղ հողացին և անձնական իրաւունքը տարբեր հիմունքների վրայ էր եղել հաստատւած քան Առուսիայում։ Այդ պատճառով էլ այստեղ աւելի ուսումնասիրութեան էր կարօտ առարկոն։ մանաւանդ մեր կեանքը, պատմութիւնը և գրականութիւնը շատ այնպիսի անորոշ կողմեր ունին, որոնք թէ դժւար հասկանալի են և թէ բոլորովին կուսական դրութեան մէջ են ուսումնասիրութեան կողմից։ Այդ հիմունքների փոփոխելը անմիջապէս ազդեց ամեն մէկիս վրայ թէ նիւթապէս, թէ բարոյապէս և թէ մատառը կերպով։ Ոմանք ենթարկեցին այդ ազդեցութեանը հեռաց, ոմանք մօտիկուց, ոմանք թոյլ և ոմանք էլ ուժդին կերպով։ մանաւանդ զգալի էր այդ յեղափոխութիւնը հողատէրերի համար։ Նոր օրէնքի հիմունքների վրայ հաստատած նոր օրէնքները այստեղ էլ իրանց ազդեցութիւնը ունեցան, դրանք բազմաթիւ վէճեր յարուցին տէրութեան, հողատէրերի և հողագործների մէջ։ Ան սուր բնաւորութիւնը և կերպարանքը, որ ունի այստեղի վէճը, Ոռուսիան չդիտէ, որովհետեւ այնտեղ օրէնքը նախատեսել է պատմութիւնից և կեանքից ստեղծւած պայմանները։ մինչ նոյնը չէ կարելի ասել Կովկասին վերաբերեալ։ 1861 թւականի սահմանագծութեան (մեջևանի) օրէնքները բոլորովին ուշադրութիւն չեն դարձրել տեղական իրաւունքների վրայ։ Այդ բանի մասին ես մատնանիշ եմ արել 1881 թւականի իմ դրւածքում «Սահմանագծութեան և հողացին հարցին վերաբերեալ դրքոցկում» (Межевание въ связи съ поземельнымъ вопросомъ)։ Թէև 1870 և 1877 թւականների դիւզացց և հողատէրերի վերաբերեալ օրէնքներում ուշադրութիւն էր դարձրած դրա վրայ, բայց տեղական իրաւունքները այնու ամենանիւ ենթարկւած չեն եղել լուրջ ուսումնասիրութեան, թէև իրաւաբանութիւնը պահանջում է, մի որ և իցէ ասարկացի վերաբերեալ ծագած իրաւունքը կանոնաւորելուց առաջ, ուսումնասիրել դրա պատմութիւնը, գործադրութիւնը և դոգման։

Գուցէ այդ է պատճառը, որ մենք տարօրինակ երևոյթների ենք հանդիպում։ օրինակ Մինսկէլիացում միւնոյն հողի վրայ 20—30 կողմից վիճում են։ Օրէնքը կարող է միայն մէկին տէր ճանա-

չել, մինչ միւսերն էլ անհիմն վէճեր չեն յարուցած և իրանց իրաւունքները հաստատելու համար ունին հիմքեր։ Արևելեան Կովկասում վիճողների թիւլ չափազանց է։ Կարծես ամբողջ ժողովուրդն է մասնակցում վէճերին, և դրանցից տեսակ-տեսակ գործեր են առաջանում։

Հողագործը, իր պարզամտութեամբ, իւր իրաւունքը հաստատելու համար, շատ անգամ մատնանիշ է անում այն սահմանաքարերը, որոնք դրած են եղել գուցէ 1800 տարի առաջ Արտաշէսի օրերով, կամ քօթուկն է ապացոց բերում իր արդարութեանը։ Մէկը օրինակ առվոր էր տալ տիրոջը իւր ձեռքի տակ եղած հողից մի հինգերորդ մասը, իսկ տէր սկսում է արդիւնքի քառորդը, կէսը կամ երրորդը պահանջել և ահա ձեզ վէճի և շատ անգամ բազմամեայ վէճի պատճառ։ Մի տեղ նոր օրէնքի հիման վրայ ծանրաբեռնած է հողագործը յօգուտ հողատիրոջ, իսկ մի այլ տեղ հակառակն ենք տեսնում։ Այդ տեսակ վէճերի մի մասը վերջացել են, միւսները մնում են. և դրանց պատճառը միայն հիմունքների փոփոխման մէջը չէ, որովհետեւ փոփոխւեցին ընդհանուր կալածների սահմանները, տէրերը, — փոփոխւեց նույն մեծամասնութեան իրաւունքը։

Բայց կան շատ բաներ, որոնց վերայ գեռ օրէնքներ պիտի տրւեն, որոնք պիտի որոշւեն և այլն։ Դոցա թւին պատկանում են՝ գիւղացիներին յանձնած և հողատէրերին հասանելիք արտերի և մարգագեանի սահմանագծելը, անտառներից և արօտատեղերից օգտւողներին վերաբերեալ հարցերի կանոնաւորելը (սերվիտու), արքունական գիւղացոց կիցութեան կանոնաւորելը, խիզանների հարցը, բահրէն, զալան և կուլուսը փողի վերածելը. գիւղացու գետինը սեփականութիւն դարձնելու հարցը (վեցուք քրետյանեական համարակալու), ջրի վերաբերեալ հարցերը և այլն։

Մինչև անգամ շատ տեղ հողից հին կարգ կանոնով օգտւելու իրաւունքը չի ունացած։

Ուրեմն շատ բան դեռ սպասում է օրէնսդրութեան, շատ հարցերի լուծումն էլ կախւած է տէրութեան և դատաստանատների բոնելիք ընթացքից։

Բայց զարմանալին այն է, որ հին կարգ-կանոններում՝ կան

եղել այնպիսի կէտեր, որոնք ժամանակի ընթացքում կամ անխախտելի էին մնացած և կամ չափից դուրս ժողովրդականութիւն էին սուսացել: Վասնորոյ գոքա արժանի են խորին ուսու մնասիրութեան:

Կարծես Արտաշէսի սահմանաքարերի պէս այսօրւան բահրէն նոյն տասանորդն էր, որի վերայ Փաւստոսը գրում է.

Եւ զկարգս պաղոյն և տասանորդացն՝ որ ՚ի նախնեաց սովորութիւն էր տալ յեկեղեցին, վամս այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ ոք տացէ (Փ. 193):

Կարելի է նմանապէս կարծել, որ հին «Հայկական կազմակերպութիւնը, թէև կերպարանափոխած, պիտի համնէր մինչև մեր օրերը. այսպէս, օրինակ, պատմական ազատներին մենք հանդիսել ենք Կովկասում, որոնք գեռ կրում էին իրանց հին անունը, թէև հին իրաւունքների բեկորներն էին պահպանել միայն:

Մելիքը կամ խանը հին նահապետը չէր, բէգը հին նախարարը չէր: Յայտնի բան է երբ մի կազմակերպութիւն այդպէս տեսողական է, անշուշտ կունենայ իր մէջ և համակրելի կողմեր:

Օրինակ մեր հին կեանքը ստեղծել էր ՚ի միջի այլոց մի տեսակ հողի սահմանափակ սեփականութեան իրաւունք: Դուցէ վաղը Եւրոպան էլ կընդունի կամ ինքը կը ստեղծի այդ տեսակ մի իրաւունք, որովհետեւ հողի սեփականութեան հարցը այսօր այնակ էլ վէճի առարկայ է: Բէնտամ, Ժան Բատիստ Սէյ, Բասարիա, Կէրի, Ռոշեր, Շէֆլէ, Օգիւստ Կոնա, Լարուլէ, Ազրոլի Զամոնէր — հողի սեփականութեան կողմն են, իսկ Ռեկարդօ, Միլ, Սպէնսէր, Ամբրուազ, Կլման, Վագնէր և այլք — հողի սեփականութեան հակառակ են:

Եւ եթէ այդ երեւելի զիտնականները երկու բոլորովին տարբեր կարծիքի են այդ մասին, մի՞թէ համանական չէ, որ միջակ կարծիքը, այսինքն հողի սահմանափակ սեփականութեան գաղափարը, վաղը ոյժ ու մարմին ստանայ և ընդունեի Եւրոպայում: Եւ ոչնչացնելով այդ իրաւունքը, մի՞թէ մենք կորուստ չենք ունենալ:

Ես այսուեղ միայն մի առարկայի վերայ մատնանիշ արի, բայց ուսումնասիրութիւնը կարող է շատ բան պարզել. օրինակ, եկամուտի համեմատ հարկ առնելու սովորութիւնը նորից է մեր մէջ մտնում (սուսանակ առաջ առաջ առաջ առաջ), մինչ Կովկասի համար այդ նոր բան չէ, և այն և այն:

Բայց այդ ուսումնասիրութիւնը շատ գժ. ար է, որովհետեւ Կովկասում կան թէ մնացորդներ և թէ խառնուրդներ Հայոց, Վրաց, Պարսից, Հռովմացեցոց, Սրաբացոց, Պարթևաց, Ասորոց, Տաճկաց, Չինաց և ուրիշ ազգերի իրաւունքների: Կարծես այստեղ, ուր այդքան ազգեր են, ապրել և շփւել միմեանց հետ, աւելի նպատակայարմար օրէնքներ պիտի առաջ գային: Ո՞ր ասոինանի ազգել են այդ ազգերի օրէնքները մէկը միւսի վերայ: Որտեղիցն է սկսում մէկը և վերջանում միւսը,—որոշ չէ: Ուսումնասիրութեան միջոցին այդպիսի շատ հարցեր են ծագում: Վաղուց է, որ մեր բանասէրները զգացել են այդ տեսակ ուսումնասիրութիւնների կարեռութիւնը և մեր պատմութեան վերաբերեալ շատ ձեռագրեր տպագրել տեղ, որոնք հարուստ նիւթեր են մատակարարում և կարող են մեր ընտրած հարցի պատմական կողմը լուսաբանել:

Մեր կարծիքով հէնց այդ հին ազգիւրների ուսումնասիրութիւնից էլ հարկաւոր էր սկսել գործը և մենք այդպէս էլ արինք:

1880 թւականներից մենք սկսեցինք ուսումնասիրել հողացին և անձնական իրաւունքը Վրաստանու:՝ 12—18 դարերին վերաբերեալ և մեր աշխատութիւնը փոքրիկ դրբոցկով հրատարակեցինք (Личные и по земельные права въ древней Грузии. Тифлисъ, 1886 годъ). Բայց հէնց առաջի փորձը մեզ ցոյց տևաւ որ, հին դարերը թողած, չի կարելի գործը սկսել միջին և նոր դարերից, և երկրորդ նախ հարկաւորէ հայոց իրաւունքով զբաղւել, որովհետեւ այդ լեզով հարուստ նիւթեր կան. մինչ վրաց իրաւունքին վերաբերեալ նիւթերին հետ ծանօթանում էինք ռուսերէն թարգմանութիւններից:

Այսոեղ մեր փորձը շարունակում ենք աւելի հիմնաւոր կերպով, թէև սա մեր աշխատութեան միայն սկիզբն է: Այդ իրաւունքների հիմունքները և մանրամասնութիւնները պարզելու համար շատ աշխատութիւններ են հարկաւոր:

Մեր գործը բաժանում ենք չորս շրջանների՝ ամփոփելով դրա մէջ Հայկազանց, Արշակունեաց, Արշակունի-Բագրատունեաց, Ռուբինեանց և Տաճկա-Ռուսաց շրջանները: Սորանով տալիս ենք առաջին շրջանը, իսկ այնուհետեւ մտադիր ենք, եթէ մեր միջոցները ներեն՝ աւարտել այդ ամենը: Թէև Արշակունեաց շրջանին վերաբե-

բեալ բաժինն էլ գրեթէ պատրաստ է, բայց դորա հրատարակութիւնը ուշացնում ենք, սպասելով քննադասների կարծիքներին ներկայ աշխատութեան մասին։ Նիւթերի կողմից, բացի էմինի, Խնձինիանի, Պալասանեանի, Խորէն ծ. վ. Ստեփանէի գրւածքներից, օգուա ենք քաղել Ազաթանգեղոս, Խորենացի, Եղիշէ, Փաւատոս Քիւզանդացի, Թովմա Արծրունի, Զենոք Գլակ, Յովհան Մամիկոնեան և Ղազար Փարավեցի մատենագիրներից։

Կարելի է կան և ուրիշ նիւթեր և մինչև անգամ անտիպ ձեռագիրներ, որոնք կարող են ուրիշ կողմից լուսաբանել մեր կարծիքները, ուստի նախօրօք կը յայտնենք մեր շնորհակալութիւնը այն բանահերներին, որոնք մատնանիշ կանեն մեզ այդ նիւթերի վրայ։ Ես քաջ հայկաբան չեմ, գործի կարեւորութիւնն է եղել ձեռնարկութեանս դրդողը։ Ընթերցողներից խնդրելով ներողամասութեամբ վերաբերել դէպի աշխատանքս, իսկ բանասէրներից՝ մատնանիշ անել զգալի սխալներիս վրայ—սկսում եմ զործս։

## I

Աւելորդ չենք համարում մի հայեացք ձգել՝ թէ ի՞նչ են գրել մեր յայտնի գրողները Հայկազանց և Արշակունեաց ցեղական և թագաւորութեան կազմակերպութեան վերայ։ Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէի կարծիքը կարելի է հասկանալ նորա գրած հետևեալ տողերից։

Հայաստանը բաժանւած էր բազմաթիւ մասեր տոհմերի և իշխանութիւնների, որոնք սեպհականութիւն էին առանձին նախարարական տների։ սոցանից իւրաքանչիւրը անկախ փոքր իշխանութիւն լինելով, չէր կամենում ենթարկել մի մեծ կենդրոնական իշխանութեան, որով ի հարկէ կը կորցնէր իւր սեպհական անկախութիւնը։ Եւրոպական աւատական իշխանների պէս ցեղի մէջ միայն աւագ անդամն էր ժառանգում ցեղական կալւածները և տէր տիտղոսը։ Բայց երբ Պարսկաստանում Արշակունի Պարթևական ցեղապետութիւնը հաստատւեցաւ, որի թագաւորները, նոր քաղաքականութիւն գործ դնելով, փոքր առ փոքր իրանց աղղեցութեան ենթարկեցին աւելի

զօրաւոր հայկական իշխաններին, հայ իշխանները Բագրատունիների հետ յօժարութեամբ Հայաստանի թագաւոր լնդունեցին Քրիստոսի ծննդից միեւ կէս դար առաջ Արշակունի ցեղի թագաւորազն Վազարշակին։ Այսպէս հաստատեցաւ Հայաստանում թագաւորական իշխանութիւնը, ոչ թէ նորա քաղաքական կարևորութիւնը պարզապէս զգացւելու պատճառով, այլ արտաքուստ գործ գրած ազգեցութեամբ հայկական իշխանների վերաց, որոնք միենոյն ժամանակ իրանց արահովացրին, թէ իրանց իրաւունքները անխախտելի կը մնան։

«Եւ արդարեւ հայոց թագաւորի գործը եղաւ իշխանների բոլոր իրաւունքների և կալւածների վաւերացումն։ Այս սպատճառով Հայաստանի թագաւորներն այն հզօր իշխանութիւնը չունէին, ինչ որ ունէին պարսկական թագաւորներն ամեն ժամանակ Պարսկաստանում։ Հայաստանում թագաւորների իշխանութիւնը գրեթէ չէր երեւում, այլ երեւում էր նախարարների իշխանութիւնը։ Հայաստանը մի տեսակ ազնւապետական մանր պետութիւններից էր կազմւած։ Հզօր իշխանները միայն եռանդուն թագաւորների օրերով հնագանդում էին և կառարում էին կառավարութեան հրամանները, իսկ թագաւորների ժամանակ նոքա գրեթէ անկախարար էին ապրում։ Իշխաններից առաւել զօրաւորները անկախ յարաբերութիւններ էին սկսում դրացիների հետ, բանախօսութեան էին մոնում նոցա հետ, յաճախ ընդդիմագրում էին թագաւորի իշխանութեանը և պատերազմների ժամանակ թագաւորի թշնամիների կողմն էին բանում...։ Հայաստանի բնակիչները մեծ մասամբ գիւղացիներն էին, որոնք հաւատարիմ էին իրանց իշխաններին և կառավարում էին հնաւանդ սովորութիւններով։ Եւ իշխանները այս սովորութիւնները չէին խախտում. որովհետեւ չկար որ և է տեղեկութիւն ոչ միայն գիւղացիների որ և իցէ ապստամբութեան մոսսին, այլ և գանդատների մասին թէ նախարարները նոցա նեղացնելիս լինէին։ Միջին դասակարգը, որը տէրութեան մէջ միշտ նշանակութիւն ունի, երեխ այն ժամանակ բազմաթիւ չէր, որի ապացուցը քաղաքների սակաւութիւնն էր, և երկրորդ այս միջին դասակարգում ու դարում հրէաների թիւը աւելի էր քան թէ բնիկ հայերինը։

Պալասանեանը գրում է.

...«Կրօնի պէս կառավարութեան սկիզբն էլ խոր հնութեան մէջ ծածկւած է. իւրաքանչիւր ցեղ, իւրաքանչիւր ժողովուրդ, երբ միասին խմբում է ընկերական կեանք վարելու համար, պէտք է կարգաւորեալ կառավարութիւն ունենայ որոշ օրէնքներով. բայց կառավարութեան մէկ կամ միւս ձեւ կախւած է երկրի դիրքից, ժողովրդական կեանքի պայմաններից և շրջակաց ազգերի բնաւորութիւնից: Պատմութիւնից տեսնում ենք, որ քարքրուա և աւազու տեղերում և ծովալյին ափերին բնակւող ժողովուրդները, իրանց չոր ու ցամաք երկրի պատճառով, շուտով սահմանում են դաշտային երկիրները ասպասակել կողովուա անելու զիտաւորութեամբ: Այսպիսի ժողովուրդների մէջ բնականապէս գերագոյն իշխանութիւնը հէնց սկզբից այն գերգաստանի ձեռքն է անցնում, որից դուրս են գալիս քաջասիրա և յաջողակ առաջնորդներ. կազմում է մի ժառանգական հարստութիւն և միապետական իշխանութիւնը անզգալի կերպով հաստատութիւն է առնում: Ուրիշ բան է պատահում հովական ու երկրագործական խաղաղ ժողովուրդների մէջ: Այսաեղ առանձին գերգաստաններ միանում և ցեղական ընկերութիւններ են կազմում առանձին ցեղապետների պաշտպանութեան տակ, որոնց պարագն է հովել իրանց ցեղը և սպաշտանել նորա սեպհականութիւնն ու աշխատանքի պատուղը անիրաւութեան գէմ: Այսաեղ արիւակից գերգաստանները կամաց-կամաց ցեղական ընկերութիւններ կազմելով՝ գերգաստանի հօր իրաւունքներն էլ անցնում են ցեղապետին, և այսպիսով կազմում է կալւածական կամ տանուտիրական կառավարութիւնը, որ հայոց էլ իբրև հովական ու երկրագործական ժողովրդի, սեպհական էր սկզբնական ժամանակներում: Մեր առաջին նահապետները մինչև Արամ ժողովուրդի համար ոչ այլ ինչ էին, եթէ ոչ հայրեր, որոնք խնամում էին իրանց ցեղը այնպէս՝ ինչպէս որ գերգաստանի հայրը հոգում է իւր որդոց պիտոցքը, կամ ինչպէս այժմեան զիւղական կեանքում տունուաէրը» կամ ծերը կառավարում է իւր գիւղը: Զանազանութիւնը միան նորանումն էր, որ մեր նահապետների մէջը կար մէկը, որ ժառանգութեամբ ստանում էր ազգի ընդհանուր կառավարութիւնը և որի կողանաւորութեան տակ դանուում էին միւս ցեղապետները: Այս

առաւելութիւնն ունէին Հայկից յետոց ուղիղ դժով յաջորդող նահապետները, որոնց տանուտիրական իրաւունքների ընդհանրութիւնը հիմնում էր ժառանգական սեպհականութեան վերայ, որով մէկը, իբրև զլուխ նահապետ, իւր ուղածին պէս կամ հին սովորութեան համեմատ բաժանում էր կալւածները արիւնակից ցեղերին։ Բայց այս զլիսաւորութիւնը այնպէս անզգալի էր, որ երբեմն զլիսաւոր տանուտէր նահապետը իւր հայրերից իրա ժառանգութեամբ ընկած երկիրը թողում և ուրիշ տեղեր էր գաղթում։ Սորանից երեսում է, որ զլիսաւոր նահապետի իրաւունքը շատ չէր զանազանում երկրորդական նահապետների կամ ցեղապետների իրաւունքից։ Այս տանուտիրական խաղաղ ու պարզ կառավարութիւնը տեսեց հայոց մէջ մինչև Արամ, որ բոլոր ցեղերը միացնելով՝ միապետական արդիւնաւոր հետեւանքներ կունենար Հայաստանի համար, եթէ քաղաքական կեանքի այս բնական զարգացումը ընդհատած չլինէր Ասորեստանի տիրապետութեամբ, որի շնորհիւ հայերը գարձեալ առաջւայ ցեղերին բաժանւեցան։ Ուրիշ նահանգների նման, Հայաստանի հարաւային և արևմտեան մասերը կառավարւեցին բնիկ իշխանների ձեռքով, որոնց զլիսաւոր պարտքն էր հարկը հաւաքել, մէկ մասը թագաւորի և միւս մասը աեղական պէտքերի համար։ Նոքա իրանց ձեռքի տակ ունէին բազմաթիւ զատաւորներ, որոնք ցրւած էին երկրի գաւառներում։ Այս վերջինները ունէին իրանց տեղական կառավարութիւնները, որոնք առանձին խորհրդի միջնորդութեամբ հօգում էին ժողովրդի պէտքերը։ Տարակոյս չկայ որ այս վարչական ձեւը առանց ազգեցութեան չմնաց հայոց կառավարութեան վերայ Հայկազանց թագաւորների ժամանակ, որոնց կառավարութեան եղանակի մասին, թէև ոչինչ չենք խնանում, բայց յայտնի է որ Տիգրան Նրւանդեանի օրերից հասաւառն քաղաքալին կարգեր ասհմաննեցան հայոց մէջ»։

Դառնալով Արշակունեաց ժամանակին, նա շարունակում է.

Արշակունեաց կառավարութեան ձեւը, ինչպէս պարսից՝ այնպէս և հայոց երկրում, մէկ էր—ազնւապետական միապետութիւն։ Թագաւորը Հայաստանի տէր ու իշխանն էր և նորա իշխանութիւնը ժառանգական։ բայց այդ միապետութիւնը իսկապէս անունով էր միայն, որովհետեւ թագաւորի իշխանութիւնը սահմանափակւում

էր մի ուրիշ ազնւազետական իշխանութեամբ, որ մեզանում նախարարութիւն էր կոչւում:

Նախարարութիւնը այնքան հին է որքան և Հայոց ազգութիւնը, և Վաղարշակ, հաստատելով այս ազնւապետական կառան, վաւերացրեց այն կարգը՝ որին հնութիւնը և երկարատև սովորութիւնը օրէնքի զօրութիւն էր տւել: Բղխելով այն տեղական իշխանութիւններից, որ Հայաստանի աշխարհագրական գիրքի շնորհիւ անցիշտակ ժամանակներից կազմել էին երկրի զանազան կողմերում, նախարարութիւնները հետզհետէ զարդացան ու զօրացան, և հայոց հին թագաւորների բոլոր ջանքերը զուր եղան նւաճելու և կինդրոնական իշխանութեանը հապատակեցնելու նոցաւ Երբ Վաղարշակ սկսեց Հայաստանը բարեկարգ զել, սահմանեցաւ օրինաւոր համարել այն հին կարգը՝ որ ըստ ինքեան թագաւորական իշխանութեան համար վտանգաւոր ու վնասակար էր, նորոգելով իւրաքանչիւր նախարարութեան իրաւունքները ժառանգութեամբ ստացած իրաւունքների վրայ նորա միակ աշխատառութիւնն այն եղաւ, որ նախարարների վայելած արտօնութիւնների փոխարէն՝ մի քանի պարաւորութիւններ դնէ նոցա վրայ և այսպիսով փոքր իշտակ արքունիքի հետ կապէ նոցաւ Վաղարշակեան կարգադրութեամբ նախարարները (սրոնք ընդհանուր անւամբ կոչւում էին «ազատ» և «ազատորեար» այսինքն ազնւական), երկու զլիսաւոր գասի էր բաժանում, աւագ և կրտսեր նախարարներ: Առաջինները զանազանում էին կրտսերներից իրանց իրաւունքներով և թագաւորից ընդունում էին «բարձ և պատիւ աւագութեան», որով իրաւոնք էին ստանում արքունիքում թագաւորի ներկայութեամբ նատել բարձի վրայ արևելեան սովորութեամբ: Բայց նոյն իսկ աւագ նախարար ների մէջ մէկը միւսից նախապատիւ էր համարւում նայելով իւրաքանչիւր անազանում են ասաաջի գահ, երկրորդ գահ, երրորդ գահ և այլն:

Եոլոր նախարարները կալւածատէրեր չէին. նոցա մէջ կային որ միայն արքունի պալատում ծառայելով ազատ ու նախարար էին կոչում: Խսկ կալւածատէր նախարարները, «ըսնց գլւթաւորը կոչւում էր «տէր» կամ «տանուտէր» և ճահապետ», իրաւունք ունէր ա) թագաւորից անկախ իշխել ժառանգութեամբ ստացած երկրների վրա (, բ), երկրի բնակիչների դատերը տեսնել (, գ), հարկառնել իրանց հպատակներից, դ), առանձին զօրք պահել դարձեալ իրանց հպատակներից: Այս իրաւունքներից երեւում է որ թագաւորը ամենեւին չէր խառնում նախարարների երկրի կառավարութեան մէջ: Բայց սորա փոխարէն նախարարները հպատակութեան պարոքերով կապւած էին թագաւորի հետ. նոքա պարտական էին ա) զօրքով օգնել թագաւորին պատերազմի ժամանակ, բ) հարկ տալ նրան: Միայն թէ այս պարտականութիւնները ճշտութեամբ չէին կառարւում և սորանից մեծամեծ շարիքներ էին առաջ գալիս: Նախարարներից յետոյ գալիս էր ժողովուրդը, որ Վազարշակի օրէնքներին նայելով՝ երկու գասի էր բաժանում: քաղաքացիք և գիւղացիք: Առաջինները բնակւում էին քաղաքներում և բարձր էին համարւում գիւղացիներից, որոնք պարտաւոր էին քաղաքացւոց պատեել իշխաններից: Հարկերը կամ տուրքերը ծանրանում էին գլխաւորապէս ստորին կարգի ժողովրդի կամ գիւղացոց վրայ, որոնք այնքան պիտի հասուցանէին որ երկու արքունիքի—թագաւորի և նախարարների պէտքերը հոգացւէին: Բայց սորանից, Արշակունեաց ընդունած սովորութեամբ՝ շինական դասը սակաւ առ սակաւ զրկում էր հաղից, և երկրի հարստութիւնը կենտրոնանում էր մի քանի անհատների ձեռքում: Վազարշակի յաջորդները շբաւականանալով եղած նախարարական տներով, հետզհետէ նորանոր նախարարներ ստեղծեցին: Թագաւորը մի որ և իցէ հպատակի անձներ հաւատարմութիւնը և պատերազմի ժամանակ ցոյց աւած քաջութիւնը վարձատրելու համար՝ նորան նախարարական պատեին էր հասցնում և շատ անգամ առանձին կալւածներ էր շնորհում (Վարաժնունիք, Դիմաքսեանք, Տրունիք, Առաւելեանք, Ամասունիք և այլն): Միայն վերջը,

քրիստոնէութեան շրջանում, թագաւորը երբեմն անհաւատարիմ և ապստամբ նախարարի կալւածներով վարձարում էր իւր սիրելին ներին։ Ս. Պալաւաննեանը, շարունակելով նոյն նիւթի մասին, յայտնում է նաև այն կարծիքը, իբրև թէ Արշակունիք սովորութիւն ունէին քաղաքներ շինելու և նոցա այդ սովորութիւնը նա վնասակար է համարում այն պատճառով, որ այդ ախար ծանրանում էր երկրի տնտեսական վիճակի վերաց։

Խնձիճեանի կարծիքով մեր մէջ կառավարութիւնը միապետական էր, որովհետև «թագաւորք մեր ինքնօրէն իշխէին նաև ընդդէմ հաճոցից նախարարաց. օր. Տիրան, Արշակ, Պապ և այլն». և վերջապէս հարեան ազգերը միապետական կառավարութիւն ունէին։

Արքան ունէր սենեկապետ, հազարապետ, շահապէտ, «որոնք հաւատարիմք էին՝ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան՝ ի ներքոյ և արտաքոյ, որոնց հաւատացին «ամենալն գործս տանն արքունի, որք վերակացու էին արքունի տեղեաց կամ ի վերայ շահու եկամոից արքայի»։ Կար թագաղիրապետը, արքային կարապետը, թիկնապահը, գեկուցանողը, քարտուղարը Կային՝ որսպետը, գահնապետը, շահ ախոռապետը։ Կային գրչունիք, նամակունիք, զրան երկցը և զրան եպիսկոպոսը։ «Ամեայն՝ ի դուռն արքային բնակեալ արք», անւանւում էին «որեար զրան» երկրորդ թագաւորութեան՝ զա փոխարքայութիւն էր և սկզբում Մուրացանների ձեռումն էր։ Տիրանը երկրորդական գահը տւառ մի պատանու Անձեւացեաց տոհմից։ Վերջի Արշակունեաց ժամանակ երկրորդ արքայն կոչում էր մարդպետ, հայր իշխան։ Թագաւորի խորհրդանոցում մասնակցում էին չորս բարձրերէց զահերէց՝ բղեշլու անւամբ, որոնց զինւորական և կառավարութեան գործեր էր յանձնւոծ։ Չորս սահմանակալք կային, «որոնք կարգեալ էին ի զինւորական դասէն ի սպահանութիւն սահմանաց»։ Որոնք այս ինչ կամ այն ինչ աշխարհն էին պահում՝ կողմնապահն, կողմնակալ կամ կուսակալ էին անւանւում։ Ովքեր զանազան տեսակ արքունի դործերով էին պարապում՝ «գործակալք» էին անւանւում։

«Նախ» և «արար» «նախկին» «չարար» և «սոսքերիցն» է ինձիճեանը դուրս բերում նախարար խօսքը նախարարաց սինքն նախակարգեալ իշխան։ նա հա-

մեմատում է լատին բռէփեկտուս խօսքի հետ, որը ցոյց է տալիս յառաջագահութիւն և նախարարութիւն քան զայլս։ «Նախարարները յանուն դաւառի կոչէին, բայց կային և որ յանուն ցեղի կոչէին. վերջիններս աւելի բարձր էին, օր. իշխ. Վասպուրականի առ Ասողայ կոչի իշխան Արծրունեաց։ Բագրատունիք, Մամիկոնեանք, Անդեղտոն և Մարդուեականք յանուն ցեղին կոչէին»։

Նախարարք և նախարարութիւնք, նորա կարծիքով, ազատք և ազատութիւնք էլ էին կոչւում։ Եւրաքանչիւր տոհմինախարարութեանց գլխաւորը, որպէս կոչւումէր «տէր» և «տանուաէր», նոյնպէս կոչւումէր և նահաղեատ իշխան խօսքը թէե ընդհանուր է, բայց տիրապէս սեպհականւած էր այն տոհմին, որը «իշխէր և տիրէր երկրին իւրում»։ Օրինակ Սիւնի Բարդէն, որին անւանեցին (Պազար, էջ. 212) իշխան տէրութեան Սիւնեաց։ Աշոտ Արծրունեաց տան իշխանից յետոյ նորա իշխանական պետութիւնը (Ստ. Օրբ. 38) պայազանեց նորա որդին Սեպուհք ազնւական ծագումն ունէին, բայց գլխաւորները տոհմերի և երկրների տէրեր չեին։ Բուզանդացին և Մեսրոպը սատրապ խօսքը գաւառակալի տեղ են գործ ածում։ Յունաց և լատինացոց մէջ սատրապը նախարարի տեղն է։ Եւրոպայում ֆէոդալական տիրապէտութիւնը սրով էր կանգնել։ Իսկ Հայաստանում, տում է նա, նոյնից յետոց երբ մարդ չկար, առաջին բնակիչները տէրեր էին երկրին իրաւամբ և ոչ բռնութեամբ։ Փառանգաբար այդ իրաւունքը անցնում էր որդոց։ Ուժեղ տոհմերը, որոնք ապագայում՝ կարողացան զօրք պահել, նախարարներ կոչւեցան։ Գիւղացիք, որոնք գտանւում էին երկրում, նոյն տէրանց ծառաներն էին։ Վաղարշակը նախարարութիւններն հաստատեց։ Տիգրանը իրան օգնողներից, ցածր ազգերից, որոնք վաշտում անազիք բայց անձամբ երևելիք էին, նոր նախարարութիւններ ստեղծեց։ Արշակ և Տիրան հետեւում էին ջնջել նախարարութիւններ։ Առասարակ, Յովհաննէս կաթողիկոսի առե-

լով, «Թագաւորք մեր պետք և իշխանք» հետեւում էին ոչնչացնել հին նախարարութիւնները և ստեղծել իրանց համար նոր պայազատութիւններ: Երկիրը սեփականութիւն էր նախարարների, վասըն որոյ և երբեմն նոցատէր էին անւանում: Նախարարները դատաստանի իրաւունք ունէին, որով հետեւ չի երևում որ թագաւորները խառնւէին Աղձնեաց, Վասպուրականի, Սիւնեաց և այլոց դատաստանում: Սոքազօրքի վերայէլ իշխանութիւն ունէին. միմեանց կամ օտարների հետ կարող էին կռւել: Թագաւորին պատերազմի ժամանակ պատրաստ էին զօրք տալ, չտալլ մեծ յանցանք էլ չէր: Նոքա իրանց երկիրներն էին պահում: Հարկ և հաս չտալլ ապատամբութիւն էր համարւում:

Նախարարները աւան և կրտսեր կարգերի էին բաժանւած: Աւագութիւնը գահով էր որոշում: Զանազան մատենագիրներ առաջնակարգ գահի իշխանների թիւը փոքր ինչ տարբեր կերպով են որոշում: Սա. Օրբելեանցի ասելով, նոցա թիւը 400-ի էր հասնում: Արշակի ճաշի ժամանակ նմանապէս նստում էին 400 իշխաններ, և առաջւայ կարգը նորոգւեց ս. Ներսէսի հրամանով: Ոչ միայն նսհանգները, այլ և գաւառները հայոց աշխարհի ունէին իրանց նախարարութիւնները:

Ահա ինչ է գրում Էմինը նախարարութեան մասին:

Նախարար բառը կարծւում էր թէ կազմած է երկու բառերից—նախ և արար, նախ—առաջին, արար—առնեմ (գործել) բացից, ուրեմն նախարար կը նշանակէր առաջին գործող կամ ներգործող, տէրութեան առաջին պաշտօնեաց: Այսպէս էին կոչում Հին-Հայաստանում այն հողերի տէրերն, որոնք պատկանում էին յացոնի մի ցեղի և անցնում ազգից ազգ: Նոցա իշխանութիւնը կամ պայազատութիւնը կոչում էր նախարարութիւն: Նախարար բառը օտար լեզուներով թարգմանում էին սատրապ բառով, որի հին պարսկական ձևն է, ինչպէս հաւատացնում է Լասսէն (Ueber die Keilschriften der ersten und zweiten Gattung, էջ 18) խատրապա, որ ծագում է խշատրա (թագաւոր) բառից: Ուրեմն խատրապա, որպէս բարդ բառ, պիտի նշանակէր թագաւորական իշխանութեան «խնամատար» կամ «պաշտպան»: Բառը իսոնը

Բիսութինեան ժայռի վերայ եղած սեպածեւ արձանագրութեան մէջ կարդում է շատրապա, որին Լասսէնի տւած նշանակութիւնն է տալիս: Նախարարները բաժանուում էին աւագ և կրտսեր: Աւագ նախարարներ համարւում էին նոքա, որոնք ծագում էին հայերի նախահայր Հայկի ցեղից, կամ հայկական հին անկախ ցեղերի նահապետներից: Կրտսեր համարւում էին, որոնց նահապետները եղել էին անյայտ մարդիկ, բայց յետոյ անձնական արժանաւորութիւններով հայ թագաւորներից ստացել էին նախարարութիւն և արքունի զիւանում որպէս նախարարներ էին նշանակւած: Արքունի հանդէսների ժամանակ նոքա ունէին յատուկ տեղեր իրանց ցեղի աւագութեան և արժանաւորութեան համեմատ: Սրանից է առաջ եկել հին մատենագիրների ոճը—ընդունել բարձ և պատիւ յարքայէ—ստանալ բարձ և պատիւ թագաւորից: Մեծ շնորհ էր համարւում: Երբ թագաւորը պարգևում էր մինին բարձ, այսինքն իրաւունք նորա ներկայութեամբ թեկ ընկնելու: Երեխ այս սովորութիւնը կար Հայաստանում հնագոյն ցեղապետութեան ժամանակ ևս, որովհետեւ մեր այս հնագոյն պատմական ցիշատակարանում՝ յիշւած կան նախարար և նախարարութիւն բառերը: Երբ Հայկի ցեղապետութիւնը վերջացաւ Հայաստանում 351 թ. Ք. Տ. առաջ և բարձրացաւ Հայկական գահի վերայ Արշակունի ցեղը 150 թ. Ք. Տ. առաջ, նախարարների յարաբերութիւնները գէպի թագաւորը և գէպի միմեանց նորից որոշւեցան նոր գահակալի կամքով: և սա հարկաւոր էր, մանաւանդ որ Վաղարշակ բազմաթիւ նոր նախարարութիւններ հաստատեց, որոնց մասին առիթ կոնենանք խօսելու իւր տեղում: Նախարարութեան արժանաւորութիւնը պարգևում էր երբեմն թագաւորին մատուցած ծառայութեան համար, և փոխադարձաբար զրկում էին այս իշխանութիւնից նոքա, որոնք զայրացնում էին թագաւորին իրանց անհնազանգութեամբ, խոռվութեամբ և ուրիշ գործերով: Արշակունիների թագաւորութեան վերջում, 422 թ. Ք. Տ. յետոյ, անվերջ վէճեր սկսւեցան նախարարների մէջ, այնպէս որ Վաղարշակից հաստատած նոցա տեղակալիան կարգը խանդարւեց, և կրտսեր նախարարներից շատերն յաղթեցին առաջներին: Այս անկարգութիւնն առաւել մեծացաւ, երբ Հայաստանը բաժանեց Թէոդոսիս կրտսերի ժամանել մեծացաւ, երբ Հայաստանը բաժանեց Թէոդոսիս կրտսերի ժա-

մանակ, 428 թ., երկու մաս—Պարսկական և Յունական:

Այն ժամանակ նախարարները, իրանց թագաւորի դէմ ամենատփոքը անբաւականութիւն ունենալուն պէս, անցնում էին Պարսկական Հայաստանից Յունական Հայաստան: Սրա հետեւանքը լինում էր այն, որ այս նախարարների անունները ջնջւում էին տեղակալական մատեններից և ուրիշ նորերը նշանակւում էին նոցա տեղ Մանաւանդ առաւել յաճախ էին պատահում այս զրկանքները Պարսկական Հայաստանում: Պարսկաստանի տիրապետները, Խասանեանները, վիրաւորում էին յաճախ հայկական նախարարների հպարտութեան և արժանաւորութեան զգացմունքը, մանաւանդ ցեղական նախարարներին, որոնք անբաւականութեամբ էին նայում իրանց փոխարինող նորընտիր նախարարների վիրայ: Պարսկաստանում Շապուհի դրանը 420 թ. արքունական սեղանին նոյն երեսցիներն էին կրկնուում, ինչ որ նկարագրում է ուսւ հեղինակ Կոտորիսինը իւր աշխատութեան մէջ (Россія въ царствованії Алексея Михайловича, Пенербургъ, 1840 г., գլ. գ., եր. 15 և 36):

Սիւնիքի հին ազատական տէրը Անդոկ, որ նախարարների մէջ միշտ առաջին տեղերից մինն ունէր, Շապուհի կարգադրութեամբ, արքունի սեղանին 14-րդ տեղը պիտի նստէր: Բոլոր ճաշի ժամանակ Անդոկ ձեռ չտնեց ոչ մի կերակրին և այնպէս սաստիկ վիրաւորւել էր թագաւորից հստած այս անպատւութիւնից, որ երբ իր երկիրը վերադարձաւ, ասպատամբեց Շապուհի դէմ, անցաւ Յունական Հայաստան և շատ տարիներ չէր զարգարում Պարսկաստանը իւր յարձակմունքներով աւերելուց (Մով. Կաղանկատ. Պատ. Մ. Բ. գլ. ա.): Այսպիսի դիպւածներ յաճախ էին պատահում:

(Կը շարունակւի)

# ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Դ. Պ. Ա Յ Ա Զ Ե Ա Ն Ի

## I

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ ԵՒ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Սոցիալական գիտութեան զբաղեցնող ամենանշանաւոր խնդիրներից մէկը համարւում է ներկայումս «Բանւորական» կոչւած մեծ խնդիրը: Բանւորական խնդիր... Դա այն խնդիրն է, որով զբաղւեցին գարուս նշանաւոր գիտնական համեմարները և շարունակում են զբաղւել, որը ստեղծել է գրականութեան մի հարուստ ճիւղ և որի հեղինակ բանւորական գասակարգը ահա գարուց ի վեր մեծ արդիւնագործութեան զարգանալով՝ եւրոպական երկիրներում մոքերի, քաղաքականութեան շարժիչ է հանդիսանում: Նրանք, որոնք եւրոպական կեանքին ուշադրութեամբ հետեւում են, հարկաւ տեսնում են թէ ինչ է կատարում զբեթէ ամեն օր արեւըտեան զանազան երկիրներում: Այսօր հեռագիրը կը հաղորդէ մեզ թէ՝ այս ինչ երկրում հազարաւոր բանւորներ գործադուլ են արել, այնտեղ ոստիկանութեան միջամտութեան հետևանքը կոտորած է եղել, վազը մի ուրիշ տեղ բանւորները մեքենաները ջախջախել, գործարանատէրի շինութեան դռները և պատուհանները կոտրատել են և այլն:

Սոցիոլոգներից ոմանք մինչև անգամ բանւորական խնդրից դուրս մի այլ սոցիալական խնդիր չեն ուզում ճանաչել այսօր: Լաւ յիշում եմ, մի օր ֆլոնէւի համալսարանի ուսանողներից աւելի հետաքրիրը ուղղեց այսպիսի մի հարց մեր քաղաքանախեսութեան պրոֆեսորներից մէկին՝ «Ա. ոլրովիէսոր, ի՞նչո՞ւ ալէոք է հասկանալ

և ընկունել ընդհանրապէս թէ ինչ է սոցիալական խնդիրը...» Eh bien, messieurs, actuellement il n'y a plus de question sociale que celle de la classe ouvrière<sup>1)</sup> Եղաւ նորա պատասխանը: Արդարեւ պրոֆէսորի արտայայտած նոյն տեսակ կարծիք քաղաքական գործիչներից շատ շատերն են յայտնում և պաշտպանում եւ այդ շատ հասկանալի է. քաղաքական գործիչներին բանւորական տարրը զբաղեցնում է, որովհետեւ նա միակ ոյժն է ճանաշւած, որից նրանք օգտական գիտեն իրանց քաղաքական նպատակներն առաջ տանելու համար. սոցիոլոգներին ևս բզանքնում է բանւորների վիճակը նոյնպիսի ծանրակշիռ նշանակութեամբ, որպիսին ներկայացնում է այդ դաստակարգը իրեւ քաղաքակրթից Փակառը, հասարակութեան լաւագոյն կազմածքը համար իրեւ առաջադէմ տարր: Ուշադրութեամբ հետեւեցէք, հետախուզեցէք, քննեցէք լուրջ քննագատի բնաւորութեամբ լուսաւոր աշխարհում կատարւող դէպքերը, հասարակական, քաղաքական, գաղթականական և այլ միջազգայն խնդիրները, որոնք, իրեւ մասներ, ասրիբուտներ, շրջում են մի ընդհանուր ինդրի շուրջը, որը և կոչւում է «Բանւորական խնդիր» Նկատի պէտք է առնել, որ նա յայտնում է զանազան երկիրներում զանազան գոյնով և կերպարանքով. այսուեղ ընտրողական պայքարով, աշնուեղ գործադրութիւն, ուրիշ տեղ աշխատանքի ութժամեաց պրոէկտոներով, ապահովութեան օրէնքներով:

1848 թւի փրանսիական յեղափոխութիւնից արդէն բանւորական տարրը մուտք է գործում քաղաքական ասպարէզը, պաշտօնապէս ճանաչում է նա քաղաքացիական իրաւունքների տէր և օրէնքով թոյլ է տրում նախ Ֆրանսիայում և ապա այլ տեղերում մասնակցելու քաղաքական գործերին և իր կամքը արտայայտելու օրէնսդրական և վարչական մարմիններում: Հենց այդ ժամանակից հարկաւոր էր մի նոր Սիէյս, որը գրէր բանւորների նկատմամբ նոյնը, ինչ որ մեծ յեղափոխութեան Սիէյսը գրեց բուրժուազիայի մասին. — «Ի՞նչ բան է Quatrième etat (Քատրիէմ) էտա—չորրորդ

<sup>1)</sup> Դէ, պարուներ, ներկագումս բանւորական դասի ինդրից գուերս մի այլ սոցիալական խնդիր գոյութիւն չունի այլ ետ:

դասակարգ»<sup>1)</sup> : — Աչինչ : Ի՞նչ պէտք է դառնայ .— Ամեն բան : Ի՞նչ է ուզումնա .— Մի ինչ որ բան :

Եւրոպական ամեն մի պետութեան ամենածանրակշիռ հողմն է կազմում բանւորական խնդիրը : Նրանք, որոնք ցաւում են, տեսնելով որ կուլտուրական ազգերի մէջ արդէն հասարակական մի չարիք է ստեղծւել, որը սովորաբար անւանում են բանւորական պլորետարիատ, և թէ ձգտում են ոչչացնել, արմատախիլ անել այդ չարիքը զանազան գեկրէտներով և թէ պրոէկաներով, շոկոքէ զարմանան եթէ ասեմ, որ այդ չարիքը անխուսափելի հետեւանք է որոշ անտեսական զարգացման, հետեւանք մեծ կամ խոշոր արդիւնագործութեան և, որ գլխաւորն է, ոչ մի հնարքով կարելի չէ պրոլէտարիատ ասւած չարիքը ներկայում վերացնել այն երկիրներում, ուր մեծ արդիւնագործութիւնը սկսել է մուտք զործել և չաղթանակել հին, նահասպետական մշակութեան մանր մունք ձեւերին : Մի երկրում ներկայում պրոլէտարիատի զարգացման առաջն առնելու փորձ անել կը նշանակեր՝ զուր ջանք անել, ժխտելով մեքենացի, շոգու օգտաւետութիւնը, ժխտել կապիտալի պատմական մեծ նշանակութիւնը, մի խօսքով գիտութեան և քաղաքակրթութեան փառաւոր գիւտերն ու ստեղծագործութիւնները :

Ի՞նչ որ կարելի էր անել բանւորների անմիսիթար վիճակը թեթեացնելու համար՝ այդ լր լիներ—բարեփոխութիւններ մացնել նրանց շրջանում, ապահովել նրանց կեանքը ծայրացեղ ազքատութիւնից, կապիտալի ճնշումից կամ հարստանարութիւնից, բազմակազմանի կերպով բարձրացնել նրանց մարդկացին արժանաւորութեան և գոյութեան իրաւունքի գիտակցութիւնը և այս բոլորը ժամանակաւորապէս նրա համար, որ սեռը, մարդկացին սեռը, պահպանւի ֆիզիկական և բարյուսական քայլքայլման վտանգից : Այսպէս էլ պահանջում են պետութեան շահերը, որովհետեւ ամեն երկրումն էլ հասարակական և քաղաքական կեանքը յենում է աշխատող դասակարգի գոյութեան վրայ :

<sup>1)</sup> Գերմանացի պատմաբանները այդպիսի անուն են տեսլ բանւորական դասակարգին՝ պատմական կեանքում տիրապետող դասակարգերի աշխարհական կարգի հիման վրա :

Մասնաւորելով խօսքը Առուսիային և Նրա բաղկացուցիչ երկիրներին, պէտք է ասել որ մեզանում համեմատաբար քիչ ուշադրութիւն է դարձրած այդ կողմի վրայ. մինչդեռ խնդիրը մեծ է և լուրջ ուշադրութեան արժանիք Երաւ է բանւորական պրոլետարիատի զարգացումը մեզանում այն ծաւալը չէ առացել ինչ որ տեսնում ենք եւրոպական արդիւնագործ երկիրներում. բայց և այնպէս նա կայ և գոյութիւն է ստացել սկիզբն առնելով ճորտերի ազատութեան հոչակաւոր մանիֆէստից (1861 թիւ): Այդ նշանաւոր մանիֆէստի հրատարակման օրից գիւղական մարդը Առուսատանում, որը առաջ մատնւած էր կատարեալ անշարժութեան և տիրալի վիճակի, ընդ միշտ ազատում է այն կապանքներից, որոնցով կապւած էր հողի և իւր տիրոջ հետ. այն ժամանակից ի վեր նա սոցիալական և անտեսական անկախ դիրք է ձեռք բերել և հասարակական մրցութեան ասպարեզ գուրս զալով՝ հայժայթում է իւր ապրուստի միջոցները զանազան պարապմունքներ ընտրելով իրան համար: Ակսում են արագ արագ աճել Առուսատանում և թէ մեր երկրում—Կովկասում—քաղաքներ. գործարանական—արդիւնագործական կեանքը զգալի կերպով զարգանում է մեծ կենդրուններում. ներքին առուստուրը լայն ծաւալ ընդունելով՝ ներքին վաճառանոցներ են ստեղծւում և մինչև իսկ ռուսական շատ ապրանքներ համաշխարհացին վաճառանոցներում ևս արգէն տեղ են գտնում: Կապիտալը սկսեց իւր դերը խաղալ: Եւ ի հարկէ այս բոլորը դեռ մեզանում գրեթէ սաղմնացին գրութեան մէջ է: Տընտեսութեան նորանոր կարգերը զարգանալով Առուսատանում՝ զուգընթացաբար առաջ է գալիս մի նոր հոսանք զվահաւորապէս գիւղերից գէպի կենդրունները—կազմում է մի նոր դասակարգ, այն է՝ օրավարձով աշխատող դասակարգ: Յաւ ի սիրտ պէտք է յացանել, որ մեզանում վիճակագրուկան հաստատութիւններ չկան այնպէս, ինչպէս Անդլիայում, Գերմանիայում և այլն, որոնք ճիշտ և անաշառ տեղեկութիւններ տային մեզ գիւղերից գէպի քաղաքները տեղի ունեցող ազգաբնակութեան հոսանքի ծաւալի մասին և քաղաքների գործարանական-արդիւնագործական աշխարհում աշխատող բանւորների ճիշտ թւերի մասին. բայց և այնպէս մասնաւոր տուիսակոսների հետազոտութիւնների հիման վրայ կարելի է ասել, որ

թէ միշտակւած հոսանքը մեծ է և թէ գործարաններում և հանքերում աշխատող բանւորների թիւը միլիոնների է հասնում: Ուստի բնական պարագ է զնուում հասարակութեան լուսաւոր դասի և թէ օրէնսդրի վրայ՝ ի մօտոյ ծանօթանալ այդ միլիոնաւոր աշխատող մարդկացին էակների կացութեան, նրանց բազմաթիւ պէտքերի, նրանց կեանքը այսպէս կամ այնպէս վտանգների ենթարկող բազմադիմի դէպքերի հետ: Կատ հասկանալի է և գովելի այն ձրդտումը, որ եղել է միշտ ոռւս կառավարութեան մէջ և թէ որոշ մամուլի և գրականութեան մէջ՝ օգնութեան ձեռք մեկնել թշւառներին—մանաւանդ գիւղական ազգաբնակութեան, որը դեռ այսօր հէնց իւր սոււար թւով և խղճալի վիճակով աւելի աչքի է ընկնում: սակայն միակողմանի շինելու համար ժամանակ է վերջապէս ուշադրութիւն դարձնել քաղաքներում ապաստան գտած աչք ծակող թշւառութեան վրայ:

Վերջերս անհուն ուրախութեամբ տեղեկացնք մայրաքաղաքի ոռւսական թերթերից, որ պետական խորհուրդը ձմեռուայ սեսսիայում քննելու է մի օրինագիծ—Խուսաստանում բանւորների կեսնքի ապահովութեան վերաբերեալ, որը, օրէնքի ոյժ սուանալուց յիտոյ, պիտի գործադրուի գործարանական արդիւնագործական կենդրոններում:

Եւրոպական երկիրներում ոչ թէ միայն այսօր գոյութիւն ունին բազմաթիւ մասնաւոր փոխադարձ ապահովութեան և օգնութեան ընկերութիւններ, ոչ թէ միայն նրանցից մի քանիսը արդէն ունին սահմանած պետական օրէնսդրութիւն աշխատանքի և կապիտալի յարաբերութիւնների սահմանները որոշող, այլ նաև կան սահմանաւած այսպէս անւանեալ օրէնքներ պարտադիր ապահովագրութեան» (Lois d'assurances obligatoires): Պետական խորհրդում քննւելիք օրինագիծը առիթ է տալիս ինձ ներկայացնել ընթերցազ հասարակութեան սոյն մենագրութիւնը, որը վերաբերում է Եւրոպայի նշանաւոր երկիրներից մէկում—այն է Գերմանիայում գոյութիւն ունեցող պարտադիր ապահովութեան օրէնքներին: Ուշադրութեան արժանի է այդ երկրում՝ մանաւանդ և այն, որ պետականը ինքը նախաձեռնութիւնը իւր վրայ առնելով՝ ձգտել է վերջին տասնեւակ տարիների ընթացքում բանւորական ապահովող

ընկերութեանց մի լիակա տար սիստէմ ստեղծել, օրէնքներ հրատարակելով այն դասակարգի համար, որին ի նկատի է ունեցել: Եւրոպական միւս պետութիւններն էլ, Գերմանիայի օրինակին հետևելով, արդէն սկսել են նոյնանման միջոցների ձեռնարկել աշխատող դասակարգերի վիճակը բարւոքելու համար: Ըստ կարելոյն կաշխատինք կարեւոր տեղեկութիւններ քաղել զանազան ազբիւրներից մի ամփոփ գաղափար տալու համար ընթերցողին այն գեղեցիկ հաստատութեան մասին, որ ներկայումն գոյութիւն ունի Գերմանիայում:

Նախ մի երկու խօսք այդ հաստատութեան սկզբնաւորութեան մասին:

## II

**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Եւրոպական միւս առաջաւոր երկիրների հետ համեմատած Գերմանիայում աւելի ուշ մուտք գործեց խոշոր արդիւնագործութեան սիստեմը. համեմատաբար ուշ զարգացաւ քաղաքներում բանւորական տարրը այն մոքով, ինչպէս որ ընդունւած է այդ հասկանալ: Գերմանական ազգային միութիւնը շատ նպաստեց երկրի ներքին տնտեսական զարգացմանը. այնպէս որ մինչդեռ Անգլիայում, տրոլէտարիատի հայրենիքում, և Ֆրանսիայում արդէն տեսնում ենք սուեդւած պրոլէտարիատ-բանւորական դասակարգ, 60—70 թւականներում Գերմանիայում հազիւհազ մանր տնային արդիւնաբերութիւնը սկսում է տեղի տալ խոշոր գործարանական արդիւնագործութեան: Սակայն որչափ ուշ վիճակւեց Գերմանիային այդ ուղղութեամբ զարգանալու, նոյնչափ էլ կարճ միջոցում, որ և է երկու երկու երեք տամնեակ տարիներում, նա զարմանալի արագութեամբ ընթացաւ տնտեսական որոշ զարգացման շաղւի վրայ և կարողացաւ տնտեսական մրցութեան սպառնալի դիրք բռնել եւրոպական միւս պետութիւնների առաջ: Գերմանական ժողովուրդը, որին յատուկ է գիւրըմբունողութիւնը և մոքի լրջութիւնը, շատ շուտ սկսեց լմբանել և իւրացնել այն սոցիալական թէօրիաները, որ մշակեցին և վարդապետեցին այդ երկրի գիտնականները վերջին

տասնեակ տարիներում Տնտեսական և քաղաքական նորանոր կարգեր առաջ դալով երկրի մէջ՝ քաղաքային աշխատող ազգաբնակութիւնը սկսում է գիտակցօրէն վերաբերել դէպի իւր վիճակը, իւր կեանքի բարեփոխութեան խնդիրները։ Նա պահանջող է դառնում և հացցում է պետութեան պաշտպանութիւնը և հովանաւորութիւնը՝ ընդդէմ կապիտալի ճնշման և հարատահարութեան։ Ինչպէս եւրոպական միւս երկիրներում, այնպէս էլ Գերմանիայում բանւորի համար գործարանական արդիւնագործական կեանքի զարգացումով բնականաբար առաջ եկաւ սուր կերպարանքով այն, ինչ որ անւանում է վարձկանութեան վիճակ (salariat) իւր տխուր հետեւանքներով։ Անհրաժեշտ էր բարեփոխութեան միջոցների մասին մտածել. և ահա կառավարութիւնը, յանձին «երկաթի կանցլէր» նիսմարկի, ձեռնարկում է Գերմանիայում բանւորների վիճակը բարեփոխելու և ապահովելու մի շարք սիստեմների։ Ինսմարկի կառավարութիւնը սահմանելով երկրում պարտադիր ապահովագրութեան օրէնքներ՝ ջանադիր եղաւ հաշուեցնելու կապիտալը և աշխատանքը, առական իրականութեան մէջ այդ հաշուեցներ անհնարին եղաւ, ինչպէս բազմից փորձերը ցոյց են տւել. միայն այս կարելի է ասել, որ պարտադիր ապահովագրութեան օրէնքը օգտակար և մարդասիրական հաստատութիւն ճանաչեց այն տեսակետից, որ նա խնամատար և պահպանող հանդիսացաւ աշխատող ժողովրդին՝ կեանքի մէջ պատահող ամեն տեսակ չարիքներկց։

Պարտադիր ապահովագրական օրինագծին նէյխստագում զօրեղ պաշտպան հանդիսացան և մեծապէս աջակցեցին նիսմարկին մի կողմից պահպանողական կաթոլիկ կուսակցութիւնը իւր նոր սոցիալական ուղղութիւնով. միւս կողմից կաթէդրէ-սոցիալիստ կոչւած տնտեսագէտ պրոֆեսորների մի խումբ, որի գլուխ անցաւ ներլինի յայտնի էկոնոմիստ Ադ. Վագնէրը։ Պէտք է ասել, որ կուսակցութիւնները սկզբունքը ընդունելով՝ իւրաքանչիւրը նրանցից տարբեր հայեցքներով և նպատակներով էր վերաբերում դէպի խնդիրը, իւրաքանչիւրը նրանցից իւր քաղաքական միտումներն ունէր ինկատի։

Պարտադիր ապահովութեան հաստատութիւնը ունի երեք ճիշդաւորութիւն—ապահովութիւն ընդդէմ հիւանդութեան, ապահո-

վութիւն ընդգէմ զժբաղդ գէպքերի, ապահովութիւն ընդգէմ ծերութեան-անկարութեան: Նախքան օրինագիծը բէլստատագի քննութեան ենթարկելը՝ հարկ դատւեց թէ, նրան աւելի գործնական օգտակարութեան կերպարանք տալու և թէ խնդիրը հիմնովին ուսումնասիրելու համար՝ հաստատել այսպէս անւանւած ռանտեսական մի խորհուրդ։ Վերջինս բաղկացած անկախ, անկողմնապահ անձերից, հիմնւեց 1880 թւին։ Առանց ստատիստիկացի ոչինչ չէր կարելի անել, ուստի Բերլինի վիճակագրական բիւրօն, որի զլուխ էին անցած երկու ձեռնհաս անձնաւորութիւններ՝ պ. պ. Էնդէլ և Բլէնկ, աջակից եղաւ խորհուրդին կամ մասնաժողովին, պատրաստելով բազմակողմանի և ճիշտ փաստեր ու տեղեկութիւններ, որոնցով խորհուրդը առանց տատանւելու կարող էր մեծապէս օդուել։ Բանւորական ապահովագրութեան ընկերութիւնները, որոնք մեզ այստեղ զբաղեցնում են, չի կարելի ասել թէ բոլորովին նոր էին ստեղծում։ ոչ, նրանք արդէն վաղուց զոյութիւն ունեին Գերմանիայում։ միայն այն տարբերութեամբ որ այժմ պետութեան նախաձեռնութեամբ աւելի ընդարձակութիւն ստացան և կատարելագործվին, մի կատարեալ չէնքի կերպարանք ընդունելով։

Դեռ 1870 թւականին կառավարութիւնը արգէն հրատակել էր մի օրէնք, որը քաղաքացիական պատասխանաւութեան էր ենթարկում պատրոններին (գործատէր)՝ գործարաններում և թէ ընդհանրապէս աշխատանքի ժամանակ տեղի ունեցող զժբաղա գէպքեր ամար։ Ժամանակը ցոյց տևեց, որ այդ օրէնքը բաւականութիւն չէրի տալիս այն բոլոր պահանջներին, որոնց համար ստեղծւած էր, և չնայելով այն նորանոր կարևոր միջոցներին, որ ձեռք առնւեցան բանաւորի գրութիւնը և անկախութիւնը աւելի լաւ ապահովելու համար, կարիք զգացւեց օրէնքը կրկին քննութեան առնել 1876 թւին։

Սա չէր միայն. այնուհետեւ կայսերական նոր հրահանգներ հրատարակեցան, որոնք պարաւորացնում էին համայնքներին իրանց շրջաններում գանւող չքաւորներին պահպանել։ Միևնույն ժամանակ համայնքներին ազատութիւն էր տրւում անկախ գործելու, ձեռնարկելու այն միջոցներին, որ իրանք օգտակար կը գտնէին իրանց բաժնում չքաւորութիւնը նւազեցնելու համար։ Քաղաքացին վարչութիւններին ևս իրաւունք էր տրւում հրա-

ւիրել բանւորներին ապահովագրւելու թէ մասնաւոր ընկերութիւնների մօտ և կամ թէ, ուր այդպիսին չկար, համայնքի կասսացումն Բացի դրանից, հարկադրում էր գործատէրերին հատուցանել իրանց ձեռքի տակ գտնւող գործարանների ապահովագրութեան վճարի կէսը: Այս բոլորը զեղեցիկ էր, սակայն հրահանգները գործադրութիւն չդատան կեանքի մէջ, մասցին թղթի վրայ գրւած իրբեւ մեռած տառ: Ահա այդ ժամանակից կառավարութիւնը իր ընթացքը պէտք է փոխէր. ապահովագրութեան մի ընդհանուր սիստեմ՝ սաեղծելու համար, նա իր հովանաւորութեան տակ և կենդրուական անմիջական իշխանութեան հակողութեան ներքոյ պէտք է դնէր այդ ժամանակիցիութիւնը: Իրաւ է արդէն որոշեալ պարապմունքներում, զլխաւորապէս հանքացին շրջաններում, կային բանւորական ազատ ընկերութիւններ, որոնք օգնութեան էին հասնում իրանց անդամներին հիւանդութեան, երկար ժամանակ աշխատելու անկարող լինելու. և թէ մահւան գէպքերում, բայց այդ կատարւում էր սահմանափակ ասպարէզում. այժմ տէրութիւնը գործն իր ձեռքն առնելով՝ իր նախաձեռնութեամբ ուզեց է սուեղծել վերոյիշեալ ախարի ապահովագրական ընկերութիւններ, ոչ թէ որոշեալ պարապմունքներում, այլ բոլոր այն շրջաններում, ուր աշխատում են բանւորներ, ընդհանրացնել և մարդնել պարտագիր ապահովագրութիւն:

Խնդիր է ծագում պետութեան մասնակցութեան մասին այս ձեռնարկութեան մէջ. պէտք է արգեօք պետութիւնը դրամական օգնութեան դար հիմնեելիք հատուտութեան և, եթէ այս, ինչպէս և ինչ չափով պէտք է լինէր օժանդակութիւնը: Ազգբում այս հարցը երկար տատանման և տարակուսանքի տեղիք տւեց: Առաջին սլրօէկտը, որ ներկայացրեց Ռէյխստագին անականական խորհուրդը, վերաբերում էր միայն մի ճիւղին, այն է պատահարքների գէմ ապահովելու մի այնպիսի կազմակերպութեան, որ պէտք է գտնւէր կացսրութեան տեսչութեան տակ: Ընկերութեան գործավարութեան ծախքերը պիտի հոգացին հետևեալ աղբիւրներից՝ գործատէրերի վճարը, ապահովագրեալների անդամավճարը և պետութեան գրամական նպաստը:

Օրինագծի անցնելը դժւագութիւնների հանդիպեց. թէև ընդունեց նա Ռէյխստագում, բայց վէկէրական խորհուրդը բաց-

ասեց, որովհետև Ծէջլստագը, հիմնովին փոփոխելով պրօէկտը, ազատ էր կացուցել կայսրութիւնը զրամական նպաստից և ամբողջ սիստէմը գերմանական տարբեր պետութեանց խնու մասարութեան տակ էր զրել: Տնտեսական խորհուրդը շարունակեց նւիրւել իւր զբաղմունքներին. շատ չանցած նա արդէն ներկայացրեց Ծէջլստագին ապահովութեան երկու պրօէկտ, մէկը դժբաղութէսկերի, միւսը հիւանդութեան դէմ: Ծէջլստագը յետաձգեց առաջինը, այն է պատահարքների դէմ ապահովութեան օրինագիծը, որովհետև առաջարկութիւն եղաւ շատերի կողմից կայսրութեան գանձարանով մասնակցելու այդ գործին: Ծէջլստագը քննութեան առաւ միայն երկրորդ օրինագիծը, որը միայն պահանջում էր մասնաւոր նւիրաբերութիւններ:

Հիւանդութեան դէմ պարապիր ապահովագրութեան օրէնքը ընդունեց Ծէջլստագից 1883 թւին: Հետեւեալ տարին, 1884 թ., պատահարքների վերաբերեալ օրինագիծը կրկին հանդէս եկաւ Ծէջլստագում. տեղի ունեցան շատ երկար վիճաբանութիւններ և քառասուն երեք նիստ զբաղեցնելուց յետոյ միայն ընդունեց: Բայց այս անդամ ևս մերժեց դրամական որ և է մասնակցութիւնը կառավարութեան կողմից:

Այսպէս ուրեմն, ինչպէս տեսանք, կառավարութիւնը ջանագիր եղաւ սահմանել պարտագիր ապահովագրութեան երկու նշանաւոր օրէնքներ առանց իւր կողմից նպաստ նշանակելու: Սակայն յետոյ նա իրան կը վերապահի, ինչպէս կը տեսնենք, նիւթապէս օժանդակելու պարտքը ծերութեան անկարութեան դէմ ապահովագրելու համար:

Կամոդ առնենք համառօտակի խօսելու արդէն դոյութիւն ունեցող ապահովագրութեան երեք տեսակ օրէնքների մասին. տեսնենք ինչումն են նրանք կայանում և ինչ գործնական օդուաներ կարելի էր ստանալ նրանց գործադրութիւնից:

(ԱՅ Հարունակւի)

# ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈԼԱՆ

Ֆ Ե Լ Ի Ք Ո Ւ Խ

(Շարունակութիւն և վերջ<sup>1)</sup>)

VII. ՃԻՇՏ ՈՒՍՈՒՄՆԱՑԻՐՈՒԹԻՒՆ ՀԵՐՈՍԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ:

C'est l' hérédité, la vie même qui  
pond des imbéciles, des fous, des cri-  
minels et des grands hommes.

(Ժառանգականութիւնն է, որ տա-  
լիս է և ապուշներ, և խելագարներ, և  
եղեռնագործներ, և մեծ մարդիկ)։

Է. Զ օ լ ա

Le tronc explique les branches  
qui expliquent les feuilles.

Z o l a

Ծառի բունը բացատրում է ճիւ-  
ղերը, որոնք բացատրում են տերենները։  
Է. Զ օ լ ա

Ինչպէս տեսնում ենք, Զոլան աշխատել է անցկացնել նախա-  
մօր, Աղելայիդ Ֆուքի, Ներդայնութիւնը ամբողջ հինգ սերունդների

<sup>1)</sup> Տես «Մուլճ» 92 թ. №№ 5, 6, 11, և 1893 թ. № 6, 7-8, 11, 12։

միջով. և տեսէք թէ քանի-քանի ձևեր է ընդունում այդ ներդային թուլութիւնը նոր ներդային հոսանքներ լինդունելով իր մէջ:

Աղելացիղը նախ ամուսնանում է մի առողջ մարդու, այն է Ռուգոնի հետ, որից սկսւում է Ռուգոնների ճիշդը: Այս առաջին ամուսնութիւնից ծնած միակ արու զաւակը, Պիեր Ռուգոնը, որի Փիզիկական և բարոյական աշխարհը խառնուրդ է հօր և մօր յատկանիշների, ամուսնանում է մի խելացի, գործունեաց և առողջ կնոջ հետ, որից ունենում է հինգ զաւակ. 1) Եօժեն Ռուգոն, որը դառնում է մինիստր և մեռնում է անզաւակ.—սա Փիզիկայով նմանում է հօրը, իսկ մօրից ժառանգել է փառասիրութիւն. 2) Պասկալ Ռուգոն, բժիշկը, որը սիրահար ում է իր եղբօր աղջիկ Կլուալդի վրա և այդ սիրուց մի արու զաւակ է ծնում: Սրա մէջ հօր ու մօր բնորոշ գծերը ձուլած են այն աստիճան, որ անկարելի է գտնել նրանց.—սա անկախ ծնուդն է (innéité). 3) Արիստիդ Ռուգոն, որը հիմնում է «Համաշխարային բանկը», ունէր երեք զաւակ՝ Մաքսիմ և Վիկտոր Ռուգոններին և մի էզ զաւակ,—Կլուալդ Ռուգոնին: Սա Փիզիկապէս իր մօրն է նմանում, իսկ բարոյապէս—հօրը: Սրա երեք զաւակներից Մաքսիմը, հիւանդուը, անբարոյականը, սիրահարական յարաբերութիւններ ունի իր խորթ մօր (հօր երկրորդ կնոջ), գեղեցիկ Ընէի հետ, և յետոյ մի ուրիշ աղջկանից ունենում է մի արու զաւակ, Նարլին: Այս Նարլը ժառանգում է իր պապի-տատի (Աղելացիդ Ֆուլքի) բարոյական յատկանիշները (ատաւիսմ): Արիստիդ Ռուգոնի աղջիկը, Կլուալդը, վերջը սիրահարւում է իր հօրեղբօր, ծերունի բժիշկ Պասկալի վրա և նրանից մի արու զաւակ է ծնում. 4) Սիլոնի Ռուգոն, որը զանազան մութ զործերով է պարապած, մի անձանօթ մարդից մի զաւակ է ծնում, հրեշտակային Անժելիկը, որը բարոյապէս այնպէս տարբեր է իր մօրից, («Երազ»): Սա, ինչպէս և բժիշկ Պասկալը, անկախ ծնունդներ են (innéité). 5) Մարթա Ռուգոն, սաստիկ նեարդային, հիստերիկ, որը նմանում է իր տատ Աղելացիդ Ֆուլքին և որը ամուսնանում է իր հօրեղբօր որդու, Ֆրանսուա Մուրէի հետ, որը մի ուրիշ ճիւղին է պատկանում: Այս երկրորդ ճիւղը ծագում է Աղելացիդ Ֆուլքի երկրորդ ամուսնութիւնից, որը տալիս է երկու զաւակներ. մէկը էզ— Իւրսիւլը, միւսը արու—Անտուանը: Իւրսիւլը ամուսնանում է մի

առողջ արհեստուոր, Մուրէի հետ, ինքը մեռնում՝ է թոքախտից. նա ամեն ինչով նմանում է իր մօրը: Այս ամուսնութիւնից սերւում է Մուրէի ճիւղը ֆրանսուա Մուրէ, այն որը կին է առնում յիշած Մարթա Ռուգոնին և նրանից ունենում է երեք որդիք. Օգտառ (մեծ վաճառականը, մեծ մագալինների տէրը, որը ֆիզիկապէս նմանում է իր հօրեղբայր մինիստրին), որը երկու որդի է թողնում: Աերժը (աբբան, որը մի բույէ մոռանում է կրօնամոլութիւնը, որդէս զի նւիրի իրան Ալբինի սիրուն) թէ բարոյապէս և թէ ֆիզիկասլէս նմանում է իր հիւանդու նեարդային մօրը), և վերջապէս Դեզիրէ Մուրէն, որ ժառանգել է մօր ներդայնութիւնը, որը նրա մէջ դառնում ապօւշութիւն և հաւասարեցնում է նրան անասունի:

Երրորդ ճիւղը Մակկարների ցեղն է, որը սկսւում է Անտուան Մակկարից (Աղելայիդ Ֆուքի արքեցող սիրականից ծնած): Սա ֆիզիկասլէս և բարոյապէս նմանում է իր ծոցը, արքեցող և կիսախելք Մակկար հօրը, նա հօր նման անբան է և արքեցող այն աստիճան, որ կուլ տւած սպիրուլ վերջապէս այցում է նրան:

Անտուանը ունի երեք զաւակներ. — Լիզա Մակկարը, որը նմանում է իր առողջ մօրը. Ժանը, որը դառնում է զինւորական, յետոյ հողագործ. և վերջապէս ծերվէզ Մակկարը, որը ծնունդ է տալիս մի նոր զարմանալի սերունդի:

Այս ժերվէզ Մակկարը, Անտուանի աղջիկը և Աղելայիդ Ֆուքի թոռը, իր նախնիքներից ժառանդել է արքեցողութեան անդիմադրելի կիրքը, որը նրան զցում է սիրականների գիրկը և վերջը մեռցնում է նրան աղքատութեան մէջ: Սա իր սիրական Լանսիկից ծնում է երեք զաւակներ, իսկ իր օրինաւոր ամուսնուց — մէկին: Սրանց հիւանդական հոգեբանութիւնը Զոլան նկարել է վարպետական գծերով: Անտարակոյս Ռուգոն-Մակկարների գերտաստանի մէջ ժերվէզի այս հոգեբանութեան էտիւդը Զոլաի ամենասպանչելի գործն է: Ժերվէզը, այս կիսախելագար, արքեցող ծնողի աղջիկը և նոյնապէս արքեցող և վերջը խելագարւող մեծ մօր (Աղելայիդ Ֆուքի) թոռը, Լանտիէից, որի նախնիքները նեարդային հիւանդութիւններից էին մեռել, պիտի անշուշտ ծնէր անբնական, հիւանդու, ներդային արարածներ: Եւ ճշմարիտ որ նրա չորս զա-

ւակները բոլորը անբնական, ներդային արարածներ, մոլիներ, մանիակներ, խելագարներ են: Կլոդ Լանտիէն, այս մեծ գեղարւեստամոլը, որը կախում է, երբ տեսնում է, որ իր ցնորքը անիրազործելի է մնում (Փորձ): Ժաք Լանտիէն, որը մարդասպանութեան մոլութիւն ունի (Գաղան-Մարդիկ): Ետքեն Լանտիէն մի կատաղի հանքաբանոր է, որը բանւորներին դէսի ապատամբութիւն է մզում և վերջը տեսնելով, որ յեղափոխութիւնը չի յաջողւում, որ բանւորը չի կարողանում թոթափել իր վրայից կապիտալի ամեն ինչ լնկճող ծանրութիւնը, զգալով, որ դեռ տարիներ են հարկաւոր աշխատաւորին ստրկութիւնից փրկելու, նա, հիասթափ և կատաղած, մի մութ գիշեր, իր կեանքը վտանգի ենթարկելով իջնում է ածխահորը, քանդում է ջրերի պատնէշները, և բարձր տեղ նստած սպասում է մինչև որ կատաղի հեղեղը լցնում է հորերը և խեղդում է հարիւրաւոր բանւորներին, կարծես ցանկանալով ջնջել մարդկութիւնը աշխարհիս երեսից, քանի որ նա ազատ ապրելու ոչ ոյժ և ոչ ինքնասիրութիւն ունի: («Հող» La Terre): Վերջապէս նանան, անբարոյականութեան այս մարմացումն, որը կարծես ծնունդ է հասարակական զազիր կեանքի, ապականութեան!

Մեր առաջ բերտօն Փակտերից երեսում է, որ ծնողներից ժառանգած ներդային տրամադրութիւնը (первное предрасположение), կամ յակումն դէսի հոգեկան հիւանդութիւնները, կարող է հետեւեալ սերունդի մէջ աւելի բարդւած երեալ կամ մեղմացած, և այդ լինում է հարիւրաւոր ազդեցութիւնների ներքոյ: Եթէ ծնողներից մէկը առողջ է, իսկ միւսը ներդային հիւանդ, այն ժամանակ որդու հոգեբանութիւնը տարբեր կը լինի նայելով, թէ նա ժառանգել է իր առողջ ծնողից, թէ տկարից, կամ թէ երկուսից էլ հաւասարաչափ: Անստարակոյս ամենաազգու դէսքն այն է, երբ հայրն ու մայրը, երկուսով էլ նեարդային կամ, ինչպէս ասում են, հոգեկան հիւանդուներ են (սպիտուսպատներ): Ըուգոն-Մակարների պատմութեան մէջ երկու այլպիսի դէսքեր կան: Մէկը Ֆրանսուա Մուրէի և Մարթա Ռուգոնի ամուսնութիւնն է, այս երկու նեարդային հիւանդութիւնների ձուլումը, որից սերւած սերունդը պիտի հի-

ւանդոտ լինէր։ Եւ ճշմարիտ որ խելագար ֆրանսուան և հիստերիկ Մարթան սերունդ են տալիս երեք զաւակների, Օկտավը—այս զարմանալի ճարպիկ և հնարագէտ վաճառականը։ Սերժը—կրօնամոլ—մանիսակ և Դեղիբէ—ապուշ։

Միւս երես երկու հիւանդութիւնների ձուլման դէպքը Ժերվէզ Մակկարի, արբեցողի, սիրահարութիւնն է Լանտիէի հետ, որը պատկանում է նեարդացին հիւանդների սերնդին։

Այս ամուսնութիւնից ծնւեց արեւատամոլ Կլոդը, որը ցնորքի մէջ է վերջ տալիս իր կեանքին։ արիւնարբու մանիսակ Ժաքը, սոսկալի եղեռնագործ և ցնորքներով լի, միշտ անգոհ, միշտ յուսահատ։ և հիասթափւած Էտիենը, որը իր կեանքը վերջացնում է աքսորում։ Ժերվէզի աղջիկը, անբարոյական նանան, ծնւում է Կուպօից, մի արբեցող բանւորից, որի հետ վերջը ամուսնանում է Ժերվէզը։ Այսպիսով մեծ րոմանիստը կամեցաւ ժառանգականութեան բազմաթիւ դէպքերը նկարագրել։ Այսպէս է ասում նա բժ։ Պասկալի բերանով։ «Կրկնում եմ, որ ժառանգականութեան բոլոր դէպքերը պատահում են այստեղ... Ամենասքանչելին այն է, որ մենք պարզ տեսնում ենք, թէ ինչպէս միւնոյն արմատից ծնւած զանազան անձննք կարող են հիմնովին տարբեր լինել միմեանցից, թէև նրանց հոգեկան աշխարհը իրանց նախնիքների հոգեբանութիւնն է, միայն փոփոխած։ Ծառի բունը (tronc) բացարում է ճիւղերը, որոնք բացատրում են տերեւները։

Կրկնում ենք, Էմիլ Գոլան կամեցաւ մեզ բացատրել իր թէօրիաները ժառանգականութեան մասին իր հերոսների միջոցով։ Նա կամեցաւ իր Ռուգոն-Մակկարների խւրաքանչիւր անդամի հոգեբանութեան վրա զնել ժառանգականութեան կնիքը։ Մի կին իր ներդայնութեան դրոշմով պիտի կնքէր չորս սերունդների հոգեբանութիւնը։ Ռուգոն-Մակկարների ահագին գերդաստանի խւրաքանչիւր անդամը պիտի մի շղթայ դառնար նախընթաց և յետագայ սերուղների մէջ, ընդունելով իր մէջ իր նախնիների հաւաքական բնորոշ գծերը, որոնք հարիւր տեսակ փոփոխութիւնների են ենթարկել զանազան ազդեցութիւնների ներքոյ, և տալով իր սերուն-

դին, որը, իր կողմից, կը կերպարանափոխի իր ստացածը և կը յանձնի յետագաներին ! ... Այս մի սարսափելի բարդ էտիւդ է, որը գեռ գիտութեան ոյժից անգամ բարձր է ! Զնայելով սխալ-ներին, Ռուգոն-Մակկարների առհմաբանական ծառի ստեղծելը մի զօրեղ ուղեղի գործ էր, որը չերկնչեց ստանձնած ահագին պատաս-խանաւութիւնից :

Այս դժւարութիւնը հասկանալի է, քանի որ անհնար է սահմա-նափակել ժառանգականութիւնը, այսինքն ուսումնասիրել մի գեր-դաստանի անդամների հոգաբանութիւնը, զատելով սրանց իրանց նախնիքներից։ Խակ Ռուգոն-Մակկարների ցեղի ոչ սկիզբն է մեզ յայտ-նի և ոչ վախճանը։

Ով էին Աղելայիղ Ֆուքի ծնողները և պապերը ? Ինչ հոգե-կան յատկութիւնների տէր էին նրանք ? Այս մեզ անհրաժեշտ էր զիտենալ՝ այդ Աղելայիղի որդոց հոգեբանութիւնը հասկանալու համար, քանի որ թոռները կարող են նմանւել ուղղակի իրանց պապերին (առաւիզմ)։ Եթէ ճանաչինք սրանց, այն ժամանակ հարց կը ծագէր այս վերջինների ծնողների և պապերի մասին և այսողէս մինչեւ Ադամ ու Եւան Հետեւապէս այս կողմից դժւարու-թիւնը անշաղթելի է. մենք երբէք չենք ճանաչի մի որ և է գեր-դաստանի խսկական արմատը։ Բայց մենք չենք կարող ճանաչել և նրա վախճանը, և հոգաբանի հետաքրքրութիւնը, այս բան հա-տորները կարդալուց յետոց, յազենալու ժեղ աւելի ևս մեծանում է, և ընթերցողը հարց է տալիս իրան՝ ինչ եղաւ արգեօք Մաքսիմ Ռուգոնի որդի նարլը ? ինչ հոգեբանութեան տէր են Յկտաւ Մուրէի երկու որդիքը ? կամ ժան Մակկարի զաւակները, կամ բժիշկ Պասկա-լի և Կլոտիլդի յզացած անյայտ զաւակը ? Վերջապէս, չէ որ պէտք էր տեղ տալ և նոր տարրերի, ինամինների հոգեբանութեան ազդե-ցութեանը նոր սերունդների վրա, և այն և այն...

Այս մի քանի հարցական նշաններից ակներև է, որ Զոլաի այս նոր ձեռնարկութիւնը ճակատագրապէս պիտի թերի մնար։

Մական այս մեծ վիսպագրողին է պատկանում ժառանգակա-նութիւնը բոմանի մէջ մոցնելու պատիւը։ Իր զօրեղ գրչի հրապոյ-րով նա քսան տարի շարունակ ամբողջ գրական աշխարհի ուշը բեռուած պահեց Ռուգոն-Մակկարների հոգեբանութեան վրա։ Եւ

այսօր, երբ այս մեծ գործը աւարտւած է, երբ մարդ ճնշով անց  
է կացնում այս ահազին խլրտումն մի մեծ գերգաստան անդամների,  
որոնցից իւրաքանչիւրը ժառանգականութեան օրէնքներին համեմատ  
պիտի խորհի և գործի, նա ապշած է մնում՝ այս սքանչելի գործի  
առաջ, որի վեհութիւնը երաշխաւոր է նրա հեղինակի ուղեղի ար-  
տասովոր զօրեղութեանը

## ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄՈԱՄԲԵԿ, վրաց նոր ամսագիր, 1894 թ., յունւար, № 1, Խմբագիր  
Ալ. Ճղոնիա, հրատ. Նիկ. Ղողոբերիձէ:

Վրաց լրագրական նորագոյն գրականութիւնը, ներկալ թւականին, աւելացաւ մի ամսօրեալ հանդէսով «Մօստրէ» (համբաւաբեր) առունով, որը հրատարակւում է պատ. Ալեքսանդրէ Ճղոնիալի խմբագրութեամբ և Նիկոլով Դողոբերիձէի հրատարակութեամբ։

Հաստ ախորժելի տպաւորութիւն է գործում ընթերցողի վրա, հէնց առաջին անգամից, հանդէսի յունշար ամսի համարը թէ ծաւալով և թէ իր ներքին բովանդակութեամբ, որը, մեր կարծիքով, վերին աստիճանի լաւ է կազմւած մանաւանդ նիւթերի ընտրութեան կողմից։

Սրա մէջ, բացի եւրոպական նշանաւոր հեղինակներից թարգմանութիւնները, հանդիպում ենք վրաց գրականութեան մէջ անուն հոչակած վրացի նշանաւոր հեղինակներին, որոնք են՝ կտ. Նինօչլիլին իր փոքրիկ վէպով գեղական կեանքից վերցրած «Մոսէ մծիրալի» (Մոսէ գրագիրը) վերտառութեամբ, որի մէջ

բաւականին լաւ դուրս է բերւած գեղացիների, արիւն ծծող, սրանց նիւթապէս մնանկացնող, և որ աւելի ցաւալին է, բարուապէս վնասող գրոշանոց գրագրի ախալը։ Մրանից կատու գալիս է պ. Շ. Արագիսապիրելին իր հոգեբանական գեղեցիկ պատկերով, գեղական ջաղացպանի կեանքից «Աղէ, չամովլիդա»—«վեր կաց, վար եկաւ» վերնագրով. ապա պարոնն եւ արդէն լաւ գրողի հըռչակն է վայելւամ վրաց գրականութեան մէջ։ Ահա և նշանաւոր վիպասան պ. Խլիա ձաւաւածէն հանդէս է եկել ալատեղ իր նոր հեղինակած «Ուցնաուրի ամբաւի»—«տարօրինակ գէպք» էտիւտով, որի մէջ չօշափում է մանկավարժութեան վերաբերող մի խնդիր. բայց թէ ինչ հակեցակէտունի հեղինակը արդի մանկավարժութեան մասին, կամ ինչպէս կը վերջացնի առաջտղրած հարցը, առաջմ ոչինչ չէ կարելի ասել, քանի որ վէպի շարունակութիւնները լուս կը տեսնեն լաջորդ համարներում։

Երբ վերջանաւ այս վէպը մննք, օ-  
գուտ քաղելով դէպքից, կ'աշխատենք  
կարծառուտ կերպով ժանօթացնել  
«Մուրճ»-ի ընթերցողներին հեղինակի  
մտքերի և ձգտումների հետ.

Պր. Ն. Ռւբրնելին զետեղել է իր  
պատմական մինագրութիւնը (մոնո-  
գրաֆիա) վրաց թագաւոր «Դաւիթ  
աղմաշեներիլի» (Դաւիթ վերանորո-  
դիչ) և նորա ժամանակը», որի մէջ  
ցուց է տալիս թէ վերոչիշեալ թա-  
գաւորը աւելի շատ օգուտներ է տւել  
իր հայրենիքին քան թէ թամար  
թագուհին, բաց և անպէս վերջինս  
առաւել ժողովրդական է մնացել  
վրացիների մէջ:

Բաւական մեծ բաժին է բաշխւած  
և երկրագործութեանը, որին վերաբե-  
րում են Վասիլի Պետրիաշչիլի «Դի-  
նեկործութիւն» վերնագրով չողւածը  
և էզ. Խօսելիանու «Երկրագործը և  
երկրագործութիւնը». Այս երկուսը  
կը շարունակին հետեւալ համարնե-  
րում. բայց հիմա իսկ և եթ կարելի  
է ասել, որ շատ բարեխիղծ կերպով  
մշակւած չողւածներ են:

Ներկայ հանդէսն ունի ներքին և  
արտաքին քրոնիկներ—տեսութիւն-  
ներ, նույնպէս և լաւ գրախօսական  
բաժին:

Վրացի հրապարակախօս (նախ  
կին խմբագիր) պ. Ն. Նիկոլաձէն  
աշխատել ունի առանձին բաժին. սրա  
առաջին չողւածը անցեալ տարւակ  
թիֆլիսի քաղաքակին ընտրութիւն-  
ներին է վերաբերում:

Խմբագրութիւնը անհրաժեշտ է  
համարել առանձին չողւածով պար-  
զել ու բացատրել իր ընթերցողնե-  
րին «Մօամբէ»-ի ծրագիրն և ուղղու-

թիւնը — profession de foi-ն. Այս  
չողւածում ցուց է տւած, որ ամնն-  
օրեաւ լրագրութիւնը անկարող է փո-  
խարինել ամսօրեաւ հանդէսին, ինչ-  
պէս և վերջինս առաջինին, և հան-  
դէսը, բացի միւս կողմերից, ունի և  
այն առաւելութիւնը, որ սա, ակ-  
սինքն ամսօրեաւ հանդէսը, ունի իր  
մշտական ընթերցողների մի գունդ,  
որը հետզհետէ աճում է և որի վրա  
հանդէսի ազդեցութիւնն և ներգոր-  
ծութիւնը աւելի ու աւելի զօրա  
նում է. Բացի այս, խմբագրութիւնը  
չափնում է, ի գիտութիւն հասարա-  
կութեան, որ հետու պէտք է մնաչ  
ամեն տեսակ կուտակցութիւններից  
և խմբերից, որքան էլ սրանք հա-  
մակրելի լինեն իրանց գործունէու-  
թիւնով, որպէս զի կարողանակ ա-  
նաշառութեամբ վերաբերեալ ծագող  
նորանոր հարցերին և առանց կու-  
սակցական ձգտումի վճիռ տալ<sup>1)</sup>:

Մենք հոգով սրտով ցանկանում  
ենք «Մօամբէ»-ին անշեղ ի կատար

<sup>1)</sup> Մի ալգորիմի ծրագիր մեզ հա-  
մար բաւականաշափ պարզ չէ. Լրա-  
գիրը, լինի նա օրագիր թէ ամսա-  
գիր, կեանքի է կոչւում ոչ թէ զա-  
տաւոր լինելու, ազ գործիչ լինելու  
համար. Մեզանում ամսագրի մասին  
ունեցած գաղափարները դեռ բաւա-  
կանաշափ չեն որոշած, կամ աւելի  
լաւ ասած՝ ազդ մասին իշխող կար-  
ծիքը սխալ է, և հէնց ազդ սխալ  
կարծիքիցն է որ ամսագրին զատա-  
ւորի գեր են չատկացնում: Այստեղ  
լարմար տեղը չէ ազդ մասին աւելի  
ընդարձակւելու. բայց եթէ մեզ տե-  
ղիք կը տրւի—մննք այդ մասին կը  
խօսենք աւելի երկար:

ածել իր ծրագիրը և մաղթում ենք կտտարեալ աջութիւն լրագրական փշտ ասպարէղի վրա, հաւաստացած լինելով՝ որ մեր վրացի եղբայրները չեն զլանալ իրանց նիւթական և բարովական օժանդակութիւնը այս նորաբողբոջ հանդէսին։ Վերջացնելով մեր խօսքը՝ պէտք է նկատել և այն, որ մօտ երեք հարիւր երեսից բաղկացած հանդէսի ալս առաջին հա-

մարը տպագրւած է ընտիր թղթի վրա և գեղեցիկ տառերով։ Ենգուն ընդհանուր առմամբ լաւ է, բայց աւելի ընտիր և գեղեցիկ ոճը, վրաց լիդվին լատուկ կազմն ու գրօշմը նկատելի է միմիայն «Մօամբէ»-ի ծրագիրը բացատրադ լոգւածի մէջ, «Մօամբի» դիրքը «Մուրճ»-ից փոքր ինչ պըստիկ է։

Մ. Ն.

ԼՈՒՆԿԵԼԻԶ, Վ. — «Հանրամատչելի բնախօսութիւն», Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1893 թ. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատարակչական Ընկերութեան, ութածալ, 362 էջ, գինն է 1 ռուբլի։

Այս գրւածքը, որը 362 երեսից բաղկացած մի ստւար հատոր է, պատկանում է Հրատարակչական Ընկերութեան կողմից հրատարակուող «Հանրամատչելի գիտական գրադարան» ասւած շարքին։ Անկարելի է չխոստովաճել, որ Հրատարակ. Ընկերութեան ձեռնարկած գիտական գրադարանը մի վերին աստիճան օգտաէտ գործ է։ Իրաւ գիտութեան ազդեցութիւնը ժողովրդի կեանքի բարգաւաճման վրա չի կարող աչփան էլ մեծ լինել, երբ ազդ ժողովրդին նոյն խոկ անկախ են գիտութեան վաստակած մեծ արդիւնքները։

Առաջ՝ մինչև անգամ Եւրոպացում՝ գիտական մեծ գիտերը մնում էին չափանի սակաւաթիւ գիտնականների շրջանում, դուրս չգալով ըստ մեծի մասին դոցա կարինէտներից, Ազդ ուղղութիւնը մեր

ժամանակներում, գոնէ Եւրոպակում, բազդաւորապէս այլ ևս գուշտիւն չունի. այնուղ աչժմ կան բազմաթիւ անհանուեր և ընկերութիւններ, որոնք իրանց համար նպատակ են գրել լայն կերպով տարածել ժողովրդի բոլոր խաւերում գիտութեան արդիւնքները։

Ահա աչդ ուղղութեան արձագանքներից մէկն էլ պէտք է համարել հալոց հրատարակչական ընկերութեան ձեռնարկած գիտական գրադարանը։ Հանել գիտութիւնը զի տութիւնը զի տոնականների կարին է տից և լայն կերպով տարածել ժողովրդի մէջ— ահա աչդ հանրամատչելի գրադարանի նպատակը։

Դալով պ. Լունկելիչի գրածին, կատենք, որ նա կազմած է գեղեցիկ կերպով։ Առաջին և երկրորդ գլուխները նւիրւած են արիւնին և

նրա շարժողութեանը։ Այստեղ հեղինակը ցուց է տալիս, թէ ինչ մասերից է կազմւած արիւնը, ինտու անցնում է արիւնի նշանակութեանը, որի վերաբ բաւական շատ կանդ է առնում, ցանկանալով, որ ընթերցողը լաւ ըմբռնի արիւնի մեծ նշանակութիւնը։ Հենց այդ նպատակով էլ նա պախարակում է մեր ժողովը դիմումի մէջ գործութիւն ունեցող մի վաս սովորութիւն, այն է արիւն առն ել տալը, որը չաճախ մեծ վնասներ է հասցնում հիւանդներին։

Հեղինակը, խօսելով արիւնի մասին, աշխատում է կողմնակի կերպով ծանօթացնել ընթերցողն նաև այն հիւանդութիւնների հետ, որոնք անմիջական կապ ունեն արիւնի հետ։

III և IV գլուխները լատիացրած են օդին և չնշառութիւնը։ Այստեղ նոյնպէս հեղինակը շի բաւականանում միմիայն ֆիզիոլոգիական ֆակտերով, այլ ծանօթացնում է ընթերցողն հետաքրքրական և գործնական կեանքում մեծ նշանակութիւն ունեցող շատ խնդիրների հետ, որոնք միենան ժամանակ կապ ունեն չնշառութեան հետ։ Օրինակ հեղինակը մի քանի երեսներ նւիրում է օդի մէջ լողացող բակտերիաներին, չետու կարձառօս կերպով նկարագրում է բակտերիաների պատճառած հիւանդութիւնները (սիրիուսկան ախտը, հաւերի խոլերան, իսկական խոլերան)։

Հետեւեալ գլուխներում հեղինակը խօսում է սննդառութեան և մարտզութեան մասին, ցուց է տալիս խըմիչքների չափազանց գործածութեան աւելիչ հետեւանքները, ծանօթաց-

նում է մարմնի մէջ գործութիւն ունեցող նիւթերի փոխանակութեան հետ, «կենդանական տաքութիւն» անւանւած երեղիթների հետ և այլն։

Վերջին գլուխներում խօսւում է ջղալին սիստեմի մասին և մասնաւորապէս զգայնութեան գործարանների մասին։ Որպէս զի հասկանալի լինեն այն երեղիթները, որոնք վերաբերում են լողացութեանը, հեղինակը հաղորդում է նախապատրաստական տեղեկութիւններ ձագնի մասին, ապա նկարագրում է լողացութեան գործարանը ականջը։ Իսկ ցանկանալով խօսել աչքի մասին՝ հեղինակը առաջ կարձառօս կերպով ծանօթացնում է ընթերցողին ֆիզիկայի այն մասի հետ, որը վերաբերում է լուսին։ Մի խօսքով գիրքը պարունակում է իւր մէջ հարուստ նիւթ, նրա մէջ խօսւում է բազմաթիւ երեղիթների մասին՝ վերաբերեալ թէ բուն ֆիզիոլոգիալին և թէ վերջինի հետ կապ ունեցող այն խնդիրներին, որոնք կարող են նշանակութիւն ունենալ հայ ընթերցողների համար։ Առհասարակ պէտք է ասել, որ հեղինակը աշխատել է լարմաքնել իւր գրւածքը հայ հասարակութեանը, և այդ աւելի ևս բարձրացնում է նրա արժէքը։ Գըրւածքի ոճը բաւական պարզ է և կենդանի, այնպէս որ, չնայած նիւթի լուրջ լինելուն, գիրքը կարդացում է հեշտութեամբ։

Որպէս զի հասկանալի դառնալ գրւածքի նիւթը, հեղինակը զետեղել է գրքում նկարներ, որոնցից մի քանիսը տարաբաղդարար շատ էլ չաղողած չեն (օրինակ բակտերիա-.

ները, մարտողութեան գործարան-ները): Նատ էաջողւել են այն նկար-նելը, որոնք ներկալացնում են սիրտը, ականջը, ուղեղը մա-սամբ և այն, որ ներկալացնում է թոքերը և ալին,

Վերջացնելով խօսքս այդ գըր-

ւածքի մասին, կասեմ որ նա մի խոշոր վաստակ է մեր աղքատիկ գրականութեան համար և շատ ցան-կալի է, որ նա, ինչքան կարելի է, շատ տարածւի հասարակութեան մէջ:

Ա. Բ.

Տէր. Ահետիքեան, Նիկողայոս—«Կովկասեան հանքային ջրեր» տպ- Եարաձէի, 1893 թ.

Այս գրքովէը մի առանձին մո- նողրաֆիա չէ, նա կազմւած է այն տեղեկութիւններից, որոնք գտնուում են Վելիկութառումի «Ռւղեցոց»-ում, բժ. Յովհաննիսեանի, Անանեանի և Քովուլովսկու նկարագիրներում: Կազ- մողը առաջ է բերում տեղեկութիւններ Արասթումանի, Բորժոմի, Պետ- ալիկորսկի, Ժելեզնավորսկի, Խսեն- տովի, Կիսլովոդսկի և Թիֆլիսի ջրե- րի սասին:

Այդ վայրերի մասին խօսելիս պ. Տէր. Աւետիքեանը նախ առաջ է բե- րում պատմական տեղեկութիւնները, ապա նկարագրում է ջուրը նրա բա- ղադրութեան տեսակէտից, բայտնե- լով միենան ժամանակ այն հիւան- դութիւնները, որոնք բուժւում են այդ ջրով:

Բացի դրանից պ. Տէր. Աւետիք- եանը ծանօթացնում է ընթերցողին այդ վայրերի բնութեան, ազգաբնա- կութեան և մասամբ կեանքի հետ:

Գրքովէի սկզբում՝ խօսելով վե- րաբշեալ հանքալին ջրերի մասին՝ հեղինակը ասում է, որ նրանք դեռ

շատ քիչ են բարեկարգւած. «մի խօս- քով, ասում է հեղինակը, մեր հան- քավին ջրերը դեռ խանձա- րուրքի մէջ են»... Մեզ թւում է, որ այդ կերպ չի կարելի ասել ոչ Արասթումանի, ոչ Բորժոմի, ոչ Պետ- ալիկորսկի և ոչ էլ մնացածների մա- սին, որոնք նիւթ են կազմում այդ գրքին: Ինքը հեղինակը գրքովէի ու- րիշ տեղերում մոռանալով այն, ինչ ասել է սկզբում, հիացմունքով նկա- րագրում է փառաւոր շինութիւննե- րը, հիանալի զրօնավայրերը, վերին աստիճանի ջարմար լողարանները, որոնք գոլութիւն ունին այդ վայրե- րում:

Գրքովէի լեզուն ցանկալի է որ աւելի պարզ լինէր. բնութեան տե- սարանների նկարագրութեան մէջ մանաւանդ հակումն է երեսում զէպի ճոռումաբանութիւնը, որով տպատ- րութեան թարմութեանը նւազում է, նկատինք անցողակի, որ բազմա- թիւ աչցելուներ ասելու տեղ՝ չպէտք է ասել չոգն աթիւ աչ- ցելուներ:

Խօսելով Պետադրութիւնի մօտ գտն. խանակ «Մաշուկ» անւանելու, ինչ-  
ւող մի լեռան մասին՝ հեղինակը ան- պէս ընդունւած է անւանել նրան։  
ւանում է նրան «Մաշուտկա», փո. Ա. Բ.

ՀԵՂԻՆԱԿ? — Վարելահողը պարարտացնելու միջոցներ։ Թարգմանեց  
Յովհ. Արարացեան։ Ալէքսանդրապոլ, տպար. Սանոցեանցի 1892թ։

Այս փոքրիկ զիրքը՝ բաղկացած թիւնը միմիան նրանումն է, որ հան-  
քառանալու ժամանակ հողը անհա-  
մեմատ առելի դանդաղ է հարստա-  
նում մննդական նիւթերով քան երբ  
տացնող նիւթերի մասին։ Ընդհան  
րապէս ասած՝ գիրքը գրւած է բա-  
ւարար կերպով և կարող է օգտաէտ  
ինել հասարակ ժողովրդի համար,  
թէև նրա մէջ կան նաև մի քանի  
աչքի ընկնող թերութիւններ։ Օրի-  
նակ հողի «հանգստանալու» մասին  
բերւած հակեացքը թերի է. խօսելով  
աչք ինդրի մասին հեղինակը համե-  
մատում է հողի «հանգստանալու» ձիու  
հանգստանալու հետ, որը սխալ է։  
Ահա ինչու. Ձիու հանգստանալու  
ժամանակ նրա մարմինը ամեննին  
չի հարստանում մննդական նիւթե-  
րով (եթէ միան նա միենովն ժամա-  
նակ կերակուր չի ընդունում)։ Ըստ  
հակառակը՝ հողը հանգստանալով  
հարստանում է մննդական նիւթերով  
և այդ առաջանում է նրանից, որ  
հողի մէջ գտնուող բոլսերի մնացորդ-  
ները կամ բարդ հանքալին նիւթե-  
րը, որոնք պարունակում են իրանց  
մէջ բոլսերի համար մննդական նիւ-  
թերը, լուծուում են ժամանակի ըն-  
թացքում ու ազատում իրանց միջից  
մննդական նիւթերը։

Այդպիսով՝ թէ հողի հանգստա-  
նալու ժամանակ և թէ պարարտաց-  
նելու դէպքում հողը հարստանում է  
մննդական նիւթերով. տարբերու-

թիւնը միմիան նրանումն է, որ հան-  
քառանալու ժամանակ հողը անհա-  
մեմատ առելի դանդաղ է հարստա-  
նում մննդական նիւթերով քան երբ  
նրան պարարտացնում են։

Մի ուրիշ տեղ հեղինակը՝ խօսե-  
լով կենդանիների աղբի մասին նկա-  
տում է, որ նրան (աղբը) հարկաւոր  
է պահել փոսերում։ Թէև աչք միջոցը  
երբեմն գործ է ածւում, սակազն նա  
աչքան էլ օգտաէտ չէ. անհամեմատ  
աւելի լաւ է լինում, երբ աղբը պահ-  
ուում է գետնի վերաէ դարսած կող-  
տերում։

Խոչ վերաբերում է թարգմանա-  
կան լեզվին, նա պարզ է ու մատ-  
չելի հասարակ դասի համար, թէև  
ունի անհարթութիւններ։

Մի նկատողութիւն էլ։

Աչք գրքի ընթերցողը իմանում է  
միան, որ զա մի թարգմանութիւն  
է, բաց թէ ով է նրա հեղինակը,  
կամ թէ ինչ լեզվից է թարգմանած,  
աչք մնում է անլավու նւ պէտք է  
ասել, որ այս տեսակ վարմունքը  
առաջինը չէ մնացնում. հազ թարգ-  
մանիչներից ոմանք ունին սովորու-  
թիւն անլավու թողնել հեղինակի ա-  
նունը։ Միթէ ամօթ չէ օգտաէլ մի  
որ և է մարդու աշխատանքից, չբա-  
րեհաճելով միննուն ժամանակ գոնէ  
իշել աչք մարդու անունը։

Ա. Բ.

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՌԻՍ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՅԵԱՅՔՆԵՐԸ ՈՌԻՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԿՈՎԿԱՑՈՒՄ

Մայրաքաղաքեան «Նովոե Վրեմիա» («Նոր. Ժամանուկի») մեծ լրագրում այս ամիս լոյս տեսաւ յօդւածների մի շարք, նւիրւած Ղարսի և Բաթումի շրջանների հողացին վիճակին և նոյն լրադրի «Ստորոժիլ» աշխատակցի աւելի վազ լոյս տեսած յօդւածը՝ «Русское дѣло въ Евпаторійской области» (Խուսական գործը Բաթումի շրջանում): Պետերբուրգի թերթի այդ յօդւածները իսկոյն նկատեցին Կովկասեան մամուլի մէջ, և մասնաւորապէս տեղական «Նովոե Օբողբենիե» մի շարք հիմնաւոր յօդւածներով յետ տւեց մայրաքաղաքի թերթի մեղադրանքները Կովկասում ծառայող և Կովկասեան ծագումն ունեցող (իմա, հայ և վրացի). պաշտօնեաների վրայ:

Յօդւածագիր Սաորուժիլլ մատնումէ ամենքի ուշադրութեանը այս զարմանալի թւող «զարմանալի» հանգամանքը, որ Բաթում. քաղաքում, ուր 25,000 բնակիչ կայ, միայն 15 ռուս սեփականատէրեր կան: Այսպիսով ամեն տեղ զարմանք և զարմանք: Բայց այն, ինչ «Նովովոյե Վրեմիան» է ասում՝ իսկապէս շատ զարմանալի է. իբր թէ Բաթումում ռուսները չեն կարողանում սեփականատէրեր դառնալ՝ Կովկասեան ծագումն ունեցող պետական պաշտօնեաների պատճառով, որոնք իբր թէ սեփարատիստական (անջատւելու, իմա Խուսաստանից Կովկասը անջատելու) ձգումներ ունեն: Ինչ անհեթեթութիւն, որքան անիրաւ մեղադրանք տեղական հայ ու վրացի պաշտօնաւաների վրայ: «Նովոյե Վրեմիա»-ն և նորա թըղթակիցը ամենեւին չեն հետաքրքրւում իմանալու թէ ոնքոն ճշգութեամբ են գործադրւում պետական օրէնքները Բաթումի

շրջանում։ բայց օրէնքի հիման վրայ դժւարութիւններ եղան որ մի ռուս հողացին կալւածք ձեռք բերի Բաթումի շրջանում—և ահա աղաղակ կը բարձրացնեն թէ մեղաւորը այտուղ կովկասեան ծագումն ունեցող վրացի կամ հայ պաշտօնեան է։

Խնչ է առաջարկում ցիշեալ թերթը այդ ցաւին՝ դարման անելու համար։ Քշել տեղական ծագումն ունեցող պաշտօնեաններին, նոցա պաշտօն տալով Ռուսաստանի ներքին նահանգներում, իսկ նոցա տեղը նշանակելով ռուս մարդկանց։ Եւ գիտէք իսկապէս ում գէմն են ուղղած այդ տողերը։ Քութացիսի նահանգի և Բաթումի շրջանի պետական կալւածների կառավարիչ վրացի պ. Գամրեկելիի և պ. Աբազաձէի դէմ։ Պաշտպանած լինելով պետական կալւածների շահերը, որի պատճառով շատ մարդիկ չեն կարողացել սեփականատէր դաւնալ Բաթումում, և դոցա մէջ էլ մի երկու ռ.ռւներ, — նոքա իբր թէ սեպարատիստական քաղաքականութիւն են բանեցրել... Եւ ի վերջոյ «նովոե Վրեմիա»-ն առաջարկում է Բաթումի և Ղարսի շրջանների համար սենատորական բեւի զիա (վեր սոուգութիւն) նշանակել։ Խնչ սպառնալիք!

Պաշտպանուում է «Նովոե Վրեմիա» մեղադրանների դէմ վերջապէս և Ղարսի կառավարչութիւնը տեղական «Կարս» ռուսական թերթի բերանով։ «Կարս» լրագիրը ապացուցանում է որ ամեն չանք գործ է զրւած Ղարսի շրջանում ռուսական տարրը զօրեղացնելու համար։ Հրաւիրում ենք մեր ընթերցողների ուշադրութիւնը «Կարս»-ի յօդւածից այս կարի վրայ։

«Եռուս գաղթականներին, ասում է նա, տրւած են լաւագոյն հողերը, իրանց ընտրութեամբ, Ղարսի շրջանի (մէծ) ճանապարհների և քաղաքների մօտ այսպէս օրինակ, Ալեքսանդրապոլից Ղարս ձգւող ճանապարհի վրայ և աւելի հեռու դէպի Սարիկամիշ, ճանապարհորդները հաճութեամբ հանդիպում են բազմաթիւ ընդարձակ բարեկարգ ռուս դիւզերի, որոնց յատկացրած են շրջանի լաւագոյն և շատ ընդարձակ հողերը։ Երջանի (նահանգի) վարչութիւնը, մէծ նշանակութիւն տալով այն բանին, որ Թիւրքիացի սահմանակից երկրում ռուս տարրը զօրեղանաց, աշխատել է այսուղ բնակեցնել բուն ռուս մարդկանց և մինչև անգամ ամենելին չի թոյլ տւել օտար գաղթականներին ոչ միայն ամբողջ գիւղերով

այլ և առանձին ընտանիքներով. և այդ հանգամանքը շատ լաւ յայտնի է բարձրագոյն իշխանութեանը: Այսպիսով, բնակեցնելով ամենայարմար հողերը բացառապէս ռուս տարրով, վարչութիւնը պէտք է մտածէր նաև արքունական այլ ազատ հողերի մասին, որ անբնակ էին թողել դէպի Տաճկաստան դուրս գաղթածները և որոնց վրայ հաստատւելուց հրաժարում էին ռուսները, պատճառ բերելով նոցա փոքր յարմարութիւնները: Երջանի կառավարութիւնը նաև այսուեղ գործել է յօգուտ ռուսական տարրի, այդ հողերը տալով Թիւրքիայից եկած յոյներին, որոնք դաւանում են կայսրութեան մէջ իշխող ռւզզափառ հաւատը և որոնք քաղաքական կողմից միանդամայն համերաշխ են ռուս ազգաբնակութեան հետ: Միայն փոքր քանակութեամբ գիւղեր են տրւած Թիւրքիայից գաղթած հայերին, որոնք ստիպւած էին մեր զօրքերի հետ այսուեղ գալ, երգիրումի վեյայէթից, պատերազմը վերջանալուց յետոյ:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի:

## ՊԱՏՃԵՆ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԻ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍԶԳԻՍ

Մկրտիչ, ծառայ Քրիստոսի և անհասանելի կամքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Եջմիածնի.

Ողջոյն քեզ, Առաքելական Եկեղեցի Հայաստանեաց, Թաղէոսի, Բարդուղիմէոսի և Գրիգորի աւետարանաւ ծնեալք ի Քրիստոս. աճեալք և զարգացեալք հաւատովք Աստուածապաշտութեան.

Ողջոյն քեզ, Մայր Սիօն՝ լեառն Աստուծոյ Երուսաղէմ. եժէ ի քեզ երեւեցաւ լոյսն աշխարհի Մարմնացեալ Փրիիչն, նոյն Միածին էջ ի Հօրէն, եղ զհիմն Այրարատայ Եկեղեցւոյն լուսակերտեալ սուրբ Եջմիածնի:

Ողջոյն քեզ, Տուն և Առաքելական Աթոռ Սրբոց Յակովբեանց: Ողջոյն համայն միաբանական ուխտին Հայոց, որ իբրև Խաչակիր զինուոր տքնիք և պաշտէք զտնօրինական սուրբ տեղիս և ամենայն անձնուիրութեամբ պաշտպանէք զվիճակն Հայոց ցանկալին և նախանձելին համայնից ազանց:

Ողջոյն Ձեզ, Կաթուղիկոսունք և Պատրիարքունք, որ ընդիս համալծակից Եղբայր էք ի վարել և տանել զպաշտօն Քրիստոսի Եկեղեցւոյն. գիտէք թէ քանի մեծ է պատասխանառութիւն մեր առաջի մեծ Հովուապետին, զի իւրաքանչիւր ոք ի մէնջ զիւր հօտին համարս ունի տալ:

Ողջոյն Ձեզ, հովիւք և Առաջնորդք փոքրիկ հօտին Հայոց, որ

արթուն աշօք հսկէք և արածէք զհաւատացեալ հօտն Քրիստոսի, յիշելով զբան Տեառն թէ՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերաց ոչխարաց»:

Ողջոյն Զեզ, վարդապետք Եկեղեցւոյ, որ ուսուցանէք զիանն կենաց. միսիթարեցէք զժողովուրդ, զի լի եղև արամութեամբ. թողեալ լիցին մեղք իւր, ու աէ Աստուած:

Ողջոյն Զեզ, քահանայք Բարձրելոյն Աստուծոյ, որ մատակարարէք սուրբ Խորհրդոյ Եկեղեցւոյն, դաստիարակք և պահապանընտանեկան Սրբութեան, և գիտէք թէ քանի մեծ է պաշտօն ձեր:

Ողջոյն Զեզ, Սարկաւագունք, որ խունկ արկանէք առաջի Սեղանոյն Աստուծոյ և մատակարարէք որբոյն և աղքատին. յիշեցէք զԽաղ սարկաւագն մեծին Ներսիսի՝ նմանողք լերուք նմա:

Ողջոյն Զեզ, Դպիրք, որ քաղցրաձայն երգօք Նարականաց և տաղից՝ շարժէք զհոգին ջերմեռանդութեան ի ժողովուրդն, պաշտել և սիրել զԱստուած, դուք զվերին սրբաբան դասուցն բերէք զնմանու թիւն:

Ողջոյն Զեզ, Հարք և Եղբարք վանական ուխտին, որ պահապան հրեշտակք էք մնացեալ նշխարաց վանորէից, որք յաւերժական պարծանաց յիշատակ են մեր նախնի կրօնաւոր և գրասէք սուրբ հարց:

Ողջոյն Զեզ, վարժապետք և ուսուցիչք. Զեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց ի պէս պէս ուսմունս և գիտութիւնս, որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի լաւագոյն կեանս. ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այլ և ի Վերին Քրիստոսի արքայութիւն:

Ողջոյն Զեզ, խմբագիրք Հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւնս և իբրև հրապարակախօս մունեաիկ, զրով և թղթով վարէք զժողովներդն ի յառաջիմութիւն և քաջաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա լնորունել զլաւն և խորշիլ ի վատէն: Զգնչշ, զգնչշ, ջանացէք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք:

Ողջոյն Զեզ, յօրինիչ մատենագիրք և թարգմանիչք զրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարյական կրթութեան և ձեռնուու արուեստին զիտութեան:

Ողջոյն Զեզ, Բարեբար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէք

աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենակարանք չացոց:

Ողջոյն Զեզ, նախանձաւորք սուրբ Կրօնի, եկեղեցակը, ժողովը վըրդասէր բարեպաշտ Ագիք, որ շինէք զեկեղեցիս և զգպրանոցս, հաստառելով և պահելով կրօնի և ուսման տաճարս, որով լուսաւորին որդիք եկեղեցւոյ և ժողովուրդ յորդորի յԱստուածակաշտութիւն, որ քան զամենայն ինչ զօրաւոր է:

Ողջոյն Զեզ, ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քորք, որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կրթութեան տաճարն. բարեբաստիկ և երջանիկ էք, եթէ հաւասար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայք յաւուր պսակալրութեան Զերոյ ի սուրբ ամուսնութիւն:

Ողջոյն Զեզ, Մայրաքաղաքացիք և դաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեւակերտ արուեստ և ի շահավաճառութիւն, որ աշխատիք յառաջ վարել զգործս Զեր իմաստուն տնտեսութեամբ և ճարտարագիտութեամբ, միշտ մրցելով և զարգանալով ըստ պահանջման ժամանակին:

Ողջոյն Զեզ, բնակիչք դաշտաց և լերանց շինական երկրագործ ժողովուրդ, որ սիրէք զհողս և մաճ, զոչխարն և տաւար, դուք աշխարհի բարի և անխարդախ մշակն էք, դուք հարազատ որդիք էք նախահօր մերում. զործեցէք զերկիր և պահեցէք, գիտելով թէ միայն երկիրն է Զեր կեանք և զօրութիւն. միշտ ջանացէք անկորուստ պահել այդ հայրենաստուր ժառանդութիւն:

Յետ ողջունելոյ զամենայն դասակարգս Զեր, ժողովուրդ Հայոց, դաւունամ արդ պատմել Զեզ թէ զինչ արար Տէր ընդ իս և գիտէք արդէն զի հռչակեցաւ ընդ ամենայն աշխարհ:

Ոչ որպէս կամին մարդիկ, այնպէս առնէ Տէր, այլ որպէս Խնքն կամի և ով կարէ հասու լինել անքննին խորհրդոց նորա. զի մ զիտաց զմիսս Տեառն և ո եղեւ նմա խորհրդակից թէ խելամուտ արասցէ զնա:

Մինչ փոքրիկ և կրտսեր էի ի մէջ եղբարց և արածէի զիմ՝ փոքրիկ հօրն ի լեառն Վարագայ, առ հովանեաւ Քրիստոսի Աւագ սուրբ Նշանին, Զեռն Տեառն կալսւ զիս, ած յերուսաղէս և կա-

ցոյց ի վերայ լերինն Սիօնի, ուր երևեցաւ Բանն Շժիշկ մարդկութեան և վերանորոգիչ հնացեալ մարդուն:

Յերեսուն ամաց անոի մինչև ցեօթանասուն ամի իբրև խեցեղէն մի տկար անօթ միշտ վարեալ և գլորեալ ընդ քարքարուտ ելեկջ առապարս աշխարհի, այնպէս եղէ զի կարծեցին մարդիկ թէ իսպառ ջախջախեցայ. և զի՞նչ էր, որ կենդանի պահէր զիս. միայն հեզութիւն և իսպառ համբերութիւն:

Անդ ի Սիօն մօտ էր նորոգիչ Բրուտ Յիսունս, որ անդրէն վերասին նորոգեաց զբեկեալ անօթս Միանգամ և երկիցս հիւանդացայ յոյժ, այնպէս թուեցաւ ինձ թէ հասեալ կամ առ դուռն գերեզմանին, և եղէ ես որպէս զոստայն մերձ ի հատանիլ, սիրտ իմ և շունչ գելաւ յիս, լացի և գոչեցի. ով Տէր, դեռ տարաժամէ, ասացի, գեռ բազմապատիկ պարս ունիմ առ Քեզ և առ եկեղեցին, թոյլ տուր, դարձն զոգի իմ, զի կեցից և վճարեցից: Ո՞հ թէ մեռանիմ շմամ պարտապան առաջի Քո ահաւոր ատենիդ:

Լուաւ ինձ Տէր և ողորմեցաւ, և յաւել ինձ նոր կեանս, վերացոյց ի լեռնէն Սիօնի, եղ ի Սիօն Այրարատայ, ի Կաթուղիկէ Եջմիածին և ասաց. Որդի մարդոց, դէտ կացուցի զքեզ տանդ Հայոց և հովիւ վարառեալ հօտին սուրբ Գրիգորի: Ահա քեզ և ժամանակ, երթ վճարեալ զպարտու քո:

Խոնարհելով առաջի երկնից Հօր կամաց և մեծարելով զհամազգային միաձայն ընտրութիւնն, ահաւասիկ գամ ի վճարել զմնացորդ նուիրական պարտս իմ, զոր ունիմ առ Եկեղեցին Հայաստանեալց և առ ժողովուրդն Հայոց. և գիտէք թէ քանի շատ բազմապիսի և բազմապատիկ են չափ և կշիռ պարտուցաւ:

Այլ ես մինչ հասեալ կամ ի ծերութիւն և անցեալ զեօթանասուն ամն, մինչ ձեռս ի վեր կալեալ այլքն ածեն ինձ գոտի, իւ կարացից վճարել զայնչափ պարտս գոնէ փոքրամասն տաղանդին չափով, զոր ինձ աւանդեալ է Տէրն և պահանջէ շահագործել տոկոսիւք և պարզերես կալ առաջի պահանջողին:

Մինչ խոկամ զարհուրիմ ես, ով Եկեղեցի Հայաստանեալց, որ ընդ ամենայն հեռաւոր աշխարհս սփռեալ կաս տարագրեալ ի հայրենի քո տանէն, չգիտեմ թէ որպէս կարեմ վարել զհովուական տեսչութիւն իմ: Միթէ նստեալ յԱյրարատ՝ մինչ ի Հնդիկս և յԵւ-

բոպ և այլ հեռավայրս զօրեմ տեսանել զՁեզ։ Եւ զիմրդ հնար է ինձ արածել զհօան սեփական, որ ընդ ամենայն աշխարհս ցիր և ցան կան, անտես յաչաց իմոց և ուր չկարեն հասանել ոտք այցելութեան իմոց։

Այս, առաքեցայ ես ի լեռնէն Զիթենեաց, այլ չեմ ազատ առաքեալ, շրջել ոչ ի հեթանոսս, այլ յամենայն եկեղեցիս Հայոց, կենդանի բարբառով քարոզել և ուսուցանել, աչօք իսկ տեսանել զցաւս հօտին իմոց և հոգալ զդարմանն։ Այլ զի՞նչ իցէ մարդոյն դարմանն։ Իցէ թէ գթած Սամարացին անցանէր զքե։

Ուստի մնայ ինձ միայն, որ ըստ նախնի սովորութեան հօտասէր հովուաց՝ Ընդհանրական գրով և թղթով խօսիլ ընդ ձեզ, ժողովուրդ Հայոց, թէ յերկրի աստ մինչչեւ մեռեալ իցեմ և թէ յերկինս, զի և անդ կենդանի եմ հոգւով, ուր հոգիք մեր նախնի սուրբ Հարց կան և աղօթեն վասն ձեր։

Այլ ունիմ ես աչս, որ մօտ են և տեսանեն զՁեզ, նոքա են իմ ընտրելակից եղբարք, Հովիւք և Առաջնորդք իւրաքանչիւր վիճակաց, որ յանձնեալ է ոչ ցինէն, այլ Քրիստոսէն։ Հովել և յանձնանձել, պահել և հաստատել ի հաւատու Առաքելական Եկեղեցւոյն Հայաստանեաց, որոց հիմն Թաղէսո և Բարդուզիմէսո եղին և զողջ շինւածն ած ի կատար հրաշալի նահատակութեամբ սուրբ Քրիզոր Լուսաւորիչն։

Գիտէք իսկ և հոչակեցաւ, թէ յաւուր հանդիսի օծման մերում առաջի Խջման սուրբ Տեանարին՝ ուխտեցի հաւատարիմ մնալ առ այդ հիմն, և շինուածն առաքելական եկեղեցւոյն Հայաստանեաց և պինդ պահել զաւանդութիւնս մեր նախնի սուրբ Հարց, զգուշանալ շիրամատել զցանկն հայրենի։

Եւ զուք իսկ ուխտակից էք ընդ իս և զնոյն ուխտն ունիք ի ձեռնադրութենէ շնորհաց, անարատ և անաղարտ պահել զկնիքն, որ աւանդեալ է մեզ ի Քրիստոսէ յԱռաքելոց և ի սրբազան Հայրապետաց։

Ուստի կայ և մնայ մեզ ամենեցուն երկիւզածութեամբ ծառայել առաջի Տեառն, զի ունիմք մեք իւրաքանչիւր զմեծ պատասխանատութիւն ըստ աստիճանի և շնորհաց, որ տուեալք են ի Հոգւոյն պաշտել զեկեղեցին, հոգալ վասն եկեղեցւոյն և թէ յաշ-

խարհի աստ պատրաստի և առաջի մեր Քրիստոսի խաչ՝ յօժարութեամբ կրել և երթալ զհետ զօրագլխոյն, որ ասաց. «որ ոչ առցէ զիսաւ իւր և եկեսցէ զկնի իմ» չէ ինձ արժանիւ։ Շնորհ մեծ է մեզ, եթէ սիրով և համբերութեամբ կրիցեմք զնոյն խաչ։

Ազօթեցէք վասն իմ, ով գործակից հոգւոր իմ Եղբարք, զի գիտէք թէ խաչն իմ ծանրագոյն է, զոր եղ ի վերաց թիկանց իմոց Եկեղեցին Հայաստանեաց։ Այլ թէ դուք զօրավիր լինիջիք ինձ, որպիսեօք Սիմէն Կիւրենացին, ես յանժաման զօրացեալ ի Հոգոյն՝ բարձեալ զիսաչն սիրով, ածեմ ի կատար Գողգոթացին։

Եւ ես ազօթեմ վասն Զեր, զի և դուք զնոյն խաչն համբերատար սիրով բարձեալ երթիջիք զհետ խաչեալ Փրկչին մերոց, զի անհնարին է մեզ խուսափել ի խաչէն, քանզի ասաց Յիսուս. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք։ Եւ զինչ իցէ նեղութիւն մեր առ նեղութիւն նահատակ նախնեաց։

Իսկ դու Եկեղեցի և ժողովուրդ Հայոց, որ ընտրեցիք զիս հովիւ Զեզ, ես ապաստան լինիմ ազօթից ձերոց և հաւտամ թէ լսէ իւր ձայնի աղաչանաց Զերոց և պահէ զիս վասն սիրելի եկեղեցւոյն իւրոց։

Կեցից ես վասն Զեր և դուք վասն Քրիստոսի։ Ամէն։

## Մ Կ Ր Տ Ի 2

ԿՈԹՈՒՊԱԿԱՌԱ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Քրեցաւ անդրանիկ Կոնդակս օրհնութեան ի 15 Դեկտ. 1893 ամի Փրիչական եւ ըստ տօմարիս ՌՅԹԳ. ի Մայր Աթոռս Հայաստանեաց ի Ս. Եջմիածին։

Ի Վաղարշապատ,

## ԵՐԿՈՒ ԽԾԱՔ ՄԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամեն մի անհատի, հասարակութեան և թէ հիմնարկութեան բարեկեցութիւնը պազմանաւորում է նորա տնտեսական ապահովութեան չափով,—ուր չկալ տնտեսական ապահովութիւն, անտեղ չի կարող լինել և լարատես, կանոնաւոր և օգտաէտ գործունէութիւն։ մասնաւոր անհատների եռանդն ու գործունէութիւնը, որով բարձրանում է մի հիմնարկութեան անունը, դադարելուց չետո՞չ ընկնում է և հիմնարկութիւնը, եթէ նա նիւթական միջոց չունի մշտապէս իւր մէջ պահելու անպիսի ոգեր, որոնք միշտ բարձր կարողանալին պահել հիմնարկութեան անունը։—Այս տեսակէտից նապելով, մեր ուսումնա բանների ամենախոշոր պակասութիւններից մինը պէտք է համարել նոցա տնտեսական անապահովութիւնը—աղքատութիւնը. նորա ըստ մեծի մասին գուրկ են եկամուտի կանոնաւոր աղքիւրներից. Ուսումնարանների հետ անխոնելի տնտեսական և բարողական կապերով կապւած են ուսուցիչները, ուստի ուսումնարանի այս կամ այն դրութիւնը ազգում է նաև ուսուցիչների վերակ անմիջապէս. Անապահով ուսումնարանի ուսուցիչը շատ քիչ ուռնիկ է ստանում և այն էլ ամիսներ սպասելուց չետո՞չ ազգպիսի գէպքեր չեն կարող պատահել ապահովւած ուսումնարաններում և եղածներն էլ պէտք է անհատական կամագականութեան վերագրել. Այսպէս ուրեմն, ապահովելով ուսումնարանը—կը նշանակէ ապահովել ուսուցիչն—իսկ ուսուցիչն ապահովելով, մենք կապահովենք մեր սերնդի գասահարակութեան գործը, պահանջնելով, որ նա նվիրւի իւր կոչմանը, թողնելով մեզ հոգալ նորա նիւթական պահանջները կանոնաւոր և մարդավարի վարձատրութիւնով։

Մեր ուսումնարանական գործը գեղեցիկ հիմունք ունի, նա կառավարում է (մանաւանդ առաջ) ժողովրդի ընտրեալների ձեռքով. այդ ընտրեալները, հոգաբարձուները, լանձնառու են լինում հոգալ ուսումնարանի տնտեսական կարիքները։

Բայց հոգում են այդ կարիքները—ի հարկէ ոչ։

Բացառութիւնների մասին չէ մեր խօսքը։

Մեր ուսումնարանների հէնց հիմքը խախոստ է, լուսալ թէ հոգաբարձութիւնը կը հոգաչ ուսումնարանի նիւթականը կը նշանակէ ամրոց կառուցանել օդում. դա ցոց է տեղ մեզ տարիների փորձը:

Եւ շատ բնական է: Մեր հասարակութիւնը դեռ աջնքան ստոր առանձանի վերադ է կանգնած, նա դեռ այնքան տհաս է, որ բացի բացառիկ անձնաւորութիւններից, հասարակական խնդիրները անձնականից վեր դասող, հասարակութեան ցաւերով հետաքրիքը անձնաւորութիւններ մշտապէս դեռ ևս չի կարող տալ. դա նորա ուժերից վեր է: Մենք գանգատում ենք, որ առհասարակ չունենք լաւ հոգաբարձուներ, բայց մոռանում ենք, որ լաւ հոգաբարձու կարող է տալ միայն լաւ հասարակութիւնը: Մենք ունենք ժողովարդ, ունենք ամբոխ, խուժանինչ ուզում էք անւանեցէք, բայց հասարակութիւն, այդ բառի լայն մտքով մենք դեռ ևս չունենք:

Բարեխիղճ հոգաբ սրձու կունենանք այն ժամանակ, երբ կունենանք լաւ և կրթւած հասարակութիւն. — դա ժամանակի և քաղաքակրթութեան է կարօտ: Այսպիսով մեր ծխական ուսումնարանները ի գէմս հոգաբարձութեան (նոյն և ժողովրդի) կորցնում են մի զօրեղ գործոն-փակտոր, որ կարող էր նորա նիւթականի հայթաչթողներից ամենահիմնաւորը դառնալ:

Սորանով մենք չենք ուզում ասել, թէ դէմ ենք հոգաբարձութեան. ընդհակառակիը մենք չարգում ենք սկզբունքով նորա գոյութիւնը. որպէս ժողովրդի իրաւունքի ներկալացուցիչ նա անհրաժեշտ է. սակայն նա համապատասխան չլինելով իւր կոչմանը, պէտք է ուսումնարանների ապահովութեան մասին մտածէ նաև մի այլ մարմին—Ուսումնարանական մասնաժողովը: Նա պիտի ունենաչ մի դրամագլուխ, մի հիմնական ֆոնդ, որով նապատ հասցնել կարողանաչ աղքատ ուսումնարաններին և բոլոր ուսումնարանների նիւթականը մի ընդհանուր հաւասար բիւշէտով պահպահէ: Թէ ինչպէս կարելի է կազմել այդ ֆոնդը, մենք մատնանիշ կանենք նետեսալ աղքիւրները:

Ա. Էջմիածինը եկամուտի աղքիւրներ շատ ունի, թէն նոքա բոլոր անկանոն և անարդիմ են մնում:

Այդ աղքիւրներից մինը սակայն շատ կանոնաւոր է և ապահով. դա պսակներից առնւող «աթոռահաս» կոչւող տուրքն է: Թէ ուր է ծախսում այդ արդիւնքը, հաստատ չգիտենք. (Կարծեմ կոնսիստորի ծառացողներին է տրատմ), սակայն չենք կարծում, թէ դա աւելի կարևոր տեղ ծախսէր, քան ուսումնարանները: Մեր ցանկութիւնն է այդ մշտատե, ժողովրդի աճելութեան հետ աճող տուրքը լատկացրած տեսնել մեր ուսումնարանների նիւթական ապահովութեանը: Եւ ինչ գեղեցիկ գաղափար ամեն մի անհատ պարտաւոր է լինում իւր ամուսնութեան օրից մի չնչին

տուրք վճարել իւր ապագայ որդոց ուսման համար։ Ազգպիսով՝ օրինակ միան Ախալքալաքի վիճակը ուսումնարանական ֆոնդին կը տաէ 2000 ռուբլի (տարեկան 400 պսակ միջին հաշով ամեն մինը 5 ռուբլի)։

Բ. Կանոնաւոր եկամուտի մի երկրորդ, բայց ոչ աչնքան դիւրին ձեռք բերելի, միջոց պէտք է համարել մեր եկեղեցական գումարները։ Եկեղեցիների ամենամեծ մասը սեպհական դրամ ունի, որ երրուն տասնեակ հազարների է համուռմ։ Պժբախտաբար ալդ փողերի ամենափոքրը մասը միան ապահով տեղ է։ մեծ մասը կորստի է մատնուռմ։ Եթէ հնարաւոր լինէր այդ փողերը հաւաքել և մի հիմնական դրամագլուխ կադմել, դա անտարակուս, մեր ուսումնարանների ապահովութեան հիմքը կը դառնարի Էջմիածինը, սական, եթէ ոչ դրամագլուխը, գէթ ալդ դրամների  $\frac{1}{10}$ -ի մի մասը կանոնատրապէս միշտ կարող է պահանջել օգուտ Փոնդի մանաւանդ այն եկեղեցիներից, որոնք ոչ մի ուսումնարանի չեն նպաստում։ Ախալքալաքի վիճակի եկեղեցիները միան 35000 ռ. ունին։ (Դա պաշտօնականն է, որ երեսի իսկականից շատ քիչ է)։ Եթէ ալդ փողերից առնւի տարեկան միան  $\frac{3}{10}$ , կանէ 1050 ռուբլի։

Գ. Երրորդ աղբիւրը պէտք է համարել մոմակաճառութիւնը, որի արդիւնքը թէն վաղուց, Ներսէս Ե-ի ժամանակից, լատկացրած է ուսումնարաններին, բայց հսկողութեան թուլութեան պատճառով շատ չնչին է, որովհետեւ եկեղեցիների ամենամեծ մասը գործ է ածում անկնիք—չթուլատրած մոմ։ Ըստ իս, զորա առաջը կարելի է առնել ալսպէս։ սահմանել, որ ամեն մի երեցիոխ ամեն տարի պարտաւորւի առնւազը մի փութ թուլատրած մոմ գործ ածել և արդիւնքի կէսը լատկացնել փոնդին։ ալդպիսով Ախալքալաքի վիճակի 72 եկեղեցիները ամեն տարի պարտաւոր կը լինեն փոնդին վճարել 1440 ռ., հաշւելով, որ մի փութ մոմը առնւում է 20 ռ., ծախւում է միջին թուլ 60 ռ. (40—80), զուտ արդիւնք մնում է 40 ռ., որի կէսը 20×72 (եկեղեցով), կանի 1440 ռուբլի։

Դ. Բացի զորանից չոգուտ նոյն Փոնդի կարելի է ամեն մի եկեղեցուց մի որոշեալ տուրք ստանալ 3—7 ռ. որ տարեկան միջին հաշով կանի 5 ռուբլի։ Ալդ հաշով Ախալքալաքի վիճակը զարձեալ կը տաէ 350 ռ. տարեկան։ (Մեր օրինակները վերցնում ենք Ախալքալաքից, որովհետեւ միան ալդ վիճակի պաշտօնական վիճակագրութեանը ծանօթ ենք)։

Կան ի հարկէ և ուրիշ շատ աղբիւրներ, բայց առաջմ նոցանից օգտւելը դժւար է։ Առանց զորան էլ մենք հաւատացած ենք, վերովիշեալ եկամուտները աչնքան նիւթ կարող են տալ, որ ուսումնարանների մեծ մասը կապահովւեն։ Տեսնում ենք, որ միան Ախալքալաքի վիճակը ալդ հաշով Փոնդին պիտի տաէ տարեկան 2840 ռ.։ Եթէ զորանից 1840-ը իբրև նպաստ տաէ ալդտեղ եղած կամ բացւելի ուսումնարաններին, ամեն տարի Փոնդին կը մնաէ զուտ 1000 ռուբլի։

Երբ ալսպիսով կաջմիածինը միջոց կունենալ աղքատ ուսումնարան-ներին օգնելու, ան ժամանակ հնարաւոր կը լինի «երկրորդ կոպար» ան-ւանեալը ոչնչացնել, որը ծագում է հենց ուսումնարանների աղքատու-թիւնից: «Առաջին կոպարը» կը լինի ան ժամանակ ուսուցիչների վարձա-տրութեան հիմքը, որով զգալի կերպով նորա ռոճիկը կը բարձանալ (ամեն մի դասին 5—10 ռ.):

Դա ի հարկէ չի կարող արգելք լինել, որ ապահովւած ուսումնարան-ները աւելի լաւ վարձատրեն ուսուցիչներին:

Ի դեպ՝ առաջնակարգ և երկրորդական առարկանների մասին, որքան անիրաւացի է որ ներկայ կոպարների կարգով նոյն աշխատանքը տարբեր գներով է վարձատրում, նոյնքան օրինաւոր է առարկանների ա. և թ. կարգի բաժանումը և նոցա տարբեր վարձատրութիւնը, որ սուաջնորդւած է աշխատանքի համեմատ վարձատրելու սկզբունքով (թէս ոչ լիակատար), Արտպէ՞ն լեզւի ուսուցիչը ամբողջ օրը ուսումնարանում չարչարելուց, կո-կորդն ու կեանքը մաշելուց չետով, մի քանի ժամ էլ չարունակ տանը պի-տի զբաղելի տետրակներ ուղղելով, մինչ, օրինակ, գծագրութեան ուսուցիչը թէ դասին մի մեծ աշխատանք չունի, որքան էլ նա բարեխիղ լինի, և թէ տանը նա բոլորովին ազատ է հոգսերից: Ի հարկէ չի կարելի ազգ եր-կուսին էլ միատեսակ վարձատրել մանաւանդ մեր ուսումնարաններում, ուր տիրապետում է առարկական սիստեմը: Դա դուցէ հնարաւոր լինէր եթէ մենք գործադրել կարողանալունք զասարանական սիստեմը, որ ներկա հանգամանքներում անիրազործելի է, հենց օրինակ շատերի ցենզ չունենա-լու պատճառուի:

Ներկայ հանգամանքներում առարկանները հաւասար վարձատրել՝ կը նշանակէ խրախուսել գրութիւնը, գծագրութիւնը և այն ի վեաս լե-զուների:

Դորա առաջը կարելի է առնել նորանով միայն, որ ամեն ուսու-ցիչ առաջնակարգ դասերի հետ պարտաւոր լինի մի որոշ չափով երկրոր-դական դասեր ունենալ: Խաչ դիւրին իրականանալի կը լինի մեր առա-ջարկութեամբ, որովհետեւ միմիացն գրութիւնն ու գծագրութիւնն են մնում երկրորդական, որոնց դասերի թիւը քիչ է և հեշտութեամբ կարելի է մի-այնել առաջնակարգ առարկաններին:

Երկրորդական դասերը, մանաւանդ իբրև աւելի դիւրին, կարելի է տալ նորաւարտներին, որոնք մի երկու տարի ծառալքելուց և փորձութիւն-ձեռք բերելուց չետով միայն լաւ է որ իրաւոնք ստանան առաջնակարգ դասեր աւանդելու:

\* Զմուանանք ասել, որ կանոնադրութեան մէջ առարկանները բարե-խղճաբար չեն բաժանւած կարգերի: Ախալքալաքի մանկավարժական ժո-ղովը (լին հոգի) միաձալն ցանկութիւն լայտնեց առաջնակարգ համարել

հետևեալները, աչքի առաջ ունենալով լոկ աշխատանքի ըստ արժանություն գնահատութիւնը. համերէն, ռուսերէն, թւարանութիւն, ձեռագործ, բնագիտութիւն. երկրորդական՝ զծագրութիւն և զ ութիւն.

Երգեցողութեան մասին ձաները բաժանեցան – ոմանք համարում են առաջին, ոմանք երկրորդ. մենք մեծամատնութիւնն հետ վերջինների կողմն ենք:

Խոկ կրօնի մասին խօսք էլ չի կարող լինել.

Այս ցանկով երկու նոր գասեր են մանում առաջնակարգ առարկաների շարքը (երգեցողութիւնով կը լինի երեք), որով բնականաբար երկու (կամ երեք) ուսուցչի ոռօճիկ աւելանում է սովորականից:

«Երկրորդ կոպարի» վերջանալը, այլ և մի քանի առարկաների առաջնակարգ դառնալը, կարծեմ, քիչ թէ շատ կը նպաստեն ուսուցչի նիւթական ապահովութեանը. Սական ուսուցչիշ իրան երբէք ապահով չի կարող համարել քանի որ շարունակում է զոյութիւն ունենալ աչքման նորա ստորացուցիչ, վարձկան դրութիւնը. Ուսուցչի աչքման դրութեամբ, աչս հանդամանքներում, մենք նորան պաշտօնեաց չենք կարող համարել աչս ժամանակաւոր վարձկան միացն. Խնչքան էլ մի ուսուցիչ լաւ տեղ ունենակ և լաւ ոռօճիկ ստանակ, նա չի կարող իւր անձը ապահով համարել քանի որ ծառալում է վարձկանի պալմաներով, նա գիտէ որ ոչ իւր ներկան է ապահով, ոչ ապագան թէկուզ տասնեակ տարիներ ծառաէքր, մէկ էլ տեսար, իւրեն մի հասարակ վարձկան, մի ծառալ, քեզ զուրս արին ուսումնարանից, շատ անզամ առանց որ և է հիմնաւոր պատճառի. Այլ վիճակին ենթակալ են մեր բոլոր ուսուցիչները՝ ամենաչետինից մինչև ամենաառաջինը.—Օրինակները սակաւաթիւ չեն.

Ուսուցիչների հետ հասարակութիւնը վարում է որպէս առարկակի հետ, որպէս ծառալի հետ. Այսօր պիտանի ես կամ լարմարւել կարող ես, ծառալիր. վաղը ծերացար կամ ուզեցիր քո մարդկացին իրաւունքները պաշտպանել, եալլա փողոց. Ալդպիտի անապահով կեանքը 'ի հարկէ շատ էլ գրաւիչ չէ. ուստի իւրաքանչիւր ուսուցիչ առաջին բարմար բոպէլն, աշխատում է թողնել ուսուցութիւնը և մի աչս աւելի ապահով պաշտօն գտնել. Աչդ խոկ պատճառով մեղանում հաղաղիւտ են հին ու փորձւած ուսուցիչներ:

Ու ուսուցիչների թափառականութեան և թէ ուսուցչութեան ընկած անունը բարձրացնելու և ապահովելու միակ հիմնական միջոցը մենք համարում ենք ուսուցիչներին պաշտօն եալ և ոչ վարձկան ճանաչելը. Ուսուցիչների վիճակը խաղալիք չինելու համար թեմական տեսուչների և հոգաբարձուների ձեռքում, նոյս պիտի նշանակէ «Ուսումնարանական մասնաժողովը», և աչս օրից, երբ նա նշանակւեց ուսուցիչ, պիտի ճա-

նաշւի հաւոց ուսումնարանների մշտական պաշտօնեալ նորա գիրքը անխախտելի պիտի լինի, նորա տեղը ոչ ոք իրաւունք պիտի չունենաց բռնելու. նորան հրաժարեցնելու կամ տեղափոխ ելու իրաւունքը պիտի պատկանի միմիան մասնաժողովին: Թափառում է հայ ուսուցիչը, որովհետեւ երբ ամառը եկաւ, որպէս ժամանակաւոր վարձկան—բանւոր, նա իւր ծառապութիւնը վերջացած է համարում և որոնաւմ է մի այլ տեղ: Ազդպիտի բան չէր լինի, եթէ նա նշանակւած լինէր մշտապէս, որպէս ազդ լինում է բոլոր լուսաւոր աշխարհի ուսումնարաններում: Նա մի անգամ նշանակւեց, պիտի միշտ ճանաչւի պաշտօնի մէջ և անպաշտօն չպիտի մնայ, քանի որ նա չի արձակւել ապացուցած լանցանքի համար և կամ չի հրաժարել անձնական ցանկութեամբ: Մեզանում բոլոր ուսուցիչները ամառը արձակւում են և հրաւիրում ըստ բարի կամեցողութեան թեմական տեսունների: և հոգաբարձունների: Վայ նորա հալին, ով որ եօլա գնալու ընդունակութիւն չի ունեցել. նոցանից շատերը մնում են անպաշտօն, շատերը զգւած հեռանում են, շատերի տեղն էլ նորերն են բանում:

Երբ ազդպիտի ուսուցիչը կը ճանաչւի մշտական, անփոփոխելի պաշտօնեալ, նորերին տեղ կը տրէի ան դէպքում, երբ ազատ տեղ կը լինի. նոքա պիտի հաշեն կանդիտատաներ բացւելի տեղերի համար:

Դորա փոխարէն ուսուցիչն էլ կապւած պիտի լինի իւր պաշտօնատեղի հետ մշտապէս, առանց հասումնարանական Մասնաժողովի թուզատրութեան նա տեղափոխւելու իրաւունք չպիտի ունենաց: Հէնց ազդ պատճառով հարկաւոր է, որ ուսուցիչներին նշանակէ միան մի մարմին—Ուսումնարանական մասնաժողովը. եթէ ոչ, ազժմս գոյութիւն ունեցող եղանակով մի թեմում լանցաւոր ճանաչւած և արձակւածը, մի այլ թեմում աւելի պատւաւոր տեղ է գտնում: Ուսուցիչների տեղափոխութիւնն էլ պիտի ուսումնարանական մասնաժողովի միջոցով լինի:

Մեր այս առաջարկութիւնը, բացի կողմանկի բազմաթիւ լաւ հետեանքներից՝ կունենալ նաև այս հետեանքները:

Ա. հասարակութիւնից, հոգաբարձութիւնից և թեմականներից ուսուցչի անկախ դառնալը նորա դրութիւնը հաստատ հիմքերի վերակը կը գնէ հասարակութեան մէջ և կը բարձրացնէ նորա նշանակութիւնը. ուսուցիչը կը դառնալ հասարակութեան իսկական, հաւասար անդամներից մինը. նա կախումն չունենալով ոչ ոքից, ստիպւած չի լինի դաւաճանելու իւր համոզունքներին—նա միջոց կունենալ իւր մարդկավն պահանջները, առանց երկիւղ կրելու, առաջ տանել կեանքի մէջ:

Բ. Աչքի առաջ ունենալով, որ ծառալութեան տեղը գիրութեամբ մի կարող փոխել, նա պիտի աշխատի անսպիսի վարմունք ունենալ, որ առիթ չառ ժողովրդի և պաշտօնակիցների դժգոհութեան: Ներկավաւ

կուիները և ուսուցիչների ընկած պատիւը մենք վերագրում ենք ուսուցիչների թափառականութեան. «Բան չունիս, չո եկող տարի ալստեղ մնալու չեմ, ինչ ուզում են թող ասենա, չաճախ ենք լսել պաշտօնակիցներից»:

Դ. Մի խումբ, շարունակ կամ սակաւ փոփոխութեամբ մի տեղ մնալով, ի մօսու ճանաչելով թէ ուսումնարանների և թէ հասարակութեան կարիքները, դիւրութեամբ կարող է հոգալ աղդ կարիքները. չենք ասում ալ ես ան, որ ուսուցիչների փոփոխութիւններից առաջացած ցաւալի ազդեցութիւնը ուսման գործի վերաբէ կը վերանալ միանգաման:

Ե. Թէ մեղանում վաղուց արծարծւած է ուսուցչական կառուաների խնդիրը, բայց մնացել է անգործադրելի պարձեալ ուսուցիչների վարձ. կանութեան, թափառականութեան չորհիւ, որ խկոնց կարող է իրականանալ, երբ մի խումբ երկար կը մնաւ միենո՞ն տեղը:

Յ. Ակժմեան ուսուցիչների սովորական ծախսերից մի քանիսը խպառ կը վերանարի, որպիսիք են պաշտօնի համար եղած հեռագիրների և ճանապարհների ծախսերը. կու անա չորրորդ տարին է ուսուցիչ եմ և միան ճանապարհածախս ունեցել եմ մօս 300 ռուբլի. Կողմնակի ընթերցողի համար գուցէ դա անհաւատալի երեաց բայց պաշտօնակիցներիցս ոմանք թերես զարմանան էլ խնացողութեանս վերաբէ, որ աղդքան քիչ եմ ծախսել:

Ուսուցչն մշտական, անփոփոխելի պաշտօնեակ ընդունելուց լնուկ նորա զիրքը ապահովում է, բայց ապագան մնում է դարձեալ անորոշնա էլ մարդ է, ի հարկէ չէ կարող մինչեւ մահւան օրը իւր պաշտօնը շարունակել, ուստի հարկաւոր է մտածել և նորա ապագան ապահովելու կենսաթոշակի մասին. Եթէ Ուսումնարանական մասնաժողովը ընդունէ ան միջոցը, որ մենք առաջարկում ենք, այսինքն վերովիշեալ եկամուտներից կազմի ուսումնարանական ֆոնդ, անս ժամանակ աղդ ֆոնդի գուցէ և խոշոր մասը հնարաւոր լինի չափացնել ուսուցիչներին որպէս կենսաթոշակի. Աղդ ֆոնդի ազգիւրների վերաբէ կարելի է աւելացնել նաև որոշ % ուսուցիչների ոռծիկներից. Ամեն մի ուսուցիչ ուրախութեամբ կը վճարէ աղդ %, որ իւր ապագակի ապահովութեան միակ լուսը պիտի լինի:

Ուսուցիչների ապահովութեան երկրորդ կարևոր կէտն էլ նոցա որդոց կրթութեան գործն է. Նկատւած է, որ ամեն մի ամուսնացած ուսուցիչ, մանաւանդ եթէ նորա կինը վարժուհի չէ, աշխատում է թողնել ուսուցչութիւնը, որոնկով անպիսի պաշտօն, որով ծածկել կարողանալ իւր մեծացած ծախսերը. կամ եթէ նա չի ուզում թողնել ուսուցչութիւնը դժւարանում է ամուսնանալ, աշքի առաջ ունենալով, որ իւր ապագան որդոց կրթութիւն տալու միջոցներից գուրկ է ինքը. Դա մեր ամենա-

պակասաւոր կողմն է, Ուսուցիչը, ուսման կարապետը, միջոց չունի իւր որդոց դաստիարակութեան ծախսը հոգալու, Հասկանալի է, որ ուսուցիչների որդոց կրթութեան գործը ապահովել՝ կը նշանակի նպաստել նոցա ամուսնանալուն: Այդ կարելի է ալսպիս, օրէնք դնել, որ ուսուցիչ ների որդոց Ներսիսեան դպրոց կամ Ճեմարան ընդունեն ձրի որդեգիր և եթէ հարաւոր է, աւարտելուց վետով էլ միջոց տան ուսումը շարունակելու:

Ուսուցիչների կենսաթոշակի մի ազգիւր էլ պէտք է ընդունել ուսումնարանների բիւջէտ, հարկաւոր է պարտաւորեցնել, որ ամեն մի ուսումնարան իւր բիւջէտից գէթ 1<sup>0</sup>/₀ չատկացնէ ուսուցիչների պենսիալին: Ալգախող օրինակ Ախալքալաքի ուսումնարանները իրանց տարեկան 5000 ր. բիւճէտից միթէ չեն կարող որպէս նպաստ 50 ր. (1<sup>0</sup>/₀) դորան չատկացնել ամեն տարի: Ապահոված ուսումնարաններից ի հարկէ միշտ աւելի շատ 0<sup>0</sup>/₀ կարելի է ստանալ: Գլխաւորն այն է, որ հիմքը դրսի, աղբիւրներ ժամանակի ընթացքում շատ կը գտնւին: Մեր քահանանները (Թիֆլիզի) արդէն ունին մի փոքրիկ դրամաղուց և ամեն տարի համարեա կտակներ են լինում նորա օգտին, ուսուցիչների ապահովութիւնը կարծեմ աւելի կը հետաքրքրի հասարակութեան և կողմնակի մուտքեր շատ կ'ունենաւ կտակներից, ընկերութիւններից և այլն:

Ուսուցիչների ներկան և ապագան ազգակս ըստ կարելովն ապահութելուց վետով, հասկանալի է, որ իրաւունք կ'ունենանք նոցա կողմից էլ պահանջելու բարեխղութիւն, անձնւիրութիւն և իւր պարապմունքի մասնագիտութիւն: Դժբաղդաբար ազմս մենք չունինք թէ Ներսիսեան դպրոցում և թէ Ճեմարանում ոչ մի մանկավարժական դասարան, ուր մեր ուսուցչացուները, նախքան պաշտօնի մտնելը, քիչ թէ շատ ծանօթանապին իրանց մասնագիտութիւնները:

**Այդ կարիքը չափազանց զգալի է:**

Ներսիսեան դպրոցը փակել է 7-րդ մանկավարժական դասարանը այն պատճառով, որ իր թէ մանկավարժ չկաչ. բայց իւր ահազին միջոցներով, եթէ նա կամենար, փակման օրից մինչի ալսօր տամնեակ մանկավարժներ կարող էր տալ: Ներսիսեան դպրոցը աւելի դիւրութիւնը կարող է բաց անել այդ դասարանը, որ բացառապէս պիտի նվիրվի մանկավարժութեան: Այդ մանաւանդ անհրաժեշտ է այն պատճառով, որ գեռն անմարանը հարկաւոր բնապուտացիան չ'ունի, և Ներսիսեան դպրոցը աւարտողներից հազիւ է պատահում, որ Ճեմարանում շարունակեն իրանց ուսումը: Իտ ի արկէ չի խանգարի, որ ճեմարանն էլ մանկավարժական դասընթաց ունենայ լրարաններում:

Երբ կը բացեն այդ դասարանները, կարելի է որոշել, որ միմիակն այդ դասարաններից աւարտածները ուսուցիչ ընդունեն: Ով որ ուսուցչութեամբ չպիտի պարապէն, ի հարկէ, այդ դասարանում կարող է չմնալ:

Նոյնը պէտք է ասել և վարժուհիների մասին, մենք չունենք ոչ միայն հայոց լեզւի, այլ նոյն խոկ կանոնաւոր հայերէն գլուցող վարժուհիներ։ Խիստ կարեոր է ունենալ նաև գէթ մի հատ միջնակարգ ուսման ծրագրով օրիորդաց ուսումնարան, եթէ միայն դա հնարաւոր է; որտեղից դուրս դաշին հայ վարժուհուներ։ Այս խնդիրը խորին ուշադրութեան է արժանի։

Վերև չօշափած խնդիրները մենք համարում ենք մեր ուսումնարանական գործի հիմքը, միւս երկրորդական խնդիրների վրայ կանգ չենք առնի. թեմական տեսուչների և աւագ ուսուցիչների ուսմանը, որպէս նաև հոգաբարձութեան ալտ կամ այն դիրքը պիտի դրւի այլ հիմունքի վրայ։

Մեզ թերես պատասխանեն, որ շատ մեծ ուշադրութիւն ենք դարձրել ուսուցիչների ապահովութեան վերաբ բաց առանց այդ ապահովութեան երբէք իր կոչմանը համապատասխանող ուսուցիչներ չենք ունենակ։ Հաւատացած ենք, որ այդ ապահովութիւնը գրաւական կը լինի բարձրագոյն կրթութեամբ անձերի համար էլ, որ սոքա ուսուցչութեան նւիրեն իրանց, մինչ ներկայ պալմաններում դա անիրականանալի է։ Մեր լոգւածի երկրորդ պակասաւոր կողմն էլ թերես համարվի այն, որ Ուսումնկ-Մասնաժողովին մեծ զեր ենք լատկացնուոմ, այսինքն մեծ իշխանութիւն ենք կենդրուացնում։ Նորա ձեռքում, բաց ուրիշ կերպ, առանց կենդրոնացման անհնարին են այս բարենորոգումները, Մեր ուսումնարանները այս խառնակ զրութիւնից կարող է ազատել միմիայն հաստատ կազմակերպւած մի մարմին, որպիսին պիտի լինի Ուսումնարանական Մասնաժողովը։

### ԳՐԻԳՈՐ ՎԱՆՑԵԱՆ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՆԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ: Տպագրելով մեր աշխատակից պ. Գ. Վանցեանի յօդւածը—մեր նպատակն է եղել ցոյց տալ թէ մեր հայոց եկեղեցական ծխական ուսումնարաններին վերաբերեալ մի շարք խնդիրներ կան, կանոնաւորման և լուծելու կարօտ, և որ այդ խնդիրները մեծապէս զբաղեցնում են ուսուցչական խմբերին։ Եւ իրաք այդ խնդիրների քննութիւնը անյետաձգելի է։ Մենք չենք մտնում պ. յօդւածագրի չօշափած բոլոր կէտերի և առաջարկած միջոցների քննութեան մէջ։ Թող նոքա ծառայեն իբր մասնաւոր կարծիքներ, որոնք կարող են ուշադրութեան առնւել թէ նոյն նիւթերի մասին ուրիշ զրողների կողմից և թէ հոգևոր կառավարութեան կողմից։ Բայց մենք հարկ ենք համարում մեր ընթերցողների ուշադրութիւնը դարձնել այն բանի վրայ, որ այն, ինչ մենք

մօտ մէկ ու կէս տարի առաջ յայտնել ենք մեր դպրոցների ուսումնական կառավարութեան համար ստեղծելիք կենտրոնական մի մարմնի անհրաժեշտութեան մասին,—այդ նոյն պահանջը սկսել է զգացւել նաև ուրիշների կողմից, որ և արտայացում է վերը տպած յօդւածի վերջում: Այդտեղ ևս արտայացում է նման մի կարծիք. մենք առաջարկել էինք ստեղծել մի «Ուսումնական Հոգաբարձութիւն», որին յանձնում է ուսումնական զեկավարութիւնը մեր դպրոցների (թէ ծխական և թէ թեմական), իսկ ո. Վանցեանի յօդւածում—դպրոցական այլ և այլ կարեւոր խնդիրների լուծելը կարելի է համարում, եթէ ո. Էջմիածնի «Ուսումնական մասնաժողովին» յատկացնելն աւելի ընդարձակ իրաւունքներ։ Պահանջւած իրաւունքներով «Ուսումնական մասնաժողովը» դառնում է մօտաւորապէս այն, ինչ մենք յատկացնում էինք «Ուսումնական Հոգաբարձութեան», միայն թէ մեր ծրագիրը աւելի որոշ և ամփոփ է, քան ո. Վանցեանի յօդւածում գծադրածը։

Սակայն խնդիրը այսոեղ անունների մէջ չէ։ Մէր առաջարկած «Ուսումնական Հոգաբարձութիւնը» տարբերում է ներկայ «Ուսումնական մասնաժողովից» ոչ միայն իւր իրաւունքներով, այլ և իւր կազմութեան հիմունքով։ Մենք օգուտ չենք սպասում եթէ «Ուսումնական մասնաժողովին» տրեւելու լինեն շատ լայն իրաւունքներ։ Ինչու Որովհետեւ այն կերպ ինչպէս, նա կազմում է, դապատահական անձերից բազկացած մի մորմին է։ Միթէ մի մարմին կարող է մեծ հեղինակութիւն վայելել, երբ նորա անդամները անհրաժեշտ կերպով նշանակում են ո. Էջմիածնի ձեմարանի շամթէ քիչ պատահական ուսուցիչներից և կամ ո. Էջմիածնի միաբանութիւնից։ Երբէք ոչ։ Միթէ կարելի է թոյլ տալ, որ հայոց ուսումնարանների գլխաւոր զեկավար մի մարմին ննթարկի բոլոր այն փոփոխութիւններին, ինչ փոփոխութիւնների կարող է ենթարկել մի դպրոցի ուսուցչական կազմը կամ նորանից, թէ միաբաններից ովքեր են ներկայ և ովքեր բացակայ ո. Էջմիածնից? Մինչդեռ մեր առաջարկած «Ուսումնական հոգաբարձութիւնը» կազմը մը ուսումնաժողով ընտրւած ուսումնական անձերից, հաստատութեամբ Վեհափառ կաթողիկոսի, և այդ ընտրւածները, որ և կազմում են

«Ուսումնական Հոգաբարձութիւնը», առանձին պաշտօնեաներ են և ստանում են ռոմիկներ, ունեն հեաւապէս անկախ դիրք և վարում են իրանց պատասխանատու պաշտօնը բաւականին երկար տարիներ (մեր առաջարկածի համաձայն՝ 6 տարի) և ոչ թէ կապւած են իրանց պատահական պաշտօնատեղերի հետ։ Այլպիսի մի մարմին արդարեւ կունենար հեղինակութիւն և ձեռնհասութիւն դպրոցական բոլոր խնդիրները վճռելու, բայց այլպիսի պատասխանատու մի գործ վեր է ցայժմեան հիմունքներով կազմող «Ուսումնական Մասնաժողովի» ոյժերից։

## Ա. ԱՐԱՄԽԱՆԵԱՆՑ:

## ՂԱՐԱԲԱՂԻ ԹԵՂԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ (ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔՈՒՄ)

Մենք ստացել ենք Շուշւաւ հակոց զպրանոցի տեսուչ պ. Լեռն Սարգսեանից նորա կազմած 1892—93 ուսումնական տարւակ տեղեկագիրը, որ նա կարգացել է հանդիսականների առաջ լունիսի 12-ին 1893 թ. և որ տապարեւէլ է «Արարատ» ամսադրում 1893 թ. № 10.—Այդ տեղեկագրից երեսում է հետեւալը։

Շուշւաւ գպրանոցը 1893 թւականին բոլորեւ է իւր գոլութեան 50-ամեակ տարեցքանը. ներկազումն զործող կանոնադրութիւնը տրւած է Մասթէոս կաթողիկոսից 1859-ին։

1892—93 թւականին Դպրանոցը ունիր 6 նորմալ դասատուն և 3 պատրաստական, իսկ զուգընթաց դասարաններով միասին՝ Դպրանոցը ունեցել է 11 դասարան։

Պատրաստականներում (3 դասատուն, զուգընթացով միասին 4), աշակերտների թիւը եղել է 226, իսկ հիմնական 6 դասարաններում (առաջին դասատան զուգընթաց բաժանմունքով) նոցա թիւը եղել է 120 հոգի. ընդամենը 346 հոգի (տեղեկագրում նշանակւած է 353 հոգի, բայց այդ թիւը չի համապատասխանում դասարաններով նշանակւած աշակերտների թվի ընդհանուր գումարին, այնպէս որ կամ մէկում կամ միւսում սխալ է սպլուզը). Աշակերտաներից 200 հոգի շուշեցիք էին, 149 հոգի՝ գիւղերից, 3-ը Պարսկաստանից. Դոցանից՝ արհեստաւորների զաւակներ—127, առետրականների՝ 88, երկրագործների՝ 41, հոգեորականների՝ 37, որբեր՝ 31, մանու ծառապղների՝ 20, ծառաների՝ 8 հոգի. Աշակերտներից 87 հոգի ձրիավարմներ են եղել, միացածները վճարով՝ 4, 8 կամ 12 ոռուրի ամեն մէկը։

Դպրանոցի 6 թղ (վերջնական) դասատումը աւարտել են 1893 թւն  
6 հոգի լաջողութեամբ (7 հոգուց):

Ուսուցիչների թիւն էր 14 հոգի, որոնցից 10 հոգի ունեցել են նաև  
ձրի դասեր, սովորական դասադնով՝ 600 ռուբլի արժողութեամբ:

Ուսուցիչների ռոճիկները տւել են 10,510 ռուբլու գումարը, որից  
տեսուչը սասցել է 1700 ռուբլի, ունենալով շաբաթական 12 դաս, երկու  
ուսուցիչներ՝ 1200 ռուբլի ամեն մէկը 24-ական դաստով շաբաթական,  
մնացածների ռոճիկները եղել են 950 ռուբլուց իջնելով մինչ 300 ռուբլի:

Մանկագրաժական ժողովներ եղել են 20 անգամ:

Դպրանոցի դրադարանը 1893 թւականի վերջում ունէր՝

685 անուն (871 հատոր) հայերէն գրքեր:

292 անուն (572 հատոր) ռուսերէն գրքեր:

Դոցանից 1892—93 թ. նոր էին ձեռք բերւած 139 անուն (154  
հատոր, 153 օրինակ) հայերէն և 89 անուն (107 հատ. 90 օր.) ռու-  
սերէն գրքեր, ընդամենը 228 նոր գիրք, միծ մասամբ նէր, մասամբ  
գնւած:

Տարւակ ընթացքում դպրանոցական (1—VI) դասարանների աշա-  
կերտները (121 հոգի) վերցրել են ընթերցանութեան համար գրքեր,  
1—21 անգամ հայերէն և 433 անգամ ռուսերէն, անպէս որ միջին հաշ-  
ուով ամէն մի աշակերտ կարդացել է 17 գիրք տարւակ ընթացքում:

Տեղեկագրում Դպրանոցի տեսուչը զկայում է որ պատրաստականնե-  
րի հասկացողութեան համապատասխան շատ քիչ գիրք լինելով՝ երրորդ  
պատրաստականի աշակերտներից 35 աշակերտ վերցրել են գրքեր 143  
անգամ, երկրորդ պատրաստականից 15 աշակերտ միան գիրք են վերց-  
րել 30 անգամ: Բացի աղջ, առաջին և երկրորդ պատրաստականներում  
եղել են բացատրական ընթերցումներ մովական լապտերով կամ առանց  
գորան: Մովական լապտերով կարդացւած են 4 գրւածք—«Աւրմիր Գըլ-  
խարկ», «Ինած գեղեցկունի», «Ծովերի աշխարհ»: «Ուրինգոն»:

Ֆիզիքական կարինէտը բազկացած էր 107 գրքերից, Բնապատմական  
բաժինը գրեթէ բացակացում էր. իսկ տարւակ վերջում աղդ բաժնում, չնոր-  
հիւ նույրաբերութիւնների, կային 90 բնապատմական իրեր:

Դպրոցն ունէր քառաձախն երգեցիկ խումբ 35 հոգուց բաղկացած և  
4 միաձափն խմբեր, որոնք երգում էին քաղաքի եկեղեցիներում: Խմբի  
կառավարիչն էր Ներսէսեան դպրոցը աւարտած տէնոր պ. Ս. Դի-  
մուրեան:

Հազորդելով այս տեղեկութիւնները Շուշւակ դպրանոցի 1882—93  
թ., տեղեկագրից, մենք պէտք է լաւոնենք նաև մեր ընդհանուր տպաւո-  
րութիւնը, և մեր աղդ տպաւորութիւնը վերին աստիճանի նպաստաւոր է  
այն եռանդի չորրո՞իւ, որ, ինչպէս երևում է առաջ բերած ֆակտերից:

գործ է դրւել Շուշւաչ ղպրանցում բարեկարգութիւն մտցնելու համար։ Զայտաք է մոռանալ որ մենք խօսում ենք մի ղպրանցի մասին, որ գտնում է Շուշւաչ պէս մի չետամնաց հայ հասարակութեան շրջանում։ Գաղափար կազմելու համար թէ ինչ հասարակութեան մէջ գործելու վիճակ-ւած էր խմբին, բաւական է որ տեղեկագրից առաջ բերենք այս տողերը։ «Աշակերտաների մեծ մասը չաճախում էին ղպրոցը կեղսոստ զնցոտիների մէջ կոլոլւած, և ով ինչպէս ցանկանում էր, իսկ ոտերին ունէին չմշկ-ներ (քեօշեր)»։

## ՏԱՇԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Թիֆլիսի Օսմանեան ընդհանուր հիւպատոս պ. Եսադ-բէջը հետեւեալ նամակներն է հրատարակել ոռւսաց «Ակաւկազ» լրագրում, որ և թարգմանաբար արտատպում ենք գրեթէ առանց նկատողութիւնների, իբր վկաչագիրներ:

### I

Եթէ հաւատալու լինենք Թիֆլիսի մի քանի լրագիրների խօսքին, թիւրքահամերը մի բացառիկ ազգ են՝ անթիւ առաքինութիւններով օժտած, այնպէս որ ոստիկանութիւնը, ժանդարմբրին և վերջապէս օրէնքները, որ հալածում են ոճրագործութիւնները և պահպանում են օրինական իշխանութիւնն ու հասարակաց անդորրութիւնը, միանգամայն ապարդիւն հաստատութիւն են հանդիսանում: Բոլոր կալանաւորւած, դատաստանի մատնւած կամ դատապարտւած հակերը զրաքարտութեան զոհեր են, որ հալածում են միայն լանուն հայ ազգութեան:

Ազագիսի մի հակեացակէտ ինքն ըստ ինքեան բաւական է զրոյի հաւասարեցնելու համար այն մեղադրանքները, որ աշկարակ անարդարութեամբ (?) ուղղած են տաճկական կառավարութեան դէմ: Հակերն առ հասարակ անտարակուս ազնիւ մարդիկ են, բայց այնու ամենաշնիւ նոցա մէջ, ինչպէս և մնացեալ մարդկութեան մէջ, պատահում են վատ բնազդումներով անհատներ, նոյն իսկ ոճրագործներ, ուրեմն իշխանութիւնը պիսի կատարէ իւր պարտքը պիտութեան ու հասարակութեան ապահովութեան համար միջոցներ ձեռք առնելով: Եթէ, օրինակի համար, մի հոգնորական եկեղեցական քարոզի պատրւակով չեղափիսական գաղափարներ է տարածում իր հօտի մէջ,—իրան համար աւելի վատ. հոգնոր աստիճանն արդեօք չէ պարտաւորեցնում նորան օրինակ լինել իւր ծխականների համար և լարգել իշխանութիւնը, և աւելի խիստ պատասխանատութեան պիտի չենթարկւի նաև Աւելի վատ, կը կրկնենք, և այն թուլամիտների համար, որոնք դիւրաւ ենթարկում են աշղպիսի քարոզութեան: Իսկ ինչ վերաբերում է գողութեան, կաշառակերութեան, սպանութեան և այլ բաներում բռնւած հակերին, ծիծաղելի կը լինէր նոցա արդարացնել, որին ձգտում են ըստ

երմութին նոցա պաշտպանները (?) ալդ աճբարովական ոճիրներն էլ քաղաքական նպատակով պատճառաբանելով:

Ոճիրներ կան, որ ամեն տեսակէտից ոճիր են մնում: Անկեղծ ասած՝ աղպիսի մի լրագրական արշաւանք անվակել է մամուլին և աննպատակա չարմար է: Ոգեորեւելով դատարկամիտ ցնորաբանների (?) խօլական ձղտումներով նա (մամուլը) աշխատում է վրդովիկ այն խաղաղութիւնն ու անդորրութիւնը, որ շատ դարերի ընթացքում վայելել են հակերը սուլթանների հայրական կառավարութեան ներքոյ:

M. Essad.

## II

Եւրոպական մի քանի լրագիրներ, որ չախնի հեղինակութիւն են վայելում արեւելեան խնդրում, իրանց պարտքը համարեցին հերքել այն չարանենգ մեղագրանքները, որ սիստեմաբար երեան են գալիս Թիֆլիսի մի հայ լրագրում<sup>1)</sup> ամենաան առիթով և մինչեւ անգամ առանց առիթի: Այդ ժանրակշու ապացուցների ու աներկբակելի փասոերի վրայ հիմնւած հերքումները չեն կարող զուր գալ խմբագրութեանը. Լուրջ առարկութիւններ չունենալու պատճառով՝ հայ լրագիրը իրան պաշտպաննելու համար լարմար դատեց ալդ հերքումները Ա. Պոլսի կառավարչական շրջաններից ելած ճանաչել:

Մեզ թւում է որ ալդ աւելի քան անհաւանական պնդումը կը նւազիցնէ թիւրք կառավարութեան դէմ ուղղած մեղագրանքները, որ հարկաւ առանց դրան էլ քննադատութեան չեն դիմանում (?):

Փորձելով եւրոպական մամուլի պահքարի հրաւերն ընդունելու՝ լրագիրը ստիլած եղաւ միան մի անգամ էլ կրկնելու իւր առաջ բերած անփաստ մեղագրանքները, առանց միենոն ժամանակ հերքելու արտասահմանի մասնացուց արած ֆակտերը:

Կարելի է ըստալ, որ ալս ընդհարումը լրագրի համար մի նախագուշացումն կը լինի և խմբագրութիւնն ալսունետե անզեկ նաւակ չի ձգիլ ծովը,

M. Essad

<sup>1)</sup> Մնում է մութը, թէ որ լրագիրն է ակնարկում:

ԽՎԲ.

# ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐԻՆ

## I

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՊԵՐՁ ՊՌՈՇԵԱՆՑԻՆ

Մեր վիպասան Պերձ Պոօշեանցը հանդէս է գալիս Հուսի պառաւէ նման և իմ ինկվիզիտորների վառած խարովիը բորբոքում, բայց ես գրանում սուրբ պարզութիւն չեմ տեսնում:

Պերձ Պոօշեանցը ինքն իր համար վկացում է, — և այդ համարում է իր բերած անհերքելի փաստերից մէկը, — որ նրա ձեռքով կաթողիկոսը լուսաւորել է Երևանի թեմը. Արդարեն Պոօշեանցի թեմական տեսչութեան ժամանակ Երեանի թեմում ուսումնարանները սունկի պէս էին բնում, բայց աւաղ, լինելով միան թղթի վրայ, լինելով խաչ ու կոնդակ, փիլոն ու կամիլաֆկա ստանալու համար, — սունկի պէս էլ անհետանում էին: Իրականի մէջ այդ ուսումնարանները երբէք գոյութիւն չեն ունեցել և այսօր էլ չունին: Հետաքրքիր անձինք թող հարցնեն թեմական տեսուչ Տէր-Մեսրովք քահ. Մելեանցին: Աւ հարկաւոր էլ չըր, որ գոյութիւն ունենալին, բաւական էր, որ «Արարատ» ում տպէր, թէ նոյն ամսին աչսքան ուսումնարան է բացւել Նորին Վեհափառութեան հրամանով և ի հարկէ Պոօշեանի ձեռքով: Կո էլ եմ եղել թեմական տեսուչ, ինչնու ևս էլ չեմ միջնորդել որ այս կամ այն քահանաքին կամիլաֆկա տան: Ինձ էլ տվին թղթի վրայ շատ ուսումնարաններ, բայց իրականի մէջ կէսն անհետացաւ: Բանից գուրս եկաւ, որ օգուտ էին քաղել իմ նախորդի բարեմտութիւնից գուրս եկաւ, որ օգուտ էին քաղել իմ նախորդի բարեմտութիւնից խորամանկ կզերականները, որ նոյնպէս պարզեներ ստանան:

Մեր վիպասանը կարծում է, թէ իրական կեանքն ևս մի վիպասանութիւն է, որի մէջ ինչքան ուզենաչ, կարող է փչել Արշակեան արգունաւորդների արշաւանքն արդարացնելու համար՝ ասում է. Սրբազն Աղափիրեանցը, որին լաճնւած էր ուսուցչական խումբ կազմելը, իբր թէ գրել է Վեհափառին, թէ տարեկան ՏԱ.ՍԼ ՀԱ.Զ.Ս.Ը մանէթից պակաս պահանջող ուսուցիչ չի ճարւում, որա համար էլ Կաթողիկոսը ճարահատեալ հրափիրել է Արշակեան խմբին չորս և հինգ հազարով:

Հիմա մենք պատմենք, թէ ինչպէս է եղել այդ բանը, որից կերեաւ

արդէն, թէ ինչքան հաւատ ըմծակելու է մեր Պոօշեանցի և միւս ասածներին։ Այս գործողութիւնը կատարում է այն ժամանակ Ըկարծեմ 1881 թւին), երբ Վեհափառն ու Մանկունին մի քանի անձերի վերաբերութեամբ համակարծիք չէին։ Խորէն Սահկանէին կաթուղիկոսը պաշտպանում էր, իսկ Մանկունին՝ հալածում։ Բաստամեանցին էլ Մանկունին էր պաշտպանում, իսկ Վաթուղիկոսը հալածում էր։ Այսպիսի վիճակի մէջ էին և ուրիշ շատերը, ինչպէս և սրբազն Աղափիրեանցը, որին Կաթողիկոսը լարգում էր, իսկ Մանկունին ատում։ Այս սիրու և ատելութեան մէջ Մանկունին միշտ լաղթող էր հանդիսանում և առնւազն չեղոքացնում էր Կաթողիկոսի համակրութիւնը գէտի իր ատած մարդիկը։ Հեշտ էր Մանկունու համար ի չարը գործ գնել իր մեծատրի կամքը, քանի որ ամեն թուղթ ու խօսք, թէ ներս մոած և թէ դուրս գնացած, նախապէս նրա ձեռքովն էր անցկենում։

Ահա ապագիսի մի զրութեան ժամանակ, մէկ բարի թէ չար օր, Կաթողիկոսը կանչում է սրբազն Աղափիրեանցին և պատվիրում, որ երթաւ Թիֆլիս, անտեղից էլ Ռուսաստանի մայրաքաղաքները և ճնմաբանի համար ուսուցիչներ հրատիրէ։ Այս պատւերը տալու ժամանակ, Մանկունին միջամտում է և իրան միան լատուկ լանդղնութեամբ, առանց պատկառելու գոնէ Աղափիրեանցի ներկայութիւնցից, բդաւում է։ «Ոա մարդը չարմար չէ ալդ բանին, պէտք է Բաստամեանին ուղարկել»։ Կաթողիկոսը սաստիկ բարկանում է, անարգական խօսքեր է ուղղում Բաստամեանցի հասցէին, վճռաբար ասում, թէ ևս նրան չեմ ուղարկելու, ազսրան։ Ոչ պակաս բարկանում է և Մանկունին, որ մտնում է ներսի սենեակը և դուռը ետեից շրիկացնում իր մեծի երևին։

Աղափիրեանցը Մանկունու սպառնալիքին նշանակութիւն չի տալիս և ուղերուում է իր մեծատրի հրամանը կատարելու։ Բաց գեռ Պետերբուրդ չհասած, անտեղ լուր է առնում, որ ճնմաբանի խումբն արդէն կազմւած է... Նա ուղի է ընկնում թէ չէ, Մանկունին կանչել է տալիս Արշակ Նահապետեանին, կարգէ դուրս ընկունելութիւն և պատիւ ցուց տալիս, մեծամեծ խոստումներ անում, առատ ոռծիկներ առաջարկում, և նրան լանձնում խմբի կազմելը։ Այս բանն ահա Մանկունին արաւ, որ կամքի և ուժի տակ ճգէ նաև Աղափիրեանցին, որ աղնւութիւն էր ունեցել մեծին թողած փոքրին շլմելու։ Խեղճ մարդը ոչ թէ տասը հաղարի, ազ և ոչ տասը կոպէկի սպահանջ է լայտնել։ Այսպիսի մի զրպարտութիւն բարձել սրբազն Աղափիրեանցի գրաւ, ահա թէ ինչն է սրբապղծութիւն։ Փառք Աստուծոց, սրբազնը ողջ և առողջ է, շատերին է պատմել այս անցքը, ուրիշ կենդանի վկաներ ել շատ կան, որոնք կարող են հաստատել իմ ասածի ծշմարտութիւնը։

## II

## ՅՈՎՆԱՆԵԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՐԻԹՈՎ

Յարգու խմբագիր,

Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը մի հերտսութիւն է գործել, և այդ ան է, որ նա ներկայ տունւար ամսին դպրոցին պատկանիեալ քար- ւանսարան կապալով տեղի:

Արդ ինչն էր ստիպում Յովնանեան դպրոցի հոգաբարձութեան քար- ւանսարան կապալով տալու: Ի հարկէ միան ան, որ դպրոցը աքսունեա- աւելի մուտք ստանայ քան մինչ այժմ ստացել է:

Միանգաման հասկանալի է այդ ցանկութիւնը: Սական ան միջոցը, որ ընտրեց դպրոցի հոգաբարձութիւնը այդ նպատակին համեմելու հա- մար, շատ տղեղ և պախարակելի է: Յւ ահա թէ ինչու մինչ 1894-ը Յովնանեան դպրոցի քարւանսարան շահագործում էր տնտեսական կեր- պով, հոգաբարձութեան կառավարութեամբ: Քարւանսարացի այս ձեր կա- ռավարութիւնը դպրոցին բաւականին նպատառը է եղել: Ազսպէս 1888-ին քարւանսարան տուել է մուտք մօտ 13,000 ռուբլի, 1889, 90 և 91-ին մուտքը ամելանում է և հասնում էր այս թւերին 18,000 ռ., 1892—93-ին եկամուտը զարձեալ աւելանում է մինչ 19,000 ռ., վերջապէս 1894 թ. քարւանսարան խոստանում էր տալ 20,000 ռուբլի: Այս Փակտերը ապա- ցուցում են, որ տնտեսական ձեռվ էլ կարելի էր հեշտութեամբ՝ ազգացին շինութեան եկամուտը բարձրացնել, հայած միան հանգամանքներին: Յով- նանեան դպրոցի քարւանսարում բնակող վաճառականները ընտելացել էին բարձրացող վարձերին առանց բողոքելու և ինքը շինութիւնն էլ զար- ձել էր վաճառական զասակարգի մէջ համակրելի և վայելում էր մէջ չափա- նի ժողովրդականութիւն: Այժմ հոգաբարձութեան կարգադրութեամբ նա- տրւած է 25,000 ռուբլու կապալով: Իրը թէ ինչ պէտք կաէ գլուխ ցաւացնել, քանի որ միջոց է զանւում ծանրութիւնից ազատելու, թէ է գորանով ազգացին հիմնարկութեան լարգը և վարկը բաղդախնդիր կասլալառուներին լանձ- նելու լինի: Նթէ հոգաբարձութիւնը սխալներ է արել, սա ամենամեծ սխալ- ներիցն է, որ աններելի է: Յովնանեան քարւանսարում բնակող վաճառա- կանների մեծ մասը վճռել է տեղափոխել և ինչպէս չտեղափոխելի, քանի որ կապալառուն ան վաճառականից, որ տալիս է եղել 1800 ռ. վարձ տարեկան, այժմ պահանջում է 3000 ռուբլի և այն, աւելացնելով վարձը 50% միւսին 100%<sup>1)</sup>: Յւ այդ կատարում է մի ազնպիսի ժամանակ,

1) Յւ իրօք, մի կապալառու, վճարելով հոգաբարձութեանը 25,000 ռուբլի, կաշխատի քարւանսարակալից ստանալ 28—30,000 ռուբլի, որպէս զի իրան միալ 3—5000 ռուբլի: Խոկ մի անգամից մի ազդպիսի թուիչք

երբ Յիֆլիզի առևտրական գործերի դրութիւնը շատ անմիտար է, ընկած է: Մենք պնդում ենք, որ կապալատութիւնը մի անհամակրելի և լաճախ վասակար հաստատութիւն է: Սա աւելի ևս վասակար և վատ է երեսում, երբոր վարչները ենթարկում են մի ազգային հիմնարկութիւն կապալատուփի ճանկերին և անդիտութեանը:

Ազապէս ուրեմն ներկայ հոգաբարձութիւնը զրկեց դպրոցի շինութիւնը իր վայելած վարկից և չարդից: Նա զրկեց նմանապէս ապագայ հոգաբարձութեանը քարւասարին վերաբերեալ իրաւունքներից, թողնելով վերջինին միայն ուսումնարանի գործը: Ամենայն տեսակէտից մի պախարակելի վարմունք:

Դ Ի Տ Ո Պ.

անելը, 19,000-ը հասցնելով 28—30,000 ռուբլու—մեծ անխոհեմութիւն է: Եւ ինչն էր ստիպում հոգաբարձութեանը մի ազգպիսի ո ի սկ անելու, քանի որ քարւանսարայի սովորական եկամուտը մօտ  $2 \frac{1}{2}$ , անգամ, իսկ զուտ արդիւնքը 2 անգամ աւելի է քան դպրոցի ծախքը! Մենք կարծում ենք, ուրեմն, որ նորընտիր հոգաբարձութեան պարտականութիւնը պիտի լինի «Դիմաողի» մատնանիշ արած հանգամանքները լաւ քննել և հարկաւոր դէպքում՝ աշխատել նախկին հոգաբարձութեան ալդ սխալը ուղղել, եթէ միայն հնարաւոր է:

ԽՄԲ.

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՆՈՐՀԱԿԱԾՈՒԹԻՒՆ է չափոնւում «Մուրճ»ի խմբագրութեան կողմից բոլոր նոցա, որոնք մօտ թէ հետաւոր տեղերից չնորհաւորել են մեզ ամսագրիս Եւրոպդ տարեշրջանը մտնելու առթիւ:

«ՄՈՒՐՃ»-ի ներկայ № 1 ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՆՔ միայն բաժանորդ գրւածներին, աւելորդ օրինակներ ուղարկում ենք միայն մեր գործակալներին, Յոզս ունինք, որ մինչ մի ամիս, այսինքն մինչ № 2 ի լուս տեսնելը, բոլոր ցանկացողները արդէն բաժանորդ կը լինեն գրւած:

«ՄՈՒՐՃ» 1894 թ. Նիմի՛ՌՈՒՄ ԵՆ՝ պ. Ալեքսանդր Մելիք-Ազարեանց—Ռէշտի հայոց ընթերցարանին, պ. Յովհ. և Աբր. Բունիածնաներ—Զաքար թագավորի հայոց դպրոցին, պ. Մինաս Յակոբեան Աէֆէրեան—Եւալաւանց կարողութիւնը, պ. Ալեքսանդր Լալակեանց—Ղուրականց կարողութիւնը, պ. Ալեքսանդր Սերեբրակեան—Սղնակի հայոց դպրոցի գրադրանին:

«ՄՈՒՐՃ»-ի Վիֆական ՄԱՍԻ. Մեզ շատ տեղերից նամակներ են գրում խորհուրդ տալու համար, որ մեծացնենք ամսագրի վիպական բաժինը: Մենք շատ լաւ հասկանում ենք այդ խորհրդի օգտակարութիւնը. բայց դորա համար «Մուրճ»-ին ներելի միակ միջոցը — ամսագրի թերթերի թիւը աւելացնելն է, որպէս զիմեան բաժինները դորանով չվեասւեն: Արդ, ներկայ չափով հրատարակմելով «Մուրճ»-ը միշտ ունեցել է մեծ վեասներ, և այն՝ ամեն տարի, Ուրեմն ինչպէս կարող ենք վստահանալ այժմ մի քանի թերթ ևս աւելացնել, առանց երաշխաւորութիւն ունենալու թէ զորանով բաժանորդների թիւը համապատասխան չափով կ'աւելանաւ նոյն իսկ այս տարի: Մենք խոմ չենք կարող փորձ փորձելու համար, գեփիցիտները աւելի ևս խոշորացնել և ամսագիրը վտանգի ենթարկել: Երբ բաժանորդագրութիւնը կը ների—մենք կը մեծացնենք «Մուրճ»-ի թերթերի թիւը չօգուտ վիպական բաժնի: Ազգաեղ միմիան

Նիւթականի խողիր է—ուրիշ ոչինչ, Եւ վերջապէս այս հինգ տարիներում «Մուրճ»-ը տևել է վիպական և առհասարակ գեղարվեստական ու պատմողական զրւածներ թերես տևելի քան Թիֆլիսի բոլոր թերթերը միասին առած, և թէ հաշվի առնելու լինենք զրական արժէք ներկայացնողները։ Եւ որպէս զի հասարակութիւնը մեր դէմ անարդար չլինի արդ նկատմամբ, կարող ենք չափանել, որ եթէ մենք մեր աժժմեան տւածի վրայ աւելացնենք ամբողջ տարում հէնց մի հատ վէպ, զիցուք «Արէն Դիմաքսեան»-ի մեծութեամբ, ազդ կը նստի մեզ, հեղինակին արտատպած զրքով վարձատրելու պարմանով՝ շուրջ 650 ռ. աւելի։

«ՄՈՒՐՃ» 1893 թ. ուղարկւում էր նւէր խմբագրութեան կողմից, բացի անցեալ գեկանմբերի №-ում վիշտած տեղերից, նաև՝ Թիֆլիս՝ Եժանագին դրազարանին, Թէ հրան՝ Բաֆֆի ընկերութեան ընթերցարանին, Նորբաւազէկ՝ հալոց դպր. ընթերցարանին, Բալախանական էժանագին ճաշարաններին։ Խոկ Շոշչւագ Քար, Ծնկ, Ֆիովի զրազարանին եղբ. Ժամհարեաններից նույն հրատարակւած լինելը թիւրիմացութեան արդիւնք էր։ 1893 թ. Նիւրատուներից վիշելու է նաև պ. Տիրան Գասպարեան—Զմիւռնիափի հալոց ընթերցարանին։

ՇՈՎՐԵԱՆ, «Արձագանք» ում, արդէն լետ ու չետ է կանդնում իւր առածներից։ այն ինչ երէկ նա կրօնի դէմ քարոզ էր հոչակում, ալժմի խոնարհելով մեր նկատողութեան առաջ (տես «Մուրճ» 1893 թ. № 12)՝ համարում է ոչ ազ ինչ եթէ ոչ «լեզվի սխալ դարձւածներ» (տես «Արձագանք»-ի 1894 թ. № 7)։ Շովրեանի արդքան կարծ միջոցում արած գիտական լառաջդիմութիւնը անորանալի է, թէն չենք կարծում թէ նա դորանով փոխած լինի։ Կան մարդիկ, որոնք անուղղելի են, ոչ թէ որովհետեւ վաս են, ազ որովհետեւ մարդուս խելապատակը բարտնի սահմաններ ունի։

Դ. Ա. Ա. Ա. ՑԻՇԱՏԱԿԱՐՅԱՆԸ, «Դիմ կեանքի գլխաւոր դէպէկերը» խորագրով զրիլ է նա վերջին ժամանակներս, «Մուրճ»-ում տպակւով աւարտում է ներկայ համարում։ Ազդ գրածքի առիթով մենք հարի ենք համարում մի քանի խօսք առել։ Մեր ներկալ սերունդը առհասարակ չափազանց քիչ տեղեկութիւններ ունի իւր մանաւանդ անցեալ դործիչների մասին, որուց ճանաչելը սական չատ նկատումներով օգտակար է և մինչեւ անդամ անհրաժեշտ։ Պր. Աշակեանցը դեռ ևս առուցութիւնը պահպանած այն մեր պատերազմիկ (militant) դործիչներից մէկն է, որոնք իրանց դործունէութիւնը սկսել են 60-ական

թւականներից և շփումն են ունեցել 60-ականից սկսած մինչև ներկայիս գրական, դպրոցական, մամուլի և ընդհանուր հասարակական շրջանների և նոցանում գործած ոչերի հետ, բայց ոչ միայն որպէս պարզ զիտող, այլ աւելի որպէս մէկը ներգործական դեր կատարողներից, մէկում աւելի, միւսում պակաս. Ազգպիսի մի անձի գործունէութեան պատմութիւնը շահաւետ պիտի լինի ընթերցողների համար մանաւանդ այն պատճառով, որ ազգ ամբողջ պատմւածքում մի կեանք է ներկալայցնուում ժամանակակից չառաջադիմական ձգտումների, գաղափարական կրիւների, բնորոշ թէ անձի համար և թէ ժամանակի համար. Սակաւաթիւ են, թերևս մինչև անգամ միակն է պ. Աղավեանը իւր սերնդի գործիչների մէջ, որ կարողացել է երիտիոսարդական իդէալների ոգը և չառաջադիմական ձգտումը պահպանել մինչ իւր ծերութեան հասակը, թող թէ լաւն ու լաւագոնը որոնիւլու մէջ սիալներ գործած լինի, թող թէ իւր հակառակորդներին՝ դատելու մէջ միակողմանիութիւն ցուց տաց և կամ ինքնազատութեան մէջ՝ կարծիքի չսփազանցութիւն, գոնէ արտաքումտ. Բայց լաւի որոնումը նախապայառուներով չկաշկանդւած մոքի տէր մի մարդու կողմից, որը շատ կողմերով կապւած է մեր կեանքի չառաջադիմական հոսանքների հետ և որը աչ գ հոսանքների գրական արդիւնքների մէջ իւր մասն ունի, — ան աչդ միսիթարական է, և զորա պատմութիւնը ուսանելի: Եւ աչդ ասելով մենք միայն ի նկատի ունենք գործիչն և ոչ հեքիաթագրին և վիստուամնան, որի մասին խօսքը այս տեղին չէ պատկանում:

Մենք աշխատեցինք ամփոփել մեր տպաւորութիւնը գլրածքից, որի համար և մենք տեղ ենք տեև նորան «Մուրճ»ի էջերում: Նթէ պատահի մեղ նաև աչդ զրւածքում պատմւած որ և է անցքերը համար նուն այս ամսագրում մի այլ լուսաբանութեան տեղ տալ — մենք ալու ամենայնիւ երբէք չենք փոշմանած լինիւ այդ վիշտակարանի տպագրութեան համար:

**Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴԻԱՆԻԿԻ ԱՌԵՎԱԿԻ, որ հրատարակում ենք ներկայ համարում, արտաստելով պաշտօնական «Արարատ» ամսագրից, ուղարկած էր բոլոր թեմերը՝ եկեղեցիներում կարդալու համար. Թիֆլիսում կարդացւեց Զրօրհնէքի օրը, ո. պատարագի ժամանակ, Վանքի մակր եկեղեցում, լուսւարի 6-ին: Վեհափառի աչդ անդրանիկ կոնդակը արտատպւեց Թիֆլիսի բոլոր հաչ օրագիրներում: Կոնդակը ընդհանութեան վրաէ թողել է մեծ տպաւորութիւն:**

ՎԵՀԱՀԱՓԱՌԻ ԿՈԼԹՈՂԻ ԽՈՍՔԻ, մեր ստացած տեղեկութիւնների համաձան, մտադիր է փետրւարի վերջինքը մի ուղևորութիւն կառարել թեմերի մէջ, հանդիպելով Թիֆլիս, Բագու և ապա ուղևորելով Ռուսաստան:

**ՀԱՅՈՑ** ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԵՖՈՐՄԻ ԽՆԴԻԲԸ, «ր արծարւած էր «Մուրճ», ում 1892 թ. №№ 10 և 11, և որի մասին աեղական մնացած հայ մամուլը ստմենաչն լամառութեամբ լոեց, այժմ, ինչպէս երևում է, հերթակոն խնդիր զառնալու ճանապարհի վրաէ է: Մեր արծարծած խնդրի հուծը կալանուռ էր նորանում, որ հալոց (թէ թեմական և թէ ծխական) զպրոցների ուսումնական կառավարութիւնը չանձնւի մի կենդրուական մարմին: Ապա լայտնէլ էինք մեր կարծիքը, ինչպէս պէտք է կազմակերպւած լինի այդ մարմինը: Ընթերցող ները կը կարգան «Մուրճի» այս համարում մեր աշխատակից պէ. Գ. Վանցեանի անցեալ տարւազ սեպտեմբերին ստացւած մի լողածը, որի մի մասը վերաբերում է նոյն խնդրին, և որին կցիլ ենք մեր մի ընդարձակ նկատողութիւնը: Աչքմ «Մշակ» լրագրի № 14 ում տպւած ենք տեսնում մ: այլ լողած, «կազմակերպւած կոնսորով մեր զպրոցներում» խորապեսի, ուր լողածածագիր Պ. Մ., թէն կիսակատար, բայց և աչնպէս նոյնպէս առաջարկում է մի կենտրոնական մարմին ստեղծել աչմենան Ուսումնական Մասնաժողովի ունեցածից աւելի լայն իրաւունք ներով, ոլոնք թուզ կը տան այդ մարմին «կարեոր միջոցներ ձեռք առնելու (հալոց) ուսումնարանների ընդհանուր վիճակը բարեփոխելու նպատակով»: Կիսակատար անւանեցինք Պ. Մ.-ի լայտնած միտքը այն պատճառով, որ այդ կենտրոնական մարմին նա լատկացնում է պաշտօնական կոնսորլի, վերահսկութեան դեր, մինչդեռ մեր ասածով՝ մի աճնպիսի մարմին ոչ միան վերահսկող պէտք է լինի այլ և զեկալարող: Առկ վերահսկութիւնը գործին չի ծառալիլ, և թէ մի որ և է մարմինի իրաւունք չտրվի նաև բարեփոխելու, ինչպէս և լողածագիրը ցանկանում էլ է: իսկ եթէ այդ իրաւունքը նրան կը տրի, առա նա կը լինի ոչ միան վերահսկող, այլ և զեկավարող մարմին, ինչպէս այդ մենք ենք պահանջում:

Կարեոր է նաև լողածագրի այս ցանկութիւնը, որ այդ մարմինի անդամները լինեն «արժանաւորագոյն անձնաւորութիւններ»: Դոքա դատարկ խօսքեր են և կը մնան դատարկ մինչև որ մի ձեւ չի ցաց արւիլ, որով կարելին չափ մեծ երաշխատութիւն կը ներկաւացնի թէ անդամ ընտրածները կը լի-

նեն «արժանաւորագոյն» մարդիկը. և ոկ մենք առաջարկել ենք  
մի ձեւ, որ առնւազն քննութեան տրժանի է:

Մեր զգւածում մենք արծարծել էինք, և շատ բնակա-  
նաբար, կենդրանական մարմնի անդամներին աղաճով ռոճիկ-  
ներ տալու խնդիրը. Նոյնը ավեմ ասում է Պ. Մ., քանի որ  
նա ևս ուզում է որ այդ անդամները լինեն աղատ որ և է  
աչ պարագամունքներից. Խոկ այդ պարզ ի պարզու  
նշանակում է նոյն ապահով ռոճիկ նշանակել:

**ՅՈՒՆԻԱՅ** ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
վերջապես կապացան ներկազ լունւարի Յ. ին. ԸՆՏՐԵԼԵցին՝ պ. պ.  
բ. Խ. Բ. Համբարեան. Զ. Խշանհան. Ս. Խպաշեան. Խ. Թա-  
ղէոսհան. Գ. Մելիք. Շահնազարեան և Մին. Խունունց. Յիշեալ  
դպրանոցը վերջին տարիներս կանոնաւոր հոգաբարձական կա-  
ռավարութիւնից զուրկ էր:

**ԽԱՅԱՐԱՄԻՑՆԵՐԻ** ՔԱՐՈՉՆԵՐԻՑ ՆՄՈՒՆՆԵՐԻ. Թիֆլիսի Յովեաննեան  
դպրոցի հոգաբարձութեան եռամեաչ ժամանակամիջոցը լրա-  
ցած լինելով, տեղական հոգեսոր կառավարութիւնը, համաձան  
Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակի, որ նոյն է թէ համաձան  
այդ դպրոցի կանոնադրութեան, շտապել է իւր պարտականու-  
թիւնը կատարել, հրաւիրելով կօնդակով որոշած եկեղեցիների  
ժողովուրողը՝ հոգաբարձական նոր ընտրութիւնների համար  
որոշած թւով պատգամաւորներ ընտրել:

Անպէս չէ, հոգեսոր կառավարութիւնը ուզեցել է իւր  
պարտքը կատարել ինչպէս և պէտք է, ինչպէս այդ իրաւունք  
ունի պահանջելու ամեն ոք:

Ազգպէս չէ խորհուրդ տալիս չարգել կաթողիկոսական  
կոնդակը, շաբաթը 4—5 անդամ Հայաստանեաց եկեղեցու կար-  
գերի անունով երգւող, «Նոր. Դար» օրագիրը. Այդ թերթը (տես  
№ 8, լունւարի 19) զարմանում էլ է որ ճիշտ իւր ժամանա-  
կին ընտրութիւններ են ուզում կատարել. «ինչ հարկ կաչ  
ասում է նա, և այս անդամ շտապել ընտրութիւններ կա-  
տարելու...», «Եթէ աչսքան ժաման ակ վիշեալ դպրոցն  
առանց նոր ընտրութեան կառավարել է, կարող է մի առ-  
ժամանակ էլ նոյն կարգով կառավարել, աշխարհք չի  
քանդիլու...»:

Իւ գալիս է խրառը. «Մեր եկեղեցիների բարեկրօն գոր-  
ծակալները, եթէ գործելու եռանգ ունին, պարագա-  
չը մնալու համար լաւ կանին, որ պարտազանց երեց-  
փոխներից հաշիւ և եկեղեցում ատեանները տարիներով իրանց  
մօտ պահող հաշւատեներից մատեանները պահանջէինու»:

Դա քարողն է. կամենում էք գործադրութիւնը այդ վարդապետութեան—ինտ նաևեցէք Թիֆլիսի Ներաշնեան դըպ-րահոցի հոգաբարձութեան վրայ և կամ աւելի լաւ՝ դարձրէք ձեր աշքը Շուշւայ վրայ ուր թեմական առաջնորդի պրակտի-կան թեմական դպրանոցի հոգաբարձական ընտրութիւնների նկատմամբ ոչնչով չի տարբերել ալ. Սպանդարեանի այդ թէօ-րիաներից.

Եւ միշտ մի որ և է կեղծ պատճառ կը գտնեն իրանց նպատակները քօղարկելու համար. Յովլանեան դպրանոցի նկատմամբ չշտափելու պատճառը իրը թէ այն պիտի լինի ըստ «Նոր. Թարի», որ թեմական առաջնորդը զեռ հաստատւած չէ իւր պաշտօնում. կարծես բարական չէ որ Անհ. Կաթողիկոսից նշանակւած թեմը կառավարող եպիսկոպոս ունենք... Ազդ թէօրիալով երբ թեմական առաջնորդն էլ հաստատւած կը լի-նի, պէտք կը լինի ապասել որ թեմական առաջնորդը ան-պատճառ մի արքեպիսկոպոս լինի, որովհետեւ Գէորգ Դ. կոն-դակուժ թեմական առաջնորդ կամ թեմի կառավարիչ խօսքե-րի տեղ գործ է ածւած «Արքականոր Արքեպիսկոպոս» խօսքը...»

Ազդ բոլոր կեղծիքները ոչ այլ ինչ են եթէ, ոչ վախ ժո-դովրդի կարծիքից, այն մարմինի կարծոքից, որը մեծ հիմքն է մեր ամբողջ թէ դպրոցական և թէ եկեղեցական-վարչական կաղմակերպութեան. Դոքա համոզւած են որ ժողովուրդը իրանց թեկնածուներին չի ընտրելու, և ահա հնարում են ամեն տե-սակ պատճառներ գործերը չետաձգելու...

**ԴԻԱԿԱՆ** ՊԱՏԳԱՄԱԽՈՒԹԻՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ Մարիամեան-Յովլա-նեան օրիորդաց դպրոցի համար Յիշեալ դպրոցի Լանոնադրու թեան համամատ՝ հոգաբարձուներ ընտրւամ են երեք տարով. մատնակյում են ընտրութիւններին Վանքի մակր-եկեղեցու, Մողնիի ո. Գէորգ և Բեթղեհեմի ո. Աստածածին եկեղեցինե-րում ծխականներից ընտրւած պատգամաւորները, ամեն եկե-ղեցուց չորս-չորս հոգի. Ծխական պատղամատուրների ընտրու-թիւնները նշանակւած էին ներկայ լուսւարի 23. ին. Բայց այդ օրը ընտրութիւնները տեղի ունեցան միաւն Վանքում և Բեթ-ղեհեմում, իսկ Մողնիում ժողովը կալացաւ, բայց ընտրու-թիւնը լիտաճգւեց լաջորդ կիրակի, 30-ին լուսւ, այն պատ-ճառով, որ այդ եկեղեցու քահանաներից ոմանք կոնսիստո-րիալից չին տացել ծխականներին ուղարկվելիք հրաւիրա-գրերը. Կնչպէս անցեալ ընտրութիւններում, այնպէս և ներ-կայ գէպքում ընտրութիւնները դրւած էին կուսակցական հողի

վրաչ, և դէմ առ դէմ մրցում էին երկու ցուցակներ, բացառութեամբ բեթղենեմի, ուր լառաջդիմակամները իրանց ցուցակը չոնչին: Վաճքի մալը նկեղեցում լառաջդիմակամների շորս թեկնածուներից անցան երկուսը՝ պ. պ. Յովհաննէս Խատիսեան և Խահակ Բուզգանեան: Առաջինը վաստակել էր նաև հակառակ կուսակցութեան ձայներից շատերը, ստանալով ընդ ամենը 108 ձախ: Ըստրւեցին՝ պ.պ. Յ. Խատիսեան, Գաբր. Սունդուկեանց, Ա. Բաբանեան և Խահակ Բուզգանեան (կերպինս 57 ձախով):

Բեթղենեմի ո. Ասուածածնալ եկեղեցում ընտրւեցին՝ պ. պ. Կոստ. Ալիխաննեան, բժշկ. Կուկուչյանեան, Յ. Խուզադեան և Նիկ. Խոսրովեան: Դոցանից պ. Կ. Ալիխաննեանը լարդ ունի նաև լառաջդիմակամների մէջ: Ընտրութեան մասնակցում էին ըսդ ամենը 28 հոգի, կանոնադրութիւնից պահանջւած թւից շատ պակաս Անդէս որ ալլուեղ պէտք է նոր ընտրութիւններ նշանակեմն:

Բարյ ընտրովական պաէքարի կենարոնակէտը կազմնցին Մողնու ընտրութիւնները, որոնք կատարւեցին ազտուեղ զեռ ևս չաեմուած բազմութեան մասնակցութեամբ, միանդաման արգարացնելով և նոյն իսկ շատ գերազանցելով «Արձագանք» թի 10-ում տածած չուսը թէ «Մողնու ծխականներն ամշուշտ կը փութան իրենց պարագը կատարելու և իստ չեն մնալ միւս եկեղեցիների ծխականներից, որոնք անքան արժանաւորութեամբ կատարեցին իրենց պարագը»: Եւ իրօք, մասնակցեցին գունու. 30-ի ընտրութիւններին 183 հոգի, կրկնապատիկ աւելի միծ թւով, քան 1892 թ. կաթողիկոսական. ծխական ընտրութիւններին, և զրեթէ կիսով աւելի քան 1893 թ. Ներսեսեան դպրանոցի հոդաբարձական-ծխական ընտրութիւններին 1892 ին առաջին ընտրւածը վաստակել էր մօտ 100 հոգուց 49 ձախ, 1893 ին 142 հոգուց՝ 80 ձախ, իսկ ավել 183 հոգուց՝ 106 ձախ:

Մողնում լառաջդիմակամների ցուցակը անցաւ ամբողջապէս՝ 106, 104, և երկուսը 103 հաւասար ձանձերով: Ընտրւեցին՝ պ. պ. Աւետիք Արասխաննեանց, Յակոբ Թաղէսուեան, Ստեփան Լիսիցեան և բժշկ. Յովհաննէս Լուսու. Մելիքեան:

Հակառակորդների տպած ցուցակը կաղմւած էր ալսպէս՝ պ. պ. Աբգար Յովհաննիսուեան (ստացաւ 72 ձախ), իշխ. Կոստ. Բեհբուղեան (ստացաւ 70 ձախ), բժշկ. Միք. Շահապարոննեան (77 ձախ), Յովհաննէս Ծովիաննեան (67 ձախ):

ԲԱՆԿ ԵՐԵՒԱՆՈՒՄ. Թիֆլիսի Առևտրական բանկը վճռել է բաժանմունք  
բաց անել Երեանում. Ով ճանաչում է Երեանի նահանգները,  
նա մեծապէս կ'ողջունի Թիֆլիսի բանկի այդ վճիռը. Ազդ  
բանկը ունի արգէն բաժանմունքներ Բաքու և Բաթում:

**ԹԻՖԼԻՍԻ** ՔԱՂԱՔԱԳՈՒԽԻԽ. Մեր ընթերցողներին արդէն չափնի է, որ  
այ. Պաւոս (Պօղոս) Խղմալեան Թիֆլիսի քաղաքավին խորհր-  
դարանի կողմից ընտրւած էր Թիֆլիսի քաղաքավլուխ. Մոռւմ  
էր որ կառավարութիւնը այդ ընտրութիւնը հաստատէր. Ազդմ  
նա արդէն հաստատւած է:

Պր. Խղմալեանը, երբ քաղաքավլուխ ընտրեց, արտա-  
սանեց մի կարծ և զգացւած ճառ. Այդ ճառը իւր ժամանակին  
մենք առաջ չըներեցինք այս էջերում. այժմ կարող ենք ասել,  
որ նորա ամբողջ իմաստը բովանդակւած է այն մի քանի տո-  
ղերում, որ մենք նորել էինք այ. Խղմալեանին գեռ ևս 1891  
թւականին, երբ նա քաղաքավլութեան կանգիպատ էր. Ահա  
մեր այն ժամանակ այդ առիթով գրած տողերը.

«Պր. Խղմալեանի ընտրութիւնը յանկավի էր մի քանի  
տեսակիտներից. Նախ որ արժանի էր. իբր քաղաքի գործերին  
հմուտ և նորուած մարդ. Երկրորդ՝ նորա ընտրութիւնը կ'ու-  
նենար մի բարոյական խրախուսիչ աղղեցութիւն. գորանով  
ցցց կը տրէր որ հասարակութիւնը գիտէ պատիւների ար-  
ժանացնել նաև մշակ մարդուն. խև պ. Խղմալեանը մշակ էր,  
բառիս աղնիւ մտքով: Եւ մի աղղպիսի օրինակ մանաւանդ  
յանկավի էր մեր երկրում և մի քաղաքում, ուր ժողովուրդը  
շատ է սովոր ամեն պատիւ կապել մարդկանց անձնական կա-  
րողութեան և տիտղոսների հետո»:

Այդ տողերը մենք դրեցինք 1891 թւականի «Մուրձ»  
№ 4, երբ պ. Խղմալեանը պարտութիւն կրեց, ստանալով 30  
ձախ ընդդէմ 32-ի: Այդ խօսքերը այժմ նա ինքը արտասա-  
նեց՝ ընտրւելով քաղաքավլուխ 62 ձախով ընդդէմ 8-ի: և նորա  
արտասանած այդ խօսքերը ամենալաւ տպաւրութիւն գոր-  
ծեցին ամենքի վրայ, որովհետեւ ամենքը զգացին որ այդ խօս-  
քերը լոկ քրաղաքներ չեին:

**ԲԱՐԻ** ՔԱՂԱՔԱԳՈՒԽԻԽ. ԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ. ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ.  
Քաղաքավին ինքնազմարութեան տարեգրութեան մէջ բաւակա-  
նին աչքի ընկնող մի զէպք տեղի ունեցաւ բազւում: Եր-  
կու թեկնածուներից՝ պ. Խ. Անտոնեան և Կ. Խրեցկիւ—ա-  
ռաջինը ձախների աւելի մեծ առաւելութեամբ ընտրւած էր  
քաղաքավլուխ. Խորհրդարանի նիստում առ Յ-ն լուսւարի

սական մի աղմկալի գէպք պատահեց, որը մեծ շփոթութեան տեղիք տևեց և առթեց ալ. Անստոնեանի հրաժարւիլը իր պաշտօնից: Ավտ նիստում ձախնաւոր պ Ունանեան բերանացի կերպով վիրաւորական ընդհարումն ունեցաւ պ. Իրեցկից հետ, որից լետով վերջինս հրաժարական տևեց ձախնաւոր վիճակուց: Խորհրդարանի վճռով սական ալ. Խրեցկին քաղաքագլուխ նամակով հրաւիրեց և ինդրուեց իւր հրաժարականը յստ առնելու, բայց աղջ քայլը բաջողութիւն չունեցաւ. Գորա հետեանքը եղաւ պ. Անստոնեանի հրաժարականը քաղաքագլուխ պաշտօնից: Պր. Ն. Խրեցկին, որ երկրորդ թեկնածու էր ընտրւած քաղաքագլուխութեան համար, ընդունեց աչ և քաղաքագլուխութեան ընտրւած թեկնածու ճանաչել: Ավտով մնաց խորհրդարանին նոր քաղաքագլուխ ընտրութիւն կատարելը, որ և անզի ունեցաւ ներկայ լուսաւարի 26-ին: Զայների մեծ առաւելութեամբ ընտրեց պ. Կ. Խրեցկին, որին Խորհրդարանը պատւաւոր կերպով ինդրուել էր իւր հրաժարականը յստ վերցնել, որին և նա հոմանանել էր: Այս բոլոր միջնադէպերի մէջ ամենացւալին արն է, որ ոռուներից ոմանք աշխատեցին հայ Ունանեանի և ոռու Խրեցկիի մէջ տեղի ունեցած ընդհարումին ազգայնական բնաւորութիւն տալ և աղջ վերաբերել նաև ընտրւած քաղաքագլուխ պ. Անտոնեանին, որը հենց չորրորդ դորան հրաժարւեց իւր բարձր պաշտօնից: Հայ ճանաւորները իրանց ձախների անազին մեծամանութիւնը Անտոնեանի հրաժարւուց իւստով պ. Խրեցկին տալով՝ վազուն կերպով ապացուցեցին որ պատրաստ են արժանաւոր մարդուն ձախն տալ, լինի նա հայ թէ ոռու:

Պ. Ա. Խրեցկին ստացաւ 32 ձախն ընդդէմ 24-ին Միւս քւեարկողներից ստացան: Վ. Բ. Արրամովիչ 9 ձախն, Գ. Զակելի 19 ձախն:

Երկաթուղի, Կովկասսւան Լեռնաց Աթի միջով: Շուտով մինիստրների կոմիտետում քննւելու է վիշտած երկաթուղու խնդիրը: Պ. Ա. Զակելի Ա. Ա. Զ. — Պ. Ս. Ռ. Ո. Վ. Ս. կ շնուած երկաթուղին արդէն բացւած է: ԶՄԹՈՒՐԱՅԻՑԻ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ 25-Ա. ՄԵՍԱԿՈՒՄ: Մենք ստացանք Զմիւռնիակից հետեանքը տպագրելու համար.

Օթաղաքիս հայ ընթերցարանի 25-ամենակ լորէնանի հանդէսն պիտի կատարվի լառաջիկալ վետրւարի 6/18-ին Ս. Մեսրոպեան վարժարանին մէջ, հախագահութեամբ վիճակիս առաջնորդ գեր. Տ. Ներսէս ծ. վ. Ասլանեանի:

Հեռագիրք, նամակը և նոէրք ուղղելի են հետեան հաս-

ցէին՝ Հայ ընթերցատումն. — Զմիռնիա. Cabinet de lecture Arménien.— Smyrne.

«Տնօրէն խորհուրդ հայ ընթերցատան»»

Նամակը, որով խնդրում են մեզ վերոգիշեալ ծանուցումը տպել ստորագրել են ի զիմաց տնօրէն խորհուրդի հայ ընթերցատան ատենապետ՝ Տիրան Դաստարեան և ատենապահը:

Առաջանք նաև այդ ընթերցարանի Տեղեկագիրը 1893 թ. համար Ապկանը հրատարակած հաշեցոցից երևում է որ Ընթերցարանը ունեցել է 1893 թ. մուտք 12,365 դրոշ և 70 փարա, ելք 8,511 դրոշ և 50 փարա:

Մուտքի կէսից ամելին գուցել է բաժանորդավճարներից (անդամավճար), մօտ քառորդը՝ թատերական նորկաչացումից: Ելքի մէջ լրագիրների բաժանորդագրութիւնը կազմել է 589 դրոշ: Առաջած են 28 օրագիր, շաբաթագիր և ամսագիր՝ հայերէն, տաճկերէն, գրանսերէն և անդրիկերէն—թէ ընթերցարանի հաշում և թէ իր նույը խմբագրութիւններից կամ առանձին անհամոնների կողմից:

Ուսւահակ թերթերից տոացւում էին «Մուրճ», «Աղբիւր» և «Ժարադ»:

ԲԱՅԻՑՅՈՒԹԻՒՆ, Ե ԵԿՐԱՆՈՒՄ. Առաջանք Յեղանից Ռաֆֆի Ընկերութիւն կոչւած հայ ընթերցարանի 1893 թ. (երրորդ տարեշրջանի) մուտք ու ելքի հաշիւը: Ընկերութիւն մուտքը գուանում է ընկերական տուրքերից (անդամավճարը 20 պարականն զրան կամ մօտ 4 ոտորի), զրքեր վաճառելուց և վիճակահանութեան տոմսներից: Անդամների թիւը եզել է 40-ից անդը: Մուտքի ընդհանուր գումարն է 1684 դրան (ուրեմն մօտ 330 ոտորի), որի մէջ 600 դրանի վիճակահանութեան 300 տոմսներ են նշանակւած: Ելքի ընդհանուր գումարն է 1338 դրան և 30 սենատար, որի մէջ 371 դրանի: Լրագիրների բաժանորդավճարներ, վիճակահանութեան համար զնուած դրքեր 100 դրան, բնակարանի և սրահապետի վարձ 360 դրան, կարասիքի—69 դրան և ազն, մնացորդ առ 1-ի չունարի 1894 թ. 175 դրան 45 սենատար:

Ընկերութիւնը տնի մի մասնաճիւղ «Ժարիազէ Վագւին» թաղաւմ, որի մուտքը եղած է 618 դրան և 40 սեն. ծախք 317 դրան:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ. Մեզ հաղորդում են հետեւալը.— Բժշկ. վահան Արծրունին առողջապահական-բժշկական վերահսկողութիւն է սահմանել հայ ծխական հինգ գալրոցներում:

ան է. Յովիանեան.Մարիամեան, Զիգրաշէնի (որտեղ նա նոյն-պէս հոգաբարձու է), Նորաչէնի Ա. Նշանի և Կարուճենի:

Այս վերահսկողութիւնը կազմակերպւած է առ աջմ հետեւալ կերպով.

1) Բժիշկը հիմնել է իւրաքանչիւր դպրոցի մէջ մի (ինչ պէս իւրն է անւանում) «Դպրոցական դեղաբան», ամենաանհրաժեշտ և անվեսա գեղերից բաղկացած, որոնք զետեղւած են փոքրիկ գեղեցիկ ապակէ պահարանների մէջ. ամեն մէկ ուսումնարանի մէջ վարժուհիներից մէկին լանձնւած է երեխաներին զեղեր մասակարարելը, ի հարկէ բժշկի պատէրով:

2) Պր. Վահանն Արծրունին շաբաթը մի անգամ որոշեալ օրը և օրոշեալ ժամին լանձնախում է այս հինգ ուսումնարանները, խնամում է հիւանդ մանուկներին, հոկում է դպրոցի սանիստարական գրութեան վրա, խորհուրդներ տալով դպրոցի դեկավարներին դպրոցական առողջապահութեան վերաբերմամբ.

3) Հիւանդ աշակերտներին, որոնք չեն կարող չաճախել ուսումնարան, բժշկապետը այցելում է իրանց տանը և ձրի գեղեր բաժանում կամ դպրոցի դեղաբանից կոմ քաղաքակից բուժարանից:

4) Նա կարգադրել է, որ տկարները վստահաբար և ձրի գիմնա նրան իր տանը երբ և կամնան, և համարեա ամեն օր նրա ընդունարանում նստած են լինում այդ ուսումնարաններից մի քանի աշակերտներ և աշակերտուհիներ:

5) Տարւաչ մկրտին և տարւաչ վերջին բժշկ. Արծրունին քննում է դպրոցի բոլոր երեխաներին և այս անում է այն նպատակով, որ նախ հիւանդ, ուսանելու անընդունակ երեխաներ չ'ընդունւեն ուսումնարան, և չնոտով որոշեալ առողջապահական խորհուրդներ տալ տկարներին, արձակուրդներից օգործելու համար. Այս կրկնակի ընդհանուր հետազօտութիւնը ունի գիտական նպատակներ:

Պր. Վ. Արծրունին արդէն երկու տարի է, ինչ ակսել է ուշաղրութիւն դարձնել մեր խեղճ դպրոցների սանիտարական վատ գրութեան վրա, սկսելով մի դպրոցից և աջմ իր հովանաւորութեան ներքու ունի հինգ դպրոցներ 800—900 երեխաներով. Լաւմ ենք, որ չարգելի բժիշկը մտադիր է աւելի ևս ընդարձակել այս օգտաւէտ գործը»:

«ՏԱՐԱԾՈՒՅՈՒՆ» պատկերագարդ շաբաթաթերթը դէպքերի բերմամբ մօտ ամիս ու կես ընդհանութելուց չետուց, նորա հրատարակիչ-խմբագրի արտասահմանից վերադառնալովը նորից սկսեց հրատարակւել:

Հրատարակիչը շտապեց ամենից առաջ բաւարարութիւն տալ հին բաժանորդներին՝ լրացնելով բոլոր պակաս համարները, սկսած № 45-ից մինչ № 50։ Ներկայ լուսւարի 16-ից «Տարագը» սկսեց 1894 թւականի հրատարակութիւնը։ Հրատարակւած № ները ճշտում են ար ։ Նաղարեանցի լայտարարութիւնը, որի համաձայն «Տարագը» լինելու է գլխաւորապէս պատկերագարդ թերթի լիլիւստրատորն։ Հարկաւ հասարակութեան ձեռնատութեամբ՝ «Տարագը» կը կարողանաէ իրականացնել մի իլլիւստրաֆոնի գտղափարը, ինչպէս նա վազուց իրականացրած է արևմտեան և լուսագում, խակ նուսաստանում 25 տարիներից ի վեր Թերթի ծրագրում կաէ նաև կար ու ձեի բաժին, որ դեռ ևս բացւած չենք անուսմ «Տարագը»-ում։ Դորա վերաբերմամբ, լօգուտ ազդ պատկերագարդ շարաթաթերթի և թէ կար ու ձեի գործի ծաւալման համար մեր երկրում, մենք խորհուրդ կը տաշինք «Տարագի» խմբագրութեանը ապագալում չբաւականանալ նոր տարագով հակուսաների նկարներ հրատարակելով, ազ ազդ բաժինը կապիլ քաղաքում գործութիւն ունեցող պրոֆեսիոնալ նական ուսումնարանների հետ, ազ բաժինը, ալզ պատմա, ասած, դարձել նոցա օրգանը։

«ՇԱԿԻՂ» շարաթաթերթը, որի մասին անցեալ ամիս ծանուցումն արինք, սկսեց հրատարակւել Թեհրանում։ Առաջին համարը կազմւած է հետեւալ լուսաճներից։ «Շակիղ» (առաջնորդող)՝ Ներքին տեսութիւն՝ Մեր թղթակիցներին։ Նոր ալական հոգու բացականական հաղութիւնը մեր մէջ, Ներքին լուրեր։ Արտաքին լուրեր և Հեռագիրներ։

«Շակիղ» ներկալացնում է մի փոքրիկ թերթ, Թիֆլիսի հաւ լրագիրների ծաւալի իշխոր։ Հրատարակիչը դեռ ևս ստացած չինելով իւր պատփարած արագաւահպ մամուլը և նոր տառերը, հրատարակում է առ աչժմ ձեռքի տակ եղած մասամբ անլարմար տառերով։

Առաջնորդողում լայտնած մտքերը «Շակիղի» նշանակութեան մասին թղղնում են լաւ տպաւորութիւն։ Ազն խնդիրները, որ արծարծմալ են ուսուահաճերի մէջ վերջին մի քանի սասնեակ տարիներում, «Շակիղ» լանձն է աւնում արծարծել Պարսկա-Հայերի մէջ, լինել կապող օղակ Պարսկա-Հայերի և օտար երկրացի Հայերի, որպէս նաև Պարսկաստանի քաղաքավին բնակիչների և գիւղական բնակիչների համար։

Ազդ գործը առաջ տանելու համար թերթը զրւած է մի խումբ երիտասարդների խմբագրական զեկափարութեան ներ-

քոյ, որոնք միենան կռամանալ աջակցում են թերթի գրական մասին:

«Շատիղի» լեզուն ընդհանրապէս գոհացուցիչ է: Այդ լեզուն մեր արևելեան հայոց գրական լեզուն է: Պատահում են սական անդորձածական խօսքեր, որ գրական անվարժութեան արգիւնք են, Օրինակ, գոչանալ կարող է մի գումար, ար զիւնք, բայց ոչ կարծիք, պէտք է ասել՝ կարծիք է կազմում (և ոչ կարծիք է գուշանում): Նաև այժմ արդէն խոսքու վերացած է +ով գուական կազմելը (ճշմարտութիւնք, պարտաւորիչ է ասել՝ ճշմարտութիւնք, թէն սեռականում դեռ ևս ոմանք շարունակում են եանց վերջաւորութեան գործածութիւնը— ճշմարտութեանց): Չեն առում՝ ոչինչ մասնաւոր կուսակցութիւն (այլ՝ ոչ մի մասնաւոր կուսակցութիւն), և ալին:

ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԼԻՐ ԴԱՍԵՐ, Թիֆլիսում չկաչ որ և է միջնակարգ օրիորդ զական դպրոց հայերէն զամաւանդորութեամբ, և ուրիմն միջնակարգ ուսումն տասնակ ցանկացող հաւ օրիորդները պարտաւորած են ուսուաց զիմնազները մտնել, ուր հայերէն լեզուն սական անուշագրութեան է մասնւած: Այդ հանդամանքներում հայերէն սովորելը, որ միանգաման անհարաժեշտ է, կարելի է միան մասնաւոր զասեր առնելով հայերէն լեզից, կրօնից, գրականութիւնից: Արդ, օրէնքով թուլաւութիւնից ազատ է ուսուցումը ինչից ոչ աւելի հոգուց բազկացած ամեն մի խմբին, հետեապէս օրէնքով թուլաւուած է հայերէն զասեր տալը մինչ 9 հոգուց բազկացած աշակերտական խմբերին: Ցանկալի է որ գլուխացների հայ աշակերտաները և աշակերտուհները խմբելին ազգ ձեռլ և հայոց լիզի ուսուցչիներից խմբական զասեր առնէին շաբաթը 2-3 անգամ:

ՆԻՒՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԵՐ, Տիկին Մ. Դ. Պոպովի եան նւիրել է 26.000 ռ. Ցիսիւալ զիւղի հացաց ծխական ուսումնարանի շնուռթեան համար: Դումարը լանձնւած է Հակոց Բարեգ. Ընկերութեան Կովկասում:

Նիրկալ լունւարին վախճանւած Յովակիմ Աղամեան կտակով թողել է Բաքվի Մարդասիրական Ծնկերութեանը 20,000 ռուբլի: Այդ գումարից 10,000 ռուբլի առանց պահմանի Ծնկերութեանն է լատկացնում, 5000 ի առկոսով Ծնկերութեան հանուն հանգուցեալի թոշակաւոր պիտի պահէ բարձրագուն զարոցներում, 5000-ի տոկոսը նուն Ծնկ. Զատկի և Զրօրհնեաց տօներին աղքատներին պիտի բաժանէ. 3000-ով Բաքվի եկեղեցու լատակը պիտի նորոգվի. խակ 3000 ռ. Ծնկեր. Վրացականի պիտի ծախսուի:

Բացի դրանից, հանգուց եալի կինը 2.600 ռ. նվազել է, բաքւի հոգեորականներին, Եջմիածնին և Երուսաղէմին:

Յունարին բաքւում վախճանւած Յովհաննէս Ասրիքէ զեան ցը կոտակով թողել է՝ 500 ռ. ա. Եջմիածնին, 200 ռուբ. Բաքւի եկեղ, ծխ. ուսումնարանին, 200 ռ. Նամախու եկ. ծխ. ուսումնարանին. Նաեւ իւր ծննդավայր Զանդեազուր զիւղում իւր ծախքով մի եկեղեցի և մի ծխական ուսումնարան պիտի չինւեն: Բաքւում ունեցած իւր տան եկամուտը 30 տարի պիտի շահեցնելի բանկում և աճուռնետեւ բարդւած գումարի տոկոսով իւր անւան որդեգիրներ պիտի պահւեն բարձրագոյն գպրոցներում:

**ԹԻՖԼԻՍԻ** III ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍԸ գոցուց լուսւարի 6.ին, սկսած լինելով 1893 թ. հոկտեմբերի 31-ին. Մուսոքի գինն էր 20 կոպ., աշակերտղների համար 10 կոպէկ. Ալիցլուների թիւն էր մօտ 7000 հոգի: Ըստհանուր մուտքն եղաւ 1107 ռուբլի 30 կոպէկ, ծախք 230 ռուբլի (զորանից տոմսակներ վաճառողին ամսական 25 ռ. պահապանին ամսական 10 ռ. մեացածը մոխւել է պատկերահանդէսը սարքելուն, տոմսակների և կատալոգի, չափարարութիւնների և ալլն): Պատկերներից ծախւել են՝ 10 հատ պ. Գէորգ Բաշինչտղեանի, 3 հատ Խիմ Զանկովեկու, 2 հատ Յարտութիւն Շամշինեանի: Ծախւեցին մի քանի հատ ևս սիրողների նկարներից:

**ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԵՍԸ** ԲԱՐԻՈՒՄ: Թիֆլիսի պատկերահանդէսը վեերաւարի սկզբներում տեղափոխւելու է Բաքու. արգէն վաճառւած նկարները Բաքւում ի ցուց չեն դնւելու, բայց դոցա տեղը բոնելու են աւելի նոր նկարներ:

**ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԻԱԿԱՆ** առևսարական դաշնադրութիւնը ստորագրեց լուսւարի 28.ին: Դաշնը կապւած է 10 տարով և ոչ է ստանալու սկսած 20 մարտի 1894 թ.: Բայց կալացած համաձայնութիւնը, օրէնքի ոչ ստանալու համար, դեռ ևս պէտք է գերմանական ռայխատագի հաւանութիւնը գտնի: Սական անկասկած է որ ռայխատագը ընդունելու է, չնայած բազմաթիւ ընդդիմադրահանների:

**КАВКАЗСКИЙ ЕАЛЕНДАРЬ** (Կովկասիան Օրացուց) անունով ամեն տարի հրատարակում է մի բաւականին հաստ հատոր, ուր, բացի ուղղափառ, լուսաւորչական, կաթոլիկական, հրէական և մահ. մեղական օրացուցներից, հրատարակում են բազմակողմանի տեղեկութիւններ Կովկասի մասին: Այդ հրատարակութիւննեան խըմբագրութիւնը կապւած է Կովկասիան պիճակագրական կոմիտէ:

տի հետ, և քանի տարի է որ լուս է տեսնում նոյն կոմիտէտի անդամ ստատուլի սովորանիկ պ. Ե. Կոնդրատենկօի անմիջական խմբագրութեամբ (Համեմատեցէք այդ մասին «Մուրճ» 1892, № 1, Գրախօսութիւն), ի միջն այլ տեղեկութիւնների ազդ-տեղ զետեղում են Կովկասում ամեն լեզուներով հրատարակւած գրքերի ցանկերը Բայց որքան անփութ կերպով է խմբագրւած այդ մասը, մարդու ծիծաղ է շարժում. Այս տարւաչ հատորում, որ արդէն 49-երորդ տարւաչ հատորն է, վերնագրի համեմատ պէտք է վիշած լինեն ի միջի աչոց Կովկասում հալերէն տպւած գրքերը 1892—1893 թ. (մինչ հոկտեմբ. 25), Պէտք է նկատած սական, որ այդ ցանկում մենք չգտանք Էջմիածնի հրատարակութիւնները, մինչեռ Էջմիածնիը իւր տպարանով՝ նոյնքան Կովկասումն է, որքան և Թիֆլիսը. Ապա գրքերի վիշատակութիւնները միակերպ չն արւած. մի գրքի համար կը տեսնէք որ հեղինակի անունը կաչ, միւսինը՝ ոչ. մի տեղ գուք կը գտնէք վիշած միան հեղինակի անունը, առանց վիշատակելու դրածքի վերնագրիւր. Մի տեղ կը գտնէք միան թարգմանողի անունը, հեղինակը՝ ոչ. Մի տեղ կը գտնէք գեր տառերով տպւած հեղինակի անունը, միւս տեղ՝ հասարակ տառերով. Աւելցրէք այս բոլոր խառնակութեան վրայ և աչն, որ խմբագրողը անպատճառ հարի է համարել թէ հալոց և թէ այլ տեղական գրքերի վերնագիրները ռուրէն տառերով տպել և ի հարկէ անթիւ սխալներով, փոխանակ վերնագիրները տպելու ուր հարին է հայերէն կամ վրացերէն տառերով, իսկ փակագծերում դնելով նոցա ռուսերէն թարգմանութիւնը.

Մի նկատողութիւն. Կովկասեան կալմնդարի ասելով՝ Կովկասում 1892 և 1893 թւականի մինչ 25 հոկտ. լուս տեսած գրքերի թիւն է 84։ Արդ, ինչպէս հաշտեցնենք այդ թիւը՝ «Հանդէս Ամսօրիայ»-ի տեղեկութեան հետ, որի համաձան միան 1892 թւականին և այն՝ միան Թիֆլիսում տպւած պիտի լինեն 80 գիրք (համեմատէք «Մշակ» 1894 թ. № 4 բանասիրական)։

ԳԵՐՄԱՆԱՅԻԲ ՓՈՒԲՐ-ԱՍԽԱՅՈՒՄ. Մենք ստուգել ենք մի նոր գերմաներէն բրոշիւր, վերնագրով «Լարելի և արդեօք գերմանական գաղթականութիւնը մղել դէպի Փոքր-Ասիա» (Ist es möglich, die deutsche Auswanderung nach Kleinasien abzulenken), Հեղինակն է Դր Է. Օէլման (Dr. E. Oehlmann). Բրոշիւրը տպւած է Ռուգովի Ֆիրխովի և Վիլհէլմ Վաստենբախի հրատարակութեամբ պարբերաբար լուս տեսնող «Հանրամատչելի»

գիտական գեկուցումների ժողովածւում։ Հեղինակը գալիս է գերմանացոց համար նպաստաւոր եղանակացութեան և ցուց է տալիս այն տեղերը, ուր գերմանացիք կարող են չաջողութեամբ գաղթավարեր հաստատել Փոքր-Ասիայում։ Ազդ բրոշ շւրջի հետ աւելի մօտ ծանօթացնելը թողնում ենք մի այլ անգամի։

ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԹԵՐՑԱԲԱՆ բացեւելու համար Թիֆլիսի Հաւաքար կոչւած քաղաքամասում ներկացում ջանքեր են դործ ղնուում։ Քաղաքի այդ հայաշատ մասը ամեն կողմից շատ լիտ մնացածն է և նորա լուսաւորութեան համար այդ դործի գլուխ բերելը մի կատարեալ բարերարութիւն կը լինէր։ Այժմ Թիֆլիսում երկու էժանագին գրադարան ընթերցարաններ կան, որոնցից մէկը Միքայէլեան փողոցումն է, միւրը՝ Միջին փողոցում։ Հայ ընթերցանութեան համար չարմարութիւններ ներկայացնողը այս վերջինն է (այդ մասին տես «Մուրճ» 1892 № 2։

† ԲԻԼՐՈՏ Յունարի 35 (նոր տոմարով վետր. 6) վախճանւեց աշխարհանուղակ վիրաբուժ Բիլրոտ։

† ԿԻՒԼԲԵՆԿԵԱՆ, Յովհաննէս: Յունարի 8.լն վախճանւեց Կ. Պոլսում Յովհաննէս Կիւլպէնկեան, երիտասարդ հասակում։ Հանգուցեալը Պոլսի հայոց հասարակական կեանքի մէջ համակրելի դեր էր կատարում։ 1892 թւականի կաթողիկոսական ընտրութիւններին ս. Էջմիածնում հանգուցեալը Սեբաստիանի աշխարհական ներկայացուցիչն էր, բացարձակ Խրիմեանական ուղղութեամբ։

† Տէր-ՍՏԵՓԱՆ աւագ քահանակ Տէր-ՍՏԵՓԱՆԵԱՆՑ, մէկը Թիֆլիսի թեմի ամենակրթած քահանաներից, վախճանւեց վետրւար 2.ին։ Հանգուցեալը եղել է մի ժամանակ նաև տեսուչ Թիֆլիսի թեմական ծխական գլուխների։ Հանգուցեալի կորուստը դժւար փոխարինելի կորուստ է մանաւանդ Գորի քաղաքի համար, որի քահանաներից էր նա։

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» 1893 № 12, էջ 1869, տող 5, ներքեւից տպւած է Պ. Սիմէօնեանց, «Հղի զն է» Մ. Սիմէօնեանց։

### ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐԲԵՐ

- 1) Ե. Պ.—«Քննական հայեացք» (Արսէն Դիմաքսեան, Շիրւանզադէի), Թիֆլիս, տպ. Մովսէս Վարդանեանի, 1894, գինն է 20 կոպ.
- 2) ՆԱԶԱՐԵԱՆՑ, Էմմանուէլ քահ. — Օրացուց 1894 թւականին Գրիսոսոսի (Յօթներորդ տարի). Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի. (Յաւելառներով). գինն է 20 կոպ.։
- 3) ԳՐՎՐԻՎԵԱՆ, հայր Գրիգոր վարդապետ. — «Հայք էնեղիսարեթուալովիս քաղւած Խրանսիլւանիու իշխանաց և Աւատրիու կալսերաց ա-

- ռանձնաշնորհութեանց կոնդակներէն, ժամանակակից արձանագրութիւններէն և պաշտօնական գրութիւններէն» 1680—1779, «Ազգային Մատենադարան» գիրք ԺԱ. — (Արտատպած «Հանդէս Ամօրեալ» ամսաթերթից), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1893, գինն է 4 ֆրանկ 50 սանտիմ (մօտ 2 ռուբլի)։
- 4) ԽԱԼԱԹԵՍՆԻ, Դր. ուսուչչապետ հակերէնի Լազարեան ճեմարանի։ — Զենոր Գլակ, ճամեմատական սասումնասիրութիւն։ «Ազգային Գրադարանի» գիրք ԺԲ (Արտատպած „Հանդէս Ամօրեալ“ ամսաթերթից), Վիեննա, Մխիթարեան տպարան, 1893, գինն է 1 ֆրանկ։
- 5) ԿՈՆՏԻԲԻՐ, Ֆր. Կ. անդամ Ճեմարանի և Գասախօս Համալսարանին Օքսֆորդի. — Քննութիւնք գրոց Գաւթի Անդադթի կամ թարգ. մանութեանց Արխտոտելլի, Թարգմանութիւն և Յաւելած Արխտոտուելլի Յաղագս Ասուուծով Ազգային Մատենադարանի գիրք Ժ. Վիեննա, Մխիթարեանց տպ. 1893, գինն է 1 ֆրանկ 25 սանտիմ (մօտ 50 կոպ.)։
- 6) ՏԵՐ ՄՈՎԱԼՍԵՍՆԻ, Փարսագան (Կերկարում Մեսրոբ վարդապետ, միաբան և Էջմիածնի) „Հայ գիւղական տունը“ 55 պատկերով։ Ազգային Մատենադարանի գիրք ԺԳ. Թարգմանութիւն գերմաներէնից. — Վիեննա, Մխիթարեան տպ. գինն է 2 ֆրանկ։
- 7) ԵՒՐԵՒՆՈՎԱ. — «Արենեկան աւանդութիւն» (թարգմանութիւն ռուսերէնից)։ Արտատպած «Գրականական և պատմական Հանդէսից» Մոսկավ, տպ. Մ. Բարխուդարեանի, 1891 թ. գինն է 5 կոպ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառության համար գները գները

Նշանակւած գները անփոփոխ պահպան ելու եւ մինչեւ վերջը 1895 թ.)

|                 |                     |           |
|-----------------|---------------------|-----------|
| «ՄՈՒՐՃ» 1889 թ. | անկազմ.             | 4 ռ. — կ. |
| «ՄՈՒՐՃ» 1890 թ. | անկազմ.             | 5 » — ր.  |
| «ՄՈՒՐՃ» 1891 թ. | (սակաւաթիւ) անկազմ. | 10 » — ր. |
| «ՄՈՒՐՃ» 1892 թ. | անկազմ.             | 9 » — ր.  |
| «ՄՈՒՐՃ» 1883 թ. | անկազմ.             | 10 » — ր. |

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհածակքի համար ուղարկում է մի-մի ոռոքվի  
ամեն տարւայ համար:

Կազմի համար վճարում է վերադիր 60 կող. ամեն կիսա-  
մեակի համար (այսինքն 1 ռ. 20 կ. ամեն տարւայ հա-  
մար):

Դիմու՝ Տիֆլիսъ, въ редакцію журнала „Мурчъ“.  
Tiflis, Rédaction de la Revue „Mourtch“.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐ  
ԱՐՏԱՏՊԻԱՅԻՌ „ՄՈՒՐՃԱՌ“ ԱՄՍԱԳՐԻՑ

|                                                                                                         | Բ.      | Կ.   |
|---------------------------------------------------------------------------------------------------------|---------|------|
| 1. ՊԻՇԵԵԱՆՑ, ՊԵՐՃ. — «ՑԵՑԵՐ» (վէպ) . . . . .                                                            | — 1     | —    |
| 2. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ (Ղ. զլարցի)՝ «ՄԱՆՈՒՂՆԵՐԻ<br>մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . . . | — 05    | —    |
| 3. ԱՏՐՊԵՏԵԱՆՑ, Ս. — «ԽԵՆ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթոլիկ-<br>ների կեանքից . . . . .                           | — 1     | —    |
| 4. Լ. Օ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ) . . . . .                                                                   | — 50    | —    |
| 5. Մ. -ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒԼԱՅՈՒ ՍԵՒ ՅՌԵ»:<br>(Կեանքից պատկեր) . . . . .                         | — 40    | —    |
| 6. ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒԻՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . .                                                     | — 60    | —    |
| 7. ՊԻՇԵԵԱՆՑ, ՊԵՐՃ. — «ԲՊ.ԴԵ», վէպ . . . . .                                                             | — 1     | 20   |
| 8. ՓԱՓԱՉԵԱՆՑ, Վ. — «ԽԱՅ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից)                                                      | — 15    | —    |
| 9. ՄԱՐԻՍԵԱՆ, ՄԻԼԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), առ. մասը .                                                  | — 50    | —    |
| 10. , , , , , , , , , , , , ,                                                                           | բ. մասը | — 75 |
| 11. ՂԱՐԳԵԶՋԵԱՆՑ, Յ. — «ՍԵԽ-ԼԵՌՆՅՅԻՔ» (տոհմադ. պատկ.)                                                    | — 15    | —    |
| 12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱԲԵՒԱՆՆԵՐ» . . . . .                                                       | — 03    | —    |
| 13. , , , , , , , , , , , , ,                                                                           | — 03    | —    |
| 14. , , , , , , , , , , , , ,                                                                           | — 05    | —    |
| 15. , , , , , , , , , , , , ,                                                                           | — 03    | —    |
| 16. , , , , , , , , , , , , ,                                                                           | — 03    | —    |
| 17. , , , , , , , , , , , , ,                                                                           | — 03    | —    |
| 18. ՔԻՇՄԻՇԵԱՆՑ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵՌԱՄԱՆՔԻ» . . . . .                                                     | — 15    | —    |
| 19. ԲԱԼԱՊԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ. — «ՄԻԿՐՈԲՆԵՐԻ» . . . . .                                                         | — 10    | —    |
| 20. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՑ, ԼԵՒԻՆ. — «ՉԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐԺԱԽԱՆՔԻ» . .                                                    | — 10    | —    |
| 21. ՏՈՒՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐԻ» . . . . .                                                     | — 15    | —    |

|                                                     |      |
|-----------------------------------------------------|------|
| 22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .            | — 20 |
| 23. ԱՐԺՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊՆՈՏԻՍՄ», Մասն ա. . . . .  | — 50 |
| 24. ՄԱՆՈՒԿԵԱՆՅ, ԼԵԿՈՆ.—«ՏԵԳՐԱՆՈԽՀԻ» . . . . .       | — 50 |
| 25. ՇԻՐՎԱՆԶԱԴԻ.—«ԸՐՍԵՆ ԽԱՄԱՔՍԵԱՆ» . . . . .         | 1 50 |
| 26. ՍԵՆԿԵԻՖԶ, ՀԵՆՐԻԿ.—«ԸՐԱՆՅ ԴԱՒԱՆԱՆՔԻ» . . . . .   |      |
| 27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՎ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԿՈՐ ԴԵՊՔԵՐԸ». |      |

---

ВЫШЛА И ПРОДАЕТСЯ

# ИСТОРИЯ АРМЕНИИ

Моисея Хоренского

НОВЫЙ ПЕРЕВОДЪ

Н. О. Эмина

(съ примѣчаніями и приложеніями)

Цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп.

МОЖНО ПОЛУЧАТЬ

въ Канцеляріи Лазаревскаго Института восточныхъ языковъ Москва..

# ХII ՏԵՐԻ „ԱՂԲԻՒԹ ԵՒ ՏԵՐԱԳ“ ՏԵՐԻ V

## ՊԱՏԿԵՐԱԶՈՒԴԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԾՐԱԳՐՈՎ, ԵՒ ՀԱՅ  
ՅԱՅՑՆԻ ԳՐԱԿԱՆ ՈՅՁԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ

«ԱՂԲԻՒԹԻ» լոյսէ տեսնում ամիսը մի անդամ 2—3 օնք, տարեկան 12 ՆՈՅ, իսկ «ՏԱՐԱԳԸ» շաբաթը մի անդամ, կիրակի օրերը 1—2 օնք, տարեկան 50 ՆՈՅ

«ԱՂԲԻՒԹԻ» տարեկան գինը (առանց պրեմիաների) 3 ր. է, իսկ  
«ՏԱՐԱԳԸ» (առանց պրեմիաների) 6 ր.

### \* «ԱՂԲԻՒԹԻ» ՆՊԱՏԱԿՆ Է

Հայ ժամանակ ակնազի մէջ զարթեցնել պատասխանութեան զգացմոնքները, զարգացնել հայ երեխամերի մէջ ուշի զետի շրջապատճերը, բարի նախանձ զետի ամեն վահմը, աղնիոր և ասելութիւն զետի ամեն վահմը, աղնիոր և ասելութիւն զե-

տի ամեն վահմակարն ու չարը: «ԱՂԲԻՒԹԻ» ակները հասում են յոզով վրդական հեքիաթներից, զայցներից, խաղերից, առանցութիւններից, որնք առաջնով մէր վարդիկ և քանչը ընթերցունքի սիրութ և հողին, պարարտ հող ու տերէ և պատրաստեն ապազայամ պատպարի սերմեր աճեցնելու:

«ԱՂԲԻՒԹԻ» ամեն համարամ ապեկու են կենազբութիւններ մէծ մարդկանց, տեղազբական նամակներ մէր երկրի և վայրիրի, հեքիաթներ, բանասակեզծութիւն, խաղեր, հանկարկ, տանկական հասկին բուժութ շատ պատկերակ և աղմանական պատպարի սերմեր աճեցնելու:

### ՊԱՏԿԵՐԱԶՈՒԴԻ «ՏԱՐԱԳԸ»

ԱՌ հասցնենք նկարների կողմից մայրաքաղաքներմ հասարակակող շաբաթաթերթների հախութեանը բովանդակութեան կողմից պատկերազարդ «ՏԱՐԱԳԸ»

Հասցէն՝ Տիֆլիս, ք. Արբոր կամ Տարազ, իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Red. Agbur կամ Taraz.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Տիգրան ՆԱԶԱՐԵԱՆ

ՏՊԱԳՐԻՈՒՄ Ե՞ն  
„ՀԱՆԴԵՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ“  
**ԺՈՂՈՎԾԾԻՒ Վ ԵՒ ՎԻ ԳՐՔԵՐԸ**

ՄԻ ՀԱՑՈՐՈՒՄ ԱՄՓՈՓԻԱԾ.

Դիբը լրց կը տեսնէ առաջիկայ ապրիլին՝ մօտաւորապէս հետեւ եալ բովանդակութեամբ.

ԶԱՅՐԻԿԸ—ԿԱՅՈՂԴԻԿՈՍ, Ա. Ծատուրեան.—I. ԶԱՏԿԱԿԱՆ ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ, Պերճ Պուշկանց:—II. ԹԱԴՈՒՅՉՈՒ ԱՐՏԱՍՈՒԻՆՔԸ, վեպ. թարգմանաւթիւն:—III. ԲԱՆԱՍՍԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. Բարխուզարեան:—VI. ՆԵԳԻՆ, վեպիկ, թարգմ. տիկ. Մարգարիտ:—V. ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Յավ. Յահաննիսան:—VI. ՎԵՅՑԵՐՈՐԴ և Եօթներորդ ԴԱՐԵՐԻ ՀԱՅՈՅ ՄՏՏԱՒՐԻ ԿԵՆՆՔԸ, Եր. Շահաղիզ:—VII. ՀՐԿԱԿԱՆ ՄԵՂԵԳԻՆՆԵՐԻ, բանաստեղծութիւն Բայրընից, Ա. Ծատուրեան:—VIII. ԲԱՅՐԸՆԸ ՄԻՒԹԵԱՆԵՐԻ ՄՈՏ, Խր. Վեհկումսկիլ:—IX. ՇՈԳԵՆԱԼԻ ՎԵՐՍՅ, վեպիկ, թարգմ. սիկին Մարգարիտ:—X. ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Յ. Կոստաննեանց:—XI. ՄԻ ԵՐԵՍ ՀԱՅՈՅ ՀՆԱԳՈՅՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԻՑ, Եր. Շահաղիզ:—XII. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԹԷՌԴՈՍՄՅՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍՄԻՆ, Ա. Թաճդեան:—XIII. ՀՈԱՐԵԼ, զրամա Ա. Առնուի, թարգմ. Յ. Զանումեանց:—IV. ԴՈՆ ՖՈԽԱՆ, առաջին երգ, Բայրընից, թարգմ. Լ. Աբրահամեան:—XV. ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Ա. Ծատուրեան:—XVI. ՄԻ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԶԱՐԴ, վեպիկ, թարգմ. տիկ. Մարգարիտ:—XVII. ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Դ. Պ. Աղամեան:—XVIII. ՄԻ ԱՆՎՀԵՐ ՓՈՐՁ, վեպիկ, թարգմ. Ա. Դ.:—XIX. ԱԲՈՎԱՆԻ ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԵՐ, և իմ ՍՈՍ և ՎԱՐԴԻՖԵՐԸ, Պերճ Պուշկանց:—XX. ՅԱԿՈԲՊՈՐՈՆՆԵՐՆԻ ՄԻ ՆԱՄԱԿԻ, —XXI. ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Գ. քահ. Մկրտչանց:—XXII. ԳԱՄԱՐԴ-ԲԱԹԻԲՈՅՑԻ ԹԱՐՄ ՇԻՐՄԻ Ա.Պ.Ա.Զ, Ա. Ծատուրեան:—XXIII. ՎԱՀԱՆ ԱՍԿՈՐԵԱՆՅՅԻ և ԽՈՖՅԻ անոխալ թղթերից:—XXIV. ՄԱՃԿՈԼԻ ԵՐԳԸ, աշըզ Զիւանի:—XXV. ԱԼԻՓ ՀԱՅԵՐԻՆ ՏԻՄԾ ՀՐՈՎԱՐՏԱԿՐ:—XXVI. Ս. ՆԱԶԱՐԵԱՆՅՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ:—XXVII. Հ. ՄԻՔԱՅԵԼ, ԶԱՄՔԵԱՆԻ մի թուղթը:—XXVIII. ՅՈՒՆԱՍԱՆԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, Զ. Ֆայֆ:—XXIX. ՄԱՏԵՆՈԽՈՍՈՒԹԻՒՆ, I. Հակոբ և լիլիմուտ, Ա. Պատկանեանի «Ծնամիր հրասափրութիւնների» հրատարակութեան առթիւ. II. Կոլորզիլոսի արտասուրը. «Արաքս» պատկերազարդ հրատարակութեան առթիւ:—XXX. ՀՐԱՏԱՐԱԿԻ ԿՈՂՄԻՑ:—XXXI. Յաւելած ՅԱԴԱԳԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ձԱՄ. ՄԻՔԱՅԵԼ, ՆԱԼԲԱՆԴԵԱՆ:—XXXII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դիբը բազկացած կը լինի 600—700 երեսից և տպագրւում է սակաւ քանակութեամբ: Բաժանորդացինն է 3 ր. իսկ տպագրութիւնից յետոյ—5 ր.: Յանկացողները գիմում են հրատարակչին հետեւ հասցեով. Մոսկվա, Մասնիցկայ, Ճ. Երմակովիք.

Հրատարակիչ՝ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԻՌՈՒԹՈՒՆ:

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1894 ГОДЪ  
НА ГАЗЕТУ

# „НОВОЕ ОБОЗРЕНІЕ“

(одинадцатый годъ изданія).

Въ 1894 г. „Новое Обозрѣніе“ будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяцъ—1 р. 50 к. За границу: на годъ—17 р., на полгода—9 р. на три мѣсяца—5 р. (Подпись принимается не иначе, какъ считая съ первого числа любого мѣсяца).

Для годовыхъ подписанійъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подпись и объявленія принимаются: въ Тифлисѣ, въ конторѣ газеты, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12; въ Баку, у К. И. Ярченко, Балаханская ул., д. № 19, рядомъ съ ремесл. училищ.; въ Батумѣ, у М. И. Николадзе, въ газетномъ агентствѣ; въ Кутаисѣ, у бр. Чиладзе; въ Елисаветполѣ, въ аптекарск. складѣ Альтгаузена.

Объявленія пѣтъ виѣ-кавказскихъ городовъ принимаются исключительно въ „центральной конторѣ объявлений“, бывш. Л. Метиль, въ Москвѣ, на Милютинской улицѣ, въ д. Спиридонова.

Лица, подписавшія (безъ разсрочки) на годовое изданіе „Нового Обозрѣнія“ 1894 г. въ текущемъ году, будутъ бесплатно получать газету въ этомъ году со дня подписки.

Печатается и въ первыхъ числахъ Февраля мѣсяца  
ВЫЙДЕТЬ ВЪ СВѢТЪ

# РУКОВОДСТВО

*Торовой, керосинозаводской и нефтепромышленной Бухгалтерии  
по двойной итальянской системѣ.*

Составилъ И. В. АБРААМЯНЦЪ

Необходимое пособіе для лицъ, занимающихся коммерческимъ дѣломъ во всѣхъ его отрасляхъ.

Изложеніе ясное, система веденія счетоводства упрощенная и удобопримѣнимая. Приможена масса формъ книгъ, разнообразныхъ бланковъ и документовъ по разнымъ отраслямъ промышленности съ детальными разъясненіями о способѣ и порядке веденія записей.

Каждое лицо, специально не изучившее курсъ Бухгалтеріи, можетъ найти въ этомъ руководствѣ путеводителя по коммерческимъ операциямъ и наставника по веденію книгъ и счетовъ.

Къ книгѣ приложены отдельные статьи:

I По нефтяному дѣлу:

а) Краткій очеркъ нефтяной промышленности на Кавказѣ—  
гор. инж. А. Вачьянца.

б) Краткое описание процесса керосинозаводского производ-  
ства—инж. тех. А. Назарянца.

II Формы разныхъ договоровъ, маклерскихъ записей, довѣреннос-  
тей и договорныхъ писемъ.

III Таблица вычислений процентовъ отъ 1 до 360 дней, отъ  $\frac{1}{4}$   
до 12%, включительно и на всѣ капиталы отъ 1 до 10,000  
рублей. Назначеніе книги—освѣтить всѣ стороны коммерче-  
скаго дѣла и быть практическимъ помощникомъ торговаго  
человѣка.

Цѣна: по подпискѣ 2 р. 60 к., по отпечатаніи 3 руб.  
50 коп.

Обращаться къ составителю:

г. Баку, Николаю Воскановичу Абраамянцу.

# ԻՍԿԱԿԱՆ ԿՈՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

## ,,ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ԱԲԻ-ԷՅՐԿԱԽ

### ԱՐԺԱՆԱՑԱՌ

այլարձի մէջ կտրեմեքենաների բոլոր ցուցանանդեսներում

#### ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐՊԵԽՆԵՐԻ

Վարչոր ընկերներ առան ամիկնեների և ապնիւ օղնականներ բոլոր արհեստաւորների համար

#### ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Ընկերի ընկերութեան կենցընհական պահեստում՝ Վայնակի պրօսպեկտ վերայ. Արքմանովի առան և երան ըստ սննդի ընկեր մէջ:

Բազարում. Ակքայէլեան փայտում՝  
Վիրզան Առագեանի առ.  
Քայլայիսում. Յուրլարի դէմ  
Չեշիկովի առ.  
Բալթում մէտախու Ահլիքէան փա.



Հայուց ճանապարհութ գոճութէների հետ  
Միջնու Ար Հետո, Սուզու, Արթովանք ՀԱԱԱԱ Զինգերի և Բաներ.  
Գլխունը ԳԱՅՆ ԱԼԱԼ ՄՈՏ




առ և արական գլուխը.

Գ. Ն Ե Յ Դ Լ Ի Ւ Գ Ե Բ

Գնողները կարող են, եթէ կամենամ են, զրամը հետզետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է չարախով կամ առանի և կամ ժամանակամիջոց սատանալ զրամկան վզբանը վհարելու համար:  
Յ. Գ. Զինգերի և ընկ. բոլոր պահեստաներում զանուամ են մեքենաներին պատկանելի զործիքները, ինչպէս ևն առեղներ, թիւ մետաքս և այլ մեքենալին պատկանելի իրեղնակը ամենաչափաւոր դներով:





# „ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Գ Բ Ի

ԹԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒԿԱԿԱԿԱՆ Ե

Տարեկան գիւղ է 10 դ.

Յանձանարդագրութեան համար զիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԻ. { Տիֆլիս. Въ редакцію журнала „МУРЧ“.  
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԲԱԲՈՒ. — Տպարան «Արօր»:

, պ. Նիկ. Աբրահամեան:

ԵՐԵՒԱՆ. — պ. Աւետիս Աղամիքը կեանց:

ԷԶՄԻԱԾԻՆ. — Արակն աբեղաց Պատճեան:

ԲԱԹԱԼԻՄ. — պ. Սարգիս Մակարեանց (զրաս. եղբ. Ծովեանների):

ՌՈՍՏՈՎ. և ՆՈՐ-ՆԱԽԻԶԵԽԻԱՆ. — Եղբ. Պ. և Պ. Անանեաններ:

ՄՈՍԿՎԱ. — պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тупицына,

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — պ. Քրիստ. Բաշինջաղեան, Գостиный дворъ.

ՕԵԽՍԱ. — պ. Միքայէլ Մուրագեանց (զրասն. եղբ. Ծովեանների):

ՄԱՐՍԵՅ. — պ. Սիմեօն Միքղայեանց: Rue St. Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԻ. գոտանւում է Թիֆլիս, Վելետինիան փողոց, տուն № 8